Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատում

Երևան 2023

Սույն զեկույցում ամփոփված են Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից իրականացված Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատման արդյունքները:

Գնահատումն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով իրականացվող «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում:

Նյութի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
զեկույց

Ծրագրի ղեկավար՝ Նվարդ Մանասյան
Հետազոտող՝ Տիգրան Մուղնեցյան
Դեպքերի ուսումնասիրության ղեկավար՝ Հարություն Վերմիշյան
Դեպքերի ուսումնասիրության հետազոտող՝ Սրբուհի Միչիկյան
Քաղաքային պլանավորման բաժնի գրախոսող՝ Սարհատ Պետրոսյան
Խմբագիր՝ Զարուհի Հովհաննիսյան

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երևան 0002, Սարյան 12 փող., 5-րդ հարկ Հեռ.՝ +374 10 569589, 569689
Էլ. հասցե՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ISBN 978-9939-1-1748-5

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

ՆԱԽԱԲԱՆ 13

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 16

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 23

Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն 40

Բյուջետավորում 43

Ֆինանսական հարցեր և դրամական հատկացումներ 45

Հանրային գնումներ 47

Համայնքային, այդ թվում՝ կոմունալ ծառայություններ 50

Քաղաքային պլանավորում (քաղաքաշինություն) 52

Բնակարանային քաղաքականություն (բնակֆոնդ) 62

Քաղաքացիական պաշտպանություն 64

Շրջակա միջավայրի պաշտպանություն 66

Սոցիալական ծառայություններ 68

Կրթություն 70

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 72

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ 74

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ 88

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԽՆԴՐԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ 140

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎՈՂ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 144

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԽԿՀ	Խնդրակենտրոն հարցազրույց
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ
ԿԳՄՍ	Կրթություն, գիտություն, մշակույթ և սպորտ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր
ՀՄԾԾ	Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը: Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) իրավունքն ու կարողությունն է սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանը միացել է տեղային բաց կառավարման գործընկերության նախաձեռնությանը 2022 թվականին: Բաց կառավարման հիմնական սկզբունքները՝ թափանցիկությունը, մասնակցայնությունը և հաշվետվողականությունը, ենթադրում են, որ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը պետք է հասանելի լինի հանրության համար:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն հասարակական կազմակերպությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում իրականացրել է Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատումը:

Ծրագրի իրականացումը նպատակ ունի աջակցել Երևանի քաղաքապետարանում լավ կառավարման ուժեղացմանը: Ծրագրի խնդիրն է թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև լավ կառավարման փորձառությունների բարելավումը՝ այդ թվում բարեվարքության միջոցով:

Գնահատումը խնդիր է դրել բացահայտել, թե որքանով է Երևանի քաղաքապետարանը ապահովում թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստող ՀՀ օրենսդրության ամրագրումները և որքանով են կիրառվում ՀՀ-ի կողմից վավերացված Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի և Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայից բխող թափանցիկությանն ու հաշվետվողականությանը վերաբերելի դրույթները, բանաձևերն ու հանձնարարականները:

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատումը նպատակ ունի Երևանի քաղաքապետարանի գործունեության 14 ոլորտում վերհանել Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը: Թափանցիկության և հաշվետվողականության գնահատման առարկա է հանդիսացել Երևանի ավագանու, գործադիրի և քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությունը:

Թափանցիկության ու հաշվետվողականության գնահատումը ներկայացվել է համաթվի միջոցով: Համաթվի ձևավորման հիմքում դրվել են Թրանսփարենսի Ինթերնեշնլի Սլովակիայի և Ուկրաինայի մասնաճյուղերի կողմից կիրառված համանման համաթվերի հաշվարկման մեթոդաբանությունները: Դրանց հիմքում ընկած են ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագրի

առաջարկած թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքի վրա խարսխված ոլորտային ցուցիչները, ինչպես նաև՝ Երևանի քաղաքապետարանի գործունեության գնահատման համար որդեգրված թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներից բխող նպատակները:

Թափանցիկությունը քաղաքացիների շահերից բխող՝ համայնքային նշանակության հանրային հարցերին վերաբերող պաշտոնական փաստաթղթերի այնպիսի եղանակով հրապարակայնացումն է, որը կերաշխավորի քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը՝ քաղաքականության մշակումից մինչև իրականացում:

Հաշվետվողականությունը ենթադրում է սեփական գործողությունների համար քաղաքացիներին հաշվետու լինելու հանրային իշխանությունների ներկայացուցիչների գիտակցումը՝ ներկայացնելով փաստահեն հիմնավորումներ քաղաքականության, ծրագրերի, հանրային միջոցների գոյացման ու ծախսումների և այլ որոշումների կայացման գործընթացներում:

Ուսումնասիրության ելակետը որակի կառավարման համակարգի համար միջազգային չափորոշչով սահմանված պահանջներն են, որոնք պարտադրում են կազմակերպությանը՝ այս դեպքում քաղաքապետարանին, հետևողականորեն մատուցել այնպիսի ծառայություններ, որոնք բավարարում են շահառուների՝ այս դեպքում քաղաքի բնակիչների ու այլ շահագրգիռ կողմերի և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության համաթվի գնահատումը հիմնված է դիտարկված 124 ցուցչի ու դրանց գոյացրած առավելագույն միավորի վրա: Առավելագույն հնարավոր 124 միավորը համեմատվել է գնահատման արդյունքում գոյացած՝ ըստ ոլորտների հաշվարկված փաստացի միավորի հետ: Թափանցիկ և հաշվետու գնահատականի վերին շեմը համարվել է հաղթահարված, եթե կատարողականը դիտարկված ցուցանիշներով գրանցել է 100 տոկոսանոց արդյունք: Սահմանվել է հինգ միջակայք: Դրանից բխել է սանդղակավորումը հետևյալ տրամաբանությամբ. *թափանցիկ և հաշվետու, մեծամասամբ թափանցիկ և հաշվետու, մասամբ թափանցիկ և հաշվետու, մեծամասամբ ոչ թափանցիկ և ոչ հաշվետու, և վերջապես, ոչ թափանցիկ և ոչ հաշվետու:*

Այս գնահատումը բոլոր ոլորտներում կիրառել է նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման ստուգումը: Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության ուսումնասիրության շրջանակներում ի թիվս տվյալների հավաքագրման այլ մեթոդների առանձնացվել են պաշտոնական հարցումները: Հարկ է նշել, որ պաշտոնական հարցումները ուսումնասիրության մեթոդաբանությամբ կիրառվում են տվյալների այլ մեթոդների՝ պաշտոնական կայքի ուսումնասիրության, տեղեկագրերի և տվյալների բազաների, ՁԼՄ հրապարակումների հետ զուգահեռ:

Միայն քաղաքային պլանավորման թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համար երկու թաղամասի օրինակով փորձ է կատարվել բնակիչներից պարզել քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության

ընկալումն ու սպասումները: Այս դեպքում, օրենքով պարտադիր համարվող դրույթների հիման վրա ձևավորված ցուցիչներից զատ դիտարկվել է Երևան քաղաքի Ֆիզիկայի գիտավանի և 33-րդ (Ֆիրդուսի) թաղամասի (որպես կառուցապատման միջոցով փոփոխվող կենսամիջավայրերի) բնակիչների կենսափորձը:

Քաղաքային պլանավորման ոլորտի ուսումնասիրություններում օգտագործվող խնդրակենտրոն հարցազրույցները (ԽԿՀ) ընտրվել են որպես բնակիչների կենսափորձը ամբողջացնող պատումների վերհանման մեթոդ: Այն հնարավորություն է տվել հավաքագրել ինչպես փաստական տեղեկատվություն, այնպես էլ բնակիչների սուբյեկտիվ ընկալումները քաղաքապետարանի գործունեության և կառուցապատման միջոցով փոփոխվող կենսամիջավայրերի վերաբերյալ:

Նյութերի մատչելիության տեսանկյունից կիրառվել է մկնիկով երեք հպման հայտնի (three-click rule) կանոնը ու դրանից շեղումը: Պարզ նավարկման արդյունքում տեղեկությունը չգտնելուց հետո, գործադրվել է կայքում առկա որոնման պատուհանը: Որպես որոնման սկզբունք որդեգրվել են բանալի բառեր, որոնք թույլ կտային ցանկացած մեկին տեղորոշել տեղեկության առկայությունը: Եթե կայքի որոնման պատուհանի գործադրմամբ պահանջվող տեղեկությունը գտնել չի հաջողվել, ապա կիրառվել է պարզ համացանցային որոնումը:

Այս հետազոտության 14 ոլորտի ցուցիչներով սահմանված կայքում փաստացի նավարկումն ու որոնումներն իրականացվել են այս տարվա **ապրիլի 10-ից մայիսի 30-ն** ընկած ժամանակահատածում: Հետազոտական թիմի անդամներից մեկը հավաքագրել է տվյալները, մյուսը կրկնաստուգել է այդ հավաքված տվյալները՝ սխալներից ու վրիպումներից խուսափելու համար: Դեպքերի ուսումնասիրությունների համար հարցազրույցները մեկնարկել են 2023 թվականի հուլիսի 1-ին և ամփոփվել հուլիսի 20-ին:

Արդյունքներ

Ծրագրի իրականացումը նպատակ ունի աջակցել Երևանի քաղաքապետարանում լավ կառավարման ուժեղացմանը՝ թափանցիկության և հաշվետվողականության, այդ թվում՝ բարեվարքության ամրապնդման միջոցով:

Սույն գնահատման խնդիրն է՝ բացահայտել, թե որքանով է Երևանի քաղաքապետարանը ապահովում թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստող ՀՀ օրենսդրության ամրագրումները և որքանով են կիրառվում ՀՀ Սահմանադրության, ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերից բխող թափանցիկությանն ու հաշվետվողականությանը վերաբերելի դրույթները, բանաձևերն ու հանձնարարականները:

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատման արդյունքում 2023 թվականին գնահատվող 124 ցուցիչներից գոյացող առավելագույն 124 միավորից փաստացի արձանագրվել է **44.5 միավոր:** Սա նշանակում է, որ **Երևանի քաղաքապետարանը մեծամասամբ ոչ թափանցիկ և ոչ հաշվետու է:**

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության բացերից մեկը կառուցվածքի, կանոնադրության, աշխատակազմի, բոլոր որոշումների մասին տեղեկությունների չհամակարգված ներկայացումն էր, իսկ որոշ դեպքերում նաև տեղորոշելիության բարդությունը կամ բացակայությունը: Քաղաքապետարանի աշխատանքներին հետևելու կամ արդյունքներին ծանոթանալու համար ներկայացված չէին հիմնական փաստաթղթերի հիմքում ընկած վերլուծական հիմնավորումները, ուսումնասիրությունները, հանրային լսումների ամփոփաթերթերը: Չհաջողվեց նաև տեղորոշել բյուջեի նախագծերը, որոնք, ըստ էության պայմանավորում են համայնքի զարգացման ուղղությունների փաստացի իրագործման պլանավորումը: Պարզ չէր նաև, թե ինչպես է քաղաքապետարանը համագործակցում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հետ:

Երևանում վճար ենթադրող ծառայություններին վերաբերող հստակ հատկացված էջ կամ կանխատեսելի տրամաբանությամբ կառուցված սխեմա չկա: Պարզ չէ, թե քանի վճարովի ծառայություն է գործում ու որոնք են դրանց կարգավորման իրավական հիմնավորումները: Հստակ չէ նաև, թե որքանով են ամբողջական համայնքային կառույցների ու դրանց մատուցած ծառայությունների մասին տեղեկությունները և ֆինանսական հաշվետվությունները: Չնայած քաղաքապետարանը գնումների հարթակում հրապարակում է պահանջվող տեղեկությունները, սակայն դրանք հասանելի չեն: Ավելին, անկախ գնումների հարթակից գնումների մասին հիմնական տեղեկությունները պետք է հեշտ տեղորոշելի լինեն համայնքի պաշտոնական կայքում: Վերջապես, հակակոռուպցիոն և բարեվարքության միջոցառումներին առնչվող հիմնական տեղեկությունները տեղորոշել չի հաջողվել:

Քաղաքային պլանավորումը անխուսափելիորեն ենթադրում է կենսագործունեության միջավայրի փոփոխություն: Կենսագործունեության միջավայրի փոփոխությունը պետք է իրականացվի հասարակության մասնակցության պայմաններում: Իրականում, հասարակությունը չի կարողանում մասնակցել, քանի որ գլխավոր հատակագիծը հիմնավորող վերլուծություններով ու վիճակագրական տվյալներով փաստաթղթեր առկա չեն, իսկ քաղաքի գոտևորման նախագծերը հրապարակված են պաշտոնական կայքում, սակայն քարտեզները մասշտաբի պատճառով ընթեռնելի չեն: Նույն խնդիրն է նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման և օտարման ծրագրերի դեպքում: Ընթացիկ քաղաքաշինական քարտեզը կայքում առկա չէ: Հողամաս տրամադրելու մասին քաղաքապետի որոշումների համակարգված սպառիչ ցանկ չկա: Պատահական չէ, որ հարցված բնակիչների ընկալումներում քաղաքապետարանը ակտիվորեն ներգրավված հակառակորդ է: Այս ընկալման հիմնական պատճառը արդյունավետ հաղորդակցության բացակայությունն է:

Համայնքն ունի սեփական գույք, սակայն կայքում առկա է միայն համատիրությունների ցանկը: Քաղաքապետն իրականացնում է բնակիչների պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում, սակայն կայքում չկան հստակ տեղեկություններ կատարված աշխատանքների մասին: Պարզ չէ նաև, թե քաղաքում որոնք են եղել բնապահպանական միջավայրի ծրագրվող փոփոխությունները:

Առաջարկություններ

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեություն. քաղաքապետարանի և առանձին պաշտոնյաների թափանցիկ ու հաշվետու գործունեությունը կարևորվում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման տեսանկյունից: Երևանցիների կարծիքի ազատ արտահայտումը հնարավոր չէ երաշխավորել, եթե չստեղծվեն այն նվազագույն պայմանները, որոնք թույլ կտան առանց տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության, փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ: Հետևաբար, պետք է ՏԻՄ իրավական ակտերը կայքում տեղադրել այնպես, որ կարելի լինի տեսնել փոփոխությունների, խմբագրումների հետագիծը, ինչպես նաև առնչություններն այլ իրավական փաստաթղթերին: Որոշումները, հայտարարությունները, ուղերձները, կարգադրություններն ու ակտերը պետք է այնպես համակարգել, որպեսզի դրանք որոնողի համար լինեն արագ նավարկելի՝ ներբեռնելու հնարավորությամբ, և բացի հերթական համարից ու վերնագրից պարունակեն համառոտ բովանդակությունը կամ բանալի բառեր:

Հանրային մասնակցությունը որոշումների կայացմանը. համայնքի՝ բնակիչների փաստացի մասնակցությունը երաշխավորելու համար պետք է փոխել ավագանու, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նիստերի մասին իրազեկման ձևաչափը: Օրինակ՝ դիտարկել օրացույցի ներառում, որը ամսվա օրերի ակտիվ հղումների միջոցով կարող է կազմակերպել և հեշտ հասանելի դարձնել այդ տեղեկությունները կայքի այցելուների համար: Ավագանու որոշմամբ պետք է նախաձեռնել համապատասխան կարգավորումներ ավագանու հանձնաժողովներին հետաքրքրված շահագրգիռ կողմերի մասնակցության մասին: Հարկավոր է հրապարակել հիմնական քաղաքական փաստաթղթերը ու դրանց հիմքում ընկած վերլուծականները, հանրային լսումների արդյունքները՝ որպես հանրության մասնակցությունը խթանող նախապայման: Կարևոր է մշակել բնակիչների ծանուցման համակարգ, որը թույլ կտա բնակիչներին ըստ հասցեների գրանցվել և ըստ ոլորտների կամ առանձին թեմաների ստանալ ծանուցումներ, ինչպես նաև ազդակիր համայնքում բնակվելու դեպքում քաղաքապետարանին թույլ կտա անձնական ծանուցմամբ տեղեկացնել բնակչին համապատասխան հանրային լսման կամ քննարկման մասին: Վերջապես, պետք է կայքում հրապարակել Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ-գործընկերների մասին տեղեկություններ՝ դասակարգված ըստ սոցիալական պաշտպանության, առողջապահական, կրթական, շրջակա միջավայրի պաշտպանության ու տնտեսական զարգացման ոլորտների:

Անձնակազմի կառավարում. Երևանի քաղաքապետարանը պետք է հրապարակի քաղաքապետարան աշխատանքի ընդունման կարգը, ինչպես նաև՝ իր ենթակայության ՀՈԱԿ-ներից պահանջի, որպեսզի տեղեկատվությունը տնօրինող մարմիններն իրենց կայքերում հրապարակեն համանման կարգերը: Քաղաքապետարանի պաշտոնատար անձինք՝ որոշում կայացնողները (ստորաբաժանումների ղեկավարներ) պետք է հասանելի լինեն, ինչպես նաև հանրությունը պետք է կարողանա ծանոթանալ նրանց կենսագրությանը: Մասնավորապես, քաղաքապետարանը տեղեկատվության ազատության պատասխանատուի, գնումների համակարգողի դեպքում պետք է գտնի արդյունավետ լուծում՝ համայնքը բնակիչների համար հասանելի դարձնելու տեսանկյունից, վերջիններիս դիմելու դեպքերի նկարագրության հետ միասին: Վերջապես, հարկավոր է միախողովակ հաղորդակցությունից անցնել

բազմախողովակ հաղորդակցության և բնակիչներին ու մյուս շահատերերին (շահագրգիռ շրջանակներին) թույլ տալ անմիջապես գրավոր հաղորդակցվել համապատասխան պաշտոնատար անձանց հետ:

Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն. հանրային, այդ թվում՝ համայնքային ծառայողները պետք է հետևեն որոշակի վարքագծի կանոններին: Հետևաբար, կայքում պետք է ստեղծել հեշտ հասանելի բաժին, որտեղ պետք է տրված լինեն Երևանում կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող հիմնական տեղեկությունները՝ ներառյալ միջոցառումների ծրագիրը, կատարված աշխատանքների դեպքում՝ նաև համապատասխան հաշվետվությունները: Կարևոր է կայքում հրապարակել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտման, հանրային շահին վնասող դեպքերի հաղորդման, հաշվառման և պաշտպանության միջոցների կարգերը, որպեսզի քաղաքացիները իրազեկված լինեն, թե երբ պետք է դիմեն բարեվարքության հարցերով կազմակերպչին, որի կոնտակտային տվյալները և դիմելու ձևը, ներառյալ՝ գործող կարգը, պետք է տեղադրված լինեն տեսանելի լուծմամբ:

Բյուջետավորում. համայնքի գործուն մասնակցությունը խթանելու համար, բացի հիմնական ցուցանիշների հրապարակումից, կարևոր է բյուջեի նախագծի հրապարակումը այնպես, որպեսզի այն թույլ տա ցանկացողներին ուսումնասիրել նախագիծն ու մասնակցել քննարկմանը, իսկ հանրային լսումների մասին պետք է կայքում լինի մատչելի տեղեկատվություն:

Ֆինանսական հարցեր և դրամական հատկացումներ. հանրային միջոցների տնօրինումը պետք է հետևի որոշակի ընթացակարգի և թափանցիկ խաղի կանոններ սահմանի շահատերերի համար, այլ ոչ թե բավարարվի միայն ավագանու անհատական որոշումներով: Ավելին, այդ ամենը, ինչպես նաև հատկացումները, պետք է մատչելի լինեն և օրինակ՝ չհետևեն հայտարարությունների հոսող տրամաբանությանը, որտեղ զետեղված տեղեկությունը կորում է և, ըստ էության, մատչելի չէ: Վերջապես, հարկավոր է մշակել և/կամ գործադրել ընթացակարգ, որը թույլ կտա տեղական բյուջեի մուտքերի գոյացման իրավական հենքը լայնորեն քննարկել բնակիչների և քաղհասարակության ներկայացուցիչների հետ և երաշխավորել արդյունքների արձանագրությունների մատչելիությունը հանրության համար:

Հանրային գնումներ. տեղեկատվության ազատության պահանջը ենթադրում է, որ քաղաքապետարանը տարին առնվազն մեկ անգամ հրապարակի համայնքի՝ Երևանի բնակիչների համար իրականացվող և իրականացման ենթակա աշխատանքներն ու ծառայությունները: Այս իմաստով գնումների պլանը, ինչպես նաև գնումների տարեկան հաշվետվությունը պետք է հասանելի լինեն հանրությանը: Հետևաբար, հարկավոր է կայքում ստեղծել առանձնացված բաժին գնումների վերաբերյալ, որը մի կողմից կթիրախի գնումների մասնակցության ցանկություն ունեցողներին և կտա տեղեկություններ գործող կարգերի, մրցույթների և էլեկտրոնային համակարգերի մասին, մյուս կողմից համակարգված հաշվետվությունները կտրամադրի հանրությանը՝ համայնքին:

Համայնքային, այդ թվում՝ կոմունալ կազմակերպություններ. ակնհայտ է, որ համայնքի անունից գործող ավագանու հիմնած կազմակերպությունների մասին տեղեկությունը պետք է լինի հանրային ու մատչելի: Հետևաբար, համայնքի կողմից հիմնադրված բոլոր կազմակերպությունների մասին կայքում պետք է տրամադրել տեղեկություններ՝ առնվազն ներառելով անվանումը, համառոտ տեղեկություն գործունեության մասին և կոնտակտային տվյալները: Բնակիչներին և այլ շահագրգիռ անձանց կայքում պետք է տրամադրել միջին՝ մինչև 250 աշխատող և մեծ չափի առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների մասին համակարգված ու մատչելի տեղեկատվություն, ներառյալ ֆինանսական հաշվետվությունները, արտաքին անկախ աուդիտորական ստուգման արդյունքները, ղեկավար կազմի մասին տեղեկությունները և այլն:

Քաղաքային պլանավորում. կենսամիջավայրի փոփոխությանը հանրության գործուն մասնակցությունը ապահովելու համար պետք է մշակել և գործարկել քաղաքային պլանավորման միջոցառումներին հանրության բազմախողովակ իրազեկման և մասնակցության ներառական մեխանիզմներ: Բացի այդ, պետք է դիտարկել անցումը քաղաքային պլանավորման փաստաթղթերի համադրված մանրամասն մշակման մոդելին և հանրային մասնակցության մեծ ծավալը բերել նախագծման փուլ, որպեսզի հետագայում հանրային մասնակցությամբ շտկումների համար հանրությունից շատ ջանք, քաղաքային բյուջեից հավելյալ միջոցներ և մարդկային ներուժ չպահանջվի, իսկ ներկայացվածությունն էլ հնարավորինս երաշխավորվի ու քաղաքային միջավայրի փոփոխությունը զերծ մնա մենաշնորհվելու ռիսկից: Պետք է մշակել գոտևորման նախագծերի հրապարակման համաժամանակյա առցանց համակարգ, որը թույլ կտա այլ մասշտաբով հետևել քաղաքում վարվող տարածական քաղաքային պլանավորման քաղաքականությանը: Մասնավորապես, դիտարկել էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի հետ համագործակցությամբ նման մոդելի ներդրումը: Վերջապես, պետք է հանրայնացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններին առնչվող բոլոր որոշումները, ինչպես նաև միջոցառումների, ծրագրերի, պահպանության պայմանագրերի կնքման, վարձակալության, շինթույլտվությունների, վերաբերելի վիճակագրության, վերլուծությունների, հաշվետվությունների մասին տեղեկությունները:

Ֆիզիկայի գիտավանի և 33-րդ թաղամասի հարցված բնակիչներից պարզ դարձավ, որ կան մի շարք բացեր, որոնք շտկելու համար պետք է գործադրվեն արմատական փոփոխություններ: Մասնավորապես, քաղաքային իշխանությունները բնակիչների հետ հաղորդակցման ընթացքում պետք է մոտենան յուրայինի դիրքերից՝ հարաբերությունները կառուցելով «բնակչի հետ և համար», այլ ոչ՝ «բնակչի դեմ» մոդելով: Քաղաքապետարանը պետք է զբաղեցնի շահի տեսանկյունից չեզոք, սակայն բնակիչներին ներգրավող դիրք: Բնակիչները՝ որպես կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացի կարևոր կողմ, պետք է իրազեկվեն ավելի վաղ փուլում՝ մինչև որոշումների կայացումն ու բուն փոփոխությունների իրագործումը: Բնակչին պետք է հստակ իրազեկում, իրավական հնարավորությունների ծանուցում, գործընթացի որպես կողմ ընդգրկում և որպես կարևորված սուբյեկտի գիտակցության ձևավորում՝ խուսափելով անզորության և անօգնականության համախտանիշի ձևավորումից: Հետևաբար, հարկավոր է իրականացնել մի շարք գործողություններ: Առաջին, ստեղծել քաղաքապետարանի, կառուցապատողների և բնակիչների միջև կապի հստակ և թափանցիկ ուղիներ: Երկրորդ, պարբերաբար թարմացնել

քաղաքաշինական ծրագրերի, փոփոխությունների և որոշումների մասին տեղեկատվությունը՝ նվազեցնելով ապատեղեկատվությունը և առասպելները: Երրորդ, քաղաքաշինական ծրագրերի հետ կապված որոշումների կայացման գործընթացում բնակիչներին ներառել որպես ակտիվ շահագրգիռ կողմի: Չորրորդ, կազմակերպել հանրային խորհրդակցություններ, սեմինարներ և ֆորումներ՝ նախքան ծրագրերը վերջնականացնելը: Հինգերորդ, ապահովել գույքի գնահատման, փոխհատուցման հաշվարկների և կառուցապատողների և պաշտոնյաների միջև փոխգործակցության թափանցիկությունը: Վեցերորդ, քաղաքաշինության վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի առնել յուրաքանչյուր թաղամասի պատմական, մշակութային և արժեքային համատեքստը: Յոթերորդ, սկսել մշակութային և կրթական նախաձեռնություններ՝ խթանելու պատմական իրազեկումը և պահպանելու թաղամասերի մշակութային նշանակությունը: Խրախուսել բնակիչներին ակտիվորեն մասնակցելու իրենց համայնքի ժառանգության պահպանմանը:

Բնակարանային քաղաքականություն. համայնքի սեփական գույքի վերաբերյալ պետք է հրապարակել հստակ տեղեկություններ, թե ինչ ունի համայնքը և ինչպես է այն տնօրինվում: Դա պահանջում է, որպեսզի ամեն տարի հրապարակվի գույքագրումը: Ավելին, պետք է տրամադրել հստակ տեղեկություններ այդ գույքի շահագործման խաղի կանոնների և դրանց հասանելիության մասին: Բացի այդ, պետք է հրապարակել համատիրությունների գործունեության տարեկան հաշվետվությունները: Դրանք ոչ միայն չեն հանրայնացվում, այլև կան տարբեր հետազոտություններ և հրապարակումներ, որոնք փաստում են, թե ինչպես են համատիրությունները կտրված սեփականատերերից, որոնց որոշմամբ իրենք կյանքի են կոչվել ընդհանուր բաժնային սեփականությունը կառավարելու համար: Վերջապես, պետք է հրապարակել սանիտարական մաքրման սխեմայի և աղբահանության մասին տեղեկությունները, քանի որ դրանք առնչվում են հանրային առողջապահությանը:

Քաղաքացիական պաշտպանություն. քաղաքացիական պաշտպանության թափանցիկության բարելավման համար հարկավոր է տրամադրել առավել առարկայական տեղեկություններ բնակիչներին աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում պաշտպանության մասին: Այդ թվում, պետք է տրամադրել տեղեկություններ այն միջոցառումների մասին, որոնք բնակիչներին ապահովագրում են մարդածին աղետներից բիզնես գործունեություն ծավալող տնտեսվարողների տարածքներում, համայնքի առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում: Կայքում պետք է հրապարակել հստակ տեղեկություններ պատսպարման միջոցառումների արդյունքների մասին, ինչպես նաև տրամադրել կոնտակտային տվյալներ և պատասխանատուներ, որոնց բնակիչները կարող են դիմել իրենց հասցեին կցված ապաստարանի կամ թաքստոցի մասին տեղեկություն ստանալու համար:

Շրջակա միջավայրի պաշտպանություն. քաղաքապետարանը պետք է հրապարակի բնապահպանական ծրագրերն ու հաշվետվություններն ու երաշխավորի դրանց որոնելիությունն ու հեշտ տեղորոշելիությունը: Ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկությունները չեն կարող լինել համառոտ, դրանց հիմքում կան վիճակագրական տվյալներ, վերլուծություններ և ուսումնասիրություններ, որոնք պետք է հրապարակվեն: Պետք է հրապարակվի ընդերքօգտագործման առկա թույլտվությունների ցանկը՝ բաց ձևաչափով: Համայնքին պատկանող՝ քաղաքապետարանի ենթակայության տակ գործող

կազմակերպությունները պետք է կատարեն բնապահպանական օրենսդրության նորմերը, և այդ մասին բնակիչները պետք է կարողանան իրազեկվել կայքից: Կայքում պետք է հրապարակվի տեսչական մարմնի որոշումների ցանկը՝ համայնքի ենթակայության կազմակերպությունների կողմից օրենքի պահանջների կատարման մասին:

Սոցիալական ծառայություններ. համայնքում խոցելի խմբերին սոցիալական աջակցության համար հարկ է, նախևառաջ, ունենալ հնարավորինս լավ թիրախավորող համակարգ և մեխանիզմներ տեղական մակարդակում: Այս ոլորտում պետք է հրապարակել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների արձանագրությունները (անձնական տվյալների և անձը բացահայտող տեղեկության ծածկագրմամբ): Այս մոտեցումը թույլ կտա վերլուծել այդ մարմինների աշխատանքը՝ դրանք համադրելով ընդհանուր վիճակագրության հետ: Իհարկե, նախընտրելի կլիներ, որ այդ հանձնաժողովների կազմերի հրապարակմանը զուգահեռ նաև ակտիվ հղմամբ ներբեռնվեին անդամների կենսագրականները:

ՆԱԽԱԲԱՆ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն հասարակական կազմակերպությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում իրականացրել է Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատումը:

Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանի կառավարման՝ թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանը, այդ թվում՝ բարեվարքության ամրապնդման միջոցով:

Սույն գնահատման խնդիրն է բացահայտել, թե որքանով է Երևանի քաղաքապետարանը ապահովում թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստող ՀՀ օրենսդրության ամրագրումները և որքանով են կիրառվում ՀՀ Սահմանադրության, ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերից բխող թափանցիկությանն ու հաշվետվողականությանը վերաբերելի դրույթները, բանաձևերն ու հանձնարարականները:

Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը գնահատվել են քաղաքային գործունեության 14 ոլորտով, որոնք ներառում են Երևանի քաղաքապետարանին ՀՀ օրենքներով վերապահված գործունեության շրջանակները՝ ներառյալ քաղաքապետարանի կառավարման մարմինները, հանրային մասնակցությունը ավագանու որոշումներում, անձնակազմի կառավարումը, հակակոռուպցիոն քաղաքականությունը, բյուջետավարումը, ֆինանսական մուտքերը և հատկացումները, գնումները, համայնքային կազմակերպությունների աշխատանքը, քաղաքային պլանավորումը (քաղաքաշինությունը), բնակարանային քաղաքականությունը, քաղաքացիական պաշտպանությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, սոցիալական ծառայությունները և կրթությունը:

Զեկույցը ներառում է վերոնշյալ ոլորտներում թափանցիկության և հաշվետվողականության առումով ձևավորված ակնկալիքների ներկայացումը, առկա իրավիճակի վերլուծությունը և առաջարկություններ:

- ***Ինչ է ակնկալվում*** հատվածում ներկայացվում են գնահատման նպատակով ձևավորված ցուցիչներով չափվող տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունները, որոնք բխում են ՀՀ Սահմանադրությունից, միջազգային պարտավորություններից, օրենքներից և նորմատիվ իրավական այլ ակտերից:
- ***Ինչ կա*** հատվածում քննարկվում է առկա իրավիճակը, համապատասխանությունը զեկույցի նախորդ հատվածում ներկայացված ակնկալիքներին և համապատասխան հիմնավորումները:
- ***Ինչ անել*** հատվածում ներկայացվել են առաջարկությունները, որոնք Երևանի քաղաքապետարանը կարող է դիտարկել իր գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարելավելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը[1]: Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) իրավունքն ու կարողությունն է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով[2]: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումն ունի որոշակի առանձնահատկություններ և սահմանվում է առանձին օրենքով:

Իրավական պետության[3] համատեքստում տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով[4]: Նրանց կողմից ընդունվող ցանկացած իրավական ակտ պետք է բխի և համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին[5]:

Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի՝ օրենքով սահմանված պարտադիր և ավագանու որոշումներով սահմանված կամավոր խնդիրները լուծելու նպատակով, ինչպես նաև պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունները տեղերում առավել արդյունավետ իրականացնելու նպատակով[6]:

Սահմանադրությունը ՏԻՄ-երին պարտավորեցնում է[7] սեփական իրավասությունների շրջանակում և ըստ հնարավորությունների իրագործել մի շարք նպատակներ[8], այդ թվում՝ երեխաների զարգացման համար պայմանների ստեղծումը, բնակչության առողջության պահպանումը, կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության, երիտասարդության մասնակցության, հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության, զբաղվածության խթանումը և այլն:

Իրավունքի գերակայությունը՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ, պարտավորեցնում է, այդ թվում՝ ՏԻՄ-երին և պաշտոնատար անձանց, իրավական որոշակիության սկզբունքից ելնելով, բնակիչների հետ իրավահարաբերությունները կարգավորել բացառապես այնպիսի օրենքներով, որոնք **հստակ, կանխատեսելի և մատչելի են**[9]: Բացի այդ, ՏԻՄ-երի կողմից կազմված, ստացված և տնօրինվող ցանկացած ձևով գրառված տեղեկություն[10] սեփական նախաձեռնությամբ պետք է հրապարակվի[11]: Այս պահանջը

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդված 9:
[2] ՀՀ Սահմանադրություն, հոդված 179:
[3] ՀՀ Սահմանադրություն, հոդված 1:
[4] ՀՀ Սահմանադրություն, հոդված 6:
[5] ՀՀ Սահմանադրություն, հոդված 79:
[6] ՀՀ Սահմանադրություն, հոդված 182:
[7] ՀՀ Սահմանադրություն, հոդված 87:
[8] ՀՀ Սահմանադրություն, հոդված 86:
[9] ՀՀ Սահմանադրական դատարանի որոշում 1270, 03.05.2016թ.:
[10] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիա, հոդված 1, մաս 2, կետ «բ»:
[11] Նույն տեղում, հոդված 10:

հիմնավորվում է ընդհանուր հետաքրքրության հարցերին, համայնքի դեպքում՝ համայնքային նշանակության հանրային հարցերին, բնակիչների (հանրության) իրազեկված մասնակցությունը խթանելու նպատակով: Այն նաև խթանում է հանրային կառավարման թափանցիկությունն ու արդյունավետությունը[12]:

Հայաստանը 2002 թվականից, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի վավերացումից ի վեր, հանդիսանում է Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կառույցի անդամ և հանձնառություն ունի գործադրելու կոնգրեսի ընդունած բանաձևերն ու հանձնարարականները:

Երևանի քաղաքապետարանը 2022 թվականից միացել է տեղային բաց կառավարման գործընկերության նախաձեռնությանը[13]: Այն քաղաքապետարանի և քաղաքացիական հասարակության համար միավորվելու հարթակ է՝ Բաց կառավարման հռչակագրի[14] արժեքներին ու սկզբունքներին համապատասխանելու միջոցով քաղաքապետարանի գործունեությունն ավելի բաց, ներառական և պատասխանատու դարձնելու համար: Հռչակագրում ներառված հանձնառություններից են՝ տեղեկատվության հասանելիության ընդլայնումը, քաղաքացիների մասնակցությանն աջակցելն ու քաղաքացիական հասարակության կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը միտված մեխանիզմների ձևավորումը, ինչպես նաև՝ տեղական մակարդակում համայնքային ծառայողների բարեվարքության չափորոշիչների կիրառումը:

Բաց կառավարման հիմնական սկզբունքները՝ թափանցիկությունը, մասնակցայնությունը և հաշվետվողականությունը, ենթադրում են, որ տեղական իշխանությունները քաղաքացիների հետ հարաբերություններում և աշխատակազմերի կառավարման գործընթացում ցուցաբերեն նորարարական մոտեցումներ[15]: Բաց կառավարումը ենթադրում է, որ ՏԻՄ-երի աշխատանքը պետք է հասանելի լինի հանրության համար: Մասնավորապես, համայնքի՝ Երևանի բնակիչները պետք է կարողանան հետևել, թե ինչ է քննարկվել և ինչ արդյունքի է հասել իրեն ներկայացնող մարմինը[16]: Վերջապես, կառավարման այս տրամաբանությունը խթանում է համայնքի բնակիչների մասնակցությունը՝ տեղական ինքնակառավարմանը[17]:

[12] Նույն տեղում:
[13] Տեղական բաց կառավարման գործընկերություն, https://shorturl.at/aCMW1:
[14] *Open government declaration*. Open Government Partnership. (2021, July 12). Retrieved January 9, 2023, from https://www.opengovpartnership.org/process/joining-ogp/open-government-declaration:
[15] Բանաձև 435 (2018), Թափանցիկություն և բաց կառավարում, ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, https://rm.coe.int/transparency-and-open-government-governance-committee-rapporteur-andre/16808eca26:
[16] Հանձնարարական 424 (2018), Թափանցիկություն և բաց կառավարում, ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, https://rm.coe.int/0900001680941feb:
[17] Նույն տեղում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության համաթվի գնահատման նպատակն է Երևանի քաղաքապետարանի գործունեության հիմնական ոլորտներում վերհանել թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը:

Գնահատման խնդիրն է բացահայտել, թե որքանով է Երևանի քաղաքապետարանն ապահովում ՀՀ օրենսդրությամբ վերապահված ոլորտներում թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Թափանցիկության և հաշվետվողականության գնահատման առարկա են դարձել հետևյալ ոլորտները.

1. ՏԻՄ-երի գործունեություն
2. Հանրային մասնակցություն որոշումների կայացմանը
3. Անձնակազմի կառավարում
4. Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն
5. Բյուջետավորում
6. Ֆինանսական հարցեր և դրամական հատկացումներ
7. Հանրային գնումներ
8. Համայնքային՝ այդ թվում կոմունալ կազմակերպություններ
9. Քաղաքային պլանավորում, հողօգտագործում և համայնքային գույք
10. Բնակֆոնդ կամ բնակարանային քաղաքականություն
11. Քաղաքացիական պաշտպանություն
12. Շրջակա միջավայրի պաշտպանություն
13. Սոցիալական ծառայություններ
14. Կրթություն

Համաթվի ձևավորումը իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Սլովակիայի[18] և Ուկրաինայի[19] մասնաճյուղերի կողմից կիրառված համանման համաթվերի հաշվարկման մեթոդաբանություններով, որոնց հիմքում ընկած են ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագրի[20] առաջարկած թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքի նպատակներն ու չափումները (Հավելված 1):

Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համար որդեգրված նպատակների և չափումների ներքո (Հավելված 2-ը) թափանցիկության և հաշվետվողականության համար ընդունվել են հետևյալ սահմանումները.

[18] *Slovakia: Cities ranked on their transparency - news*. Transparency.org. (2012, December 27). Retrieved February 14, 2023, from https://www.transparency.org/en/news/slovakia-cities-ranked-on-their-transparency.

[19] TI Ukraine. (2018). *Transparent Cities: Research of Transparency and Accountability*. Прозорі міста - Наснажуємо місцеву владу до прозорості та підзвітності. Retrieved February 14, 2023, from https://transparentcities.in.ua/en.

[20] *The global campaign on Urban Governance - UN-Habitat*. (2002). Retrieved January 31, 2023, from https://unhabitat.org/sites/default/files/download-manager-files/Global%20Campaign%20on%20Urban%20Governance.pdf.

- **Թափանցիկությունը** քաղաքացիների շահերից բխող՝ համայնքային նշանակության հանրային հարցերին[21] վերաբերող պաշտոնական փաստաթղթերի[22] այնպիսի եղանակով հրապարակայնացումն[23] է, որը կերաշխավորի որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցությունը քաղաքականության մշակումից մինչև իրականացում:
- **Հաշվետվողականությունը** ենթադրում է սեփական գործողությունների համար քաղաքացիներին հաշվետու[24] լինելու հանրային իշխանությունների ներկայացուցիչների գիտակցումը՝ ներկայացնելով փաստահեն հիմնավորումներ՝ քաղաքականության, ծրագրերի, հանրային միջոցների գոյացման ու ծախսերի և այլ որոշումների կայացման գործընթացում:

Վերոնշյալ ոլորտներում Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության գնահատման ժամանակ դիտարկվել են տվյալ ոլորտները կանոնակարգող իրավական ակտերը, որոնք ներկայացված են ստորև՝

Միջազգային փաստաթղթեր

- ԵԽ Տեղական ինքնակառավարման խարտիա՝ ընդունված 15.10.1985թ. (վավերացվել է 2002թ.)[25]
- ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիա՝ ընդունված 23.03.2022թ.

[21] ՏԻՄ ՀՀ օրենքի հոդված 3-ը սահմանում է, որ ՏԻՄ-երի իրավունքն ու կարողությունն է լուծել համայնքային նշանակության հանրային հարցերը՝ առաջնորդվելով համայնքի բնակիչների շահերով:

[22] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի (The Council of Europe Convention on Access to Official Documents) բացատրական զեկույցը մեկնաբանում է «պաշտոնական փաստաթուղթը» եզրույթը, որպես հանրային իշխանության կողմից մշակված, պահվող կամ ստացված տեղեկություն անկախ դրանց նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ, տվյալների էլեկտրոնային բազաներ, էլեկտրոնային նամակագրություն), տես Council of Europe Treaty Series - No. 205. (2009, June 18). *Explanatory Report to the Council of Europe Convention on Access to Official Documents*. Rm.coe.int. Retrieved February 15, 2023, from https://rm.coe.int/16800d3836:

[23] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային իշխանությունը (ներառում է ՏԻՄ-ը և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են հանրային գործառույթ կամ օրենքով սահմանված կարգով ֆինանսավորվում են բյուջեից) սեփական նախաձեռնությամբ պետք է հրապարակի պաշտոնական փաստաթղթերը՝ խթանելով հանրային վարչարարության թափանցիկությունն ու արդյունավետությունը և հանրության մասնակցությունը հանրային հարցերին: Բացատրական զեկույցն իր հերթին այդ հոդվածը մեկնաբանում է, որպես պաշտոնական փաստաթղթերի հրապարակման այնպիսի քաղաքականություն, որը այս դեպքում համայնքային նշանակության հանրային հարցերին վերաբերող փաստաթղթերի հրապարակումը իրականացնում է առանց դիմումի՝ տվյալ հանրային մարմնի նախաձեռնությամբ: Այն նպատակ ունի քաղաքացիներին հնարավորություն տալ ձևավորվել կարծիք հանրային իշխանությունների վերաբերյալ և ներգրավվել որոշումների կայացմանը:

[24] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի նախաբանը ամրագրել է տեղեկատվության ազատության իրավունքի իրացման տեսանկյունից հանրային իշխանությունների հաշվետվողականության կարևորությունը՝ վերջիներիս լեգիտիմությունը վերահաստատելու նպատակով: ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածն էլ ամրագրել է ՏԻՄ-երի ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու յուրաքանչյուրի իրավունքը:

[25] Միջազգային պայմանագրերի դեպքում ներառված են նաև դրանցից բխող վերաբերելի հանձնարարականները, որոնք ըստ ոլորտների ներկայացված են գնահատման ցուցիչների ծանոթագրություններում:

Օրենսգրքեր

- ՀՀ հողային օրենսգիրք՝ ընդունված 02.05.2001թ.
- ՀՀ հարկային օրենսգիրք՝ ընդունված 04.10.2016թ.
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք՝ ընդունված 09.11.2004թ.

Օրենքներ

- «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 24.06.1997թ.
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 05.05.1998թ.
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 03.02.1998թ.
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 11.11.1998թ.
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 07.05.2002թ.
- «Համատիրության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 07.05.2002թ.
- «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 07.05.2002թ.
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 23.09.2003թ.
- «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 08.06.2004թ.
- «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 14.12.2004թ.
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 18.02.2004թ.
- «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 15.11.2005թ.
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 11.04.2005թ.
- «Երևանում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 26.12.2008թ.
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 10.07.2009թ.
- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 23.06.2011թ.
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 20.05.2013թ.
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 17.12.2014թ.
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 21.06.2014թ.
- «Գնումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 16.12.2016թ.
- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 09.06.2017թ.
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 23.03.2018թ.
- «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենք՝ ընդունված 21.03.2018թ.
- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 04.12.2019թ.

Նշված իրավական ակտերի հիման վրա մշակվել են ցուցիչներ: Դրանք հարցեր են, որոնց պատասխանների հիման վրա իրականացվել է Երևանի քաղաքապետարանի թափանցիկության ու հաշվետվողականության գնահատումը:

Գնահատումը հիմնված է երկրորդային տվյալների հավաքագրման և երկու առանձին դեպքերի ուսումնասիրության (case study) հիմքում ընկած հարցազրույցների վրա:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է 2023 թվականի ապրիլի 10-ից մայիսի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հետազոտական թիմի անդամներից մեկը հավաքագրել է տվյալները, մյուսը՝ վերստուգել է հավաքված տվյալները՝ սխալներից ու վրիպումներից խուսափելու համար: Դեպքերի ուսումնասիրությունն իրականացվել է հուլիսի 1-20-ը ընկած ժամանակահատվածում: Ստորև ներկայացված են երկրորդային տվյալների հավաքագրման մեթոդները:

Տվյալների հավաքագրման մեթոդ	Կոդ
Քաղաքապետարանի պաշտոնական կայքէջի ուսումնասիրություն	W
Քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության օրենսդրության պահանջներին համապատասխանության ստուգում	D
Երևանի քաղաքապետարան ուղղված պաշտոնական հարցումների պատասխաններ	I
Պաշտոնական տեղեկագրերի, տվյալների բազաների ուսումնասիրություն	T
Հեղինակավոր լրատվամիջոցների հոդվածներ, ՀԿ-ների և միջազգային կառույցների հրապարակած փաստաթղթեր, դատարանի որոշումներ	S

Գնահատման ցուցիչների բաժնում ներկայացված 127 ցուցիչներից (հավելված 3) 2023 թվականի զեկույցում դիտարկվել են 124-ը[26]: Ցուցիչներն ունեն չափման միավորներ: Առավելագույն 1 միավորը հաշվարկվել է այն դեպքում, երբ հրապարակված տեղեկատվությունը եղել է ամբողջական: Միավոր չի տրվել այն դեպքում, երբ մեթոդաբանությամբ սահմանված տեղորոշման արդյունքում ցուցիչով սահմանված տեղեկատվությունը չի գտնվել: Ցուցիչների մեծամասնության դեպքում հնարավոր է եղել նաև կիրառել 0.5 միավոր, եթե տեղեկատվությունը եղել է ոչ ամբողջական: Երկու ցուցիչների դեպքում կիրառվել է 0,25 հարյուրերորդական, իսկ երկու այլ ցուցիչների դեպքում էլ՝ 0,2 տասնորդական միավորները հաշվելու մոտեցում:

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության համաթվի գնահատումը հիմնված է դիտարկված 124 ցուցիչների ու դրանց գոյացրած առավելագույն միավորի վրա: Առավելագույն հնարավոր 124 միավորը համեմատվել է գնահատման արդյունքում գոյացած՝ ըստ ոլորտների հաշվարկված փաստացի միավորի հետ: Փաստացի միավորները գումարվել են, ապա սանդղակավորվել 0-ից 100-ի միջակայքում և դրանից հետո գնահատվել է թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը:

[26] Չեն ներառվել 3 ցուցիչ, որից երկուսն առնչվում են բարեվարքության ոլորտին և մեկը՝ կրթությանը:

Բանաձևը՝ Համաթիվ[27](ԹՀ) $= (\frac{100}{124}) \sum_{1}^{124}$ ԹՀՓՄ,

որտեղ՝

ԹՀ՝ թափանցիկություն և հաշվետվողականություն,

ԹՀՓՄ՝ թափանցիկության և հաշվետվողականության փաստացի միավոր:

Թափանցիկ և հաշվետու գնահատականի վերին շեմը համարվել է հաղթահարված, եթե կատարողականը դիտարկված ցուցանիշներով գրանցել է 81-100 տոկոսանոց արդյունք: Դա նշանակում է, որ 124 միավորը հավասարեցվել է 100 տոկոս կատարողականին: Սահմանվել է 5 միջակայք: Դրանից բխել է սանդղակավորումը հետևյալ տրամաբանությամբ՝

Միավորներ	Կարգավիճակ
0-20	Ոչ թափանցիկ և ոչ հաշվետու
21-40	Մեծամասամբ ոչ թափանցիկ և ոչ հաշվետու
41-60	Մասամբ թափանցիկ և հաշվետու
61-80	Մեծամասամբ թափանցիկ և հաշվետու
81-100	Թափանցիկ և հաշվետու

Քաղաքապետարանի պաշտոնական կայքէջի ուսումնասիրություն

Երևան համայնքը օրենքի պահանջի համաձայն ունի պաշտոնական համացանցային կայք, որում պետք է հրապարակված լինեն համայնքային նշանակության հանրային հարցերի լուծմանն առնչվող տեղեկությունները: Այդ գործունեությունը գնահատելու նպատակով ուսումնասիրվել է պաշտոնական կայքն ու այնտեղ զետեղված նյութերը, դրանց մատչելիությունն ու որոնելիությունը: Հավելյալ, որոշ ցուցիչների դեպքում, քաղաքապետարանին հասցեագրվել են գրավոր հարցումներ և ստացվել պարզաբանումներ: Դրանք ևս ներառվել են փաստացի վիճակի գնահատման վերլուծականում: Վերջապես, ըստ մեթոդաբանության, դիտարկվել են նաև տեղեկագրեր, տվյալների բազաներ և միջազգային, հասարակական կառույցների և հեղինակավոր ԶԼՄ-ների հրապարակումներ:

Նյութերի մատչելիության տեսանկյունից կիրառվել է մկնիկով երեք հպման հայտնի (three-click rule) կանոնը ու դրանից շեղումը: Պարզ նավարկման արդյունքում տեղեկությունը չգտնելուց հետո, գործադրվել է կայքում առկա որոնման պատուհանը: Որպես որոնման սկզբունք ընտրվել են բանալի բառեր, որոնք թույլ կտային ցանկացած մեկին վերհանել տեղեկության առկայությունը: Եթե կայքի որոնման պատուհանի գործադրմամբ պահանջվող տեղեկությունը գտնել չի հաջողվել, ապա կիրառվել է պարզ համացանցային որոնումը:

[27] 2023 թվականին 127 ցուցիչներից չափվելու են 124-ը, մյուսները տարեր պատճառներով չեն հաշվարկվել, իսկ բացատրությունները «Գնահատման ցուցիչների շրջանակը» բաժնի ծանոթագրություններում ներկայացված են:

Պաշտոնական հարցումներ

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության ուսումնասիրության շրջանակներում ի թիվս տվյալների հավաքագրման այլնի կիրառվել է քաղաքապետարանին ուղղված պաշտոնական հարցումների մեթոդը: Հարկ է նշել, որ պաշտոնական հարցումները ուսումնասիրության մեթոդաբանությամբ կիրառվում են տվյալների այլ մեթոդների՝ պաշտոնական կայքի , տեղեկագրերի և տվյալների բազաների, ԶԼՄ հրապարակումների ուսումնասիրության հետ զուգահեռ: Բացառություն է կազմում քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող ցուցիչը՝ համայնքի բնակիչների պատսպարվելու իրազեկվածության վերաբերյալ: Այսկերպ, մի շարք ցուցիչների տվյալների հավաքագրման համար պաշտոնական հարցումների զուգահեռ կիրառումը նպատակ է ունեցել երաշխավորվել տվյալների ամբողջականությունը և ստուգել այլ մեթոդներով ստացված տվյալների հավաստիությունը: Պաշտոնական հարցումները կիրառելիս հաշվի են առնվել այն ցուցիչները, որոնցով նախատեսվող տվյալների հայթայթումը առավել խրթին է և այլ մեթոդներով դժվար հավաքագրվող: Ուսումնասիրության մեթոդաբանությամբ՝ պաշտոնական հարցումներով ստացված պատասխաններից բավարարված չլինելու դեպքում նախատեսվում էր ուղարկել նույն կամ լրացնող բովանդակությամբ կրկնահարցումներ:

Ընդհանուր առմամբ, քաղաքապետարան է ուղարկվել 11 ոլորտի առնչվող 25 ցուցիչի վերաբերյալ պաշտոնական հարցում, որից 6 ցուցիչի վերաբերյալ՝ կրկնահարցումներ (*շուրջ 25 %-ը*):

Դեպքերի վերլուծություն (case studies)

Քաղաքային պլանավորման թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համար մշակված 31 ցուցիչին զուգահեռ կառուցապատվող երկու թաղամասերի օրինակով փորձ է արվել բնակիչներից պարզել քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ընկալումն ու սպասումները: Այս դեպքում, օրենքով պարտադիր համարվող դրույթների հիման վրա ձևավորված չափումներից զատ դիտարկվել է Երևան քաղաքի Ֆիզիկայի գիտավանի և 33-րդ (Ֆիրդուսի) թաղամասի (որպես կառուցապատման միջոցով փոփոխվող կենսամիջավայրերի) բնակիչների կենսափորձը, որի հիման վրա դուրս են բերվել Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկությանը և հաշվետվողականությանն առնչվող խնդիրները:

Որպես բնակիչների կենսափորձն ամբողջացնող պատումների վերհանման մեթոդ օգտագործվել են քաղաքային պլանավորման ոլորտի ուսումնասիրություններում կիրառվող խնդրակենտրոն հարցազրույցները (ԽԿՀ): Այս մեթոդը հնարավորություն է տալիս հավաքագրել ինչպես փաստական տեղեկատվություն, այնպես էլ բնակիչների սուբյեկտիվ ընկալումները՝ քաղաքապետարանի գործունեության և կառուցապատման միջոցով փոփոխվող կենսամիջավայրերի վերաբերյալ:

Իրականացվել է 14 ԽԿՀ՝ 7-ը Ֆիզիկայի գիտավանի, ևս 7-ը՝ 33-րդ թաղամասի բնակիչների շրջանում: Ռեսպոնդենտների ընտրության համար կիրառվել են ձնակույտի և շղթայական նմուշառման տեխնիկաները: Նախ, երկուական հարցազրույց իրականացվել է յուրաքանչյուր

թաղամասի առավել ակտիվ և գործընթացներում ներգրավված անձանց հետ, որոնք հաջորդ քայլի համար, հարցազրուցավարի կողմից առանձնացված չափանիշներին համապատասխան, առաջարկել են խնդրի տեսանկյունից առավել նշանակալի և առանցքային բնակիչների անուններ: Հետազոտության տեսանկյունից կարևորվել է հարցվողների ներգրավվածությունը բողոքի գործողություններում ու իրազեկվածությունը ընթացիկ գործընթացներից: Հետազոտությունը թիրախավորել է տարբեր սեռերի, տարիքային խմբերի ներկայացուցիչների, սակավաշարժ անձանց կամ շարժունակության հետ կապված խնդիրներ ունեցողներին, նորածին երեխաներ ունեցող կանանց, տարեցներին, մեքենայից չօգտվողներին և այլն: Առավել հաճախ հիշատակված վեց բնակիչները (երեքական յուրաքանչյուր թաղամասից) մասնակցել են երկրորդ փուլի հարցազրույցներին, որոնք առաջարկել են վերջին չորս մասնակիցներին: Բոլոր հարցվածները նախապես իրազեկվել են հետազոտության նպատակի ու ընթացակարգերի, հնարավոր ռիսկերի ու մասնակիցների շահերի մասին: Հարցազրույցին մասնակցելը լիովին կամավոր է եղել, անանունությունը պահպանելու սկզբունքով: Մասնակիցներն իրազեկվել են, որ իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվել կամ դադարեցնել հարցազրույցը:

ԽԿՀ հարցաշարն առավել մանրամասն ներկայացված է Հավելված 4-ում: Հետազոտության արդյունքները ներկայացված են Հավելված 5-ում:

Գնահատման սահմանափակումները

Ուսումնասիրության ելակետը որակի կառավարման համակարգի համար միջազգային չափորոշիչով[28] սահմանված պահանջներն են, որոնք պարտադրում են կազմակերպությանը՝ այս դեպքում քաղաքապետարանին, հետևողականորեն մատուցել այնպիսի ծառայություններ, որոնք բավարարում են շահառուների[29]՝ այս դեպքում քաղաքի բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի, ինչպես նաև՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

Սույն գնահատման շրջանակներում քաղաքի բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի պահանջները չեն դիտարկվել: Փոխարենը, ցուցիչները միայն արտացոլում են քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատումը՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների իրականացման շրջանակներում: Միակ ոլորտը, որտեղ փորձ է կատարվել խորքային հարցազրույցների միջոցով վեր հանել բնակիչների պահանջները, քաղաքային պլանավորումն է (քաղաքաշինություն):

Քանի որ ցուցիչների գնահատման համար հիմնականում ուսումնասիրության առարկա է դարձել քաղաքապետարանի կայքը, հետազոտական թիմը գրանցել է ցուցիչի ուսումնասիրության և հավաքագրված տվյալների վերստուգման օրերը: Կայքերը դինամիկ են, և այնտեղ տեղեկության հոսքը, փոփոխությունները արագ են տեղի ունենում: Հատկանշական է, որ մինչ կայքի միջոցով տվյալների հավաքագրման մեկնարկը, Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքը անցում է կատարել նոր տարբերակի: Այս գնահատման համար կայքից տվյալները հավաքագրվել են 2023 թվականի ապրիլ-մայիս ամիսներին:

[28] ISO 9001:2015(E) Quality Management Systems-Requirements:
[29] Միջազգային չափորոշչում գործածվում է սպառող բառը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության գնահատման արդյունքում 2023 թվականին գնահատվող 124 ցուցիչից գոյացող **առավելագույն 124 միավորից փաստացի արձանագրվել է 44.5 միավոր:**



Թափանցիկության և հաշվետվողականության համաթիվը

Ապրիլի 10-ից մայիսի 30-ն ընկած ժամանակահատվածում 124 ցուցիչով հավաքագրված տվյալների հիման վրա արձանագրված փաստացի միավորը համեմատվել է 100 տոկոս գնահատվող՝ առավելագույն 124 միավորի հետ: Այդ համեմատության արդյունքում պարզվել է, որ քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության կատարողականը՝ ըստ 100 միավորով չափվող սանդղակի, կազմել է 35.88 տոկոս: Հաշվարկը կատարվել է մեթոդաբանության մեջ ներկայացված բանաձևով:

Ըստ մեթոդաբանությամբ սահմանված գնահատման 5 մակարդակների՝ Երևանի քաղաքապետարանի թափանցիկ ու հաշվետու գործունեությունը 14 առանձնացված ոլորտով գնահատվել է **«մեծամասամբ ոչ թափանցիկ և ոչ հաշվետու»:**

Քաղաքապետարանի կայքում տեղեկությունների ներկայացման կազմակերպումը կարելի է լավարկել՝ աշխատելով մատչելիության մեծացման ուղղությամբ: Կայքում տվյալների հավաքագրման ժամանակ, որպես կանոն (մոտ 50 տոկոսի դեպքում), եթե տեղեկությունը առկա էր, ապա տեղորոշվում էր քչաթիվ քլիքերի միջոցով: Այսպես՝ օրինակ, յուրաքանչյուր 5 ցուցիչից 2-ի տվյալները գտնվել են կայքում նավարկության արդյունքում: Մնացած դեպքերում դրանք հավաքագրվել են կայքում կամ համացանցում որոնման միջոցով: Սա էականորեն նվազեցնում է տեղեկության մատչելիությունը:



Հարցումներ քաղաքապետարանին

Պաշտոնական հարցումներից 22-ը քաղաքապետարան են ուղարկվել սույն թվականի ապրիլի 26-ին, սոցիալական ծառայություններ ոլորտում ներառված երկու ցուցիչների մասին հարցումներն ուղարկվել են մայիսի 10-ին և նախորդ պարբերությունում նշված գնումների ոլորտի ցուցիչի հարցումն ուղարկվել է հունիսի 1-ին:

5 ցուցիչին վերաբերող պաշտոնական տեղեկատվության ստացման հարցումները մնացել են անպատասխան: Այդ 5-ից 4-ը վերաբերվում են «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» ոլորտին: Հարցումներին պատասխանելու համար քաղաքապետարանից միջինում պահանջվել է 19 օր, ստանդարտից 4,6 օր շեղման պարագայում: Ինչը նշանակում է, որ պատասխանի համար փաստացի պահանջվել է 16 օրվանից մինչև 22 օր: Առավել հաճախ պատասխանի համար քաղաքապետարանից պահանջվել է 21 օր (8-ի դեպքում 25 ցուցիչից): Կարևոր է ընդգծել, որ վերոնշյալ հաշվարկում ներառված չեն այն հարցումները, որոնք մնացել են անպատասխան:

Ամենակարճ ժամանակահատվածը, որ քաղաքապետարանից պահանջվել է հարցումներին պատասխանելու համար 8 օրն է: Այդ պատասխանները վերաբերվում էին «Բնակֆոնդ կամ բնակարանային քաղաքականություն» ոլորտին: Հարկ է նշել, որ այս ոլորտին առնչվող պատասխանները, բացի բավական արագ լինելուց, նաև լիովին սպառիչ էին. տրամադրված էր ամբողջական և համապարփակ տեղեկատվություն, ինչպես նաև՝ հղումներ համապատասխան տվյալներին, ինչն էլ հայցվում էր պաշտոնական հարցումներով:

Պաշտոնական հարցումներից ստացված պատասխանները որակապես գնահատվել են երեք կատեգորիայով՝ *սպառիչ, մասնակի և առնչվող (ռելեվանտ) տեղեկություն չկա*: Սպառիչ գնահատականը այստեղ օգտագործվում է պատասխանի ուղիղ և մատչելի իմաստով, այլ ոչ թե պատասխանի բովանդակությունը բացահայտելու: Այլ կերպ ասած, սպառիչ պատասխանը գնահատվել է այն դեպքում, երբ պատասխանում հստակ նշվել է, որ հայցվող տեղեկատվությունը առկա չէ կամ չեն տիրապետում: Այսպես՝ այդ չափանիշներով քաղաքապետարանի պատասխանների մեծ մասը սպառիչ էին՝ 16-ը 25-ից (64%-ը): Չստացված պատասխանները այստեղ նույնպես ներառվել են, որպես 0՝ ռելեվանտ տեղեկություն չկա՝ 6-ը 25-ից (24%): Մասնակի գնահատվել է պատասխաններից 4-ը (16%): Հանրագումարում պատասխանների թվի գերազանցելը ցուցիչների թվին և անցնելը 100%-ից պայմանավորված է այն հանգամանքով, որ «Համայնքային՝ այդ թվում կոմունալ կազմակերպություններ» ոլորտին առնչվող մեկ ցուցիչի վերաբերյալ ստացվել է երկու պատասխան, ընդ որում մեկը ոչ ռելեվանտ, մյուսը՝ մասամբ սպառիչ:

Ինչպես արդեն նշվել էր «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» ոլորտի 4 ցուցիչի հարցումներից պատասխան չստանալու արդյունքում սույն թվականի հունիսի 1-ին քաղաքապետարան ուղարկվել են կրկնահարցումներ: Նույն օրը նաև կրկնահարցում է ուղարկվել գնումների ոլորտին առնչվող ցուցիչի վերաբերյալ՝ հայցելով ի լրումն տեղեկատվություն: «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» ոլորտի 4 ցուցիչի կրկնահարցումներից պատասխան կրկին չի ստացվել: Գնումների ոլորտին առնչվող հարցման պատասխանը ստացվել է 3 օր անց: Ընդ որում՝ ևս երեք օր անց ստացվել է նույն բովանդակությամբ երկրորդ պատասխանը: Հարկ է նշել, որ բազային շեմը չգերազանցող գնումների ընթացակարգերի և կարգավորումների մասին հարցմանը պատասխան չի ստացվել, այլ ստացվել է մեկ անձից գնումները կարգավորող փաստաթղթերի մասին տեղեկատվություն:

Որակի կառավարման տեսանկյունից կրկնահարցումները հնարավորություն են տալիս դատել սխալի թույլատրելի շեմի մասին: Հարցումների 20 տոկոսի դեպքում հարցը սպառիչ պատասխան չի ստացել: Սխալների հանդուրժելի շեմ է համարվում, երբ շեղումները չեն գերազանցում 10 տոկոսը: Մինչև 30 տոկոս սխալների դեպքում անհրաժեշտություն կա գործընթացը վերանայելու և բարելավելու, եթե դա շատ ծախսատար չէ: Պատասխանների ստացման տարբերակումներից և ոչ սպառիչ և/կամ կրկնահարցումների հանգեցրած գործողությունների արդյունքում կարելի է ենթադրել, որ դիմումների մշակման ներքին ընթացքը լրացուցիչ քարտեզագրման և կանոնակարգման, այդ թվում՝ վիճակագրական վերլուծության կարիք ունի: Բարելավման աշխատանքների շրջանակում կարելի է նաև դիտարկել ստացող կողմի՝ պատասխանից բավարարվածության գնահատման ընտրանքային տարբերակը:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	20
Փաստացի արձանագրված միավոր	7

Ինչ է ակնկալվում

ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը ու հաշվետվողականությունը գնահատելու համար կիրառված 20 ցուցիչով փորձ է կատարվել չափել այն անհրաժեշտ պայմանների առկայությունը, որոնք թույլ կտան բնակիչներին, այն է՝ համայնքին գնահատել, թե որքանով է տեղական ինքնակառավարումը առաջնորդվել բացառապես հանրային շահով, ինչպես նաև՝ իրազեկված մասնակցել այդ շահի ձևավորմանը, և, վերջապես, կառավարել հնարավոր ռիսկերը՝ բոլոր հանրային պաշտոնյաներին հաշվետու պահելով իրենց գործողությունների համար:

Քաղաքապետարանի և առանձին պաշտոնյաների թափանցիկ ու հաշվետու գործունեությունը նաև կարևորվում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման տեսանկյունից: Երևանցիների կարծիքի արտահայտման ազատությունը[30] հնարավոր չէ երաշխավորել, եթե չստեղծվեն այն նվազագույն պայմանները, որոնք թույլ կտան, առանց ՏԻՄ-երի միջամտության, փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ:

Քաղաքացիներին ներկայացնողների՝ ավագանու, այդ թվում նաև իր կողմից ընտրված քաղաքապետի և իր անունից գործող վարչական շրջանների ղեկավարների, ինչպես և քաղաքապետարանի ու վարչական շրջանի աշխատակազմի հանրային ծառայողների, Երևանի ենթակայության հիմնարկների որոշումների կայացման ողջ գործընթացն ու արդյունքների հիմնավորված ներկայացումը պետք է հանրամատչելի և հասանելի լինեն, թե՛ համաժամանակյա, թե՛ հետահայաց մոտեցմամբ:

Ավագանին Երևան համայնքի բարձրագույն ներկայացուցչական մարմինն է: Հետևաբար, ի շահ Երևանի՝ իր գործունեությունը, այդ թվում նիստերի նախապատրաստումը և անցկացումը կարգավորող հիմնական իրավական ակտը՝ Կանոնակարգը[31], ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով՝ իր իրավասությունների շրջանակներում կայացրած բոլոր որոշումները, ուղերձներն ու հայտարարությունները[32] պետք է հրապարակվեն պաշտոնական կայքէջում և լինեն մատչելի:

Առանձնահատուկ կարևորություն է տրվում ավագանու նիստերից յոթ օր առաջ օրակարգի, այդտեղ ներառված նախագծերի ու դրանք հիմնավորող բոլոր փաստաթղթերի հրապարակմանը քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում[33]: Սա թույլ է տալիս

[30] ՀՀ Սահմանադրություն, հոդված 41:
[31] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13, հոդված 11, մաս 5, կետ 2:
[32] «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 2, կետ 2, հոդված 19, մաս 2, հոդված 21, մաս 2; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 3, կետ 5:
[33] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 28; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 15:

համայնքի բնակիչներին համաժամանակյա ռեժիմում հետևել իրենց քվեով լիազորված անձանց գործունեությանը և համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելու հիմնավորվածությանը:

Կարևոր է նաև ավագանու նիստի օրակարգում ընդգրկված հարցերը հիմնավորող փաստաթղթերի շարքում ներառել մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրությունները և համապատասխան կարծիքները[34], քանի որ այդ հանձնաժողովներում են քննարկվել որոշման հիմնավորումները, իսկ բնակիչների և հանրության իրազեկված և կանոնակարգված մասնակցությունը խթանելու համար կարևորվում է մշտական հանձնաժողովների նիստերից առաջ օրակարգի, ավագանու նիստին ներկայացվելիք նախագծերի ու դրանք հիմնավորող բոլոր փաստաթղթերի հրապարակելը[35]: Դա նաև միջազգային պարտավորությունից բխող պահանջ է, քանի որ որպես պաշտոնական փաստաթուղթ դրանք իրենց բնույթով հանրային հետաքրքրություն պարունակող տեղեկություններ են, հետևաբար պետք է լինեն մատչելի:

Հանձնաժողովում քննարկման փուլում բոլոր վերաբերելի փաստաթղթերը հրապարակելը նաև թույլ կտա բնակիչներին և հանրությանը կարծիք ձևավորել կայացվելիք որոշման համայնքային նշանակության հանրային հարցի հիմնավորվածության տեսանկյունից՝ հնարավորություն ընձեռելով ուղիղ կապ հաստատել իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների հետ[36] և ներկայացնել մտահոգությունները, դիտողություններն ու առաջարկությունները:

Ավագանին իր գործունեությամբ հաշվետու է համայնքի բնակիչների առջև: Այն պարտավորեցնում է հրապարակել գործունեության, այդ թվում՝ նիստերի արդյունքների մասին[37]: Ավագանու որոշումների կայացման գործընթացը և արդյունքները հրապարակելը պարտադրում է հանրայնացնել թե՛ նիստի արձանագրությունները, թե՛ ցանկացած որոշման քվեարկության արդյունքները[38]: Ավագանին, այդ թվում նաև քաղաքապետը և իր անունից գործող վարչական շրջանի ղեկավարները, որպես իրենց գործունեության կարևոր մաս, բնակիչների հետ պարբերական հանդիպումների հստակ կարգ ու գրաֆիկ պետք է ունենան, որի իրագործման պարտավորությունը դրված է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա[39]:

Բնակիչներն ու հանրությունը պետք է հնարավորություն ունենան իրազեկվելու, թե ովքեր են ավագանու անդամները, ինչ ճանապարհ են անցնել, որտեղ են նախկինում աշխատել և,

[34] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 5:
[35] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիա, հոդված 10:
[36] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1, կետ 13 և 14; «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 4:
[37] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 10, հոդված 16, մաս 7, հոդված 61, մաս 2; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 3:
[38] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մասեր 5 և 7; «Երևանում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 7:
[39] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 91, մաս 1, հոդված 52, մաս 11; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 4, կետ 5; «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 8; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92, մաս 1, կետ 2, հոդված 51, մաս 4, կետ 5:

մասնավորապես, Ինչ կազմակերպությունների անդամ են հանդիսանում[40]: Անդամությունը կառույցներին, այդ թվում կուսակցություններին, ինչպես նաև աշխատանքային փորձի ներկայացումը թույլ կտա նաև վերահսկել հնարավոր շահերի բախման ռիսկերը՝ այս կամ այն հարցի շուրջ ավագանու անդամի քվեարկությանը հետևելու ընթացքում: Հանրությունը իրավունք ունի մշտապես վերահսկելու, որպեսզի իրեն ներկայացնողները *բացառապես առաջնորդվեն հանրային շահով*, իսկ ավագանու անդամներին այս թափանցիկությունը կապահովագրի անհարկի ընկալումների ու շահարկումների առարկա դառնալու ռիսկից:

Երևանի քաղաքապետն ու իրեն ներկայացնող վարչական շրջանների ղեկավարները համապատասխան աշխատակազմերով և Երևանի ենթակայությամբ գործող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում նաև հանրային միջոցներից ֆինանսավորվող կառույցների միջոցով գործադրում են ավագանու որոշումները: Նրանց գործունեությունը թե՛ համաժամանակյա, թե՛ հետահայաց ռեժիմով պետք է լինի մատչելի, որպեսզի համայնքը, այն է՝ բնակիչները, անարգել հետևեն և անկախ դատողություններ կատարեն այդ գործունեության վերաբերյալ, ինչպես նաև՝ ունենան մասնակցելու հնարավորություններ:

Հանրության համար մատչելի պետք է լինեն թե՛ քաղաքապետի որոշումներն ու կարգադրությունները[41], թե՛ վարչական շրջանների ղեկավարների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած ակտերը: Ավագանու որոշումների կայացումը, որպես կանոն, ենթադրում է տարբեր մասնագիտական գիտելիքների, հմտությունների համադրում, որը քաղաքապետը, նախևառաջ, ապահովում է քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի, քաղաքի ենթակայությամբ գործող կազմակերպությունների, ինչպես նաև մասնագիտական հանրության հետ խորհրդակցելու միջոցով: Սա ենթադրում է, որ հանրությունը պետք է իրազեկված լինի, թե ինչ կանոնադրություն, կառուցվածք ու հաստիքացուցակ ունեն քաղաքապետի և վարչական շրջանների աշխատակազմերը[42]: Քաղաքապետին և վարչական շրջանների ղեկավարներին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների գործունեության մասին տեղեկությունն ու անդամների ցանկը[43] ևս պետք է մատչելի լինեն հանրությանը և, մասնավորապես, Երևանի բնակիչներին: Վերջապես, քաղաքապետարանի[44] և վարչական շրջանի աշխատակազմի[45] աշխատակիցների կենսագրականները՝ ներառյալ կուսակցական պատկանելությունը և անդամությունը կառույցներին, ինչպես նաև՝ կոնտակտները պետք է հրապարակված լինեն, որպեսզի համայնքը կարողանա անկախ դատողություններ կատարել համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելու գործընթացում ներգրավված անձանց կողմից հանրային շահով առաջնորդվելու փաստի ու շահերի բախման բացակայության վերաբերյալ:

---

[40] Congress of Local and Regional Authorities. (2018, November 7). Conflicts of interest at local and regional level - Resolution 434 (2018), Recommendation 423 (2018), Explanatory Report. Council of Europe. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/conflicts-of-interest-at-local-and-regional-level-governance-committee/16808d33d0:

[41] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 49; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 91, մաս 8:

[42] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մասեր 1 և 4; «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 4:

[43] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 36, հոդված 52, մաս 14; Երևանի ավագանու 2013թ.-ի 46-Ն որոշում:

[44] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիա, հոդված 10:

[45] Նույն տեղում:

Համաժամանակյա մատչելի տեղեկատվության առկայությանը զուգահեռ, համայնքի պատվիրակմամբ համայնքային նշանակության հանրային հարցերի մասին պարբերական հաշվետվություններ ներկայացնելը թույլ է տալիս բնակիչներին ու հանրությանը հետևել կատարված աշխատանքներին: Մասնավորապես, քաղաքապետը ավագանու, այդ թվում իր գործունեության մասին պետք է ներկայացնի տարեկան հաշվետվություն[46]: Նաև պետք է ներկայացնի հաշվետվություն Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին[47]: Իսկ ընթացքում, հաշվի առնելով քաղաքի զարգացման ծրագիրն ու դրանից բխող տարեկան աշխատանքային պլանը, քաղաքապետարանը պետք է հրապարակի ինչպես տարեկան ու եռամսյակային աշխատանքային ծրագրերը, այնպես էլ՝ դրանց մասին հաշվետվությունները[48]:

Երևան համայնքը գործընկերային հարաբերություններ է հաստատել տարբեր քաղաքների հետ: Բացի այդ, կան գործընկերային հարաբերություններ միջազգային կազմակերպությունների հետ, որոնք սահմանվել են՝ առաջնորդվելով համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելու հրամայականով: Հետևաբար, շատ կարևոր է համայնքին իրազեկել, թե այդ գործընկերության արդյունքում ինչպիսի պայմանագրեր են գործում և ինչ աշխատանքներ են կատարվում[49]:

Ինչ կա

Ավագանու կանոնակարգն ու 2018 թվականից ի վեր անցկացված նիստերի արձանագրությունները առկա են: Այս ոլորտում վերոնշյալ փաստաթղթերը երկու ցուցիչներով չափվող՝ առավելագույն 1 միավոր ստացածներն են: Նյութերը մատչելի են և նավարկման ժամանակ հեշտությամբ տեղորոշվել են:

Մասամբ ներկայացված կամ կայքում մատչելի ու որոնելի չեն եղել, սակայն հրապարակված, հետևաբար և 0.5 միավորով գնահատված են եղել հաջորդիվ ներկայացվածները: Որպես կանոն, բայց ոչ առանց բացառության, ավագանու նիստից յոթ օր առաջ հրապարակվել են նիստերի օրակարգերը, դրանց հետ կապված նախագծերը, կցված փաստաթղթերը: Ավագանու նիստերի արձանագրությունների և քվեարկության առանձնացված էջերը հեշտ հասանելի են: Սակայն, հնարավոր չի եղել որոշել, թե արդյոք օրենքով պահանջվող յոթնօրյա ժամկետը ավագանու նիստերից հետո պահպանվել է, որպեսզի հրապարակվեն արձանագրություններն ու քվեարկության անվանական արդյունքները:

Ավագանու անդամների անուն, ազգանուններն ու էլեկտրոնային փոստի հասցեները հրապարակված են, սակայն հեռախոսով կապ հաստատելու հնարավորություն տրված չի եղել, քանի որ կոնտակտները բացակայել են: Կայքում խմբակցությունների բաժնում հրապարակված են միայն խմբակցությունների հեռախոսահամարները, սակայն դա թույլ չի տալիս ուղիղ կապ հաստատել տեղական իշխանությունը ներկայացնող ավագանու անդամի հետ: Կենսագրականները, որպես կանոն, հրապարակված են եղել, սակայն պարզ չէր, թե որտեղ են ներկայում աշխատում ավագանու անդամները:

[46] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 52, մաս 1, կետ 10:
[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում, հոդված 51, մաս 4, կետ 3:
[49] Երևանի քաղաքի ավագանու 2018թ. նոյեմբերի 13-ի 18-Ա որոշում, կետեր 21.7 և 45:

Կայքում Երևանի քաղաքապետի որոշումներն ու կարգադրություններն ունեն առանձնացված էջեր և հեշտ տեղորոշելի են: Սակայն, օրինակ՝ էկրանին հայտնված 110 կարգադրությունների շարքից գտնել որոնվող տեղեկությունը շատ խրթին է: Միայն կարգադրության համարը իմանալու դեպքում, որոնման պատուհանում այն մուտքագրելու պարագայում փաստաթուղթը հայտնվում է էկրանին: Վարչական շրջանների ղեկավարների՝ իրենց իրավասությունների շրջանակում ընդունած ակտերի մասին տեղեկություն չկա: Երևանի քաղաքապետի բազմաթիվ որոշումներ և կարգադրություններ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում տեղադրված չեն:

Նորությունների բաժնում կարելի է գտնել չհամակարգված տեղեկություններ քաղաքապետի հանդիպումների մասին[50]: Վարչական շրջանների ղեկավարների մասով տեղեկատվություն առկա չէ, սակայն համացանցում պարզ որոնմամբ կարելի է տեղեկանալ սոցիալական ցանցերում հրապարակված որոշ հանդիպումների մասին: Նորությունների բաժնում հանդիպման մասին տեղեկանալու համար նախապես ենթադրվում է, որ որոնողը պետք է իմանա հանդիպման օրն ու այդ հանդիպման մասին առցանց իրազեկված լինի: Հակառակ դեպքում քաղաքապետի հանդիպումներին հետևելը ենթադրում է ամենօրյա մշտադիտարկում:

Քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը կայքում նավարկմամբ և որոնմամբ չեն տեղորոշվել: Սակայն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում կարելի է գտնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին ավագանու 2013 թվականի 11-Ն որոշումը: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը, հաստիքացուցակները գտնվել են համացանցում պարզ որոնմամբ: Կայքում հեշտությամբ հնարավոր է գտնել քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմի որոշում կայացնողներին: Աշխատակազմերի կառուցվածքներն առկա են, բայց բացակայում են հաստիքացուցակները: Քանի որ ավագանու բոլոր որոշումները ենթակա են կայքում հրապարակման, պետք է ենթադրել, որ կայքում առկա են: Սա ենթադրում է, որ որոնողը պետք է հստակ իմանա ավագանու որոշման համարը: Իրավական ակտերը՝ ավագանու և քաղաքապետի որոշումները, քաղաքապետի կարգադրությունները, կայքում որոնմամբ առաջին խմբագրության տարբերակներ են ցուցադրում: Մինչդեռ, որոշումների փոփոխությունները, հետագա խմբագրումները արտացոլված չեն և հնարավոր չէ իրավական ակտի փոփոխության հետագիծը պարզել:

[50] Գնահատումից հետո, որը իրականացվել էր ապրիլ և մայիս ամիսների ընթացքում, այս բաժնում որոշակի փոփոխություններ են կատարվել, որոնք ավելի համակարգված են ներկայացնում տեղեկությունները: Այնուամենայնիվ, այն դեռևս չի ազդել որոնման տրամաբանության վրա: Մասնավորապես, օրինակ, բացի ոլորտներից, քաղաքապետի հանդիպումների մասին տեղեկությունները այլ ենթաթեմաներով համակարգված չեն, որպեսզի որոնումը հեշտ լինի: Այցելուն կամ պետք է այդ ոլորտում նորություններ բաժինը թերթի երկար կամ նախապես տեղեկացված լինի կոնկրետ հանդիպման մասին, որպեսզի այն ավելի հեշտ տեղորոշի:

Քաղաքապետարանի աշխատակիցների (քաղաքապետ ու նրա տեղակալներ, քարտուղար ու նրա տեղակալներ, հայեցողական պաշտոն զբաղեցնողների, ստորաբաժանումների ղեկավարների) տվյալները, կոնտակտները և կենսագրականները առկա են մասամբ, քանի որ քաղաքապետի տեղակալների, հայեցողական պաշտոն զբաղեցնողների մասին տեղեկատվությունը բացակայում է առհասարակ: Կենսագրականներում կուսակցական պատկանելիության մասով հստակ չէ կուսակցական չլինելու հանգամանքը՝ կուսակցական լինելը կամ չլինելը պարտադիր ամրագրելու բացակայության պատճառով: Էլեկտրոնային փոստի հասցեները բացակայում են կոնտակտային տվյալներից: Վարչական շրջանների դեպքում բացակայում են առհասարակ հայեցողական պաշտոնները: Առկա չեն էլեկտրոնային փոստի հասցեները:

Արտասահմանյան քաղաքների և միջազգային կազմակերպությունների հետ Երևանի քաղաքապետարանի երկկողմ և բազմակողմ համագործակցության բովանդակության և արդյունքների մասին տեղեկատվություն, կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ համագործակցության պայմանագրերը չեն գտնվել: Կայքի այցելուի համար գոյություն չունի նավարկման տրամաբանված շղթա, սակայն կայքում «քույր քաղաք» որոնմամբ գտնվել է 14 հղում: Հղումներից մեկի միջոցով պարզ է դարձել, որ «քաղաքային տնտեսության» էջի ներքո «արտաքին կապեր» էջում տեղադրված է քույր քաղաքների ցանկն ու դրանց մասին հակիրճ ընդհանուր ճանաչողական տվյալներ: Քաղաքապետարանի հետ ստորագրված հուշագրերի ներբեռնելի օրինակները չկան, իսկ պայմանագրերի մասին նշումը բացակայում է: Միջազգային կազմակերպություններ բաժնում էլ պարզապես միջազգային կազմակերպությունների հասցեներն են: Միաժամանակ կայքում առկա է տեղեկություն, որ Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքի հետ[51]:

Ավագանու մշտական հանձնաժողովների օրակարգը, դրա հետ կապված նախագծերը, կցված փաստաթղթերը, նիստերի արձանագրությունները և համապատասխան կարծիքները առհասարակ բացակայում են: Կայքում հնարավոր է այցելել մշտական հանձնաժողովների էջ, որտեղ միայն առկա են հանձնաժողովների կազմերը, կոնտակտներն ու կանոնակարգերը:

Քաղաքապետարանի կայքում մկնիկի մեկ հպմամբ կարելի է գնալ քաղաքացիների ընդունելության էջ, որտեղ կարգը բացակայում է[52], իսկ ընդունելության գրաֆիկը առկախված է՝ համավարակով պայմանավորված լինելու հիմնավորմամբ:

Ավագանու վերջին հինգ տարվա հայտարարությունները, որոշումները և ուղերձները չեն գտնվել: Պաշտոնական կայքում չկա առանձնացված էջ, որտեղ կարելի է գտնել արխիվային նյութերը, որոնք թույլ կտար այդ էջում համակարգված ներկայացնել հիմնական տեղեկությունները: Կայքում «ուղերձ» որոնման արդյունքում դուրս է բերվել քաղաքապետի 4 ուղերձ բյուջեի մասին և մեկ ուղերձ՝ նվիրված «Առավոտ» օրաթերթի 15-ամյակին (2009թ.):

[51] Երևանի քաղաքապետարանի կայքէջ, Արտաքին կապեր, https://www.yerevan.am/hy/foreign-relations:
[52] Գնահատման ժամանակահատվածից հետո՝ 2023 թ. հուլիսին կայքում տեղադրվել է քաղաքացիների ընդունելության նոր կարգը:

Քաղաքապետին և վարչական շրջանների ղեկավարներին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության կարգը, անդամների ցանկերն ու նիստերի արձանագրությունները չեն գտնվել, քանի որ խորհուրդները ձևավորվում են ավագանու և քաղաքապետի որոշմամբ, հնարավոր է կայքում լինեն ներառված այդ որոշումներում: Մինչդեռ, կայքում առանձնացված էջ չկա: Նաև առկա չէ տեղեկատվություն որևէ էջում: 2013 թվականին ընդունված Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին 46-Ն որոշմամբ հաստատված հասարակական խորհուրդների մասին կարգը գտնվել է համացանցում՝ պարզ որոնման արդյունքում: Բացի այդ, պարզ որոնմամբ գտնվել է քաղաքապետին կից քաղաքաշինական հայտերի ուսումնասիրության խորհրդի կարգը, իսկ ցանկերը ընդհանրապես բացակայում են[53]: Այս անհստակությունը քաղաքապետին կից խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության, ցանկերի, նիստերի արձանագրությունների մասով մտահոգիչ է, քանի որ պարզ չէ, թե ինչպես են դրանք ձևավորվում ու գործում, ովքեր և ինչ չափանիշների հիման վրա են ընտրվում կազմում և ինչ բովանդակության շուրջ են ընթանում քննարկումները: Մասնավորապես, քաղաքաշինական խորհրդի դեպքում այս անհստակությունը կարող է պատճառ հանդիսանալ կոռուպցիոն լուրջ ռիսկերի համար կամ, առնվազն, կոռուպցիայի առկայության ընկալում ձևավորել բնակիչների շրջանում: Բացի այդ, քաղաքի կառավարմանը մասնակից շահագրգիռ կողմերի՝ շահատեր բնակիչների և, մասնավորապես, հասարակական կառույցների համար խաղի կանոնների ձևավորման ողջ շղթան պետք է հստակ, մատչելի ու հասանելի լինի:

Ավագանու և քաղաքապետի գործունեության մասին, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, ինչպես նաև՝ Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունները չեն գտնվել: Այս փաստաթղթերը իրավական ակտեր են և կայքում հրապարակման ենթակա են: Սակայն ոչ նավարկումը, ոչ կայքի որոնումը, ոչ էլ համացանցում պարզ որոնումը արդյունքներ չեն տվել: Ավելին, կայքից տրամաբանված շղթայով հնարավոր չէ տեղորոշել ավագանու կամ քաղաքապետի հաշվետվությունները: Բացակայում է հաշվետվությունների համար առանձնացված էջը: Կայքում «սոցիալ տնտեսական հաշվետվություն» որոնումը արդյունք չի տվել, իսկ միայն «հաշվետվություն» բանալի բառով որոնումը բերել է 207 արդյունք, որը համարվում է անհասանելի անգամ այն պարագայում, եթե այդ փաստաթղթերը կան:

53 Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ ցանկը հրապարակված է և տրամադրել է համապատասխան հղումները, որը սակայն գնահատման ընթացքում տվյալների հավաքագրման մեթոդներով չի տեղորոշվել: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ ընդունվել է Երևանի քաղաքապետի 22.05.2019թ. «Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2014 թվականի փետրվարի 18-ի N 517-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1702-Ա որոշումը, https://www.yerevan.am/hy/mayors-decisions/1702-a-6, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 23.05.2019թ. «Երևանի քաղաքապետի 2019 թվականի մայիսի 22-ի N1702-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1717-Ա որոշումը, https://www.yerevan.am/hy/mayors-decisions/1717-a-6:

Ինչ անել

- Ավագանու որոշմանը ներկայացվող փաթեթում՝ որպես հիմնավորվող փաստաթուղթ վերլուծություններին, հետազոտություններին, վիճակագրությանը զուգահեռ կցել հանձնաժողովների այս հարցով անցկացրած նիստի կամ նիստերի արձանագրությունները, ինչպես նաև խորհրդակցական համապատասխան խորհրդի (խորհուրդների) նիստերի արձանագրությունները:
- Հրապարակել քաղաքապետին կից խորհրդակցական խորհուրդների ձևավորման կարգը, անդամների ցանկերն ու կենսագրականները:
- Որոշումները, հայտարարությունները, ուղերձները, կարգադրություններն ու ակտերը պետք է այնպես համակարգել, որպեսզի դրանք որոնողի համար լինեն արագ նավարկելի՝ ներբեռնելու հնարավորությամբ, և բացի հերթական համարից ու վերնագրից պարունակեն համառոտ բովանդակությունը կամ բանալի բառեր:
- Իրավական ակտերը կայքում տեղադրել այնպես, որ հնարավոր լինի տեսնել որոշումների ընդունման շղթան, փոփոխությունների, խմբագրումների հետագիծը, ինչպես նաև առնչություններն այլ իրավական փաստաթղթերին:
- ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ՝ երաշխավորել, որպեսզի Arlis և Irtek իրավական ակտերի շտեմարաններում առկա լինեն Երևանի քաղաքապետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները:
- Կանոնադրությունները, հաստիքացուցակները, կառուցվածքը (organigram) տեղադրել համակարգված՝ քաղաքապետարանի աշխատակազմի էջում:
- Օպտիմալացնել օրացույցը և ակտիվ հղումներով ամսաթվերի ներքո տեղադրել ավագանու, մշտական հանձնաժողովների նիստերի օրակարգերը, կցված փաստաթղթերը, արձանագրություններն ու քվեարկության արդյունքները՝ արձանագրելով նաև հրապարակման ամսաթիվը:
- Նախատեսել առանձին էջ, որտեղ համակարգված կներկայացվեն բոլոր հաշվետվությունները:
- Քաղաքապետի, վարչական շրջանների ղեկավարների հանդիպումները դարձնել առավել համակարգված և թափանցիկ, քանի որ նորությունների էջում միայն դրանք դնելը օպտիմալ լուծում չէ:
- Մշակել կենսագրության լրացման ձևաթուղթ, որտեղ հստակ ըստ բաժինների, թե՛ ընտրված պաշտոնյաները, թե՛ հանրային (համայնքային) ծառայողները կլրացնեն տեղեկությունները՝ ներառյալ պատկանելությունը/առնչությունը տարբեր կառույցներին/կազմակերպություններին:
- Կայքում հրապարակել նաև աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների և/կամ աշխատակիցների էլեկտրոնային հասցեները:
- Ավագանու անդամներին տրամադրել ծառայողական բջջային հեռախոսահամար ընտրողների հետ ուղիղ կապն ապահովելու համար:

Հանրային մասնակցություն որոշումների կայացմանը

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**6**
Փաստացի արձանագրված միավոր	2

Ինչ է ակնկալվում

Համայնքը՝ Երևանի բնակիչները, ոչ միայն պետք է կարողանան հետևել որոշումների կայացման ողջ ընթացքին, այլև, ցանկության դեպքում, բավարար ժամանակ ունենան նյութերին ծանոթանալու, առաջարկություններ տրամադրելու համար՝ արդյունքում տեսնելով դրանց հիմնավոր ներառումը կամ բացառումը՝ պատշաճ հիմնավորումներով: Ակնհայտ է, որ մինչև ավագանու նիստը[54] գումարվող մշտական հանձնաժողովների աշխատանքը պետք է լինի թե՛ թափանցիկ, թե՛ մասնակցային[55]:

Հանրային բաց քննարկման առարկա են համայնքի զարգացման և միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նախագծերը: Այս պարտավորությունը պատահական չէ, քանի որ դրանցից են բխում քաղաքապետարանի տարեկան աշխատանքային պլաններն ու բյուջեի տարեկան կատարման հաշվետվությունների վերաբերյալ հրապարակումները[56]: Այս շղթայի խախտումը մեծացնում է մասնակցայնության ձևականացման ռիսկը:

Բաց կառավարման հանձնառություն ունեցող ցանկացած ներկայացուցչական մարմին օրենքով չունի որևէ սահմանափակում իր նորմատիվ իրավական՝ երևանցիների համար վարքագծի պարտադիր կանոններ սահմանող գործընթացը դարձնել առավելապես մասնակցային: Այդ իմաստով Երևանի ավագանին ունի բոլոր լծակները իր կողմից առանցքային նշանակություն ունեցող և քաղաքի բնակիչների համար պարտադիր համարվող իրավաստեղծ գործընթացներում ներառել նրանց[57]:

Վերջապես, բաց կառավարման հիմքում ընկած սկզբունքների՝ թափանցիկության, մասնակցայնության և հաշվետվողականության երաշխավորման նպատակով, նվազագույն անհրաժեշտ պայմանը, որը ցանկացած ՏԻՄ պարտավոր է ապահովել՝ տեղեկատվության ազատությունն է: Պատահական չէ, որ օրենքը պարտադրում է բոլոր տեղեկատվություն տնօրինողներին նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ: Այդ անձը պարտավոր է մշակել հարցումների վիճակագրություն և հրապարակել ամփոփ տվյալները[58]:

---

[54] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 28, մաս 1; Երևան քաղաքի ավագանու կանոնակարգ, կետ 104:

[55] Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*.

[56] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 84, մաս 2; «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 6; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 82, մաս 1:

[57] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 2:

[58] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 5, հոդված 13, մաս 3, հոդված 7, մաս 3, կետ 11:

Կայքում նաև պետք է հրապարակվեն քաղաքապետարանի հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական գործընկերների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ՝ դասակարգված ըստ սոցիալական պաշտպանության, առողջապահական, կրթական, շրջակա միջավայրի պաշտպանության ու տնտեսական զարգացման ոլորտների[59]:

Ինչ կա

Ավագանու կանոնակարգը հռչակում է, որ ավագանու նիստերը հրապարակային են: Հայերենում հրապարակային բառը ենթադրում է հանրության ներկայության հնարավորությունը[60]: Սակայն, այլ կարգավորումներ կամ ընթացակարգեր չեն գտնվել, որոնք թույլ կտային հասկանալ, թե ինչպես կարելի է առնվազն ներկա գտնվել նիստերին: Հանձնաժողովների մասին որևէ կարգավորում չկա, բայց դա չի նշանակում, որ ավագանին կաշկանդված է և չի կարող դրանք դարձնել մասնակցային: Հարկ է նշել, որ թափանցիկության սկզբունքից ելնելով, հետաքրքրված անձինք և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պետք է կարողանան ազդել որոշումների ընդունման վրա՝ այդ թվում նաև առնվազն հանձնաժողովի քննարկումներին մասնակցելու, իրենց կարիքները, մտահոգություններն ու առաջարկները ներկայացնելու հնարավորության միջոցով:

Ավագանու նիստերի մասին իրազեկումը, որը հրապարակվում է նիստից յոթ օր առաջ, հեշտ հասանելի չէ հանրությանը: Այդ մասին կարող են իրազեկվել միայն այն անձինք, որոնք պարբերաբար հետևում են քաղաքապետարանի պաշտոնական կայքի լրահոսի ժապավենով թարմացվող հայտարարություններին: Կայքէջի հիմնական էջում կարելի է տեսնել ավագանու նիստի ժամանակացույցի և ուղիղ եթերի մասին հայտարարությունը, սակայն եթե դրան նախորդող առավել մոտ ժամկետներում գործակարգավարական խորհրդակցություն է նախատեսվում, ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը դառնում է անհասանելի: Գնահատման ընթացքում նաև առանձնացվել են դեպքեր, երբ սահմանված յոթնօրյա ժամկետը խախտվել է:

Քաղաքի զարգացման հիմնական փաստաթղթերը՝ զարգացման ու միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, հեշտ տեղորոշելի են, բայց դրանք չենք զուգակցվում այն բոլոր հիմնավորումներով ու վերլուծականներով, որոնց հիման վրա ձևավորվել են քաղաքի առաջիկա տարիների քաղաքականության ուղենիշները: Վերջապես, նույնքան կարևոր հանրային բաց լսումների կամ քննարկումների ամփոփաթերթերը ներկայացված չեն, սակայն դրանք կարևոր են, քանի որ ցույց են տալիս, թե որոնք են եղել հանրության կողմից բարձրացված հիմնական խնդիրները ու ինչպես են դրանք արտացոլվել քաղաքային պլանավորման քաղաքական հիմնական փաստաթղթում:

Հանրային լսումների ներկայացված նորմատիվ իրավական ակտերի համակարգված հասանելի ներկայացում չլինելու պատճառով, ավագանու նախաձեռնությամբ այդ ակտերի նախագծերի հանրային քննարկման կազմակերպումը գնահատել չի հաջողվել:

[59] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 5, կետ 19:
[60] Հրապարակային նիստ-մուտքը ազատ նիստ: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երեւան, 1974:

Հայտարարությունների բաժնում գործող «հանրային լսումների» ֆիլտրն առանձնացրեց արդյունքներ, որոնց մեծամասնությունը վերաբերում էր շրջակա միջավայրի ազդեցության գնահատմանը:

Քաղաքապետի որոշմամբ աշխատակազմի քարտուղարի տեղակալ Արթուր Կարապետյանը քաղաքապետարանի տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատուն է, սակայն քաղաքապետարանի կառուցվածքի էջում, որտեղ ներկայացված են հիմնական որոշում կայացնողները, այդ մասին տեղեկատվություն առկա չէ: Կայքում որոնման արդյունքում քաղաքապետի հրամաններից մեկից ենք միայն տեղեկանում, որ քաղաքապետարանում կա տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյա, ինչը նշանակում է, որ օրենսդրական պահանջով ամրագրված պաշտոնյան հասանելի չէ և, իրականում, չի ծառայում իր նպատակին: Կայքում և համացանցում որոնմամբ չի հաջողվել գտնել նաև վիճակագրական ամփոփ տվյալներ, սակայն քաղաքապետարանին ուղղված հարցման արդյունքում պարզվել է, որ դրանք հրապարակված են:

Կայքում հրապարակված չեն Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական գործընկերների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ՝ դասակարգված ըստ ոլորտների:

Ինչ անել

- Փոխել ավագանու, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նիստերի մասին իրազեկման ձևաչափը, օրինակ՝ դիտարկելով օրացույցի ներառման հնարավորությունը, որը ամսվա օրերի ակտիվ հղումների միջոցով կարող է կազմակերպել և հեշտ հասանելի դարձնել այդ տեղեկությունները կայքի այցելուների համար, ինչպես նաև՝ ազդարարել մասնակցության հնարավորությունը ցանկացողների համար:
- Ավագանու որոշմամբ նախաձեռնել համապատասխան կարգավորումներ ավագանու հանձնաժողովների նիստերով և աշխատանքներով հետաքրքրված շահագրգիռ կողմերի ներգրավման և մասնակցության մասին:
- Հրապարակել, հանրային լսումների կամ քննարկումների արդյունքները, ստացված առաջարկներին հետամուտ լինելու ուղղությամբ քաղաքապետարանի կողմից ձեռնարկվող քայլերը:
- Մշակել բնակիչների ծանուցման անցանց և առցանց համակարգ, որը թույլ կտա բնակիչներին ըստ հասցեների կամ հետաքրքրության շրջանակի գրանցվել և ըստ ոլորտների կամ առանձին թեմաների ստանալ ծանուցումներ, այդ թվում՝ ազդակիր համայնքում բնակվելու կամ աշխատելու դեպքում քաղաքապետարանը պարտավոր կլինի անձնական ծանուցմամբ տեղեկացնել անձին նրա կենսագործունեություն միջավայրի փոփոխությանն առնչվող հանրային լսումների կամ քննարկումների մասին:
- Կայքում հրապարակել Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական գործընկերների մասին տեղեկություններ՝ դասակարգված՝ ըստ նրանց գործունեության ոլորտների:

Անձնակազմի կառավարում

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	8
Փաստացի արձանագրված միավոր	4.5

Ինչ է ակնկալվում

Անձնակազմի որակը առանցքային դերակատարություն ունի համայնքի՝ ներկայացուցիչների միջոցով տեղական ինքնակառավարման նպատակների իրականացման գործում: Որակի ապահովման համար կարևորագույն նշանակություն ունի անձնակազմի համալրման քաղաքականությունը, ընթացակարգերի, մեխանիզմների թափանցիկությունը, հանրային վերահսկողության հնարավորությունը:

Երևանի քաղաքապետարանը պետք է հրապարակի քաղաքապետարան աշխատանքի ընդունման կարգը, ինչպես նաև՝ իր ենթակայության ՀՈԱԿ-երից պահանջի՝ որպես տեղեկատվությունը տնօրինող մարմին, իրենց կայքերում հրապարակել համանման կարգերը և, այդ թվում՝ համայնքային ենթակայության կառույցներում թափուր աշխատատեղերի[61] մասին հայտարարությունները[62]: Բացի այդ, պետք է նաև հրապարակված լինեն Երևանի քաղաքապետի կողմից հաստատված մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը[63]:

Համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթները հրապարակային են: Դրանց կարող են մասնակցել հասարակական կազմակերպությունները դիտորդի կարգավիճակով, ՁԼՄ-ներն ու հրավիրված դիտորդները: Սա ենթադրում է, որ մրցույթների մասին տեղեկատվությունը պետք է հեշտ հասանելի լինի: Հանձնաժողովը թափուր պաշտոնի համար մրցույթը ամփոփելուց հետո հրապարակում է արդյունքները:

Հայաստանում պետական մարմիններում և ՏԻՄ-երում կանանց ներկայացվածությունը որոշումների կայացման մակարդակում բավարար չէ: Այսպես, 2021 թվականի վիճակագրական տվյալների համաձայն՝ ղեկավար պաշտոն զբաղեցրած տղամարդիկ 2.1 անգամ գերազանցել են կանանց[64]: Մինչդեռ Հայաստանում Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորվում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Ավելին, այդ նպատակին հասնելու համար ՀՀ կառավարությունը 2019 թվականին հանձնառել է ապահովել կանանց և

[61] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 12, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի 13-Ն հրաման, կետ 80:

[62] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 2; «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 5:

[63] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 3; «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2, կետ 1; «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2; ՀՀ կառավարության 19.01.2019թ. 1334-Լ որոշման հավելված 2-ի գերակայություն 1-ի 2-րդ կետով ստանձնել է տեղական ինքնակառավարման մարմիններում տղամարդկանց և կանանց համամասնորեն ներկայացվածություն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցում, որի արդյունքում 2023թ.-ին պետք է երաշխավորվի համայնքապետարանների աշխատակազմում միևնույն սեռի ոչ ավելի քան 70% ներկայացուցչության ապահովումը:

[64] *Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2022*. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2022). https://www.armstat.am/am/?nid=81&id=2530:

տղամարդկանց համամասնորեն ներկայացվածությունը ՏԻՄ-երում՝ սահմանելով 70 տոկոսի առավելագույն շեմ սեռերից յուրաքանչյուրի համար[65]: Սա ենթադրում է, որ մրցութային և ատեստավորման հանձնաժողովի ձևավորման համար պետք է սահմանվեն այնպիսի պայմաններ և գործադրվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կսահմանափակեն միասեռ մարմնի ձևավորումը կամ սեռերից մեկի գերներկայացվածությունը 70/30 հարաբերակցության խախտմամբ: Վերջապես, պետք է գործնականում լինեն հավասար պայմաններ կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց՝ հայտարարված մրցույթներին մասնակցելու և հավասար պայմաններում աշխատանքի անցնելու համար[66]:

Քաղաքապետարանի պաշտոնատար անձինք (ստորաբաժանումների ղեկավարներ) պետք է հասանելի լինեն, ինչպես նաև հանրությունը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու նրանց կենսագրությանը: Մասնավորապես, կարևոր է հրապարակային դարձնել տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատուի[67], գնումների համակարգողի[68] և հաշվապահական հաշվառման, վարձակալության, առքուվաճառքի, գույքի հետ կապված հարցերով պատասխանատուների տվյալները[69]: Այս պաշտոնյաների մասին տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը որակյալ կառավարման համակարգի կարևորագույն մասն են, քանի որ ապահովում են հետադարձ կապը հանրության, այսինքն՝ հիմնական շահառերերի հետ: Օրենքի պահանջը կատարելուց զատ, այս վերոնշյալ պաշտոնյաների հասանելիությունը երաշխավորում է վերհանված խնդիրների արձանագրման ընթացքն ու դրանց համակարգված լուծումներին՝ նպաստելով տեղական ինքնակառավարման որակի բարելավմանը:

Ինչ կա

Քաղաքապետարանն ունի «Աշխատանք» բաժին, որտեղ հայտարարությունների միջոցով՝ հոսող ժապավենի տրամաբանությամբ, հրապարակվում են համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների մասին հայտարարությունները: Սակայն, չկա համակարգված ու որոշակի հստակ ձևաչափին համապատասխանող տրամաբանություն, որը թույլ կտար էլ ավելի տեսանելի դարձնել այդ հայտարարությունները:

[65] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 3; «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2, կետ 1; Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 2; ՀՀ կառավարության 19.01.2019թ. 1334-Լ որոշման հավելված 2-ի գերակայություն 1-ի 2-րդ կետով ստանձնել է տեղական ինքնակառավարման մարմիններում տղամարդկանց և կանանց համամասնորեն ներկայացվածություն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցում, որի արդյունքում 2023թ.-ին պետք է երաշխավորվի համայնքապետարանների աշխատակազմի շրջանում միևնույն սեռի ոչ ավելի քան 70%-ի ներկայացուցչության ապահովում:

[66] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 2; «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 5; «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 17, հոդված 2, մաս 2, կետ 3; «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 1, հոդված 4, մաս 2, հոդված 7, մաս 1, կետ 7:

[67] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 12 և 13:

[68] «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 3:

[69] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 4:

Հայտարարությունների տեքստերի ընտրանքային դիտարկման արդյունքում կարելի է պնդել, որ խտրական ձևակերպումները բացակայում են: Միևնույն ժամանակ, չկան թերներկայացված խմբերին թիրախավորող և մասնակցությունը խրախուսող ուղերձներ կամ ձևակերպումներ:

Համացանցում որոնմամբ պարզ է դառնում, որ առկա է Երևանի քաղաքապետի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N 8187-Ա որոշում, որին հղում է կատարվում մրցութային հանձնաժողովի կազմը հաստատող քաղաքապետի որոշումներում, սակայն բուն որոշումը որևէ կերպ տեղորոշել չի հաջողվել: Քաղաքապետարանին ուղղված հարցման արդյունքում պարզ է դառնում, որ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հրապարակված են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էջում: Սակայն քաղաքապետարանի էջում հղումն աշխատակարգերին բացակայում է: Դժվար է դատել հանձնաժողովի ձևավորման գործող՝ համամասնությունը երաշխավորող մեխանիզմի մասին:

Թափուր աշխատատեղերի մրցույթների մասին եզրակացությունները կայքում տեղորոշել չի հաջողվել, այդ թվում նաև կայքի որոնման պատուհանի միջոցով: Համացանցում, սակայն, հնարավոր է տեսնել քաղաքապետի կարգադրություն, որով եզրակացության հիման վրա մրցույթի արդյունքները չեղյալ են հայտարարվել:

Որոշ առանցքային պաշտոնյաների (օրինակ՝ տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու) վերաբերյալ տվյալներ առկա չեն, էլեկտրոնային փոստի հասցեները նշված չեն, ինչը նվազեցնում է այդ պաշտոնյաներին գործնական հաղորդագրություններ ու հարցումներ ուղարկելը, ուստի և բարդացնում բնակիչների հաղորդակցության հնարավորությունը իրենց ՏԻՄ-ի հետ: Զուգահեռաբար, չկա որևէ գնահատում, որը փաստացի կչափեր քաղաքապետարանին դիմելու առկա հնարավորության արդյունավետությունը:

Ինչ անել

- Համակարգել թափուր պաշտոնների հայտարարությունների բաժինը՝օգտագործելով դասիչներ, որոնման հնարավորություն՝ ըստ ոլորտների, գործատուների (այդ թվում՝ համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների), պաշտոնների և այլն:
- Հրապարակել մրցույթը կանոնակարգող բոլոր իրավական ակտերը և եզրակացությունները:
- Գտնել արդյունավետ լուծումներ առանցքային պաշտոնյաների հետ ուղիղ, բազմախողովակ և արդյունավետ հաղորդակցության համար:

Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	6
Փաստացի արձանագրված միավոր	0.5

Ինչ է ակնկալվում

Հակակոռուպցիոն և բարեվարքության միջոցառումների ծրագրի առկայությունը տեղական ինքնակառավարման մակարդակում կարևորվում է վարչական կոռուպցիան հաղթահարելու տեսանկյունից[70]: Այս ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության գնահատման նպատակով դիտարկվել են այն իրավական ակտերը, որոնք ունեն պարտադիր կանոնակարգումներ ՏԻՄ-երի և աշխատակազմերի համար:

Համայնքային ծառայողներն ու պաշտոնյաները պետք է հետևեն որոշակի վարքագծի կանոններին: Այդ նպատակով տիպային կանոնների հիման վրա պետք է մշակվեն և ընդունվեն համայնքի ավագանու, համայնքային ծառայողների, համայնքային այլ պաշտոնատար անձանց վարքագծի կանոններ: Քանի դեռ դրանք սահմանված չեն, համայնքային ծառայողների համար գործում են քաղաքացիական ծառայողների համար սահմանված կանոնները[71]: Տրամաբանական է, որ այս կանոնները պետք է հրապարակված լինեն քաղաքապետարանի կայքում:

Քաղաքապետարանի անձնակազմի կառավարման վարչության կազմում պետք է գործի բարեվարքության հարցերով կազմակերպիչը[72]: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից կազմակերպիչը ստանում է վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների, շահերի բախման, նվերների ընդունման, անհամատեղելիության և այլ սահմանափակումների պահանջների պահպանման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն: Ի թիվս այլ օրենքով սահմանված գործողությունների՝ կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ, մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը: Կազմակերպչի նշանակումն ու վերջինիս հասանելիությունը շատ կարևոր են[73]: Քաղաքապետարանի հետ առնչվող անձինք ու Երևանի բնակիչները պետք է հնարավորություն ունենան առցանց ներկայացնել քաղաքապետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ հաղորդումներ[74]: Հետևաբար, բացի բարեվարքության հարցերով կազմակերպչի հետ ուղիղ կապ հաստատելու բազմախողովակ հնարավորությունների ապահովման, կայքում պետք է հրապարակվեն

[70] ՀՀ կառավարություն. (2019, October 3). N 1332-Ն Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876:

[71] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 28, մասեր 7, 6, և 5:

[72] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 46:

[73] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 46, մաս 1; «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 4:

[74] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 24, մաս 1, կետ 1; «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 44:

համառոտ տեղեկություններ համայնքային ծառայողների և պաշտոնյաների էթիկայի հանձնաժողովների գործունեության և դիմելու ձևերի մասին:

Երևանի քաղաքապետարանը պետք է ունենա հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր և այդ ծրագրերի միջոցառումների իրականացման պատասխանատու, որի կոնտակտները պետք է հրապարակված լինեն[75]: Վերջապես, երևանցիները պետք է հնարավորություն ունենան քաղաքապետարանի կայքից տեղեկանալու համայնքային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների՝ շահերի բախման, նվերների ընդունման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ, ինչպես նաև՝ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ու հանրային շահին վնասող դեպքերի հաղորդման, հաշվառման և պաշտպանության միջոցների կարգի մասին[76]: Հետևաբար, քաղաքապետարանի կայքում պետք է հրապարակված լինեն ներքին և արտաքին ազդարարման հարցերով պատասխանատուի կոնտակտային տվյալները[77]:

Ընդհանրապես, հանրությանը և, մասնավորապես, համայնքի բնակիչներին վերաբերող հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերելի[78] նյութերը և, հատկապես, Երևանի քաղաքապետարանի համայնքային պաշտոնյաների ու ծառայողների վարքագծի կանոններ սահմանող նորմատիվ իրավական ակտերը պետք է հեշտ տեղորոշվեն ու հասանելի լինեն[79]:

Ինչ կա

Քաղաքապետարանի կայքում բացակայում է հակակոռուպցիոն քաղաքականության և բարեվարքությանը վերաբերելի, հեշտ հասանելի ու առանձնացված բաժին, որտեղ կարելի է գտնել հակակոռուպցիոն քաղաքականության և հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության վերաբերյալ հիմնական տեղեկությունները: Մասնավորապես, բացակայում են համայնքային ծառայողների համար կիրառելի քաղաքացիական ծառայողների վարքագծի տիպային կանոնները և համայնքային պաշտոնյաներին վերաբերելի վարքագծի այն տիպային կանոնները, որոնք գործում են համայնքի ղեկավարի, տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների համար:

Քաղաքապետարանը, օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում, չունի մշակված կարգ և մոդել համայնքային պաշտոնյաների ու ծառայողների էթիկայի հանձնաժողովներ ձևավորելու համար: Համայնքի ավագանու մասով վարքագծի կանոնների ու էթիկայի հանձնաժողովների օրենսդրական կարգավորումներն ընդհանրապես բացակայում են: Մշակված և Երևանի քաղաքապետարանի համար տեղայնացված չեն ավագանու անդամների, համայնքային ծառայողների ու այլ աշխատակիցներին ներկայացվող

[75] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, կետ 41.5; «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 4:
[76] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մասեր 3 և 4:
[77] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2; ՀՀ կառավարության 2018 272-Ն որոշում, հավելված 1, կետ 2:
[78] ԹԻՀԿ, Հայաստանում կառուցապատում իրականացնելու համար թույլտվությունների ստացման գործընթացում կոռուպցիոն ռիսկերը, 2021, https://transparency.am/hy/publication/pdf/278/9727:
[79] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրել է, որ տեղեկատվությունը դեռևս հրապարակված չէ, քանի որ բարեվարքության ինստիտուտը կայացման փուլում է և մշակվում են համայնքային ծառայողների վարքագծի տիպային կանոնները:

բարեվարքության պահանջների՝ անհամատեղելիության, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման կառուցակարգերն ու դրանց կիրարկման ընթացակարգերը:

Քաղաքապետարանի բարեվարքության հարցերով կազմակերպչի դեպքում՝ քաղաքապետի կարգադրություններից մեկով մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում գլխավոր մասնագետի՝ բարեվարքության հարցերով կազմակերպչի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ, մինչդեռ, համացանցում որոնմամբ ավագանու որոշման մեջ որպես այդ պաշտոնը զբաղեցնող նշված է Նարինե Խանիկյանը[80]: Կայքում որոնմամբ դուրս բերված արդյունքներից մեկը թույլ է տալիս ենթադրել, որ այդ անձը Արմինե Բուդաղյանն է: Այս խառնաշփոթը հնարավորություն չի տալիս կայք այցելած անձին հստակ տեղեկատվություն ստանալ, թե ով է բարեվարքության հարցերով կազմակերպիչը և ինչպես կարելի է նրան դիմել: Քաղաքապետարան ուղարկված բարեվարքության հարցերով կազմակերպչի, ներքին և արտաքին ազդարարման հարցերով պատասխանատուի, ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգի մասին հարցումներն անպատասխան են մնացել, ինչի պատճառով հնարավոր չէ հավաստիանալ բարեվարքության հարցերով կազմակերպչի և ազդարարման հարցերով պատասխանատուների նշանակման և գործունեության վերաբերյալ տեղեկատվության առկայության մասին:

Ինչ անել

- Քաղաքապետարանի կայքում ստեղծել հակակոռուպցիոն քաղաքականության և բարեվարքության վերաբերյալ հասանելի բաժին, որտեղ տեղադրված կլինեն Երևանի քաղաքապետարանի հակակոռուպցիոն/բարեվարքության ծրագրերի և դրանց իրականացման հաշվետվությունները, քաղաքապետարանի ծառայողների ու պաշտոնատար անձանց ներկայացվող բարեվարքության պահանջները սահմանող օրենսդրական ակտերն ու ենթաօրենսդրական կարգավորումները սահմանող ուղեցույցները, մեթոդական փաստաթղթերը, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագրերն ու նյութերը, բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ դեպքերը, դրանց ուղղությամբ իրականացված քայլերը, ձևավորվելիք համայնքային ծառայողների ու պաշտոնյաների նվերների էլեկտրոնային ռեեստրը, շահերի բախման իրավիճակային դեպքերի վերաբերյալ հաղորդումների ձևաթղթերը, անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների առերևույթ խախտումների վերաբերյալ վիճակագրական տվյալները, էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները և դրանց հիման վրա կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ որոշումները:

[80] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ այդ անձը իսկապես բարեվարքության հարցերով կազմակերպիչն է և այդ տեղեկությունը կարելի է գտնել ավագանու որոշումներից մեկում: Այս պարզաբանումը թափանցիկության տեսանկյունից ոչինչ չի տալիս, քանի որ կայքի այցելուի համար շատ խրթին է, եթե ոչ անհնար բացահայտել այդ անձի մասին տեղեկությունները: Բարեվարքության հարցերով կազմակերպիչը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի Հոդված 1-ի 2-րդ մասի համաձայն պաշտոնատար անձ է և նրա տվյալները պետք է հանրությանը հասանելի լինեն այդ նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն:

- Հրապարակել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ու հանրային շահին վնասող դեպքերի հաղորդման, հաշվառման և պաշտպանության միջոցներն ու կարգերը:
- Ապահովել կայքի փոխգործակցելիությունը հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության պահանջների խախտումների վերաբերյալ ազդարարման անանուն էլեկտրոնային հարթակներին՝ ստեղծելով անանուն հաղորդումների ստացման թեժ գծեր, սահմանելով անանուն հաղորդումներով ստացված տվյալների մշակման կարգեր:
- Հրապարակել բարեվարքության հարցերով կազմակերպչի և ազդարարման հարցերով պատասխանատուի կոնտակտային տվյալները և նրանց դիմելու սահմանված եղանակներն ու կարգերը:

Բյուջետավորում

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	8
Փաստացի արձանագրված միավոր	3

Ինչ է ակնկալվում

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ու բյուջեն հիմնական փաստաթղթերն են, որոնք թույլ են տալիս համայնքին իրազեկվել զարգացման կարևորագույն ուղղությունների մասին և մասնակցել սեփական քաղաքի կառավարման գործընթացին: Այդ առնչությամբ առանցքային փաստաթղթերին վերաբերող հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները հրապարակվում են[81]: ԵԽ նախարարների կոմիտեի 2017 թվականին ընդունված քաղաքական որոշումներին քաղհասարակության մասնակցության ուղեցույցը առաջարկում է էլեկտրոնային եղանակով պահվող տեղեկությունը տրամադրել էլեկտրոնային և բաց ձևաչափով: Տվյալները պետք է լինեն ամբողջական, առաջնային, ժամանակին, մատչելի, մեքենայական մշակման ենթակա, ոչ խտրական, սեփականության իրավունք չունեցող և առանց լիցենզիաների, ինչպես նաև պետք է լինի դրանց իսկությունը ստուգելու հնարավորություն:

Համայնքի գործուն մասնակցությունը խթանելու համար, բացի հիմնական ցուցանիշների հրապարակումից, կարևոր է բյուջեի նախագծի հրապարակումն անել այնպես, որպեսզի այն թույլ տա ցանկացողներին ուսումնասիրել նախագիծն ու մասնակցել քննարկմանը[82], իսկ հանրային լսումների մասին պետք է կայքում լինի մատչելի տեղեկատվություն[83]: Համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել պայմաններ, որպեսզի ցանկություն ունեցողները հեշտությամբ ձեռք բերեն փաստաթղթերը: ԵԽ նախարարների կոմիտեն առաջարկում է որոշումների կայացմանը մասնակցության խթանման համար օգտվել համացանցի

[81] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 91, մաս 2:
[82] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 32, մաս 1; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 71, մաս 1; «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 36, կետ «դ»:
[83] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 36, կետ «դ»:

հնարավորություններից, ստեղծել էլեկտրոնային փոստային ցանկեր (mailing lists), ԶԼՄ-ների միջոցով իրազեկել բնակիչներին և, մասնավորապես, թիրախավորել հիմնական շահագրգիռ կողմերին:

Բյուջեի, տարեկան հաշվետվության[84], ինչպես նաև այդ հաշվետվության աուդիտորական ուսումնասիրության արդյունքները[85] պետք է հրապարակվեն: Բյուջեի հետ փոխկապակցված անհրաժեշտ է նաև հրապարակել համայնքի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)[86]: Վերջապես, կայքում պետք է հրապարակվի քաղաքացու բյուջեն, որը հանրամատչելի ներկայացնում է հիմնական ծախսային ուղղություններն ու հատկացումները[87]: Տրամաբանական է, որ համայնքի հնգամյա ծրագրի կատարման համար հատկացված տարեկան բյուջեների հրապարակմանը զուգահեռ հրապարակվեն այն բոլոր համայնքային կառույցների բյուջեները, որոնք ստեղծվել են այդ ծրագրերը իրագործելու և համայնքին ծառայություններ մատուցելու համար[88]:

Ինչ կա

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների հետ փոխկապակցված բյուջետավորման գնահատման արդյունքում **8 հնարավոր առավելագույն միավորից փաստացի արձանագրվել է 3 միավոր:**

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, բյուջեն հրապարակված են: Բյուջեի հետ առնչվող հիմնական ցուցանիշների և վիճակագրական տվյալների մասին տեղեկություն կամ գրքույկներ չկան: Բացակայում է քաղաքացու բյուջեն[89]:

Քաղաքապետարանի կայքում գործում է ինտերակտիվ բյուջե, որը էապես հնարավորություն է տալիս գտնել բոլոր պլանավորված և փաստացի ծախսերը, սակայն այն չի բավարարում բյուջեի միջոցների ծախսման մասին հանրությանը տրամադրվող տեղեկությունների ամբողջականության և հասանելիության պահանջին: Մասնավորապես՝ բացակայում են վերջնական ծախսերի վերաբերյալ մանրամասն տվյալները:

Բյուջեի նախագծերը կայքում տեղորոշել չի հաջողվում, չնայած կա ենթադրություն, որ դրանք հայտարարությունների բաժնում հրապարակված են: Այնուամենայնիվ, կայքում և համացանցում բանալի բառերի կիրառությամբ որոնումը ոչ մի արդյունք չի տվել:

Քաղաքապետարանի տարեկան աշխատանքային պլանը հրապարակված չէ[90]:

---

[84] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 5, կետ 4; «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 36, հոդված 27, հոդված 8, մաս 8, կետ «բ»:

[85] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 82, մաս 2:

[86] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 82.1, մաս 6:

[87] Նույն տեղում, հոդված 91, մաս 2:

[88] Նույն տեղում, հոդված 11, մաս 5, կետ 15:

[89] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ քաղաքապետարանի ֆինանսական վարչությունը մշակել է նախնական ձևաչափ, որը պետք է քննարկվի շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:

[90] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ ՏԱՊը ամեն տարի հրապարակվում է «Իրավական ակտեր» բաժնի քաղաքապետի որոշումներ ենթաբաժնում: Սակայն, գնահատման փուլում հաստատված հավաքագրման գործելակարգով, որը մոտարկել էր միջին այցելուի վարքագիծը, այդ տեղեկությունը չհաջողվեց տեղորոշել:

Քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունների հաստիքացուցակներն ու նախահաշիվները հրապարակված են և ունեն մեքենայական ընթեռնելի ձևաչափ:

Ի՞նչ անել

- Թափանցիկությունը մեծացնելու համար համակարգված հրապարակել բյուջեն, քաղաքացու բյուջեն, հիմնական ցուցանիշներն ու վիճակագրությունը, ՏԱՊ-ը և բյուջեի հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի և այլ վերահսկողական մարմինների ուսումնասիրությունների արդյունքները:
- Առցանց տեսանելի եղանակով ներկայացնել բյուջետավարման գործընթացի ժամանակացույցը և հանրային մասնակցության համար հնարավորությունները:
- Մասնակցության խթանման համար գործադրել ԵԽ նախարարների կոմիտեի ուղեցույցով սահմանված մասնակցության հնարավորությունները:

Ֆինանսական հարցեր և դրամական հատկացումներ

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**4**
Փաստացի արձանագրված միավոր	1.5

Ի՞նչ է ակնկալվում

Հանրային, համայնքի բնակիչների վճարումներից գոյացած միջոցների մասին ողջ տեղեկությունը պետք է հասանելի լինի բնակիչներին: Հարկեր, տուրքեր և վճարներ սահմանելուց տասնհինգ օր առաջ քաղաքապետարանը հանրությանը պետք է իրազեկի այդ մասին և շրջանառի իրավական ակտի նախագիծը[91]:

Մյուս կարևոր ուղղությունը քաղաքի բնակիչներին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող գումարների մասին տեղեկության առկայությունն է: Այդ գների սահմանումը ինքնին պետք է թափանցիկ լինի և անհրաժեշտ է, որպեսզի համայնքն իմանա, թե ինչպես է այն գոյացել[92]:

Քաղաքի միջոցների ծախսումներին հետևելու, դրանց արդյունավետությունն ու նպատակայնությունը գնահատելու համար շատ կարևոր է հասանելիություն ունենալ համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությանը[93]: Այն՝ բյուջեի կատարման հաշվետվության հետ համադրմամբ թույլ է տալիս գնահատել, թե ինչքանով են արդյունավետ ծախսվել այդ միջոցները, որքանով են թիրախային խնդիրներն իրականացվել:

[91] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 73, մաս 1, կետ 9; «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 2, 3, 4; հոդված 2, մաս 1, կետ 10, հոդված 4, մաս 2, հոդված 3, մաս 2, հոդված 4, մաս 4:

[92] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, կետ 3.9; Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*.

[93] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մաս 9; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, կետ 17:

Այլապես, միայն բյուջեի կատարման հաշվետվությունը բավարար չէ գնահատելու համար քաղաքի զարգացման ծրագրի կատարումը:

Կարևոր է, որ թափանցիկ և մատչելի լինեն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին աջակցելու նպատակով տրվող հատկացումների տրամաբանությունը և ողջ ընթացքը[94]:

Ինչ կա

Վերջին հինգ տարվա ընթացքում, Երևանի բյուջեի 68 տոկոսը գոյացել է ՀՀ կառավարության հատկացումներից, որոնց մեծ մասը հատկացվել է պատվիրակված լիազորություններին կամ նպատակային ծրագրերին[95]: Բյուջեի մնացած մասը գոյացել է տեղական հարկերից (18%), տուրքերից և վճարներից (15%):

Հստակ չէ, թե ինչպես են քննարկվում տեղական հարկերի, տուրքերի և վճարների վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները և ինչպես է համայնքը մասնակցում դրանց: Ընդհանրապես, վճար ենթադրող ծառայություններին վերաբերող հստակ հատկացված էջ կամ կանխատեսելի տրամաբանությամբ կառուցված ընթացակարգ չկա: Պարզ չէ, թե քանի վճարովի ծառայություն է գործում ու որոնք են դրանց կարգավորման իրավական հիմնավորումները: Բացառություն է կազմում տրանսպորտի գնի գոյացման հիմնավորումը՝ ըստ քաղաքային տրանսպորտի տեսակների և դրանց ծախսերի:

ՏԱՊ-ի իրականացման հաշվետվությունը կայքում ընդհանրապես առկա չէ, իսկ բյուջեի մասով առկա են, բայց դրանց տեղորոշումը դյուրին չէ: Մինչդեռ, համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, ՏԱՊ-ը և բյուջեն մեկ ամբողջություն են, և իրենց իրականացման շրջափուլերն ու զեկույցները անխուսափելիորեն փոխկապակցված են: Բացակայում է համայնքի բյուջեից ֆինանսավորում ստացած տարբեր կառույցներին միջոցների տրամադրումը կարգավորող որևէ փաստաթուղթ, որը կներառի դիմումների գնահատման կարգը:

Քաղաքի բյուջեն նախատեսում է 450 մլն դրամից ավելի միջոցներ հատկացնել համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին աջակցելու համար,[96] սակայն բյուջեով նախատեսված 450 մլն դրամից ավելի միջոցների հատկացման մասին որևէ տեղեկատվություն առկա չէ:

---

[94] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ 2024թ-ին նախատեսում են մշակել դրամաշնորհային մրցույթների և հատկացման կարգը:

[95] *Fitch Affirms Armenian City of Yerevan at "B+"; Outlook Stable*. Fitch Ratings: Credit Ratings & Analysis for Financial Markets. (2022, December 16). https://www.fitchratings.com/research/international-public-finance/fitch-affirms-armenian-city-of-yerevan-at-b-outlook-stable-16-12-2022

[96] Երևանի տարեկան բյուջեով նախատեսվում է համայնքի բյուջետային միջոցներից աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին: Մասնավորապես Երևանի քաղաքապետի 2023 թվականի բյուջետային ուղերձի Մաս 3-ի 40-րդ կետով նախատեսվում է շուրջ նախատեսվել է 454,305.0 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով: Տես՝ https://www.yerevan.am/uploads/media/default/0002/16/c1f394158a302b603f2168ba4aecb7b8dd260ab9.pdf

Ինչ անել

- Համայնքի զարգացման հնգամյա, միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, տարեկան պլաններն ու բյուջեները ներկայացնել տրամաբանորեն՝ որոշակի սխեմայով: Կայքում զետեղել բոլոր կարևոր ցուցանիշները, վիճակագրական տվյալներն ու քաղաքացու բյուջեն:
- Հանրային միջոցների տնօրինմանն առնչվող որոշումները ավագանու անհատական որոշումներից զատ ներկայացնել առավել արդյունավետ և ընկալելի ձևաչափով:
- Մշակել և/կամ գործադրել ընթացակարգ, որը թույլ կտա տեղական բյուջեի մուտքերի գոյացման իրավական հենքը լայնորեն քննարկել բնակիչների և քաղհասարակության ներկայացուցիչների հետ և երաշխավորել արդյունքների արձանագրությունների մատչելիությունը՝ հանրության համար:
- Մշակել և ավագանու որոշմամբ սահմանել համայնքի բյուջեից աջակցության նպատակով տրամադրվող միջոցները կարգավորող փաստաթուղթ՝ ընթացակարգ, որը կներառի դիմումների գնահատման կարգը:

Հանրային գնումներ

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**8**
Փաստացի արձանագրված միավոր	1

Ինչ է ակնկալվում

Գնումների ողջ գործընթացը մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական է: Թափանցիկությունը նպաստում է, որպեսզի նվազեն կոռուպցիոն ռիսկերը: Այդ ռիսկերն առավել մեծ են, երբ գործ ունենք ֆինանսական մեծ հոսքերի կամ մասնավոր հատվածի դերակատարներին հանրային միջոցների փոխանցումների հետ: Կարիքների գնահատման ուռճացումը, ընտրության ոչ հստակ չափանիշներ սահմանելը, ռիսկերը կառավարող պահանջներ չձևակերպելը, ընտրության ժամանակ գնումների մրցույթին դիմած այս կամ այն մասնակցի առավելությունները կամ թերությունները շեշտադրելը, աշխատանքների կատարման ժամանակ պատշաճ վերահսկողություն չսահմանելը գնումների հնարավոր ռիսկերից են, որոնք հանգեցնում են հանրային միջոցների վատնմանը[97]:

[97] Բանաձև 421 (2017), Հանրային գնումների թափանցիկության ապահովումը տեղական և տարածքային մակարդակներում, ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, https://rm.coe.int/168075fbe1:

ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի առաջնային խորհուրդը ՏԻՄ-երին գնումների ողջ գործընթացը թափանցիկ դարձնելն է: Մի շարք խորհուրդների թվում գնումների էլեկտրոնային համակարգ[98] ու պատժամիջոցների գործող մեխանիզմներ գործադրելն է[99]:

Տեղեկատվության ազատության պահանջը ենթադրում է, որ քաղաքապետարանը տարին առնվազն մեկ անգամ հրապարակի համայնքի՝ Երևանի բնակիչների համար իրականացվող և իրականացման ենթակա աշխատանքներն ու ծառայությունները: Այս իմաստով գնումների պլանը, ինչպես նաև գնումների տարեկան հաշվետվությունը պետք է հասանելի լինեն հանրությանը[100]:

Բացառիկ դեպքերում կարելի է գնում իրականացնել մեկ անձից: Մրցակցայնության հռչակված ու օրենքով ամրագրված սկզբունքը առկախվում է միայն այն դեպքերում, երբ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր չէ գնել երկրորդ անձից, կամ երբ արտակարգ իրավիճակում ժամկետները թույլ չեն տալիս մրցույթով գնում իրականացնել, կամ էլ, երբ չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ պայմանագիրը կատարելու համար հարկավոր է նույն անձից գնում իրականացնել: Կա ևս երկու դեպք, երբ գնումը մեկ անձից արտոնվում է: Մեկը, երբ գնման գինը չի գերազանցում մեկ միլիոն ՀՀ դրամը, որը սահմանվել է որպես գնումների բազային միավոր: Մյուսը, երբ գնումն իրականացվում է ՀՀ տարածքից դուրս[101]: Պարզ է, որ այս դեպքերում կարող են թաքնված լինել մի շարք կոռուպցիոն ռիսկեր, որոնց կառավարման նախապայմաններից մեկը այդ գնումների վերաբերյալ տեղեկատվության հնարավորինս մանրամասն ու համակարգված հասանելիություն ապահովելն է: Օրինակ՝ պաշտոնական կայքում բաց ձևաչափով այս տեղեկության տրամադրումը կարող է օգնել քաղաքապետարանին զսպել կոռուպցիոն ռիսկերը, այդ թվում՝ շահագրգիռ կառույցների համար անկախ վերլուծությունների նպատակով այդ տվյալները հասանելի դարձնելը:

Մեկ միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գնումների դեպքում օրենքը պարտադրում է, որպեսզի պատվիրատուն, այս դեպքում՝ քաղաքապետարանը և իր ենթակայության տակ գործող տարբեր կազմակերպությունները պահպանեն կատարված գործողությունների ու դրանց հիմքերի մասին փաստաթղթերը: Սա ենթադրում է, որ այդ թվում՝ նաև կոռուպցիոն ռիսկերի կառավարման նպատակով, սահմանված են այդ գործընթացը կառավարող ընթացակարգեր[102]: Պարզ է, որ այդ ընթացակարգը պետք է հանրության համար հասանելի լինի:

Հանրային միջոցների վատնումը կանխարգելելու և հանրային վերահսկողության արդյունքում գնումների արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր է հանրայնացնել գնումների տարեկան պլանը, ինչպես նաև հրապարակել այդ միջոցներից սնվող կառույցների փաստացի գնումները[103]: Երևանի քաղաքապետարանի ենթակայության այն կազմակերպությունները,

---

[98] «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 5:
[99] Նույն տեղում:
[100] «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 5, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3:
[101] «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 2, կետ 1, հոդված 23; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 13:
[102] «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3:
[103] «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշում, կետ 2.2; IV գլուխ, կետ 16:

որոնք համարվում են պատվիրատու, կարող են ինքնուրույն գնումներ իրականացնել, իսկ դրանց ցանկը պետք է հասանելի լինի հանրությանը[104]:

Գնումների գործընթացին մասնակցած և կանոնները խախտած կազմակերպությունները պատվիրատուի ղեկավարի՝ այս դեպքում քաղաքապետի որոշմամբ կարող են հայտնվել գնումներին մասնակցելու իրավունքից զրկվածների ցանկում[105]: Այդ տեղեկությունը ևս պետք է հասանելի լինի: Վերջապես, պատվիրատուի, այն է՝ քաղաքապետարանի և իր ենթակայության ներքո գործող կազմակերպությունների գնումները գնահատող հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել[106]: Այդ բողոքարկումների մասին համառոտ տեղեկությունները պետք է հասանելի լինեն Երևանի բնակիչներին և քաղհասարակության այլ շահատերերին:

Ինչ կա

«Գնումների մասին» ՀՀ օրենքը պարտադրում է, որպեսզի մի շարք կարևոր տեղեկություններ ներկայացնեն լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, որպեսզի դրանք հրապարակվեն տեղեկագրում: Այդ տեղեկագրի համացանցային տարբերակը ՀՀ գնումների համակարգն է[107]:

Քաղաքապետարանը օրենքի պահանջը կատարել է և, հավանաբար, համարել, որ սեփական կայքում հրապարակելու անհրաժեշտություն չկա: Հարկ է նշել, որ գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինությունը գնահատող ուսումնասիրությունը այդ հարթակի որոնման համակարգը համարում է անարդյունավետ[108]: Սա նշանակում է, որ տեղեկությունները հիմնականում անհասանելի են: Այս պնդումը հաստատվել է նաև սույն գնահատման ընթացքում այդ հարթակում ցուցիչներով որոնում իրականացնելու արդյունքում: Օրինակ, 2022-2023թթ. քաղաքապետարանի գնումների պլանը հարթակից ներբեռնելու համար պահանջվել է մկնիկի 57 հպում այդ փաստաթուղթը տեղորոշելու համար: Բանալի բառերով գնումների հարթակում որոնումը ևս արդյունավետ չէ: Օրինակ՝ գնումների հաշվետվությունը տեղորոշելու համար կիրառված «Երևան և հաշվետվություն» կամ «Երևան և 2022» բանալի բառերը արդյունք չեն տվել, իսկ միայն քաղաքի անունը կիրառելու դեպքում 55755 արդյունք է արձանագրվել, որն, ըստ էության, անկառավարելի է և հետևաբար՝ անմատչելի:

Նման պայմաններում կարևոր է, որ Երևանի քաղաքապետարանն իր կայքում ունենա ավելի լավ կազմակերպված տեղեկատվություն, որտեղ կապահովի «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահունչ, թափանցիկ և հաշվետու գործելաոճը, որը կզսպի անխուսափելիորեն առկա կոռուպցիոն ռիսկերը:

---

[104] «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1, կետ 1:
[105] Նույն տեղում, հոդված 6:
[106] Նույն տեղում, հոդված 46:
[107] ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ, https://gnumner.minfin.am:
[108] Եվրասիա համագործակցություն հիմնադրամ. (n.d.). ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման. https://epfarmenia.am/sites/default/files/Document/DATA_Research_E_Procurement_Hakobyan.pdf:

Համեմատաբար մատչելի, սակայն խրթին են դատական տեղեկատվական համակարգում՝ Դատալեքսում, զետեղված տվյալները: Այս հարթակում «գնումների գնահատող հանձնաժողովի որոշման բողոքարկում» բանալի բառերով և որպես պատասխանող կողմ Երևանի քաղաքապետարանը դիտարկելով՝ արձանագրվում են արդյունքներ 25 էջի սահմաններում:

Ի՞նչ անել

- ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցությամբ կայքում ստեղծել առանձնացված բաժին գնումների վերաբերյալ՝ ապահովելով փոխգործակցելություն գնումների էլեկտրոնային համակարգի հետ, որը մի կողմից կթիրախավորի գնումների մասնակցության ցանկություն ունեցողներին և կտա տեղեկություններ գործող կարգերի, մրցույթների և էլեկտրոնային համակարգերի մասին, մյուս կողմից համակարգված հաշվետվություններ կտրամադրի հանրությանը՝ համայնքին:
- Կայքում հղմամբ կամ կրկնակի հրապարակմամբ համակարգված ներկայացնել գնումների պլաններն՝ ըստ քաղաքապետարանի և իր ենթակայության տակ գործող, պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների:
- Կայքում ձևավորել գնումների արխիվ բոլոր կարևոր որոշումների ու այլ փաստաթղթերի համակարգված, մատչելի ու ներբեռնելի ձևաչափով մատուցման նպատակադրմամբ, որպեսզի հանրությունը կարողանա հետևել գնումների ողջ ընթացքին:

Համայնքային, այդ թվում՝ կոմունալ ծառայություններ

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**5**
Փաստացի արձանագրված միավոր	0.5

Ի՞նչ է ակնկալվում

Համայնքը կարող է ստեղծել հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ: Ավագանին լիազորված է համայնքի անունից նման որոշում կայացնել: Ակնհայտ է, որ համայնքի անունից գործող ավագանու հիմնած կազմակերպությունների մասին տեղեկատվությունը պետք է լինի հանրային ու մատչելի: Սա նշանակում է, որ քաղաքապետարանի կայքում պետք է հնարավոր լինի գտնել Երևանի ենթակայության տակ գործող կազմակերպությունների ամբողջական ցանկը, ներառյալ հասցեն, կոնտակտային այլ տվյալներն ու հակիրճ տեղեկություն գործունեության[109] ու մատուցվող ծառայությունների մասին[110]: Բնականաբար, մատչելի պետք է լինեն նաև բնակիչների ստեղծած կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, նախընտրելի է՝ բաց

[109] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունների բաժինը մշակման փուլում է:
[110] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 81, հոդված 11:

ձևաչափով[111]: Վերջապես, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արտաքին անկախ աուդիտի արդյունքները պետք է հրապարակվեն և լինեն հասանելի[112]:

Բնակիչների հիմնադրած կազմակերպությունների որակյալ և արդյունավետ աշխատանքի երաշխիքներից մեկը փորձառու ղեկավարության առկայությունն է, որը պետք է վերահսկելի լինի հանրության կողմից: Բացի այդ, «պտտվող դռների» կոռուպցիոն սխեմաներից խուսափելու համար համայնքը պետք է կարողանա հետևել ղեկավարների և պաշտոնյաների տեղաշարժին: Հնարավոր են դեպքեր, երբ, օրինակ, քաղաքապետարանի պաշտոնյան, իր լիազորությունների շրջանակում ունեցած տեղեկատվությունը օգտագործելով, միջոցները ուղղորդի դեպի որևէ հիմնարկ, որտեղ ինքը հետագայում զբաղեցնելու է որոշակի պաշտոն: Նման դեպքերում հարցականի տակ է դրվում հանրային շահով առաջնորդված լինելու պահանջը: Նման ռիսկերը զսպելու, ինչպես նաև որակն ու արդյունավետությունը երաշխավորելու համար համայնքի բնակիչների ստեղծած կազմակերպությունների ղեկավարների կենսագրականները պետք է հրապարակված և հասանելի լինեն[113]:

Ավագանին համայնքի մասնակցությամբ ստեղծված առևտրային կազմակերպությունների խորհուրդներում և վերստուգիչ մարմիններում կարող է առաջադրել իր ներկայացուցիչներին: Նույն տրամաբանությամբ հանրային շահը երաշխավորելու նպատակով ակնհայտ է, որ այդ ներկայացուցիչների մասին տեղեկությունները ինքնակենսագրականների հետ միասին պետք է հասանելի լինեն համայնքին[114]:

Ինչ կա

Երևանի քաղաքապետարանի կայքում տարբեր բաժիններում կարելի է գտնել տեղեկություններ համայնքի տարբեր կազմակերպությունների մասին: Առկա են ֆինանսական փաստաթղթեր, սակայն պարզ չէ որքանով են այդ տեղեկությունները ամբողջական: Տվյալներն, ընդհանուր առմամբ, համակարգված չեն, հաճախ բացակայում են:

«Փարքինգ սիթի սերվիս» ՓԲԸ-ի օրինակով կարելի է դիտարկել այն բոլոր խնդիրները, որոնք առկա են համայնքին պատկանող՝ մասնավորապես առևտրային կազմակերպությունների մասով: «Փարքինգ սիթի սերվիս» ՓԲԸ-ն 2012 թվականին ավագանու ընդունած որոշման հիման վրա դարձավ վճարի դիմաց ավտոկայանատեղերի տրամադրման կազմակերպողը և տեսանկարահանող սարքավորումների միջոցով անվտանգ քաղաք ապահովելուն նպաստողը: Կայքում չկան տեղեկություններ ֆինասական հաշվետվությունների, քաղաքակիրթ կայանման և քաղաքի անվտանգությանը նպաստող իրականացրած միջոցառումների մասին: Հնարավոր չէ հասկանալ, թե ովքեր են ներկայացված ՓԲԸ կառավարման մարմիններում ու ինչ կենսագրություն ունեն[115]: ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի իրական

[111] «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
[112] Նույն տեղում, հոդված 3, մաս 1, կետեր 7, 8; հոդված 27, մասեր 4 և 5:
[113] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 59, մաս 1, կետ 5:
[114] Նույն տեղում, հոդված 18, մաս 1, կետ 17:
[115] Մինչ ամփոփվում էր զեկույցը, Ինֆոկոմի հոդվածից պարզ դարձավ, որ «Վազգեն Հարությունյանը, որը 2018-ից «Փարքինգ սիթի սերվիս»-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն էր (մինչև 2018-ը, հիշեցնենք, նա ընկերության տնօրենն էր), նշանակվեց Երևանի քաղաքապետարանի Տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար», տես՝ Ինֆոկոմ, «Փարկինգ Սիթի Սերվիս»-ը չի կատարում պայմանագրով նախատեսված պարտականությունները, 9 սեպտեմբերի, 2023թ., https://shorturl.at/druU3:

շահառուների վերաբերյալ հայտարարագրում որպես ՓԲԸ տնօրեն նշված Վազգեն Հարությունյանի անվամբ որոնումները կայքում արդյունք չեն տալիս: Էլեկտրոնային ռեգիստրից պարզ է դառնում, որ ՓԲԸ-ն հարյուր տոկոսով պատկանում է համայնքին: ՀՀ Դատախազության 2019 թվականի հրապարակման հիման վրա, բայց ոչ կայքէջից, պարզ է դառնում, որ ՓԲԸ հարյուր տոկոս բաժնեմասերի նվիրատվության դիմաց համայնքը ստանձնել է կազմակերպության պարտավորությունների մարումը, ինչի արդյունքում Երևանի բյուջեից՝ համայնքի միջոցներից, 713 մլն դրամ տրամադրվել է այդ ընկերության նախկինում վերցրած վարկի մարմանը[116]:

Ինչ անել

- Համայնքի կողմից հիմնադրված բոլոր առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների մասին կայքում տրամադրել համապարփակ տեղեկատվություն՝ առնվազն ներառելով անվանումը, ղեկավարի կենսագրական և կոնտակտային տվյալները, համառոտ տեղեկություն գործունեության մասին:
- Կայքում տրամադրել համակարգված և մատչելի տեղեկություններ համայնքապատկան բոլոր առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների մասին, ներառյալ՝ ղեկավար կազմի աշխատավարձերը, ֆինանսական հաշվետվությունները, վերահսկողական կառույցների և արտաքին անկախ աուդիտորական ստուգման արդյունքները, դատական վեճերի վերաբերյալ տվյալները:

Քաղաքային պլանավորում (քաղաքաշինություն)

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	31
Փաստացի արձանագրված միավոր	11.5

Ինչ է ակնկալվում

Տարածական պլանավորման փաստաթղթերից կամ, ինչպես օրենքում է ամրագրված, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից քաղաքի գլխավոր հատակագիծը կենսամիջավայրի փոփոխությունների երկարաժամկետ ծրագրավորման փաստաթուղթ է: Կենսագործունեության միջավայրի փոփոխությունը պետք է իրականացվի հասարակության մասնակցության պայմաններում՝ հենվելով հրապարակայնության, մասնակցայնության և ներառականության սկզբունքների վրա[117]: Կենսագործունեության միջավայրի անքակտելի մասն է կազմում պատմական միջավայրը: Դրա պահպանության և օգտագործման համար

[116] ՀՀ գլխավոր դատախազություն. «Փարքինգ սիթի սերվիս» ընկերության՝ ավելի քան 700 մլն դրամի չափով փոխառության պարտավորությունը անհիմն մարվել է Երևանի համայնքային բյուջեի հաշվին. 15 օգոստոսի 2019թ., https://www.prosecutor.am/am/mn/7541: Ինֆոկոմ, «ՀՀ գլխավոր դատախազություն. «Փարքինգ սիթի սերվիս» ընկերության՝ ավելի քան 700 մլն դրամի չափով փոխառության պարտավորությունը անհիմն մարվել է Երևանի համայնքային բյուջեի հաշվին», 15 օգոստոսի 2019թ., https://infocom.am/hy/article/16932:

[117] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 3, կետ 6; «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1:

քաղաքապետարանը կազմում է պատմամշակութային հիմնավորման նախագիծը[118]: Սա ենթադրում է, որ այս կարևոր փաստաթուղթը պետք է հրապարակված լինի Երևանի քաղաքապետարանի կայքում:

Գլխավոր հատակագծի հիման վրա մշակվում և հաստատվում են գոտևորման կամ, ինչպես օրենքն է նշում, գոտիավորման նախագծերը: Գոտևորումը սահմանում է տվյալ տարածքի, հողամասերի և այլ անշարժ գույքի նպատակային ու գործառնական նշանակությունը, օգտագործման պարտադիր պահանջները անկախ սեփականատերերի փոփոխությունից: Մինչև ավագանու կողմից Երևանում տարածքների գոտևորման նախագծերի հաստատումը՝ որպես կարևոր գործողություն, այն պահանջում է մասնակցային գործընթաց՝ քննարկումների և հանրային լսումների միջոցով[119]: Սա նաև պայմանավորված է գոտևորման նախագծի վրա հիմնվող գործընթացներով, ինչպիսիք են՝ հողամասերի, նախագծման թույլտվության կամ, ինչպես մինչ օրս հաճախ նշում էին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի (հանրության շրջանում հաճախ հայտնի որպես ԱՊՁ[120]) տրամադրումը, շենքերի և շինությունների մշակումը, շինարարության թույլտվությունը: Հետևաբար, այս նախագծերը պետք է հանրությանը հասանելի լինեն մինչև ընդունումն ու դրանից հետո:

Գլխավոր հատակագծի փիլիսոփայությանը հավատարիմ քաղաքային պլանավորման գործիքներից մեկը՝ ըստ գոտևորման հարկերի, տուրքերի և վճարների, ինչպես նաև՝ արտոնությունների սահմանումն է: Ավագանին կարող է այս գործիքը կիրառել թե՛ կառուցապատումը, թե՛ բիզնես գործունեությունը խթանելու ցանկալի գոտիներում՝ փոխարենը զսպելով արդեն իսկ խիտ կառուցապատված և ակտիվ գոտիները: Այդ իմաստով ևս բոլորի համար պետք է հստակ և հրապարակված լինեն կանոնները[121]:

Երևանի գլխավոր հատակագծի սահմանած նպատակների համաձայն՝ օտարվում են համայնքային սեփականություն հանդիսացող հողերը: Մինչ օտարումը պետք է հաստատվի օտարման տարեկան ծրագիր[122], որտեղ պետք է նշված լինեն հողամասերի գտնվելու վայրերը, ծածկագրերը և օտարման եղանակները: Համայնքային հողերը օգտագործման հանձնելու դեպքում էլ պետք է գործեն օգտագործման սխեմաներ, իսկ օգտագործման հանձնված հողերի դեպքում էլ պետք է գործեն ավագանու սահմանած պայմանները[123]: Առավել ևս այս դեպքում, երբ խոսքը համայնքապատկան հողերի մասին է, տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հանրությանը[124], այդ թվում՝ բոլոր հետաքրքրվածների համար հավասար պայմաններ երաշխավորելու և տարբեր կոռուպցիոն ռիսկերից խուսափելու նպատակով: Այն նաև կարևոր

[118] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, կետ «ա»:
[119] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 20; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 37, հոդված 42, մաս 1, կետ 1; «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 14(3), մաս 17; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 4, կետ 7:
[120] ԱՊՁ-ն ռուսերեն համանուն հապավումն է, АПЗ- Архитектурно-планировочное задание:
[121] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 6:
[122] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.3, մաս 10:
[123] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 4, հոդված 18, մաս 31; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 18; «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 1, կետ 3; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 18:
[124] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 7:

է հանրային վերահսկողության տեսանկյունից, որպեսզի ապահովվի հանրային շահն ու հանրային միջոցների արդյունավետ կառավարումը:

Մասնավոր և հանրային գույքի (հողամաս և այլ անշարժ գույք) հետ կապված գործարքների, այդ թվում վարձակալության և սեփականաշնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև լրացման համար պահանջվող ձևաթղթերը[125] պետք է լինեն հրապարակված, որպեսզի սահմանվեն թափանցիկ և հավասար պայմաններ շահագրգիռ կողմերի համար, ինչպես նաև՝ զսպվեն կոռուպցիոն ռիսկերը: Համայնքային հողերի օտարման պայմանները[126], այդ թվում՝ նաև աճուրդի դեպքում մեկնարկային գները պետք է հրապարակվեն[127]: Աճուրդին վերաբերող տեղեկությունը հրապարակվում է մեկ ամիս առաջ[128]:

Քաղաքապետը վարում է Երևանի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը: Այդտեղ նշվում են տրամադրված հողամասերը, ներառյալ նպատակային կամ գործառնական փոփոխությունները, ինչպես նաև նախագծման և շինարարության թույլտվությունները: Քարտեզում արտացոլվում են գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի փոփոխությունները: Քաղաքապետը նաև յուրաքանչյուր տարի գույքագրում է համայնքային գույքը և ընթացիկ քարտեզի հետ միասին ներկայացնում է ավագանու հաստատմանը: Քանի որ այս ամենը ուղղակիորեն ազդում է կենսագործունեության միջավայրի վրա, այն ենթակա է հրապարակայնացման և հասարակության տարբեր շերտերի ներգրավման[129]: Վերջապես, պետք է հրապարակվի համայնքի գույքը[130]:

Քաղաքային պլանավորման տեսանկյունից օգտակար է տիպային ճարտարապետաշինարարական նախագծերի[131] առկայությունը, թե՛ մասնավոր՝ մինչև 300 քառակուսի մետր կառուցապատման, թե՛ փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեություն ծավալողների համար: Իհարկե, այս ամենը պետք է խիստ կանոնակարգվի, որպեսզի չստեղծվեն մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝ տվյալ բնակավայրի բնակլիմայական պայմաններին ոչ հարմար, կայուն զարգացմանը վնասող, քաղաքի միջավայրին, ճարտարապետական հղվածքի ու անցյալի հետ կապ չունեցող օտար լուծումները: Հետևաբար, նման նախագծերին զուգահեռ պետք է գործեն նաև չափանիշները նկարագրող ուղեցույցեր, որոնք առանց նախագծի օրինակ՝ սահմանում են շենքի կամ շինության դիզայնի որոշակի սկզբունքները, առաջարկվող շինանյութի տեսակները, մատչելիության նվազագույն չափորոշիչները, լանդշաֆտին ներկայացվող պահանջները և այլն: Այն մի կողմից որոշակի շրջանակ է առաջարկում և տիպաբանություն սահմանում կառուցապատման համար՝ հաստատելով և պահպանելով ցանկալի բնապահպանական, սանիտարական և այլ չափանիշներ, մյուս կողմից, առավել դյուրին է դարձնում վարչարարությունը: Այս վերաբերմունքը նաև կարող է բարենպաստ միջավայր ստեղծել քաղաքում բիզնեսի, հողերի օպտիմալ օգտագործման համար: Նման մոտեցման որդեգրումը կարող է ներդաշնակությանը

[125] Նույն տեղում, հոդված 11, մաս 5, կետ 8:
[126] Նույն տեղում, հոդված 18, մաս 21; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 18:
[127] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 18 (Քաղաքացիական օրենսգրքի 134 հոդվածի համաձայն հողամասերը համարվում են անշարժ գույք):
[128] ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 68, մաս 2:
[129] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77, մաս 3; «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 14(3), մաս 30, հոդված 14:
[130] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11:
[131] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1; «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 8, 11, 36:

միտված բարենպաստ պայմաններ ձևավորել, եթե, իհարկե, այս դեպքում լինի տարբերակված մոտեցում, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը թույլ է տալիս: Վերջապես, նմանատիպ կանոնակարգումը չպետք է անհարկի խոչընդոտ հանդիսանա հեղինակային նախագծերի և նորարարության համար, որը պետք է կարողանա կյանքի կոչվել առանձնացված ընթացակարգով:

Քաղաքային պլանավորման և քաղաքի փաստացի զարգացման վրա ազդող տարբեր գործոնների փոխհարաբերությունները կարող են հանգեցնել հանրային տարածքի զավթմանն ու չարտոնված կառուցապատմանը: Քաղաքապետը օրենքով պարտավորված է կանխարգելել, կասեցնել և վերացնել ապօրինի հողօգտագործումը: Օրինակ՝ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ շինությունները օրինականացնում է՝ հողամասը տրամադրելով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ[132]: Գլխավոր հատակագիծը, գոտևորման նախագծերն ու այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը պայմանավորում են հողամաս տրամադրելու մասին դիմումների բավարարումն ու մերժումը[133]: Եթե օրինականացման դեպքում այն արտացոլվում է ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ապա մերժումների, ինչպես նաև ինքնակամ կառույցների և ապօրինի շինությունների կասեցման ու քանդման[134] հանրայնացումը կարող է իրականացվել ամփոփ վիճակագրության և/կամ վերլուծականի հրապարակման միջոցով:

Ցանկացած շինարարություն ենթադրում է կենսագործունեության միջավայրի այս կամ այն չափի փոփոխություն, սակայն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների դեպքում այն իր ազդեցությամբ անհամեմատելի է այլ՝ անգամ մեծամասշտաբ կառուցապատումների համեմատ: Այս դեպքում, առավել ևս կարևոր է քաղաքաշինական գործունեության միջոցով պատմական նշանակության կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկելու օրենսդրական պահանջի իրագործումը, ընդ որում, շահագրգիռ կողմերի շրջանակն ավելի լայն է: Երևանում գրանցված է 411 պատմության և մշակույթի անշարժ հուշարձան[135], որոնց մասին տեղեկությունները գտնելու լավագույն տարբերակը քաղաքապետարանի կայքն է: Հուշարձանների կեսից ավելին գտնվում է քաղաքի կենտրոնում: Յուրաքանչյուր երրորդը բնակելի տուն է, դրանցից 14-ը ենթակա են տեղափոխման: Այդ բոլոր շենքերի պահպանությունը՝ անկախ սեփականության ձևից, ենթակա է հանրային վերահսկողության: Նախագծման թույլտվության մեջ, ի թիվս այլ պահանջների, այս շենքերի դեպքում պետք է նշված լինեն պատմության և մշակույթի հուշարձաններին ներկայացվող պահանջները, իսկ շինարարական թույլտվությանը պետք է նախորդի ճարտարապետաշինարարական նախագծային փաթեթի համաձայնեցումը[136] և հանրայնացումը: Սեփականատերերն էլ սեփականության իրավունքի օրենքով պաշտպանված լինելուն զուգահեռ, պետք է ավելի լավ իրազեկված լինեն իրենց գույքի առանձնահատկությունների մասին և հասկանան այն պարտավորությունները, որոնք ունեն նման շենքերում որևէ նորոգում կամ փոփոխություն կատարելիս:

---

[132] ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 57, մաս 1, կետ 1:
[133] ՀՀ հողային օրենսգիրք, հոդվածներ 57 և 58:
[134] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 55, մաս 1, կետեր 5.1 և 6:
[135] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, կետեր «գ», «դ»:
[136] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ «զ»; «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, մաս 2, հոդված 17, մաս 15; «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 23 և 14:

ՀՀ կառավարությունը հաստատում է հուշարձանների պահպանության և օգտագործման հանրապետական և մարզային պետական ծրագրերը[137]: Երևանը ևս պետք է ունենա նման ծրագիր: Այդ ծրագրի տրամաբանության ներքո են դիտարկվում նաև հուշարձան-շենքերում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը: Հետևաբար, առնվազն հղմամբ Երևանի քաղաքապետարանի կայքում այդ ծրագիրը պետք է հանրայնացվի:

Երևանի քաղաքապետարանն ունի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում որոշակի իրավասություններ, որոնք որոշ դեպքերում նաև թույլ են տալիս կասեցնել աշխատանքները, եթե դրանք վտանգում են հուշարձանը: Պահպանության շարքում են չօգտագործվող հուշարձանների պահպանությունը, ամրակայումը, տեղական հուշարձանների նորոգումը, վերականգնումը, տարածքի բարեկարգումը, հանրապետական հուշարձանների դեպքում պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացումը, հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը[138]: Օգտագործման իրավասությունների ներքո Երևանի քաղաքապետարանը կարող է վարձակալության տալ համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերը և շինությունները: Քաղաքապետարանը պետք է հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի կամ օգտագործողների հետ կնքի պահպանության պայմանագրեր[139]: Բնականաբար, այս տեղեկությունների մի մասը պետք է արտացոլված լինի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և տարեկան գույքագրման մեջ[140]: Սակայն, որպես բարեխիղճ կառավարիչ և բաց կառավարման հանձնառու մարմին, քաղաքապետարանը կարող է տարեկան հաշվետվությունների միջոցով իրազեկել համայնքին իր կողմից քաղաքի պատմական միջավայրի պահպանության մասին:

Քաղաքային պլանավորման զարկերակը քաղաքում շարժունակության ապահովումն է, որտեղ առանձնահատուկ կարևորություն ունի հանրային տրանսպորտի կազմակերպումը: Իհարկե, շարժունակության ապահովման տեսանկյունից կարևոր է նաև դիտարկել հետիոտնի, մեքենաներով, հեծանիվով և այլ միջոցներով տեղաշարժման հարմարավետությունը, մեքենաների կայանումը և այլ հարցեր, որոնք սպասարկում են քաղաքի բնակիչների տարբեր խմբերի (երեխաներ, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, զբաղվածներ, տարեցներ, այցելուներ և այլն) տեղաշարժի հիմնական կարիքները, նպաստում խցանումների, մթնոլորտային արտանետումների նվազեցմանը, քաղաքի համաչափ զարգացմանը, երթևեկության անվտանգությանը, քաղաքի բյուջեի մուտքերի մեծացմանը և այլն: Այս

---

[137] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, կետ «բ»:

[138] Նույն տեղում, հոդված 11:

[139] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, տեղական ինքնակառավարման մարմինները հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում ունեն 9 իրավասություն, որոնցից «բ», «գ», «դ», «ը» կետերը (չօգտագործվող հուշարձանների պահպանություն, ամրակայման, տեղական հուշարձանների նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, հանրապետական նշանակության հուշարձանների պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացում, հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարում) պայմանական սահմանվել են որպես պահպանման, «զ», «թ» (վարձակալության հանձնված համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքեր և շինություններ, հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի և օգտագործողների հետ կնքված պահպանության պայմանագրեր) օգտագործման, իսկ «ե», «է» կասեցման իրավասություն:

[140] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, կետ «զ»:

հարցերն անշուշտ փոխկապակցված են, սակայն տվյալ ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են միայն հանրային տրանսպորտի կազմակերպմանն առնչվող որոշ ցուցիչներ:

Քաղաքապետը կազմակերպում և կառավարում է հասարակական տրանսպորտի աշխատանքը և համայնքային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը: Հաշվետու կառավարման և արդյունավետության մասին դատողություն անելու համար համայնքը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ հասարակական տրանսպորտի[141] ուղևորային ցանցի հիմնավորումներին[142]: Այս հիմնավորումներից բխող սակագների հաշվարկն ու հիմնավորումը[143], ինչպես նաև զեղչված գներով կամ անվճար տրանսպորտից օգտվելու իրավունք ունեցողների ցանկն ու պայմանները[144] ևս պետք է հրապարակվեն:

Ինչ կա

Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հիմնավորող վերլուծություններով ու վիճակագրական տվյալներով առկա չէ: Փոխարենը՝ կայքում որոնմամբ ստացված 68 արդյունքներից մեկում ավագանու 2020 թվականի 302-Ա որոշումից պարզվում է, որ 2005-2020թթ. գլխավոր հատակագիծը գործողության մեջ է մինչ նոր հատակագծի հաստատումը[145]: Համացանցում որոնմամբ պարզ է դառնում, որ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված գործող գլխավոր հատակագիծը գաղտնի փաստաթուղթ է, որի գաղտնազերծումը սահմանված կարգով է իրականացվում: Սահմանված կարգը կայքում տեղորոշել չի հաջողվում: Ենթադրաբար կան հատվածներ, որոնք պետք է չգաղտնազերծվեն, սակայն դրանց շուրջ սահմանված կարգի մասին տեղեկության բացակայությունը և հատակագծի նկարագրության բացակայությունը ոչ մի հիմնավորում չունի: Պատմամշակութային հիմնավորման նախագիծը ևս բացակայում է[146]:

Այս կարգավորումների բացակայությունը ակնհայտորեն ռիսկեր է պարունակում, օրինակ՝ դրանց հրապարակված չլինելու պարագայում առկա սահմանափակումներին հակասող հայեցողական որոշումների ընդունման հնարավորություն ընձեռելու տեսանկյունից, որոնց նկատմամբ համայնքը չի կարող որևէ կերպ վերահսկողություն իրականացնել: Այս պայմաններում նաև հնարավոր չէ դատողություն անել, թե որքանով են գլխավոր հատակագիծն ու պատմամշակութային հիմնավորման նախագիծը ներդաշնակեցված կամ փոխկապակցված, մինչդեռ այդ երկու փաստաթղթերը պետք է կայքում հեշտ հասանելի և անգամ փոխգործակցող ձևաչափով բնակիչներին տային ամբողջական պատկեր:

---

[141] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին. ՀՀ օրենք, հոդված 57, մաս 1, կետ 3; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 55, մաս 1, կետ 13; «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

[142] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 44, մաս 1, կետ 3:

[143] «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1:

[144] Նույն տեղում:

[145] Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ Երևանի ավագանու 13.09.2022թ. N 623-Ա որոշմամբ ընդունվել է քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու մասին որոշումը, ինչը սակայն դա էական փոփոխության չի հանգեցնում:

[146] Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ տվյալների հավաքագրման ժամանակահատվածից հետո՝ 2023 հունիսին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին, իսկ մինչև 2023 թ. ավարտը քաղաքի զարգացման ծրագրով նախատեսված են որոշակի աշխատանքներ:

Քաղաքի գոտևորման նախագծերը հրապարակված են պաշտոնական կայքում՝ որպես նկար, սակայն քարտեզները մասշտաբի պատճառով ընթեռնելի չեն: 2023 թվականին ավագանին ենթադրաբար սահմանել է տեղական տուրքերը, վճարները և հարկերն՝ ըստ գոտիների, քանի որ կայքի հայտարարությունների բաժնում առկա է ավագանու նիստի ու օրակարգով քննարկվող նախագծերի մասին տեղեկություն, որտեղ վերոգրյալ հարցերը ներառված են: Ի դեպ, այս տեղեկատվությունը կայքում նավարկելու կամ որոնելու միջոցով չգտնվեց: Նույն խնդիրն է նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման և օտարման ցանկերի, ծրագրերի դեպքում. կայքում հնարավոր չէ տեղորոշել այդ նյութերը: Համացանցում փնտրման արդյունքում դուրս է բերվել միայն Երևանի ավագանու 2022 թվականի 694-Ն որոշումը համայնքի գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու վերաբերյալ 2023 ծրագիրը: Վերոնշյալ փաստաթղթերի անհասանելիությունը գոյացնում է որոշակի ռիսկեր, երբ, օրինակ, կարող է համայնքի գույքի համար չառաջարկվի լավագույն շուկայական գինը կամ շահագրգիռ անձանց համար չերաշխավորվեն հավասար պայմաններ, ինչի արդյունքում ի վերջո տուժում է համայնքը:

Ընթացիկ քաղաքաշինական քարտեզը կայքում առկա չէ: Համացանցում որոնման միջոցով վերհանված 2008 թվականի քաղաքապետի որոշման մեջ վարչական դատական ակտով պահանջ է դրվում փոփոխել քաղաքապետի մեկ այլ որոշում: «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում որոնմամբ դուրս բերված վճիռը վերաբերում է ընթացիկ քաղաքաշինական քարտեզին, որը, սակայն, կայքի արխիվից գտնել չի հաջողվել, քանի որ այն սահմանափակվում է 2009 թվականով: Կայքում հնարավոր չէ գտնել համայնքապատկան բնակելի և ոչ բնակելի ֆոնդը: Համացանցում տեղորոշվում է ՀՀ կառավարության 2009 թվականի որոշումը, որը քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի մաս է կազմում: Սակայն դա ամբողջական ցանկը չէ, և հանրությանը պարզ չէ, թե ինչ համայնքապատկան գույք ունի Երևանը:

Առանձին դեպքերով հնարավոր է գտնել որոշումներ ապօրինի հողօգտագործումը կասեցնելու մասին: Սակայն համակարգված ու մատչելի տեղեկություն չկա: Ավելին, համացանցում որոնմամբ պարզ է դառնում, որ 2021 թվականին Տեղեկատվության ազատության կենտրոնը դիմել է ՄԻՊ-ի գրասենյակ՝ հայցելով վերջինիս միջնորդությունը ապօրինի հողօգտագործման մասին տեղեկությունը ստանալու նպատակով: Գույքի օրինականացման համար կայքում հրապարակված են ընթացակարգն ու ձևաթղթերը: Սակայն հնարավոր չէ տեղեկանալ այն ինքնակամ կառույցների և ապօրինի շինությունների մասին, որոնք ժամանակին օրինականացվել են:

Կայքում որոնմամբ դուրս են բերվել հողամաս տրամադրելու մասին քաղաքապետի 63 որոշում -ը: Սակայն, հստակ չէ, թե որքանով են այդ արդյունքները սպառիչ: Ավելին, դրանք ժապավենի տրամաբանությամբ դուրս բերվող օրինակներ են, որոնք մեկ առ մեկ պետք է ստուգվեն բովանդակությանը ծանոթանալու նպատակով: Ասվածը հաստատվում է նաև պաշտոնական հարցմամբ, որին ի պատասխան նշվում է տեղեկատվության բացակայությունը: Չկա հարմար նավարկելի ձևաչափ և համառոտ տեղեկություն, որը թույլ կտա արագ գտնել որոնվող տեղեկությունը: Բացակայում է նաև տարեկան ամփոփ վիճակագրության տրամադրումը՝ ինքնակամ կառույցների և ապօրինի շինությունների կասեցման և քանդման վերաբերյալ: Այս մասով ևս հարցման պատասխանը հաստատում է կայքից դուրս բերված տեղեկությունը, որ

այս պահին միայն առանձին որոշումներում են արձանագրված կասեցման և քանդման փաստերը:

Հողամասերի աճուրդների համար գործող առանձին էջում հրապարակվում են աճուրդները, ինչպես նաև քաղաքապետի որոշումը աճուրդի հաղթողի հետ պայմանագիր կնքելու մասին: Ստուգված բոլոր հայտարարությունները աճուրդների մասին հրապարակվել են ժամկետի պահպանմամբ՝ մեկ ամիս առաջ: Սակայն մատչելիությունը սահմանափակ է, քանի որ կարիք կա կամ մշտապես հետևելու այդ էջին կամ նախապես տեղեկացվելու առաջիկա աճուրդի մասին: Որոնման դեպքում էլ աճուրդներին վերաբերող արդյունքներն այնքան շատ են, որ իրենց ոչ մատչելիությամբ համեմատելի են գնումների հարթակի հետ:

Կայքն ունի «մեկ պատուհան» բաժինը: Այստեղ կարելի է գտնել կառուցապատման և անշարժ գույքի հետ կապված իրավակարգավորումները, ուղեցույցները և ձևաթղթերը: Այն տեսանելի և մատչելի է:

Առկա է նաև նախագծման թույլտվության և շինարարական թույլտվությունների ընթացիկ քարտեզ, որտեղ, սակայն, հնարավոր չէ առանձնացնել պատմության և մշակույթի հուշարձանների, մասնավորապես հուշարձան-շենքերի առկա թույլտվությունները, կառուցապատման խտությունը կամ փողոցից չափվող տեղակայման հեռավորությունը, շենքի բարձրությունը և այլն: Սրանք մանրամասներ են, որոնք օգտակար են համայնքի բնակիչների, ինչպես նաև կառուցապատողների համար: Դրանց բացակայության պայմաններում առավել հավանական է պատմամշակութային ժառանգության ոչնչացման հնարավորությունը: Այսպես, Հետքը 2018 թվականին ահազանգում էր հուշարձան-շենքերի և դրանց շուրջ ընթացող խնդրահարույց կառուցապատումների մասին, որոնք աղավաղել էին շենքի տեսքը և նսեմացրել պատմական և մշակութային արժեքը[147]:

Քաղաքապետարանը կայքում առաջարկում է տիպային նախագծեր, ձեռնարկներ փոքր և միջին ձեռնարկատերերի, ինչպես նաև մասնավոր կառուցապատողների համար: Բացակայում է տեղեկությունն այն մասին, թե ինչպես կարող են այդ օրինակելի նախագծերով ստանալ շինթույլտվություն: Պարզ չէ, թե այս դեպքում մեկ պատուհանի սկզբունքով քաղաքապետարան դիմելիս, որ քայլերն են արագացված իրականացվում: Խնդրահարույց է հանրային ծառայությունների ինժեներական ենթակառուցվածքների միացումների պրակտիկան[148]:

2017 թվականին ստեղծվել է «Շինարարական թույլտվությունների առցանց համակարգը», որը թույլ է տալիս ողջ գործընթացը վարել առցանց: Այս համակարգի միջոցով քաղաքապետին դիմում հղելու մասին տեղեկություն չկա քաղաքապետարանի կայքում:

Հանրության մասնակցությունը քաղաքաշինության ոլորտի որոշումների ընդունման գործընթացում հիմնականում նախատեսված է քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետահատակագծային նախագծերի պատրաստ լինելուց հետո, որն անհնարին է

[148] ԹԻՀԿ, Հայաստանում կառուցապատում իրականացնելու համար թույլտվությունների ստացման գործընթացում կոռուպցիոն ռիսկերը (2021), https://transparency.am/hy/publication/pdf/278/9727:

դարձնում փոփոխության որևէ տարբերակ, հանրությունից պահանջում է անարդյունավետ ջանքի գործադրում, կառուցապատողներից և քաղաքային բյուջեից՝ ավելորդ ծախսեր:

Երևանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և քաղաքապետարանի իրավասություններով սահմանված աշխատանքների մասին տեղեկությունները բացակայում են: Կայքն ունի հուշարձաններին վերաբերող բաժին, որտեղ ներկայացված են քաղաքի հուշարձանների նկարներն ու համառոտ տեղեկություններ: Սակայն, դա որևէ կապ չունի ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված ցանկի հետ:

Քաղաքի հասարակական տրանսպորտի մասին տեղեկությունները սահմանափակ են: Առկա են միկրոավտոբուսներով և ավտոբուսներով ուղևորափոխադրման ծախսերի հաշվարկի նախագծերը: Տրանսպորտի ցանցի նախագծի ուսումնասիրության մասին տեղեկություն դեռևս չկա, բայց առկա է իրավիճակի ուսումնասիրություն:

Ֆիրդուսի (33-րդ) թաղամասի և Ֆիզիկայի գիտավանի օրինակների ամփոփում

Երևանի ներկայումս կառուցապատվող երկու թաղամասերի՝ Ֆիրդուսի (33-րդ) թաղամասի և Ֆիզիկայի գիտավանի բնակիչների կենսափորձի և պրակտիկ գիտելիքի ուսումնասիրությամբ դուրս են բերվել Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկությանը և հաշվետվողականությանն առնչվող հիմնախնդիրները:

Իրազեկում. բնակիչները կառուցապատման պլանների մասին տեղեկանում են արդեն իսկ փոփոխության անմիջական փուլում և նրանցից առավել փորձառուները խիստ թերահավատորեն են վերաբերվում ծանուցումներին: Նրանք ծանուցումները դիտարկում են ոչ այնքան որպես բովանդակային տեղեկատվություն, որքան՝ ազդակ «զգուշանալու», «անհանգստանալու» և/կամ «հակաքայլի նախապատրաստվելու» համար: Ոչ պատշաճ են գնահատվում Երևանի քաղաքապետարանի կողմից ծանուցման մեթոդները, մասնավորապես՝ թերթերում հրապարակումները կամ տարածքում «աննկատ տախտակին» փակցնելը: Բնակիչները կարծում են, որ նման մեթոդների ընտրության պատճառը տեղեկատվությունը թաքցնելու, ժամանակին չիրազեկելու միտումն է:

Հանրային լսումների/քննարկումների կազմակերպում. հանրային լսումների մասին պատմությունների քանակը խիստ սահմանափակ է. պատճառներից են փաստացի այդպիսի լսումների չկազմակերպումը և բնակիչների իրազեկման մեջ թերացումը: Մյուս կողմից, հանրային լսումների հանդեպ կա թերահավատություն:

Գնահատում. քաղաքապետարանի և կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում ներգրավված այլ սուբյեկտների հանդեպ անվստահության և թերահավատության տարրերը պայմանավորված են գնահատման գործընթացում առկա «երկակի ստանդարտներով» և «գնահատման մենաշնորհով»: Այստեղ վստահ են, որ գույքը գնահատող կազմակերպությունը նպատակային պատվեր է իրականացնում և իշխանությունների կողմից ոչ ֆորմալ արգելք է դրված այլ կազմակերպությունների վրա այս տարածքում գնահատում անելու համար:

Շահատերերի վերաբերյալ ընկալում. ընդհանուր առմամբ, բնակիչները Երևանի քաղաքապետարանն ընկալում են որպես իրենցից և հանրային շահից օտարված ու հեռու կանգնած ու կողմնակալ կառույց, որը գործում է որպես կառուցապատող կազմակերպության «լիազորված» ներկայացուցիչ: Անօրինական կառուցապատման տարբեր փուլերում ներգրավված այլ հանրային մարմիններին վերագրվում է կոռումպացված գործընթացի տարբեր օղակների դերակատարում:

Ինչ անել

- Մշակել և գործարկել քաղաքային պլանավորման միջոցառումներին հանրության բազմախողովակ իրազեկման և մասնակցության ներառական մեխանիզմներ՝ այդ թվում ապահովելով պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը, տեղեկությունների համակարգված ու ժամանակին հրապարակումը:
- Դիտարկել անցումը քաղաքային պլանավորման փաստաթղթերի համադրված մանրամասն մշակման մոդելին և հանրային մասնակցության մեծ ծավալը բերել նախագծման փուլ:
- Մշակել գոտևորման նախագծերի հրապարակման համաժամանակյա առցանց համակարգ, որը թույլ կտա անմիջականորեն հետևել քաղաքում վարվող տարածական քաղաքային պլանավորման քաղաքականությանը[149]:
- Հանրայնացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններին առնչվող բոլոր որոշումները, ինչպես նաև մասնագիտական հանձնաժողովների եզրակացությունների, միջոցառումների, ծրագրերի, պահպանության պայմանագրերի կնքման, վարձակալության, շինթույլտվությունների, վերաբերելի վիճակագրության, վերլուծությունների, հաշվետվությունների մասին տեղեկությունները:
- Մշակել առանձին ուղեցույց հուշարձան-շենքերում կառուցապատում, նորոգում, ցանկացած միջամտություն իրականացնողների համար:
- Կադաստրի պետական կոմիտեի հետ համագործակցությամբ հուշարձան-շենքերում սեփականության իրավունքով գույք ունեցողների սեփականության վկայականում ամրագրել դրանց տնօրինման սահմանափակումները և պահպանության պահանջները:
- Հրապարակել հանրային տրանսպորտի զարգացմանը վերաբերող բոլոր հիմնավորող փաստաթղթերը, վերլուծությունները, հավաքված վիճակագրությունը, ֆինանսական հիմնավորումները և այլն:
- Հրապարակել խոցելի խմբերի՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց շարժունության ապահովման համար առաջարկվող լուծումների քննարկվող տարբերակները:
- Առանձին «Երթուղային ցանց» պատուհանից մուտքով կազմակերպել ուղևորների համար կարևոր տեղեկությունների համակարգված և մատչելի տրամադրումը, այդ թվում՝ չվացուցակները, մետրոյի հետ համադրմամբ քարտեզը, սակավաշարժ խմբերի համար առաջարկվող երթուղիները և այլն:

[149] Այստեղ կարող է օգտակար լինել Վրաստանում Քաղաքային ծառայությունների զարգացման գործակալության հետ համատեղ Թբիլիսիի քաղաքապետարանի մասնագետների փորձը:

Բնակարանային քաղաքականություն (բնակֆոնդ)

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	8
Փաստացի արձանագրված միավոր	1.5

Ի՞նչ է ակնկալվում

Համայնքն ունի սեփական գույք: Դրանց թվում են շենքերն ու շինությունները, որոնք քաղաքապետը պետք է ամեն տարի գույքագրի[150]: Ավելին, քաղաքապետը վարչական շրջանների ղեկավարների հետ համատեղ կազմակերպում է այդ բնակելի, ոչ բնակելի շենքերի և այլ շինությունների շահագործումը, պահպանումը և նորոգումը[151]: Սա ենթադրում է, որ համայնքին հաշվետու լինելու տեսանկյունից, բայց նաև այդ ռեսուրսի կանոնակարգված ու արդար կառավարումն ապահովելու համար, այդ շենքերի և շինությունների ցանկը[152], շահագործման կարգը[153] և գործընթացը պետք է թափանցիկ լինեն և հրապարակվեն կայքում:

Մեկ այլ կարևոր խնդիր է բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարումը՝ հաշվի առնելով սեփականատերերի շահերը: Սա ենթադրում է ընդհանուր բաժնային սեփականություն կառավարող համատիրությունների պարբերական հաշվետվողականություն սեփականատերեր առջև: Այդտեղից բխում է նաև համատիրության պարտավորությունը հանրային հաշվետվություն ներկայացնելու կատարված աշխատանքների մասին[154]: Սա նաև փոխկապակցված է բազմաբնակարան շենքերում սեփական գույք ունեցող համայնքի անունից գործող քաղաքապետարանի այդ գույքը, ինչպես նաև հուշարձան-շենքերը պահպանելու պատասխանատվությանը: Ինչպես նաև՝ միահյուսված է համայնքային գումարներից աջակցություն ստացող շենքերի մասին հանրային տեղեկատվության առկայությանը, ինչը պետք է մատչելի լինի[155]: Սա կարևոր է համայնքի միջոցների արդյունավետ և արդար բաշխման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերից խուսափելու տեսանկյունից:

Անվտանգության և հանրային առողջապահության համայնքային կարևոր բաղադրիչներից է սանիտարական աշխատանքների ապահովումը և դրա մասին պատշաճ իրազեկումը: Ավագանին հաստատում է աղբահանության կարգը, ժամանակացույցը և աղբամանների տեղադրման վայրերը[156]: Ավագանին նաև հաստատում է համայնքի սանիտարական մաքրման

[150] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 42, մաս 1, կետ 10; հոդված 94, մաս 1, կետ 3:
[151] Նույն տեղում, հոդված 42, մաս 1, կետ 13; «Երևանում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 94, կետ մաս 1, կետ 5:
[152] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 42, մաս 1, կետ 13; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 94, մաս 1, կետ 5
[153] Նույն տեղերում:
[154] ԵԽ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիա, հոդված 10:
[155] «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29:
[156] «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 4:

սխեման[157]: Այս ամենն ունի ուղղակի ազդեցություն համայնքի բնակիչների կյանքի որակի վրա, ուստի այդ տեղեկատվությունը անհրաժեշտ է հրապարակային տեղադրել:

Ինչ կա

Բնակարանային քաղաքականությանը վերաբերող նվազագույն տեղեկությունների համախմբից առկա է միայն համատիրությունների ցանկը: Առկա է տեղեկատվություն այն համատիրությունների մասին, որոնք համայնքային բյուջեից դրամական փոխանցումներ՝ սուբսիդիաներ և/կամ դոտացիաներ են ստացել: Սակայն այդ տեղեկատվությունը առկա է բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Երևանի քաղաքապետի որոշման 10-րդ հավելվածում, ինչն, ըստ էության, տեղեկատվությունը դժվարամատչելի է դարձնում: Հատկանշական է, որ այդ տեղեկատվությունը կայքում որոնմամբ գտնել չի հաջողվել, այլ ստացվել է պաշտոնական հարցման միջոցով:

Մյուս տեղեկությունները, այդ թվում սանիտարական մաքրման և աղբահանության մասին, բացակայում են: «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկն ունի ֆեյսբուքյան էջ, սակայն որպես օգտակար տեղեկատվության աղբյուր՝ անարդյունավետ է: 2022 թվականի բյուջեում կան որոշ նշումներ կապիտալ և ընթացիկ վերանորոգումների մասին, սակայն այդ մասով բյուջեում ներկայացված տվյալները համայնքի բնակիչների համար մատչելի չեն:

Համատիրությունների տարեկան գործունեության հաշվետվությունները ոչ միայն չեն հանրայնացվում, այլև կան տարբեր հետազոտություններ և հրապարակումներ[158], որոնք փաստում են, թե ինչպես են այդ կառույցները կտրված սեփականատերերից, որոնց իսկ որոշմամբ են իրենք ստեղծվել ընդհանուր բաժնային սեփականությունը կառավարելու նպատակով:

Կարևոր է նշել, որ 2016 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանը ԵԱՔԴ/0483/15 որոշմամբ պարտավորեցրել է համատիրություններին պարտադիր վճարը գանձել, եթե ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ առկա է ակտ, նախահաշիվ, այդ գումարը ընդգրկված է այդ տարվա բյուջեում, այն քննարկված է ընդհանուր ժողովում և հաստատումից հետո գումարն՝ ըստ սեփականատիրոջ բաժնեմասի բաժանված է սեփականատերերի միջև և այն արձանագրված է ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշման մեջ, իսկ կատարված աշխատանքների մասին սեփականատերերը ստանում են ամսական հաշվետվություններ: Բացի այդ, սեփականատերերը, ըստ այս որոշման, պետք է նախօրոք ծանուցվեն նախատեսված վճարային պարտավորության չափի, ժամկետների և կարգի մասին, սակայն այդ ամենի մասին կայքում որևէ տեղեկատվություն չկա:

Ավելին, 2022 թվականի փետրվարին Երևանի քաղաքապետարանի ֆեսյբուքյան էջում հրապարակվեց նյութ, որտեղ նշվում էր 260 համատիրության և լիազոր կառավարմամբ 140 շենքի մասին[159]: Տեսանյութում քաղաքապետարանի համապատասխան բաժնի ղեկավարը

[157] Նույն տեղում, հոդված 13:
[158] *«ժեկ»-ից համատիրություն*. Ուրբանիստա. (n.d.). https://urbanista.am/condominium:
[159] Ինչ գործառույթ ունեն համատիրությունները և ուր են ուղղում հավաքագրված գումարները. (2022). *Facebook page: Yerevan Municipality*. Retrieved May 31, 2023, from https://www.facebook.com/watch/?v=995741824385332:

նաև նշում է շուտով գործարկվելիք համատիրությունների էլեկտրոնային համակարգի մասին, որն առավել թափանցիկ կդարձնի միջոցների հավաքագրումն ու ծախսերի ներկայացումը՝ ըստ կատարված աշխատանքների[160]: Համացանցում առկա է «Համատիրությունների կառավարման էլեկտրոնային համակարգ[161]», սակայն քաղաքապետարանի կայքում այդ մասին ևս տեղեկությունը և/կամ հղումը բացակայում է: Քաղաքապետարանի պարզաբանումից պարզ դարձավ, որ այդ կայքը ստեղծվել է մասնավոր ընկերության կողմից և առնչություն չունի կառույցի հետ:

Ի՞նչ անել

- Հրապարակել հստակ տեղեկություններ, թե ինչ գույք ունի համայնքը և ինչպես է այն տնօրինվում: Դա պահանջում է, որպեսզի ամեն տարի հրապարակվեն գույքագրման արդյունքները: Ավելին, տրամադրել հստակ տեղեկություններ այդ գույքի շահագործման պայմանների և դրանց հասանելիության մասին:
- Հրապարակել համատիրությունների գործունեության տարեկան հաշվետվությունները:
- Հրապարակել հանրային միջոցներից ֆինանսավորում ստացած համատիրությունների ցանկն ու գումարների չափը՝ ներառյալ տրամադրման նպատակները:
- Հրապարակել սանիտարական մաքրման սխեմայի և աղբահանության մասին տեղեկությունները:

Քաղաքացիական պաշտպանություն

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**4**
Փաստացի արձանագրված միավոր	3

Ի՞նչ է ակնկալվում

Քաղաքապետը կազմակերպում և իրականացնում է բնակչության պաշտպանությունը արտակարգ իրավիճակների ժամանակ: Պարտադիր է աղետների ռիսկերի նվազեցումը, որը

[160] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-191-Ն օրենքով (Ընդունված է 2023 թվականի մայիսի 24-ին) կատարվել է փոփոխություն, համաձայն որի բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից օրենքով նախատեսված ծանուցումները, իրազեկումները և հաշվետվությունները կարող են իրականացվել (ներկայացվել) միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով: Հատուկ անհրաժեշտ է նշել, որ նույն փոփոխությամբ միասնական էլեկտրոնային հարթակը ստեղծում և վարում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը, իսկ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից նշված հարթակում իրազեկումները և/կամ ծանուցումները հրապարակելը պարտադիր պայման է դառնում այն դեպքում, եթե վերջիններս միացված են նշված համակարգին: Միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը, վարման կարգը, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի՝ միասնական էլեկտրոնային հարթակին միանալու կարգը, ժամկետները, միասնական էլեկտրոնային հարթակում ծանուցումների, իրազեկումների և հաշվետվությունների տեղադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նշված ենթաօրենսդրական ակտի ընդունումը նախատեսված է փոփոխությունը ուժի մեջ մտնելու օրվանից 4 ամսվա ընթացքում, իսկ հարթակի ստեղծումը և գործարկումը նախատեսվում է ենթաօրենսդրական ակտի ընդունման օրվանից 12 ամսվա ընթացքում: Հետևաբար, հարթակի օրենքով սահմանված կարգով գործարկումը կարելի է ակնկալել 2024 թվականի սեպտեմբեր ամսին:

[161] Համատիրությունների կառավարման էլեկտրոնային համակարգ. (n.d.). https://hamatirutyun.am:

քաղաքապետարանի պարտադիր լիազորությունների ցանկում է[162]: Պետական մարմինների հետ համագործակցությամբ՝ քաղաքապետը կազմակերպում է սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումները: Վերացնում է բնածին և տեխնածին աղետների հետևանքները և նվազեցնում առկա ռիսկերը: Կազմակերպում է սեյսմիկ անվտանգության ապահովման աշխատանքները[163]: Քաղաքապետարանը իրականացնում է բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը[164]: Այս ամենի մասին բնակչության խելամիտ իրազեկվածությունը ենթադրում է, որ քաղաքապետարանի կայքում պետք է լինեն որոշակի տեղեկություններ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության, իրականացվեն անհատական ծանուցումներ[165]:

Ինչ կա

Կայքում որոնման արդյունքում վերհանվել է 80-ից ավելի արձանագրում, սակայն դրանց առաջին էջերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ հրապարակումները քաղաքապետի կարգադրություններով սահմանված Ամանորին շուրջօրյա հերթապահություններ սահմանելու մասին են: Համացանցում որոնման արդյունքում դուրս է բերվել 2014 թվականին հաստատված քաղաքի բնակչության պաշտպանության պլանը, որը ակնհայտորեն առնվազն մասամբ իր ակտուալությունը կորցրել է՝ հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակը և պատերազմը, այդ թվում՝ նոր զինատեսակների ու անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ: Հասանելի է նաև քաղաքապետի 2022 թվականի կարգադրությունը բնակչության պատսպարման կազմակերպումն ապահովող միջոցառումների մասին: Այն ընդհանուր բնույթ ունի և հանձնարարականներ է տալիս համապատասխան բաժիններին: Սակայն առկա չեն անգամ համառոտ տեղեկություններ իրականացված միջոցառումների արդյունքների մասին: Հասկանալի է, իհարկե, որ վերոնշյալ գործողությունների առնվազն մի մասի գաղտնիությունը պետք է պահպանվի, սակայն չկա նույնիսկ որևէ հիմնավորում տեղեկատվության ի սպառ բացակայության վերաբերյալ:

Քաղաքապետարանի կայքում տեղադրված է 2022 թվականի նոյեմբերի 8-ին բնակիչներին ուղղված հայտարարությունը բնակելի շենքերի մուտքերում փորձնական փակցված պատսպարման վայրի գտնվելու մասին: Սա հաստատվում է նաև պաշտոնական հարցմամբ ստացված տեղեկատվությամբ: Սակայն, կայքում չկան ամփոփ տեղեկություններ, թե ինչ ընթացք է ստացել այդ փորձարկումը և ինչպիսի ամփոփ արդյունքներ կան:

Ինչ անել[166]

- Տրամադրել առավել առարկայական տեղեկություններ բնակիչներին աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում պաշտպանության մասին, այդ թվում՝ այն միջոցառումների մասին, որոնք բնակիչներին ապահովագրում են

[162] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, կետ 12; հոդված 41, մաս 2, կետ 1:
[163] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածի 35, մաս 1, կետ 29:
[164] «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ «դ»:
[165] «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, կետ «դ»:
[166] Օգոստոսի 9-ին քաղաքապետարանը տեղեկացրեց, որ զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչությունը բարձրացրած հարցն ընդունել է ի տնօրինություն և առաջարկությունների ուղղությամբ կտարվեն համապատասխան աշխատանքներ:

մարդածին աղետներից բիզնես գործունեություն ծավալող տնտեսվարողների տարածքներում, համայնքի առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում:

- Հրապարակել հստակ տեղեկություններ պատսպարման միջոցառումների արդյունքների մասին, ինչպես նաև տրամադրել կոնտակտային տվյալներ այդ միջոցառումների պատասխանատուների վերաբերյալ, որոնց բնակիչները կարող են դիմել իրենց հասցեին կցված ապաստարանի կամ թաքստոցի մասին տեղեկություն ստանալու նպատակով:
- Ըստ գործող պլանի գնահատել արձանագրած արդյունքները և բնակիչներին իրազեկել քաղաքի պատրաստվածության աստիճանի մասին:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**6**
Փաստացի արձանագրված միավոր	2

Ինչ է ակնկալվում

Բնապահպանական միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկությունները ենթակա են պարտադիր հրապարակման[167]: Երևանը պետք է ունենա բնապահպանական ծրագրեր, որոնց հսկողությունը վերապահված է քաղաքապետարանին: Ամեն տարի ավագանին հաստատում է բնապահպանությանն ուղղված միջոցառումների ցանկը և ժամանակացույցը[168]: Համայնքի սեփականություն հանդիսացող հողերում քաղաքապետը հսկում է բնապահպանական միջոցառումների իրականացումը[169]:

Համայնքին պատկանող՝ քաղաքապետարանի ենթակայության տակ գործող կազմակերպությունները պետք է կատարեն բնապահպանական օրենսդրության նորմերը և ենթակա են ստուգման տեսչական մարմնի կողմից: Տեսչական մարմինը քաղաքի ենթակայության կազմակերպությունների ստուգման արդյունքում կայացրած որոշումների կապակցությամբ տեղեկացնում է քաղաքապետին[170]: Ենթադրաբար այդ որոշումները պետք է հասանելի լինեն նաև համայնքի բնակիչներին:

Երևանում ընդերքի օգտագործման համար քաղաքապետարանը նախատեսվող գործունեության նախնական գնահատման համար պետք է համաձայնություն տա[171]: Այս դեպքերում քաղաքապետարանը պետք է նախատեսվող գործունեության և դրա ազդեցության գնահատման հաշվետվությունը հանձնի բնակիչների քննությանը՝ հանրային լսումների միջոցով: Հանրային լսումները պետք է տեսաձայնագրվեն, և կազմվեն համապատասխան

[167] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 5, կետ 11:
[168] «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 4; «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 64, մաս 1, կետ 4:
[169] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 51:
[170] «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 5, հոդվածներ 27, 28 և 29:
[171] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 4, կետ 6:

արձանագրություններ[172]: Ակնհայտ է, որ այդ ամենը պետք է հրապարակվի և մատչելի լինի բնակիչներին և այլ շահագրգիռ կողմերին:

Ինչ կա

Քաղաքապետարանի կայքի զարգացման ծրագրերի բաժնում առկա է Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը[173], որի կարճաժամկետ գործողությունների ժամկետը 2017-2020թթ., և արդեն պետք է ամփոփված լիներ հաշվետվությունը: Քաղաքային տնտեսություն բաժնի բնապահպանություն էջում առկա է 2023թ.-ի համար նախատեսվող գործունեությունը, որը շատ համառոտ է լիարժեք համարվելու համար:

Բացակայում են նաև քաղաքապետին փոխանցված ոլորտի տեսչական մարմնի որոշումների մասին տեղեկությունները ընդերքօգտագործման նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությանը նախնական համաձայնություն տալու, հայտերի հետ փոխկապակցված ընդերքօգտագործման նախատեսվող գործունեության և դրա ազդեցության գնահատման հաշվետվությունների, դրանց հանրային քննարկումների արձանագրությունների ու տեսաձայնագրությունների, համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ սահմանված հսկողության, համայնքային ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման վերաբերյալ:

Ինչ անել

- Հրապարակել բնապահպանական ծրագրերն ու հաշվետվությունները, երաշխավորել դրանց որոնելիությունն ու հեշտ տեղորոշելիությունը:
- Ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկությունները անհրաժեշտ է ներկայացնել մանրամասն, դրանք չեն կարող լինել համառոտ, քանի որ հիմքում կան վիճակագրական տվյալներ, վերլուծություններ և ուսումնասիրություններ, որոնք պետք է հրապարակվեն:
- Հրապարակել ընդերքօգտագործման առկա թույլտվությունների ցանկը՝ բաց ձևաչափով:
- Մշակել տեղեկությունների համակարգված ներբեռնման սխեմա, որը կխթանի գնահատման հայտի հանրային քննարկումներին ազդակիր համայնքի բնակիչների, ինչպես նաև այլ շահագրգիռ ու հետաքրքրված անձանց մասնակցությունը:
- Կայքում հրապարակել տեսչական մարմնի որոշումների ցանկը՝ համայնքի ենթակայության կազմակերպությունների կողմից օրենքի պահանջների կատարման մասին:

[172] Նույն տեղում, հոդված 26, մաս 7:
[173] Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր, 2017, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/70/86af140bc4e31d91987620cc351f935b11d2a557.pdf

Սոցիալական ծառայություններ

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	7
Փաստացի արձանագրված միավոր	3.5

Ինչ է ակնկալվում

Համայնքի բնակիչներին սոցիալական ծառայությունների մատուցումը բխում է ՀՀ Սահմանադրությունից և մի շարք օրենքներից: Պետությանը զուգահեռ ՏԻՄ-երը՝ այս դեպքում Երևանի քաղաքապետարանը, պարտավորվում է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կխթանեն կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարությունը, երեխաների զարգացման համար կստեղծեն բարենպաստ պայմաններ, կխթանեն հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կյանքին[174]: Այն է՝ իրենց ուշադրության կենտրոնում կպահեն հիմնական խոցելի խմբերին և պետությանը զուգահեռ աջակցության թիրախավորված քաղաքականություն կվարեն սեփական համայնքում:

Երևանում գործում են տարբեր խոցելի խմբերին թիրախավորող և տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպություններ: Եթե սոցիալական ծառայությունների մատուցման նպատակով Երևանի քաղաքապետարանը համագործակցում է այդ կառույցների հետ, ապա այդ տեղեկատվությունը պետք է հրապարակվի կայքում[175]: Համագործակցությունից զատ, համայնքի բյուջեից այդ կառույցներին կամ սոցիալական ծառայությունների մատուցման համար որևէ կառույցի դրամական միջոցների հատկացման դեպքում տվյալ տեղեկությունը պետք է հանրայնացվի: Բացի այդ, թիրախ խմբերի համար պետք է տրամադրվի տեղեկություն վերոնշյալ ծառայություններից օգտվելու վերաբերյալ[176]:

Համայնքում խոցելի խմբերին աջակցության համար հարկ է, նախևառաջ, ունենալ թիրախները հստակորեն որոշող համակարգ և գործուն մեխանիզմներ խնդիրները տեղական մակարդակում լուծելու համար: Այդ նպատակով օրենքով սահմանվում է, որ քաղաքապետը աշխատակազմի և աջակցող ցանցի՝ այդ թվում գործընկեր կառույցների հետ գործակցաբար, պետք է կազմակերպի տնային այցելություններ[177]:

Երևանի քաղաքապետարանը խնամակալության և հոգաբարձության մարմինն է, որին կից գործում է համանուն հանձնաժողովը: Հանձնաժողովի կազմը հաստատում է Երևանի քաղաքապետը[178]: Հանձնաժողովի աշխատանքի դիտարկումը առանձնացվել է նաև որպես ամենախոցելի խմբի հետ աշխատող մարմին: Ի թիվս այլ լիազորությունների, հանձնաժողովը գործ ունի երեխայի պաշտպանության իրավունքի հետ: Չկա որևէ օրենսդրական սահմանափակում, որը թույլ չի տալիս հրապարակել հանձնաժողովի կազմը: Բացի այդ,

[174] ՀՀ Սահմանադրություն, հոդված 87:
[175] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 5, կետ 19:
[176] Congress of Local and Regional Authorities. (2017, October 19). *Resolution 421 (2017) Making public procurement transparent at local and regional levels*. Rm.coe.int. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/168075fbe1.
[177] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 24, մաս 4:
[178] Ընտանեկան օրենսգիրք, հոդված 109, մաս 2:

քաղաքապետարանը կարող է հրապարակել այդ հանձնաժողովի արձանագրությունները՝ երաշխավորելով, որ անձը բացահայտող կամ անձնական տվյալներ պարունակող տեղեկություն չի հրապարակվի: Սա նաև թույլ կտա համայնքին հետևել հանձնաժողովի աշխատանքներին և, ընդհանուր առմամբ, տեղեկանալ կայացրած որոշումների մասին:

Վերջապես, շատ կարևոր է հրապարակել վիճակագրությունը և կատարված աշխատանքների հաշվետվությունը առանց ծնողական խնամքի մնացած և որդեգրման ենթակա երեխաների[179], անօթևան անձանց[180], ինչպես նաև սոցիալական ծառայություններից ու հաստատություններից օգտվելու վերաբերյալ անձանց, ընտանիքների և սոցիալական այլ խմբերի[181] մասին: Առնվազն տարեկան կտրվածքով առանց ծնողական խնամքի մնացած և որդեգրման ենթակա երեխաների մասին վիճակագրությունը (իհարկե, առանց նույնականացնող տեղեկության հրապարակման) կարող է աջակցել, որպեսզի որդեգրելու գործընթացը առավել համակարգված, թափանցիկ և հաշվետու լինի: Անօթևան անձանց հաշվառումն ու վիճակագրության հրապարակումը կարող է նաև թույլ տալ գնահատել համայնքի բնակարանային քաղաքականությունը:

Ինչ կա

Անօթևան խնդիր ունեցող անձանց մասին կայքը հրապարակել է համառոտ տեղեկություններ: Առանց ծնողական խնամքի մնացած և որդեգրման ենթակա երեխաների մասին նույնպես առկա են հրապարակումներ: Զուգահեռաբար, առկա է հղում որդեգրելու ցանկություն ունեցող անձանց համար նախատեսված դասընթացի վերաբերյալ:

Երևանի վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերը հրապարակված են, սակայն դրանց գործունեությունը փաստող արձանագրությունները՝ անձնական տվյալների ծածկագրմամբ, բացակայում են: Հանձնաժողովների կազմի կենսագրականների հրապարակումը թույլ կտա հանրությանը հաջորդիվ հասկանալ, թե որքանով են նման պատասխանատու գործառույթ իրականացնողները իրենց կրթական և մասնագիտական, աշխատանքային փորձից բխող որակներով օժտված, որպեսզի կայացնեն զգայուն և կյանքին ու իրավունքներին վերաբերող որոշումներ: Օրինակ՝ Արմավիրի մարզում Հետքը 2021 թվականին ուսումնասիրել էր գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերը և բացահայտել, որ մեծամասնությունը բարձրագույն կրթություն չունեն և չեն վերապատրաստվել, սակայն տալիս են մասնագիտական կարծիք[182]:

Կայքում հասանելի է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կառույցների ցանկը, որոնց հետ համագործակցում է քաղաքապետարանը: Առկա է նաև տեղեկություն գործընկեր ՀԿ-ների մասին: Նշվում են նաև այն ՀԿ-ները, որոնք համայնքի բյուջեից ֆինանսավորվում են խոցելի խմբերին որոշակի ծառայություններ մատուցելու համար:

[179] ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի 962-Ն որոշում, հավելված, կետ 4; ՀՀ կառավարության 2010թ. 269-Ն որոշման հավելված 1, կետ 3:
[180] ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի 1069-Ն որոշում, հավելված 4, կետ 21:
[181] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 2:
[182] Գրիշա Բալասանյան 2021-08-06. (2021, August 6). Խնամակալության և հոգաբարձության մարմինները բարձիթողի վիճակում են. Hetq.am. https://hetq.am/hy/article/134213:

Սակայն չկա տեղեկություն ուղղված թիրախ խմբերին, որը նրանց կօգնի հավասար պայմաններում օգտվել այդ ծառայություններից:

Տնային այցերի մասին ամփոփ վիճակագրություն և տեղեկատվություն կայքում զետեղված չէ: Համացանցում որոնման արդյունքում դուրս բերված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Նուբարաշենի սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի նկարագիրն ամրագրում է տնային այցելության պահանջը, ինչից բխում է, որ քաղաքապետարանում այդ աշխատանքները պետք է կատարվեն, իսկ տվյալները՝ արձանագրվեն: Պարզ չէ, թե ինչու այդ տեղեկությունը հանրությանը հասանելի չէ:

Ի՞նչ անել

- Հրապարակել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերը և դրանց անդամների կենսագրությունները:
- Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերի հրապարակմանը զուգահեռ հրապարակել արձանագրությունները (անձնական տվյալների և անձը բացահայտող տեղեկության ծածկագրմամբ):
- Տրամադրել սոցիալական ծառայությունների մատուցման մասին համակարգված տեղեկություններ՝ ըստ թիրախ խմբերի, որը կնպաստի այդ ծառայությունների հասանելիությանը և կերաշխավորի հավասար խաղի կանոնների հաստատման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:
- Տրամադրել վիճակագրությունն՝ ըստ խոցելի խմբերի և մատուցված ծառայությունների, որը թույլ կտա հանրային վերահսկողություն սահմանել այս կարևոր ոլորտի նկատմամբ:

Կրթություն

Ցուցիչների քանակ և առավելագույն միավոր	**3**
Փաստացի արձանագրված միավոր	3

Ի՞նչ է ակնկալվում

Երևանի քաղաքապետը հսկում է ուսումնական հաստատություններում նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկումը[183] և իրականացնում է այդ տարիքի երեխաների հաշվառումը[184]: Երևանի քաղաքապետարանը ապահովում է դպրոցական տարիքի երեխաների ընդգրկումը ուսումնական հաստատություններում, իսկ քաղաքապետը հաշվառում է այդ տարիքի երեխաներին և ապահովում նրանց ընդգրկումը[185]:

[183] «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 1, կետ 4:
[184] «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, մաս 1, կետ 7:
[185] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 6; հոդված 32:

Ինչ կա

Կայքի առանձնացված էջում առկա է ուղեցույց, որը նկարագրում է կանոնները, տրամադրվում են տեղեկություններ մանկապարտեզների մասին: Կայքում առցանց հնարավոր է հերթագրել երեխային: Հանրակրթության տարիքի երեխաների համար կայքում առկա է նկարագրություն և հղում «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգին», որտեղ ծնողները կամ խնամակալները կարող են հայտագրել երեխային:

Ինչ անել

- Պահպանել առկա թափանցիկության ու հաշվետվողականության մակարդակը և, ըստ անհրաժեշտության, ավելացնել հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Council of Europe Committee of Ministers, *Recommendation CM/Rec(2014)7 of the Committee of Ministers to Member States on the Protection of Whistleblowers* (April 30, 2014). Retrieved January 11, 2023, from https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805c5ea5
2. Council of Europe Committee of Ministers, *Guidelines for Civil Participation in Political Decision Making* (September 27, 2017). Retrieved January 11, 2023, from https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016807509dd
3. Council of Europe The Congress of Local and Regional Authorities, *Resolution 417 (2017)1 Open Data for Better Public Services* (March 30, 2017). Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/1680703fd5
4. Council of Europe The Congress of Local and Regional Authorities, *Resolution 421 (2017) Making Public Procurement Transparent at Local and Regional Levels* (October 19, 2017). Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/168075fbe1
5. The Congress of Local and Regional Authorities. (2018, November 7). *Conflicts of Interest at Local and Regional level - Resolution 434 (2018), Recommendation 423 (2018), Explanatory Report*. Council of Europe. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/conflicts-of-interest-at-local-and-regional-level-governance-committee/16808d33d0
6. The Congress of Local and Regional Authorities. (2018, November 7). *European Code of Conduct for All Persons Involved in Local and Regional Governance*. Resolution 433 (2018) European Code of Conduct for all Persons Involved in Local and Regional Governance. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/european-code-of-conduct-for-all-persons-involved-in-local-and-regiona/1680718fbf
7. *CETS 122 - explanatory report to the European Charter of Local Self Government*. Retrieved January 31, 2023, from https://rm.coe.int/16800ca437
8. Council of Europe. (2000, May 11). *Recommendation No. R 2000 of the Committee of Ministers to the Member States on codes of conduct for public officials*. Group of States against Corruption. Retrieved January 10, 2023, from https://rm.coe.int/16806cc1ec
9. *Council of Europe Convention on Access to official documents*. Council of Europe. (2009). Retrieved February 4, 2023, from https://rm.coe.int/1680084826
10. Council of Europe Treaty Series - No. 205. (2009, June 18). *Explanatory Report to the Council of Europe Convention on Access to Official Documents*. Rm.coe.int. Retrieved February 15, 2023, from https://rm.coe.int/16800d3836
11. *The global campaign on Urban Governance - UN-Habitat*. (2002). Retrieved January 31, 2023, from https://unhabitat.org/sites/default/files/download-manager-files/Global%20Campaign%20on%20Urban%20Governance.pdf
12. Huberman, B. A., Pirolli, P., Pitkow, J. E. & Lukose, R. M. (1998) Strong Regularities in World Wide Web Surfing. Science, 280(5360), 95-97.
13. *Recommendation 456 (2021) Monitoring of the application of the European Charter of Local Self-Government in Armenia*. The Congress of Local and Regional Authorities. Retrieved February 4, 2023, from https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680a2dc57

14. Lieberman, M. (2023, January 18). 10 Stats About Inbound Marketing That Will Make Your Jaw Drop [web log]. Retrieved February 15, 2023, from https://blog.hubspot.com/insiders/inbound-marketing-stats#:~:text=Microsoft%20Research%20reports%20that%20people,of%20your%20own%20browsing%20behavior
15. Oman, C. P., & Arndt, C. (2006). *Uses and abuses of governance indicators: Read online*. oecd. Retrieved February 4, 2023, from https://read.oecd-ilibrary.org/development/uses-and-abuses-of-governance-indicators_9789264026865-en#page13
16. Open Government Partnership, *Open Government Declaration* (July 12, 2021). Retrieved January 9, 2023, from https://www.opengovpartnership.org/process/joining-ogp/open-government-declaration/
17. PACE (17th Sitting), *Resolution 1729 (2010) Final version: Protection of "whistle-blowers".* (April 29, 2010). Retrieved January 11, 2023, from https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=17851&lang=en
18. Congress of Local and Regional Authorities, Rudkin B., and Helgesen G. M., *Monitoring of the Application of the European Charter of Local Self-Government in Armenia* (February 12, 2020), Retrieved February 4, 2023, from https://rm.coe.int/0900001680a288a5
19. Transparency International, *Slovakia: Cities Ranked on their Transparency* (December 27, 2012). Retrieved February 14, 2023, from https://www.transparency.org/en/news/slovakia-cities-ranked-on-their-transparency
20. Transparency International Ukraine. *Transparent Cities: Research of Transparency and Accountability* (2018). Retrieved February 14, 2023, from https://transparentcities.in.ua/en
21. Transparency International Ukraine. *Updated Transparency Ranking Methodology. How Will Cities be Evaluated in 2021?* (July 08, 2021). Retrieved February 14, 2023, from https://transparentcities.in.ua/en/news/yak-otsiniuvatymetsia-riven-prozorosti--mist-u-2021-rotsi
22. United Nations Development Programme, *Governance for Sustainable Human Development: a UNDP policy document* (1997). Retrieved January 31, 2023, from https://digitallibrary.un.org/record/492551?ln=en
23. Zeldman J., *Taking Your Talent to the Web: A Guide for the Transitioning Designer*, Indianapolis, Indiana: New Riders (2001). https://www.zeldman.com/talent/Taking_Your_Talent_to_the_Web.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԹՎԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Տեղական ինքնակառավարման չափման համաթիվը, կիրառության երկիրը[186]	Չափման արժեքային հիմքը, սկզբունքները	Թափանցիկության և հաշվետվողականության չափման փոփոխականները
Քաղաքային կառավարման համաթիվ (UGI) Կիրառում է 25 չափանիշ, հաշվարկվում է 4 ենթահամաթիվ: Տվյալները հավաքագրվում են ազգային և քաղաքային վիճակագրական բազաներից, կարգավորումներից, ժողովրդագրության, բյուջեի և ընթացակարգերի մասին վարչական տվյալներից: Կիրառվել է Աֆրիկայում, արաբական և Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներում:	Հաշվետվողականություն	Պայմանագրերի, մրցույթների, բյուջեի և հաշիվների հրապարակում Վերահսկողություն պետական այլ կառույցների կողմից Վարքագծի կանոններ Քաղաքացիների դիմում-բողոքներ Հակակոռուպցիոն հանձնաժողով Ակտիվների հրապարակում Անկախ աուդիտ
Տեղական կառավարման բարոմետր (LGB) Կիրառում է 22 չափանիշ, համաթիվը հաշվարկվում է 0-100 միավորի կշռված համադրության միջոցով: Տվյալները հավաքագրվում են առաջնային աղբյուրներից, երկրորդային աղբյուրներից, ինչպիսիք	Թափանցիկություն և օրենքի գերակայություն	Ինստիտուցիոնալ իրավական կարգավորումների առկայություն և կիրառություն Արդարադատության հասանելիություն Տեղեկատվության առկայություն և հասանելիություն Կոռուպցիայի դեպքերի վիճակագրություն

[186] UNDP. (n.d.). *A Users' Guide to Measuring Local Governance*. UNDP Oslo Governance Centre. Retrieved January 30, 2023, from https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/publications/LG%20Guide.pdf

են զեկույցները, իրականացվում են հարցումներ, հարցազրույցներ ոլորտային փորձագետների, ՏԻՄ վերաբերյալ տեղեկացված անձանց հետ, ֆոկուս խմբային քննարկումներ: Կիրառվել է Աֆրիկայի հինգ երկրներում և Էկվադորում:	Հաշվետվողականություն	Արդյունքների, ծառայությունների, միջոցների պլանավորման և օգտագործման վերաբերյալ տեղեկատվության առկայություն, մատչելիություն և թափանցիկություն Անկախ աուդիտի առկայություն Կառավարության հասանելիություն Ստուգումների և վերահսկողության մեխանիզմներ (checks and balances)
Հանուն զարգացման լավ կառավարում (GOFORGOLD) Կիրառում է 25 չափանիշ՝ 7 սկզբունքների հիման վրա: Տվյալները հավաքագրվում են ազգային և համայնքային վիճակագրության, իրավական կարգավորումների, ժողովրդագրական, բյուջետային և ընթացակարգային վարչական վիճակագրության աղբյուրներից: Կիրառվել է Աֆղանստանում: Կիրառելի է հետկոնֆլիկտային համատեքստում:	Հաշվետվողականություն	Կառավարության վերահսկողություն Հակակոռուպցիոն քաղաքականություն Անկախ աուդիտ Վարքագծի կանոններ
	Թափանցիկություն	Հնարավորություններ քաղաքացիների բողոքների համար Հանրության իրազեկվածության իրավունք Բյուջեի և ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ հանրության վերահսկողություն Պայմանագրերի, մրցույթների պաշտոնական հրապարակում

Տեղական մակարդակում ժողովրդավարության գնահատում (International IDEA) Կիրառում է գնահատման 15 ոլորտ: Տվյալները հավաքագրվում են ոլորտները չափող հարցերի միջոցով, որոնց համար որպես հարցվող ներգրավվում է ներկայացուցիչ համայնքից, հանրային կառավարման ոլորտի ակադեմիական շրջանակից, քաղհասարակությունից: Կիրառվել է Աֆրիկայի և արաբական մի շարք երկրներում:	Մասնակցային ժողովրդավարություն *(Բաց կառավարում,* *Հասանելիություն,* *Թափանցիկություն,* *Հաշվետվողականություն)*	ՏԻՄ-երն ու մասնակցային ժողովրդավարությունը՝ բաց, արդար, թափանցիկ, հասանելի, հաշվետու Քաղհասարակություն, մասնավոր հատված, միջազգային կառույցներ և ՁԼՄ-ներ Քաղաքացիների իրազեկման ձևեր և մեթոդներ Քաղաքացիական նախաձեռնություններ և հանրաքվեներ
Տեղական ժողովրդավարական կառավարում (Local democratic governance) Կիրառում է գնահատման 5 ոլորտ: Տվյալները հավաքագրվում են ՏԻՄ աշխատակազմի, ՏԻՄ ներկայացուցիչների և քաղաքացիների հարցումներից: Կիրառվել է Արևելյան Եվրոպայի երկրներում:	Ժողովրդավարական կատարողական՝ բաց և թափանցիկ	Բյուջեի և գնումների գործընթացի թափանցիկություն ՏԻՄ փաստաթղթերի մատչելիության կարգավորումներ և որոշակիություն Հանրային հանդիպումների, ժողովների, լսումների, դրանց հայտարարման մեթոդների համապարփակություն ՏԻՄ-երի կողմից նախաձեռնված քաղաքացիական խորհրդակցական հանձնախմբեր 1,000 բնակչի հաշվարկով ՏԻՄ-երի թողարկած տեղեկագրերի տպաքանակ

<table>
<tr><td></td><td></td><td>Քաղաքացիների հարցումներ կոռուպցիայի ընկալման, խտրականության, վարչարարների հասանելիության և արդարության մասին</td></tr>
<tr><td colspan="3">Տեղական կառավարման վերլուծական ՄԱԶԾ ուղենիշներ

Կիրառում է գնահատման 14 թիրախ և 35 չափանիշ:

Տվյալները հավաքագրվում են քաղաքացիների հարցումներից, իրավակարգավորումներից, համայնքային, վարչական վիճակագրական աղբյուրներից:

Կիրառվել է Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում:</td></tr>
<tr><td rowspan="3">Կառավարման համաթիվ

Կիրառվում է գնահատման 75 չափանիշ:

Տվյալները հավաքագրվում են ոլորտից լավատեղյակ անձանց հետ անցկացված հարցազրույցներից: Ընտրանքը ներառում է ՏԻՄ ներկայացուցիչներին, քաղհասարակությանը, լրագրողներին և հետազոտողներին: Այլ աղբյուրները ներառում են վիճակագրությունը, իրավական ակտերը, զարգացման ծրագրերը, վեբկայքերը, ժողովների արձանագրությունները, աուդիտի արդյունքները և այլն:

Կիրառվել է Ինդոնեզիայում:</td><td>Հաշվետվողականություն</td><td rowspan="3"></td></tr>
<tr><td>Թափանցիկություն</td></tr>
<tr><td></td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="3">Քաղաքային կատարողականի չափում (MIDAMOS)

Կիրառում է 31 չափանիշ:

Տվյալները հավաքագրվում են վիճակագրական աղբյուրներից, իրավակարգավորումներից, ժողովրդագրության, բյուջեի և ընթացակարգերի մասին վարչական տվյալներից: Իրականացվում են հարցազրույցներ քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ և քաղաքացիների հարցումներ:

Կիրառվել է Պարագվայում:</td></tr>
<tr><td colspan="3">Կառավարում հանուն համայնքային զարգացման համաթիվ (GOFORDEV)

Կիրառում է 12 չափանիշ:

Տվյալները հավաքագրվում են տնային տնտեսության հարցումների միջոցով, պաշտոնական հրապարակված փաստաթղթերից և աուդիտորական զեկույցներից:

Կիրառվել է Ֆիլիպիններում:</td></tr>
<tr><td rowspan="2">Թափանցիկության, հաշվետվողականության և պատասխանատվության համաթիվ (RTA Index)

Կիրառում է կոռուպցիայի տեսանկյունից ռիսկային 10-15 ուղղությունների գնահատում:

Տվյալները հավաքագրվում են բյուջեների, ընթացակարգերի, գործառույթների վերաբերյալ առկա վարչական տվյալներից:

Կիրառվել է Մակեդոնիայում:</td><td>Ֆինանսական կառավարում (հաշվետվողականություն)</td><td>Բյուջեի մասին տեղեկատվության մատչելիություն

Բյուջետային գործընթացի մասնակցայնություն</td></tr>
<tr><td>Հանրային գնումներ (հաշվետվողականություն)</td><td>Ծառայությունների և ապրանքների գնումների տեխնիկական նկարագրերի առկայություն առանց ապրանքանիշի կամ առևտրային անվանման</td></tr>
</table>

Քաղաքային թափանցիկության չափորոշիչներ (Chile Transparente) Կիրառում է 95 չափանիշ: Տվյալները հավաքագրվում են քաղաքային չափորոշիչներից, ընթացակարգերից, նորմատիվ ակտերից և կարգավորումներից, ինչպես նաև ՏԻՄ և ազգային օրենսդրությունից: Կիրառվել է Չիլիում:	Թափանցիկություն	Քաղաքապետարանի կանոնադրություն և կառուցվածք Քաղաքապետարանի ղեկավար կազմ և որոշումների կայացում Դիմում բողոքների վիճակագրություն Հրապարակված բյուջե Առկա փաստաթղթերի հրապարակված ցանկ Քաղաքային ենթակայության կառույցներ Քաղպաշտպանություն Քաղաքապետարանի դեմ դատական հայցերի հրապարակում Աուդիտ Տեղեկատվության մատչելիության քաղաքային ընթացակարգեր

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Քաղաքական ապակենտրոնացումը կարևորվում է ժողովրդավարացման, լավ կառավարման և քաղաքացիներին ներգրավելու տեսանկյունից: Եվ այդ տեսանկյունից այն պետք է համադրի ներկայացուցչական և մասնակցային ժողովրդավարության սկզբունքները[187]: Հետևաբար, քաղաքացիների մասնակցության խթանումը՝ երաշխավորելով վերջիններիս ներառվածությունն ու իշխանազորումը, պետք է դառնան տեղական մակարդակում սկզբունքային մոտեցումներ՝ որոշումներ կայացնելու, քաղաքականությունները գործադրելու և դրանք գնահատելու գործընթացներում[188]:

ՏԻՄ-երի համար քաղաքացիների մասնակցության հրամայականն առաջացնում է որոշակի պարտավորություններ: Տարբեր շահատերերի ներգրավումը և իրենց շահերի արտացոլումը տեղական մակարդակում որոշումների կայացման մեջ ենթադրում է քաղհասարակության ներկայացուցիչների, մասնավոր հատվածի, համայնքահեն միավորների և այլ շահագրգիռ խմբերի հետ ՏԻՄ-երի հաղորդակցության և համագործակցության տարբեր ձևաչափեր: Առանձնակի կարևորություն ունի կանանց[189], ինչպես նաև այլ խոցելի խմբերի ներգրավումը տեղական մակարդակում՝ որոշումների կայացմանը: Երիտասարդների մասնակցության խրախուսումն էլ թույլ է տալիս տեղական մակարդակում ձևավորված երկխոսության միջոցով աջակցել իրենց քաղաքացիական սոցիալականացմանը[190]:

ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագրի Քաղաքային կառավարման համաշխարհային արշավը հռչակել է ներառական քաղաքի տեսլականը խարսխող մի շարք սկզբունքներ, որոնք թույլ են տալիս երաշխավորել աղքատության հաղթահարումը քաղաքային կառավարման բարելավման միջոցով[191]: Քաղաքային կառավարումը ենթադրում է այնպիսի մեխանիզմների, ինստիտուտների և գործընթացների համադրություն, որը թույլ է տալիս քաղաքացիներին և առանձին խմբերին ձևակերպել իրենց շահերը, տարբերությունների դեպքում ունենալ բանակցելու հնարավորություն,

---

[187] *International guidelines on decentralisation and access to basic services for all – UN Human Settlements Programme*. (2009). Retrieved January 31, 2023, from https://www.uclg.org/sites/default/files/guidelines_0.pdf.

[188] նույն տեղում:

[189] *The global campaign on Urban Governance - UN-Habitat*. (2002). Retrieved January 31, 2023, from https://unhabitat.org/sites/default/files/download-manager-files/Global%20Campaign%20on%20Urban%20Governance.pdf.

[190] *International guidelines on decentralisation and access to basic services for all – UN Human Settlements Programme*. (2009). Retrieved January 31, 2023, from https://www.uclg.org/sites/default/files/guidelines_0.pdf.

[191] *The global campaign on Urban Governance - UN-Habitat*. (2002). Retrieved January 31, 2023, from https://unhabitat.org/sites/default/files/download-manager-files/Global%20Campaign%20on%20Urban%20Governance.pdf.

իրացնել սեփական իրավունքներն ու կատարել պարտավորությունները[192]: Հետևաբար, կառավարումն ավելին է, քան որևէ մակարդակում կառավարության առկայությունը:

Տարբեր ձևակերպումներում կառավարումը ներառում է նաև քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի դերակատարների շահերից բխող հարաբերությունների բազմազանությունը, որի արդյունքում էլ բանակցվում են որոշումները[193]: Այս տեսանկյունից ՏԻՄ-երի դերը, որպես հանրային շահի երաշխավոր, առաջացնում է որոշակի պարտավորություններ, որոնք ամրագրվում են իրավական կարգավորումներով, ինչպես նաև սերտորեն փոխկապակցված են նորմատիվ հռչակումների հետ: Այդ հռչակումների հիմքում ընկած են մի շարք միջազգային պայմանագրեր, որոնք ներկայացված են *Աղյուսակ 1-ում*:

Աղյուսակ 1. Միջազգային իրավական նորմատիվ փաստաթղթեր

Միջազգային փաստաթղթերը	ՀՀ վավերացման տարեթիվը
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948)	1992
Քաղաքացիական և քաղաքական իրավունքի մասին միջազգային դաշնագիր (1966)	1993
Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագիր (1966)	1993
Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (1979)	1993
Զարգացման իրավունքի մասին հռչակագիր (1986)	-
Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1990)	1993
Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց մասին (2007)	2010

Աղբյուր՝ ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագիր, 2002

[192] United Nations Development Programme. (1997). *Governance for Sustainable Human Development :* United Nations. Retrieved January 31, 2023, from https://digitallibrary.un.org/record/492551?ln=en.
[193] *The global campaign on Urban Governance - UN-Habitat*. (2002). Retrieved January 31, 2023, from https://unhabitat.org/sites/default/files/download-manager-files/Global%20Campaign%20on%20Urban%20Governance.pdf.

Քաղաքային կառավարումն, այս իմաստով, սերտորեն փոխկապակցված է մարդու իրավունքների հետ և ենթադրում է լեգիտիմ ու հաշվետու իշխանության առկայություն, այդ թվում տեղական մակարդակում, երաշխավորում է մասնակցության և այլոց հետ միավորվելու ազատությունը, արժանահավատ տեղեկատվության հասանելիությունը, արդար իրավական կարգավորումների առկայությունը, հանրային արդյունավետ կառավարումն, այդ թվում՝ տեղական մակարդակում, կանանց իշխանազորումն ու երեխաների որոշումների կայացմանը մասնակցելու համար միջավայրի ձևավորումը[194]:

Քաղաքացիների մասնակցությունը տեղական մակարդակում պարտավորեցնում է ՏԻՄ-երի ներկայացուցիչներին գործել **թափանցիկ** և մշտապես **հաշվետու** լինել իրենց գործողությունների համար[195]: Այդ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, որպես գործելու սկզբունքներ, նպատակ ունեն ապահովելու անձանց և շրջակա միջավայրի **անվտանգությունը**, որտեղ պետք է հաշվի առնվեն ներկա և ապագա սերունդների սոցիալական, տնտեսական և բնապահպանական կարիքները՝ առաջացնելով ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար **կայունության** ապահովման պարտավորություն: Այս տեսանկյունից միջոցների հասանելիությունն ու դրանք օգտագործելու կարողությունը առաջացնում է **արդար բաշխման** անհրաժեշտություն, որը պարտավորեցնում է ՏԻՄ-երի ներկայացուցիչներին հանրային միջոցները, մատուցվող ծառայություններն ու քաղաքային տնտեսությունը կառավարել **արդյունավետորեն**: Վերջապես, արդյունավետության, այդ թվում, ծախսարդյունավետության (cost-effectiveness) երաշխավորման տեսանկյունից ծառայությունների մատուցման պարտավորությունը պետք է խարսխված լինի **սուբսիդիարության** սկզբունքի վրա՝ համապատասխանաբար պատվիրակվի ՏԻՄ-երին, որոնք սերտորեն շփվում են քաղաքացիների հետ: *Աղյուսակ 2-ում* ներկայացված են քաղաքային կառավարման՝ իրար հետ սերտորեն փոխկապակցված վերոգրյալ սկզբունքների չափումները, որոնց գործադրումը միտված է ***ներառական քաղաքի*** տեսլականի իրագործմանը[196]:

[194] Նույն տեղում:

[195] *International guidelines on decentralisation and access to basic services for all – UN Human Settlements Programme*. (2009). Retrieved January 31, 2023, from https://www.uclg.org/sites/default/files/guidelines_0.pdf.

[196] *The global campaign on Urban Governance - UN-Habitat*. (2002). Retrieved January 31, 2023, from https://unhabitat.org/sites/default/files/download-manager-files/Global%20Campaign%20on%20Urban%20Governance.pdf.

Աղյուսակ 2. Ներառական քաղաքի սկզբունքները, նպատակներն ու չափման շրջանակը

Սկզբունք	Նպատակ	Չափում
Մասնակցություն	Առաջնորդել հանրության մասնակցությունը և շահատերների ներգրավումն ու պատասխանատվությունը Ձևավորել ժողովրդավարական մշակույթ Ձևավորել միջավայր	• կիրառել հարցումների, հանրային լսումների, քաղաքացիական ֆորումների, քաղաքային խորհրդակցությունների և ռազմավարությունների մշակման մասնակցային, այդ թվում թեմատիկ աշխատանքային խմբերի մեխանիզմները; • քաղաքային զարգացման կարևոր հարցերի շուրջ նախաձեռնել տեղական հանրաքվեներ; • խթանել տեղական ժողովրդավարությունը ազատ և թափանցիկ ընտրությունների և մասնակցային որոշումների կայացման միջոցով; • խթանել քաղաքացիական պատասխանատվության պրակտիկան՝ քաղաքացիների շրջանում; • ստեղծել պայմաններ՝ կանանց և տղամարդկանց հավասար և քաղաքացիական կյանքում ամբողջական մասնակցության համար; • ձևավորել իրավակարգավորումներ քաղհասարակության արդյունավետ մասնակցության համար, օրինակ՝ զարգացման խորհուրդների և թաղային խորհրդատվական հանձնախմբերի մեխանիզմների գործադրմամբ:
Թափանցիկություն և հաշվետվողականություն	Որոշումների կայացման թափանցիկ և հաշվետու գործընթացներ Տեղեկատվության	• պարբերական, կազմակերպված և բաց խորհրդակցություններ քաղաքացիների հետ՝ քաղաքին վերաբերող ֆինանսական ու այլ կարևոր հարցերի շուրջ, գործադրելով մասնակցային բյուջետավորման, թափանցիկ գնումների ընթացակարգերի, բարեվարքության կարգավորումների ու մշտադիտարկման մեխանիզմները. ներքին աուդիտի համար կարողությունների առկայություն և արտաքին աուդիտորական զեկույցներ, որոնք հասանելի են հանրության համար և քննարկվում են վերջինիս հետ; • ստեղծել հանրային արձագանքման մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ օմբուդսմենի ինստիտուտը, թեժ գիծը, բողոքարկման մեխանիզմներն ու գրասենյակը, քաղաքացիների գնահատման քարտեր (հանրային ծառայությունների մասին կարծիքի հարցումներ), հանրագրերի կամ երրորդ կողմի միջամտությամբ դատական կարգով հանրային շահի պաշտպանության կանոնակարգումներ:

	հասանելիություն Բարեվարքության բարձր նշաձող	• խթանել քաղաքային հարցերին վերաբերող հանրության շրջանում տեղեկատվության մատչելիությունը; • քաղաքային տեղեկատվությունը հասանելի դարձնել՝ հավասար մեկնարկային պայմաններ երաշխավորելով ներդրողների համար; • ներդնել պարբերական, անկախ իրականացվող ծրագրեր, որոնք միտված են ստուգելու հանրային (համայնքային) ծառայողների ազնվությունը; • վերացնել կոռուպցիայի վարչական և ընթացակարգային խթանները, ներառյալ տեղական հարկման համակարգի պարզեցումը և թույլտվությունների գործընթացում վարչարարության կամայականությունների վերացումը; • համարժեք վարձատրությանը զուգահեռ հանրային (համայնքային) ծառայողների շրջանում հանրությանը ծառայելու մշակույթի արմատավորումը; • վարքականոնի գործադրումը, հանրային (համայնքային) ծառայողների և ընտրված պաշտոնյաների ակտիվների պարբերական հրապարակումը; • ծառայությունների մատուցման և հաշվետվողականության գործադրելի չափորոշիչների մշակումը, ինչպիսիք են օրինակ՝ ISO չափորոշիչները:
Անվտանգություն	Շրջակա միջավայրի կառավարում Արտակարգ իրավիճակների կանխարգելում ու արձագանքումը	• շրջակա միջավայրի մասնակցային պլանավորման և կառավարման մեթոդաբանության գործադրում; • բնական և մարդածին աղետների վտանգի մասին իրազեկում, ռիսկերի նվազեցման, պատրաստվածության, արձագանքման և վերականգնման նպատակով տեղական արտակարգ իրավիճակների պլանների մշակում, անհրաժեշտության դեպքում, աղետավտանգ շրջանների բնակիչների վերաբնակեցում; • արտակարգ իրավիճակների կառավարման համակարգումը ՏԻՄ-երում; • խրախուսել հանդուրժողականությունը հանրային արշավների միջոցով; • օրենքի գերակայության վրա հիմնված խորհրդակցությունների միջոցով ապահովության և անվտանգության ձևավորում՝ տեղի համապատասխան կառույցների ներգրավմամբ;

	Անձնական անվտանգությունը, հանցագործությունների կանխարգելումն ու հսկողությունը Ապրուստի և բնակության երաշխիքը	• հաշվառել խոցելի խմբերի՝ կանանց, երիտասարդների հատուկ կարիքները, կանանց անվտանգության աուդիտների և երիտասարդների վերապատրաստման ծրագրերի միջոցով; • ձևավորել ոստիկանական աշխատանքի համաքաղաքային համակարգ; • պայքարել բռնության՝ հատկապես կանանց, երեխաների և ընտանիքում դրա բոլոր դրսևորումների դեմ; • խթանել բնակչության անվտանգությունը, ճանաչել օրինական բնակության տարբեր ձևերը, տրամադրել խորհրդատվություն և մեդիացիա հարկադիր վտարման վտանգի տակ հայտնված անձանց; • խթանել ապրուստի միջոցների անվտանգությունը, մասնավորապես քաղաքաբնակ աղքատների համար՝ համապատասխան իրավական կարգավորումների, զբաղվածության, վարկերի, կրթության և վերապատրաստումների հասանելիության միջոցով:
Կայունություն	Սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի հավասարակշռված առաջնահերթություններ Շահատերերի ներգրավում	• նախաձեռնել խորհրդակցություններ շահատերերի հետ համաձայնեցնելու առաքելությունը, քաղաքի երկարաժամկետ ռազմավարական տեսլականը՝ գործածելով օրինակ՝ քաղաքի զարգացման ռազմավարությունների գործիքը; • ներառել քաղաքային աղքատության հաղթահարման (կամ խոցելի խմբերի ներառվածության և իրենց համար ծառայությունների հասանելիության) ռազմավարությունը զարգացման պլանավորման գործընթացում; • մեծացնել կանաչապատ տարածքներն ու պահպանել պատմամշակութային ժառանգությունը; • ներգրավել շրջակա միջավայրի պլանավորման և կառավարման գործընթացներում, մասնավորապես միջոցների օգտագործման ընդունելի մակարդակի կամ մարդու գործունեության արդյունքում ներկա և/կամ ապագա սերունդների վրա հնարավոր բացասական ազդեցությունների շուրջ; • ապահովել ֆինանսական կենսունակությունը՝ խթանելով տնտեսական գործունեությունը, քաղաքի տնտեսական կյանքում ներգրավելով բոլոր քաղաքացիներին; • խրախուսել տեխնոլոգիաների կիրառությունը:

Արդար բաշխում	Միջոցների բաշխում Իշխանազորում	• սահմանել ենթակառուցվածքների զարգացման և քաղաքային ծառայությունների գնագոյացման արդար սկզբունքներ; • թիրախային ոլորտների և աշխարհագրական տարածքների համար սահմանել ներդրումային արտոնություններ կամ խթանման այլ գործիքներ; • վերացնել անհարկի խոչընդոտները՝ ֆինանսների ազատ տեղաշարժի և ապահով բնակության համար; • ձևավորել արդար և կանխատեսելի կարգավորումներ; • երաշխավորել կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաև միջոցների և հիմնական ծառայությունների մատչելիությունը, այդ ամենի չափման համար վարելով գենդերային դիսագրեգացված վիճակագրություն; • սահմանել քվոտաներ ավագանիում և քաղաքապետարանում որոշումների կայացման մակարդակում կանանց ներգրավումը մեծացնելու համար; • մշակել ենթաօրենսդրական ակտեր և տնտեսական քաղաքականություն՝ ոչ ֆորմալ հատվածին աջակցելու համար; • խրախուսել հողի և գույքի ժառանգության հավասարությունը:
Արդյունավետություն	Կառավարում և ծառայությունների մատուցում Ենթակառուցվածքների արդյունավետ ֆինանսավորում (ներդրումներ)	• խրախուսել քաղաքապետարանին հանրային ծառայությունների մատուցումն ու ապրանքների գնումն իրականացնել նորարարական լուծումների գործադրմամբ, օրինակ՝ կառավարման պայմանագրերի միջոցով; • խթանել միջոլորտային պլանավորումն ու կառավարումը; • վերացնել անհարկի խոչընդոտները ֆինանսների ազատ տեղաշարժի և ապահով բնակության համար; • առևտրի և ներդրումների ոլորտներում մշակել և գործադրել արդար և կանխատեսելի օրենսդրական ակտեր և այլ կարգավորումներ, նվազեցնել անհարկի վարչարարությունն ու դրա վրա ծախսված ժամանակը ու աջակցել ոչ ֆորմալ հատվածի անցումը դեպի ֆորմալ դաշտ;

		• Հանրային ծառայությունների մատուցման համար որդեգրել հստակ նպատակներ և թիրախեր, որոնք խթանում են կամավորությունը, հասարակության բոլոր հատվածների ներդրումը քաղաքի տնտեսական զարգացման գործում; • Հանրային ծառայությունների կարգավորում և մատուցում մասնավոր հատվածի և քաղհասարակության հետ սերտ համագործակցության ձևաչափում; • Քաղաքային ենթակառուցվածքի և ծառայությունների դիմաց սահմանել օգտագործողի համար վճարման արդար սկզբունքներ; • Բարձրացնել տեղական հարկերի հավաքագրման արդյունավետությունը (efficiency and effectiveness):
Սուբսիդիարություն	Տեղական ինքնակառավարում և հաշվետվողականություն	• պատասխանատվությունը սահմանելու և լիազորություններով օժտելու, ինչպես նաև համարժեք միջոցներով ապահովելու նպատակով ՏԻՄ-երի հետ խորհրդակցելով մշակել հստակ սահմանադրական կարգավորումներ, որոնք ազգային մակարդակից լիազորությունները պատվիրակում են քաղաքային, քաղաքայինից թաղային մակարդակ; • սահմանադրական դրույթները փոխադրել օրենսդրության մեջ և սուբսիդիարության սկզբունքը վերածել պրակտիկայի, իշխանազորելով քաղհասարակությանը՝ արդյունավետորեն ներգրավվել քաղաքային կառավարման հարցերում, ինչպես նաև՝ մեծացնել ՏԻՄ-երի հասանելիությունը տեղի բնակիչների համար; • ձևավորել Կառավարություն-ՏԻՄ ֆիսկալ փոխանցումների թափանցիկ և կանխատեսելի մոտեցում և Կառավարության աջակցություն ՏԻՄ-երում վարչական, տեխնիկական և կառավարչական կարողությունները զարգացնելու համար; • ՏԻՄ-երի և բոլոր շահատերերի հետ խորհրդակցելով համեմատաբար սահմանափակ կարողություններով ՏԻՄ-երի համար ստեղծել հորիզոնական և ուղղահայաց ֆինանսական համահարթեցման հնարավորություններ; • խթանել ապակենտրոնացումը և ՏԻՄ-երի միջև գործընկերային ուսուցումը:

Աղբյուր՝ ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագիր, 2002

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետվողականության համաթիվը գոյանում է քաղաքապետարանի գործունեության 14 ոլորտը նկարագրող 127 ցուցիչի չափումներից: 2023 թվականին 127 ներկայացված ցուցիչից դիտարկվել է 124-ը: Ցուցիչի համարակալման սյունյակում թվագրված ծանոթագրությունը բացատրում է չներառման պատճառը:

Հ/հ	Ցուցիչ	Չափման միավոր	Տվյալների հավաքման մեթոդ	Փաստացի միավոր
ՏԻՄ-երի գործունեությունը				
1.1	Արդյո՞ք պաշտոնական կայքում հրապարակված է ավագանու կանոնակարգը[197]:	1 միավոր՝ կայքում հրապարակված է ամբողջական տեղեկատվություն; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W	1
1.2	Արդյո՞ք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը[198]:	1 միավոր՝ կայքում հրապարակված է ամբողջական տեղեկատվություն; 0.5 միավոր՝ տեղեկատվությունը ներկայացված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W	0.5

[197] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն ավագանին ընդունում է կանոնակարգ, իսկ հոդված 11-ի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն կայքում հրապարակվում են ավագանու նորմատիվ իրավական ակտերը:

[198] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրության, կառուցվածքի և հաստիքացուցակի վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինող մարմինը հրապարակում է հաստիքացուցակները:

1.3	Արդյոք ավագանու նիստերի օրակարգը, դրա հետ կապված նախագծերը, կցված փաստաթղթերը հրապարակված են քաղաքապետարանի պաշտոնական կայքում՝ նիստերից մեկ շաբաթ առաջ[199]:	1 միավոր՝ ավագանու նիստերի օրակարգերը, նախագծերը, կցված փաստաթղթերը հրապարակվում են նիստերից մեկ շաբաթ առաջ; 0.5 միավոր՝ հրապարակված են փաստաթղթերը մասամբ; 0 միավոր՝ փաստաթղթերը հրապարակված չեն:	W+D	0.5
1.4	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են ավագանու նիստերի արձանագրություններն[200] ու քվեարկության անվանական արդյունքները նիստի ավարտից հետո մեկ շաբաթյա ժամկետում:	1 միավոր՝ ավագանու նիստերի արձանագրությունները[201] ավագանու մասնակցության /անուն, ազգանուն, խմբակցություն/ նշմամբ[202] և քվեարկության անվանական արդյունքները հրապարակված են մեկշաբաթյա ժամկետում; 0.5 միավոր՝ ավագանու նիստերի արձանագրությունները ավագանու մասնակցության /անուն, ազգանուն, խմբակցություն/ նշմամբ հրապարակված են մեկշաբաթյա ժամկետում, կամ բացակայում են քվեարկության անվանական արդյունքները; 0 միավոր՝ հրապարակված չեն:	W+D	0.5

[199] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի համաձայն ավագանու նիստից յոթ օր առաջ հրապարակվում է օրակարգը, նախագծերն ու կցված փաստաթղթերը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի դրույթները ևս պահանջում են ավագանու նիստերի մասին տեղեկացումը և փաստաթղթերը հրապարակելու պահանջի մանրամասները:

[200] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 5-րդ և 7-րդ մասերով՝ ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, իսկ որոշումը ստորագրում է նիստը վարողը, այն տեղադրվում է կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ: Իսկ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Ավագանու ակտերն ընդունվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տեղադրվում են քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

[201] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի համաձայն ավագանու նիստից յոթ օր առաջ հրապարակվում է օրակարգը, նախագծերն ու կցված փաստաթղթերը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի դրույթները ևս պահանջում են ավագանու նիստերի մասին տեղեկացումը և փաստաթղթերը հրապարակելու պահանջի մանրամասները:

[202] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի 1-ին մասի 1, 2 կետերով ավագանին պարտավոր է մասնակցել ավագանու և հանձնաժողովի նիստերին:

1.5	Արդյոք ավագանու մշտական հանձնաժողովների օրակարգը, դրա հետ կապված նախագծերը, կցված փաստաթղթերը հրապարակված են պաշտոնական կայքում նիստերից մեկ շաբաթ առաջ[203]:	1 միավոր՝ հանձնաժողովների նիստերի օրակարգերը, նախագծերը, կցված փաստաթղթերը հրապարակվում են նիստերից մեկ շաբաթ առաջ; 0.5 միավոր՝ հանձնաժողովների ոչ բոլոր նիստերի օրակարգերը, նախագծերը, կցված փաստաթղթերն են հրապարակված կամ ոչ բոլոր հանձնաժողովների նիստերի օրակարգերը, նախագծերը, կցված փաստաթղթերն են հրապարակված; 0 միավոր՝ հրապարակված տեղեկություն չկա:	W	0
1.6	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրությունները և համապատասխան կարծիքները[204] ավագանու հերթական նիստի օրակարգի հրապարակումից առաջ:	1 միավոր՝ բոլոր հանձնաժողովների արձանագրություններն ու կարծիքները հրապարակված են; 0.5 միավոր՝ հրապարակվում են ոչ ամբողջական տեղեկատվությամբ; 0 միավոր՝ հրապարակված չեն:	W	0
1.7	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքապետի, ավագանու և վարչական շրջանների ղեկավարների[205] բնակիչների	1 միավոր՝ հրապարակված են բնակիչների ընդունելության մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները; 0.5 միավոր՝ տեղեկություններն առկա են մասամբ	W	0

[203] Հանրային (պաշտոնական) բոլոր փաստաթղթերը որոշակի սահմանափակ բացառություններով հանրային են; Հանրային մարմինները պետք է ակտիվորեն հրապարակեն հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը՝ ապահովելով վերջինիս հեշտ, արագ, արդյունավետ և գործնական հասանելիությունը, հոդված 10, *Council of Europe Convention on Access to official documents*. (n.d.). Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/1680084826:

[204] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովում: Քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը կցվում է ավագանու նիստի օրակարգի նյութերին:

[205] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասով վարչական շրջանի ղեկավարը գործում է քաղաքապետի անունից, իսկ 52-րդ հոդվածի 11-րդ մասով քաղաքապետը վերջինիս անմիջական վերադասն, քանի որ վերահսկում է նրա գործունեությունը և աշխատանքի ընդունում և ազատում է անձամբ (հոդված 89, մաս 1; հոդված 52, մաս 1, կետ 7), հետևաբար քաղաքապետին համազոր կարևոր է նաև դիտարկել վարչական շրջանների ղեկավարների թափանցիկության ու հաշվետվողականության կատարողական ցուցանիշները:

	ընդունելության[206] կարգի և գրաֆիկի մասին տեղեկատվությունը[207]:	0 ամբողջովին հրապարակված չեն[208]:		
1.8	Արդյո՞ք պաշտոնական կայքում հրապարակված են քաղաքապետի և վարչական շրջանների ղեկավարների հանդիպումների մասին համառոտ հաշվետվությունները[209]:	1 միավոր՝ թե՛ քաղաքապետի, թե՛ վարչական շրջանների ղեկավարների հանդիպումներին մասնակցածների, քննարկված թեմաների և ձեռքբերված համաձայնությունների մասին հրապարակվում է հաշվետվության ձևաչափով; 0.5 միավոր՝ միայն քաղաքապետի կամ միայն վարչական շրջանների ղեկավարների հանդիպումներին մասնակցածների, քննարկված թեմաների և ձեռքբերված համաձայնությունների մասին հրապարակվում է հաշվետվության ձևաչափով[210];	W+D	0.5

[206] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը կազմակերպում է Երևանի բնակիչների ընդունելությունը: Իսկ 50-րդ հոդվածի համաձայն քաղաքապետն իր գործունեությունը ի թիվս այլոց կազմակերպում է վարչական շրջանների ղեկավարների և քաղաքապետարանի աշխատակազմի միջոցով: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինողը հրապարակում է քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը:

[207] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 92-ի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն վարչական շրջանի ղեկավարը կատարում է Երևանի բնակիչների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում տրված առաջարկություններն ու դիմումները: Սույն օրենքի հոդված 51-ի 4-րդ մասի 5-րդ կետով քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի (հոդված 52, 1.3) վրա է դրված Երևանի բնակիչների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկման կազմակերպումը:

[208] Քանի որ օրենքով գործում է պահանջ բնակիչներին ընդունելու մասին, սակայն հստակ պահանջ չկա հրապարակման մասին, բայց հանրային շահերի գերակայության տեսանկյունից կարևոր է թափանցիկ գործել տարբեր խմբերի շահերի անհարկի ազդեցությունից խուսափելու համար, ապա կիրառվել է հետևյալ մոտեցումը՝ քաղաքականության մշակման կամ որոշումների կայացման շուրջ բոլոր հանդիպումները պետք է արձանագրվեն և հասանելի լինեն հանրությանը (օրինակ՝ օրակարգի հրապարակման և արձանագրությունների միջոցով):

[209] Շահերի բախումից կամ դրա առկայության մասին անհարկի ընկալումներից խուսափելու և հանրային վստահությունը պահպանելու համար հանրային ծառայողները՝ մասնավորապես ընտրված պաշտոնյաները պետք է երաշխավորեն, որ իրենց գործողությունները ազդված չեն իրենց մասնավոր շահերով կամ բացակայում են նման ընկալումները հանրության շրջանում: Այդ առթիվ, ներկայումս առկա միտումները տանում են դեպի առավել թափանցիկություն և հրապարակման պահանջների առկայություն: Ինչպես նաև նվերների ու հրավերների ընդունումը կրում է մի շարք ռիսկեր, որոնք կարող են ազդել պաշտոնյայի անաչառության կամ հանրային շահով առաջնորդվելու նկատմամբ հանրային ընկալման խաթարման վրա: Տե՛ս Congress of Local and Regional Authorities. (2018, November 7). *Conflicts of interest at local and regional level - Resolution 434 (2018), Recommendation 423 (2018), Explanatory Report*. Council of Europe. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/conflicts-of-interest-at-local-and-regional-level-governance-committee/16808d33d0

[210] Նույն տեղում, ինչպես նաև՝ «Հանրային ծառայողը պետք է արձանագրի իր գործողությունները; հանրային ծառայողը պետք է երաշխավորի իր բոլոր գործողությունների թափանցիկությունը, բացառությամբ այն սահմանափակումները, որոնք կիրառելի են տեղեկատվության ազատության մասին ազգային և միջազգային չափորոշիչների համաձայն», տես՝ Council of Europe. (2000, May

		0 միավոր՝ տեղեկատվություն առկա չէ:		
1.9	Արդյո՞ք պաշտոնական կայքում տեղադրված են ավագանու վերջին հինգ տարվա[211] հայտարարությունները, որոշումները և ուղերձները[212]:	1 միավոր՝ տրվում է այն դեպքում, երբ ավագանու վերջին հինգ տարվա հայտարարությունները, որոշումները և ուղերձները հասանելի են կայքում; 0.5 միավոր՝ տրվում է այն դեպքում, երբ ավագանու վերջին հինգ տարվա ոչ բոլոր հայտարարությունները, որոշումները և ուղերձներն են հասանելի կայքում; 0 միավոր՝ պաշտոնական կայքում ամբողջական տեղեկությունը բացակայում է:	W	0
1.10	Արդյո՞ք պաշտոնական կայքում առկա է ավագանու նիստերի արձանագրությունների[213] վերջին հինգ տարվա արխիվը:	1 միավոր՝ տրվում է այն դեպքում, երբ ավագանու վերջին հինգ տարվա նիստերի արձանագրությունները հասանելի են կայքում; 0.2 միավոր հանվում է վերջին հինգ տարվանից պակաս յուրաքանչյուր տարվա դեպքում՝ ներառյալ տվյալ տարում մասամբ հրապարակված լինելու դեպքում;	W	1

11). *Recommendation No. R 2000 of the Committee of Ministers to the Member States on codes of conduct for public officials*. Group of States against Corruption. Retrieved January 10, 2023, from https://www.coe.int/en/web/greco/home; The Congress of Local and Regional Authorities. (2018, November 7). *European Code of conduct for all persons involved in local and regional governance*. Resolution 433 (2018) European Code of Conduct for all Persons Involved in Local and Regional Governance. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/european-code-of-conduct-for-all-persons-involved-in-local-and-regiona/1680718fbf

[211] «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով փաստաթղթերի ժամանակավոր պահպանությունը իրականցվում է ՏԻՄ-ում և համայնքային կազմակերպություններում, իսկ դրանց ժամանակավոր պահպանման 5 տարվա ժամկետը սահմանված է 19-րդ հոդվածի 2-րդ մասով: Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով պարտավորեցնում է պահպանությունը իրականացնող մարմնին ապահովել արխիվի մատչելիությունը տեղեկատու-որոնողական միջոցների և դրանց մասին տեղեկատվության տրամադրմամբ: Եթե առկա է առցանց որոնողական համակարգ, ապա հոդվածի ամրագրումը երաշխավորվում է, իսկ եթե կան նյութեր, որոնք միայն թղթային օրինակով են, ապա դրանց որոնման մասին պետք է տրվի տեղեկատվություն:

[212] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն աշխատակազմը ապահովում է որոշումների և ուղերձների հրապարակումը:

[213] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն ավագանու ընդունած որոշումներն ու ուղերձները արձանագրվում են: Դրան զուգահեռ սույն օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասով, 61-րդ հոդվածի 2-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով ավագանու նիստի արձանագրությունը հրապարակվում է կայքում յոթնօրյա ժամկետում:

1.11	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են քաղաքապետի[214] և վարչական շրջանի ղեկավարների[215] որոշումներն ու կարգադրությունները:	1 միավոր՝ քաղաքապետարանի կայքում հրապարակվում են քաղաքապետի և վարչական շրջանի ղեկավարների ակտերի, որոշումների, կարգադրությունների անվանացանկերը՝ ակտիվ և ներբեռնելի հղումներով[216]; 0.5 միավոր՝ քաղաքապետարանի կայքում հրապարակվում են քաղաքապետի և վարչական շրջանի ղեկավարների ակտերի, որոշումների, կարգադրությունների անվանացանկերը՝ առանց ակտիվ հղումների կամ հրապարակված են մասամբ; 0 միավոր՝ կայքում բացակայում է այդ բաժինը:	W	0.5
1.12	Արդյոք ավագանու անդամների անուն, ազգանուններն ու կոնտակտային տվյալները հասանելի[217] են (1՝ հեռախոս/բջջային, 2՝ էլ. փոստ) պաշտոնական կայքում:	1 միավոր՝ առկա են բոլոր տեսակի կոնտակտային տվյալների վերաբերյալ ամբողջական տվյալներ; 0.5 միավոր՝ առկա են մասամբ;	W	0.5

[214] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի համաձայն քաղաքապետի ակտերը մեկշաբաթյա ժամկետում ենթակա են տեղադրման նաև քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

[215] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն վարչական շրջանի ղեկավարը իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կարգադրություններ:

[216] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինողը պետք է հրապարակի տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը: Բացի այդ, հանրային մարմինները պետք է ակտիվորեն հրապարակեն հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը՝ ապահովելով վերջինիս հեշտ, արագ, արդյունավետ և գործնական հասանելիությունը, հոդված 10, *Council of Europe Convention on Access to official documents*. (n.d.). Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/1680084826; Տվյալները պետք է լինեն ամբողջական, առաջնային, ժամանակին, մատչելի, մեքենայական մշակման ենթակա, ոչ խտրական, սեփականության իրավունք չունեցող և առանց լիցենզիաների, և համապատասխանությունը պետք է հնարավոր լինի ստուգել, ծանոթագրությունը Հանրային մասնակցության տեսակները V(20) կետի բաց տվյալների սկզբունքից է, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*. Search.coe.int. Retrieved January 11, 2023, from https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016807509dd6,2-ը:

[217] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված համայնքային ինքնակառավարման սկզբունքներից 1.13-ով սահմանված թափանցիկության, հաշվետվողականության, հրապարակայնության և 1.14 կետով սահմանված բնակիչների մասնակցության սկզբունքների երաշխավորման համար ավագանու, որպես համայնքի ներկայացուցչական մարմնի հասանելիությունը հնարավորինս հեշտացված է բնակիչների համար: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինող մարմինը հրապարակում է պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

		0 միավոր՝ կոնտակտային տվյալները բացակայում են:		
1.13	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են քաղաքապետին և վարչական շրջանների ղեկավարներին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության կարգը[218], անդամների ցանկերն ու նիստերի արձանագրությունները:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված են բոլոր տեղեկությունները; 0.5 միավոր՝ հրապարակված է կազմավորման և գործունեության կարգը կամ ցանկը; 0 միավոր՝ հրապարակված չեն:	W	0
1.14	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են ավագանու անդամների կենսագրականները՝ ներառյալ կուսակցական պատկանելությունն ու անդամությունն այլ կառույցներին[219]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում ավագանու բոլոր անդամների կենսագրականները հրապարակված են; 0.5 միավոր՝ տեղեկությունն առկա է մասամբ; 0 միավոր՝ տեղեկատվությունն առկա չէ:	W	0.5
1.15	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքապետարանի աշխատակիցների (քաղաքապետ ու նրա տեղակալներ, քարտուղար ու նրա տեղակալներ,	1 միավոր՝ տեղեկությունն առկա է բոլոր նշված աշխատակիցների վերաբերյալ;	W	0.5

[218] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն ավագանին քաղաքապետի առաջարկությամբ սահմանում է քաղաքապետին և վարչական շրջանի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունները: Նույն օրենքի 52 հոդվածի 14-րդ մասով քաղաքապետի լիազորությունների շրջանակներում ամփոփված են հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների քանակի, անվանումների, ձևավորման և գործունեության կարգի ու լիազորությունների վերաբերյալ կարգավորումները: Երևանի ավագանու 2013թ.-ի 46-Ն որոշմամբ սահմանված է օրենքով լիազորած կարգավորումները խորհրդակցական խորհուրդների մասին:

[219] Շահերի բախումն առաջանում է, երբ հանրային ծառայողն ունի մասնավոր այնպիսի շահի առկայություն, որը կարող է ազդել կամ առկա է ընկալում, որ ազդում է իր պաշտոնեական պարտականությունների շրջանակում կայացված անաչառ և օբյեկտիվ որոշումների վրա: Մասնավոր շահ կարող է համարվել հանրային ծառայողին, իր ընտանիքին, հարազատներին, ընկերներին կամ այլ անձանց ու քաղաքական կապեր, նախկին զբաղվածություն կամ գործնական այլ հարաբերություն ունեցած կազմակերպություններին տրված առավելությունը: Որպես կանխարգելիչ միջոցառումներ իրականացվում են հանրային ծառայության պաշտոնից զատ այլ վճարվող կամ չվճարվող պաշտոնների կամ գործառույթների կամ կազմակերպություններում անդամության հայտարարագրում, մասնավորապես եթե դրանք կարող են հանրային ծառայողին շեղել պաշտոնեական պարտականությունները կատարելու անաչառ ու անկողմնակալ պարտավորությունից: Այսպես, օրինակ՝ 434 հանձնարարականում խարտիայի անդամ երկրների ՏԻՄ-երին առաջարկում է մարդկային ռեսուրսների կառավարման արդի մեթոդների կիրառությամբ՝ վերահսկել և կարգավորել զբաղվածությունը մասնավոր և պետական հատվածի միջև; Congress of Local and Regional Authorities. (2018, November 7). Conflicts of interest at local and regional level - Resolution 434 (2018), Recommendation 423 (2018), Explanatory Report. Council of Europe. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/conflicts-of-interest-at-local-and-regional-level-governance-committee/16808d33d0:

	հայեցողական պաշտոն զբաղեցնողների, ստորաբաժանումների ղեկավարների) տվյալները, կոնտակտները և կենսագրականները՝ ներառյալ կուսակցության նախկին և/կամ ներկա անդամությունը[220]:	0.5 միավոր՝ տեղեկությունն առկա է մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ[221]:		
1.16	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է վարչական շրջանների աշխատակիցների (ղեկավար ու նրա տեղակալներ, քարտուղար նրա տեղակալներ, հայեցողական պաշտոն զբաղեցնողներ, ստորաբաժանումների ղեկավարներ) տվյալները, կոնտակտները և կենսագրականները[222]:	1 միավոր՝ տեղեկությունն առկա է բոլոր նշված աշխատակիցների վերաբերյալ; 0.5 միավոր՝ տեղեկությունն առկա է մասամբ; 0 միավոր՝ տեղեկատվությունն առկա չէ:	W	0.5
1.17	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են ավագանու և քաղաքապետի գործունեության մասին հաշվետվությունները[223]:	1 միավոր՝ հաշվետվությունները տեղադրված են կայքում; 0.5 միավոր՝ հաշվետվությունները տեղադրված են մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W+D	0
1.18	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունը[224]:	1 միավոր՝ հաշվետվությունը տեղադրված է կայքում; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W+D	0

[220] Նույն տեղում:

[221] Սեփական նախաձեռնությամբ ՏԻՄ-ը պետք է հրապարակի պաշտոնական տեղեկատվություն, փաստաթղթեր խթանելու համար թափանցիկությունը, արդյունավետությունը և հանրության մասնակցությունը, հոդված 10, *Council of Europe Convention on Access to official documents*. (n.d.). Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/1680084826:

[222] Նույն տեղում:

[223] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն քաղաքապետը ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Այդ հաշվետվությունները տեղադրվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

[224] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ն մասի 10-րդ կետի համաձայն քաղաքապետը ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Այդ հաշվետվությունները տեղադրվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

1.19	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները[225]:	1 միավոր՝ հրապարակված են քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները; 0.5 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W	0
1.20	Արդյոք պաշտոնական կայքում առանձին բաժնում հրապարակված է արտասահմանյան քաղաքների և միջազգային կազմակերպությունների հետ Երևանի քաղաքապետարանի երկկողմ և բազմակողմ համագործակցության բովանդակության և արդյունքների մասին տեղեկություն, առկայության դեպքում կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ համագործակցության պայմանագրերը[226]:	1 միավոր՝ առկա է արտասահմանյան քաղաքների և միջազգային կազմակերպությունների հետ Երևանի քաղաքապետարանի երկկողմ և բազմակողմ համագործակցության արդյունքների մասին տեղեկությունը և կազմակերպությունների ու ձեռնարկությունների հետ համագործակցության պայմանագրերը; 0.5 միավոր՝ առկա է մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W	0.5

[225] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը մշակում և քաղաքապետի հաստատմանն է ներկայացնում քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է քաղաքապետին:

[226] Երևանի քաղաքի ավագանու 13 նոյեմբերի 2018թ-ի 18Ա որոշման 21.7 կետի և 45-ի կետերի համաձայն քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն ունեն կանոնադրություններ, որտեղ Երևանի քաղաքապետի 1704-Ա, 04.06.2015թ. որոշման համաձայն արտաքին կապերի վարչությունը 8.5 կետի համաձայն նպաստում է արտասահմանյան քաղաքների և միջազգային կազմակերպությունների հետ Երևանի քաղաքապետարանի երկկողմ և բազմակողմ համագործակցության իրականացմանը, իսկ 8.6 կետի համաձայն քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ նախապատրաստում է արտասահմանյան քաղաքների, ինչպես նաև այնտեղի առանձին կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ համագործակցության պայմանագրերը և հետևում դրանց իրագործման ընթացքին: 1704 -Ա որոշման Հավելված հ. 4 արտաքին կապերի վարչությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 6) քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ նախապատրաստում է արտասահմանյան քաղաքների, ինչպես նաև այնտեղի առանձին կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ համագործակցության պայմանագրերը և հետևում դրանց իրագործման ընթացքին, 7) իրականացնում է քաղաքապետի մոտ արտասահմանյան պատվիրակությունների և օտարերկրյա պետությունների պաշտոնատար անձանց հետ կապված արարողակարգային միջոցառումները, մասնակցում է այդ հանդիպումներին, դրանց մասին նախապատրաստում տեղեկանքներ և ներկայացնում քաղաքապետին:

Հանրային մասնակցություն				
2.1	Արդյոք բնակիչները և քաղհասարակության ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել ավագանու հանձնաժողովների նիստերին[227]:	1 միավոր՝ ավագանու որոշումները հստակ կարգավորում են ավագանու հանձնաժողովների նիստերին բնակիչների և քաղհասարակության ներկայացուցիչների ներկա գտնվելու հնարավորությունը; 0 միավոր՝ ավագանու նման որոշում չկա:	W +D+I +T	0
2.2	Արդյոք պաշտոնական կայքում յոթ օր առաջ հրապարակվում է ավագանու հաջորդ գումարման նիստի անցկացման օրն ու ժամը[228]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է ավագանու հաջորդ գումարման նիստի անցկացման օրվա մասին հայտարարությունը և կայքի օրացույցում երևում է օրն ու անցկացման ժամը; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում յոթ օր առաջ առկա է ավագանու հաջորդ գումարման նիստի անցկացման օրվա մասին հայտարարությունը; 0 միավոր՝ տեղեկատվություն չկա:	W	0.5
2.3	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ), համայնքի միջնաժամկետ ծախսերի	1 միավոր՝ բոլոր փաստաթղթերը, դրանց հիմքում ընկած վերլուծությունները, տվյալները, հանրային լսումների/քննարկումների ամփոփաթերթերը (որտեղ նաև	W	0.5

[227] (1) Կան որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություններ, որոնք մեծապես խրախուսվում են, ներառյալ համացանցի, էլեկտրոնային փոստային ցանկերի (mailing lists), հանրային հայտարարությունների և լրատվամիջոցների միջոցով՝ խրախուսելով բոլորին և, հատկապես, հիմնական շահագրգիռ կողմերին ներգրավվել գործընթացում, Բաց կառավարումը որպես սկզբունք և հանրային մասնակցության հիմք IV(7) կետ, (2) Մասնակցային գործընթացները պետք է բավարար ժամանակ տրամադրեն, որպեսզի շահագրգիռ կողմերը իրազեկվեն, ծանոթանան նյութերին, մշակեն որակյալ և մտածված առաջարկություններ, ժամկետները որպես հանրային մասնակցության հենք IV(9, 10, 16), (3) Խորհրդակցությանը մասնակցության կանոնները, ժամանակացույցը, մեկնաբանությունների, առաջարկությունների ներկայացման ձևաչափը, հանրային լսման վայրն ու օրը պետք է նախապես հստակ հայտարարված լինեն, Հանրային մասնակցության նախապայմաններ և սկզբունքներ III(3a), հիմքեր IV(11), և (4) մասնակցային գործընթացի ընթացքում ստացված մեկնաբանություններն ու առաջարկությունները պետք է դիտարկվեն և ներառվեն վերջնական որոշման փաստաթղթավորման մեջ: Առաջարկությունների ներառումը կամ չներառումը պետք է ուղեկցվի մանրամասն հիմնավորումներով, Հանրային մասնակցության տեսակներ V(19), Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*.

[228] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քաղաքապետը մեկ շաբաթ առաջ հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի վերաբերյալ: Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 104 կետով՝ հերթական նիստերի օրերը սահմանում է ավագանին՝ յուրաքանչյուր նիստի ընթացքում սահմանելով հաջորդ նիստի գումարման օրը:

	ծրագիրը (ՀՄԾԾ), տարեկան բյուջեն, ինչպես նաև դրանց հանրային բաց լսումների կամ քննարկումների ամփոփաթերթերը[229]:	ներառված են բանավոր առաջարկությունները) հրապարակված են[230]; 0.5 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկատվությունը չի հրապարակվել:		
2.4	Արդյոք Երևան քաղաքի բոլոր նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման են դրվում ավագանու նախաձեռնությամբ[231]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում տեղադրված են հայտարարություններն ու «Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում» տեղադրված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հղումները: 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W+I	0
2.5	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են քաղաքապետարանի տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատուի կողմից ստացված հարցումների վիճակագրական ամփոփ տվյալները[232]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված են տեղեկատվության ազատության պատասխանատուի կողմից ստացված հարցումների վիճակագրական ամփոփ տվյալները;	W+ I	1

[229] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀԶԾ, ՀՄԾԾ, համայնքի բյուջեն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն պետք է մինչև ավագանու քննարկմանը հանձնվելը դրվի հանրային բաց լսման կամ քննարկման, ինչպես նաև լսումների կարգի 21-րդ կետի պահանջով պետք է հրապարակի ամփոփաթերթը: Վերջապես, հանրային լսումներին բնակիչների առարկայական մասնակցության խթանման համար կարևոր է հրապարակել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարեկան աշխատանքային պլանն ու կատարողականը՝ բյուջեի տարեկան կատարման հաշվետվությունը:

[230] Որոշումների կայացման գործընթացում ներգրավված հանրային ծառայողներին հասանելի՝ որոշումը հիմնավորող և այլ նյութերը պետք է հասանելի լինեն: Հիմնական տվյալներն ու վերլուծությունները պետք է հանրությանը ներկայացվեն մատչելի ձևով և հասանելի լինեն, Հստակ լեզվի սկզբունք III(4h) և հանրային մասնակցության տեսակներից V(20) տեղեկատվության տրամադրման պահանջը, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*

[231] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ:

[232] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և 13-րդ հոդվածի 3-րդ մասով տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը՝ այս հետազոտության շրջանակում Երևանի ՏԻՄ-երը պարտավոր են նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին: Իր հերթին տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալներ: Նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի համաձայն տեղեկատվություն տնօրինողը հրապարակում է ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

		0.5 միավոր՝ վիճակագրական ամփոփ տվյալները առկա են, սակայն հրապարակված չեն կայքում: 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:		
2.6	ԱրդյոՀք պաշտոնական կայքում առկա են քաղաքապետարանի հետ համագործակցող քաղհասարակության գործընկեր կառույցների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ[233]:	1 միավոր՝ տեղեկությունը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ տեղեկությունը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	0
Հանրային գնումներ				
3.1	ԱրդյոՀք պաշտոնական կայքէջում առկա է գնումների տարեկան հաշվետվություն քաղաքապետարանի, ենթակայության կազմակերպությունների կամ համայնքային բյուջեից ֆինանսավորում ստացած այլ իրավաբանական անձանց գնումների բազային շեմը գերազանցող գին ունեցող գնումների մասով[234]:	1 միավոր՝ քաղաքապետարանի, ենթակայության կազմակերպությունների կամ համայնքային բյուջեից ֆինանսավորում ստացած այլ իրավաբանական անձանց գնումների տարեկան հաշվետվությունն առկա է; 0.5 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W	0

[233] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 19-րդ կետի համաձայն հրապարակվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ-գործընկերների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ:

[234] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գնումների տարեկան հաշվետվությունը կազմելու և հրապարակելու նպատակով պատվիրատուները լիազորված մարմին են ներկայացնում հաշվետվություններ: Գնումների տարեկան հաշվետվությունը հրապարակվում է տեղեկագրում՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Պատվիրատուի սահմանման մասով տես նույն օրենքի հոդված 2-ի սահմանումը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները. 1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները: Գնումների տարեկան հաշվետվությունն, ըստ էության, ցույց է տալիս այդ աշխատանքների ու ծառայությունների համար իրականացված գնումները:

3.2	Արդյո՞ք պաշտոնական կայքում հրապարակված է մեկ անձից գնումների ցանկը, ներառյալ տեղեկատվությունը ըստ համամասնության՝ գնումների քանակի և գումարի մեծության մեջ[235]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում բաց[236] ձևաչափով հրապարակված է մեկ աղբյուրից գնումների ամբողջական ցանկը[237], հղումներով տրված են կնքված պայմանագրերի ներբեռնելի օրինակները, համամասնությունը գնումների քանակի և գումարի համեմատ; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W +T	0
3.3	Արդյո՞ք Երևանի քաղաքապետարանի և ենթակայության կազմակերպությունների բազային միավորը չգերազանցող գնումների համար գործում է ընթացակարգ[238]:	1 միավոր՝ ընթացակարգը գործում է և հրապարակված է պաշտոնական կայքում; 0.5 միավոր՝ ընթացակարգը գործում է, բայց հրապարակված չէ կայքում; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W + I	0
3.4	Արդյո՞ք քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա են Երևանի քաղաքապետարանի և համայնքի ենթակայության կազմակերպությունների էլեկտրոնային աճուրդի, բաց մրցույթների, գնանշման	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է արխիվ կամ հղում պաշտոնական կայքից դեպի համապատասխան հարթակ;	W + T	0

[235] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է մեկ անձից գնումներ կատարելու 5 պայմանները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության սկզբունքները, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված են գնումների գործընթացի թափանցիկության ու հրապարակայնության սկզբունքները:

[236] Էլեկտրոնային եղանակով պահվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի էլեկտրոնային և բաց ձևաչափով: Ակտիվ հրապարակված տեղեկատվությունը միշտ պետք է հասանելի լինի բաց ձևաչափով: Տվյալները պետք է լինեն ամբողջական, առաջնային, ժամանակին, մատչելի, մեքենայական մշակման ենթակա, ոչ խտրական, սեփականության իրավունք չունեցող և առանց լիցենզիաների, և համապատասխանությունը պետք է հնարավոր լինի ստուգել, ծանոթագրությունը Հանրային մասնակցության տեսակները V(20) կետի բաց տվյալների սկզբունքից է, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*.

[237] Պետական (հանրային) գնումների ողջ գործընթացը թափանցիկ է, որը նպատակ ունի նվազեցնել կոռուպցիայի հնարավորությունները և երաշխավորել հանրային միջոցների արդյունավետ ծախսում, ինչպես նաև ապահովել հավասար մրցակցային պայմաններ գնումների մասնակցողների համար, The Congress of Local and Regional Authorities. (2017, October 19). *Resolution 421 (2017) Making public procurement transparent at local and regional levels*; (2017, October 19). *Recommendation 405 (2017) Making public procurement transparent at local and regional levels*:

[238] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն ապահովում է գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի մասին համապատասխան փաստաթղթերի (կամ էլեկտրոնային փաստաթղթերի) առկայությունը և դրանց պահպանումը: Ենթադրաբար սրանից բխում է, որ պետք է գործի ընթացակարգ, որով այս ամենը պետք է կանոնակարգվի:

	հարցումների և մեկ անձից գնումների վերջին 5 տարվա արխիվը և տարեկան գնումների պլանները[239]:	0.5 միավոր՝ պաշտոնական կայքում առկա են գնումների վերջին հինգ տարվա պլանները; 0 միավոր՝ կայքում տեղեկատվությունն առկա չէ:		
3.5	Արդյոք պաշտոնական կայքում՝ գնումների համար առանձնացված բաժնում առկա է Երևանի ենթակայության այն կազմակերպությունների ցանկը, որոնք ըստ նախապես հաստատված գնումների պլանի ինքնուրույն գնումներ են իրականացնում[240]:	1 միավոր՝ տեղեկատվությունն առկա է; 0 միավոր՝ տեղեկատվություն չկա:	W+I	0
3.6	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքապետարանի և իր ենթակայության կազմակերպությունների՝ որպես պատվիրատու ղեկավարի կողմից կայացրած որոշմամբ գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվածների մասին տեղեկատվությունը[241]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում ցուցակը հրապարակված է; 0 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված ցուցակ չկա:	W+I	0
3.7	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է համառոտ տեղեկատվություն էլեկտրոնային աճուրդի մասին և առկա է հղում https://eauction.armeps.am/ կայքին[242]:	1 միավոր՝ առկա է համառոտ տեղեկատվություն էլեկտրոնային աճուրդի միջոցով քաղաքապետարանին, ենթակայության կազմակերպություններին ապրանքներ,	W	0

[239] Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 2.2 կետի համաձայն պատվիրատուն գնման գործընթացի վերաբերյալ նախատեսված տեղեկությունները հրապարակում է տեղեկագրում: Այնուհետև, IV գլխի 16-րդ կետով հրապարակում է գնումների պլանը, քանի որ դա գնումների իրավական հիմքն է հանդիսանում /տես կետ 17/:

[240] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պատվիրատու հանդիսացող Երևանի ենթակայության կազմակերպությունները:

[241] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ներառում է ցուցակում:

[242] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածից բխող ՀՀ Կառավարության 534 - Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի համակարգը, ըստ որի պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող և համակարգում գրանցված անձինք կարող են այն անել համակարգի միջոցով:

		աշխատանքներ և ծառայություններ մատուցելու մասին և տրված է հղումը համապատասխան կայքին; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկությունը հրապարակված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:		
3.8	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքապետարանի և իր ենթակայության կազմակերպությունների որպես պատվիրատու, գնահատող հանձնաժողովի բողոքարկված որոշումների մասին համառոտ տեղեկությունը (բողոքարկող կողմի տվյալներ, բողոքարկման հիմքը համառոտ կամ հղումը Datalex-ին)[243]:	1 միավոր՝ 2022թ. ցանկը հայցվոր կողմի և դատական գործի համարի նշմամբ հրապարակված է; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W+S+T	1
Բնակֆոնդ կամ բնակարանային քաղաքականություն				
4.1	Արդյոք պաշտոնական կայքում առկա է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների բաշխման կարգ և առկա շենքերի ու շինությունների ցանկ[244]:	1 միավոր՝ հրապարակված է բաշխման կարգը և գույքագրված շենքերի և շինությունների ցանկը; 0.5 միավոր՝ հրապարակված է կամ բաշխման կարգը կամ ցանկը; 0 միավոր՝ տեղեկատվություն չկա:	W	0

[243] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

[244] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի 1-ին մասի 10-րդ կետով համայնքի ղեկավարը իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ վարչական շրջանի ղեկավարը իրականացնում է Երևանի սեփականություն համարվող, իր տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների հաշվառումը, կազմվում են սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

4.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա են համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանների վերաբերյալ տարեկան թարմացվող տվյալներ ((1) բնակարանների ընդհանուր թիվը, (2) վարձակալված և (3) ազատ տարածքների և (4) հանրակացարանների սենյակների քանակը)[245]:	0.25 միավոր՝ տարեկան պարբերականությամբ տեղեկության յուրաքանչյուր տեսակի տրամադրման դեպքում:	W	0
4.3	Արդյոք պաշտոնական կայքում առկա է տեղեկատվություն բնակարանների[246] և հանրակացարանների հատկացման եղանակների և չափանիշների վերաբերյալ[247]:	1 միավոր՝ տեղեկությունն առկա է; 0 միավոր՝ տեղեկություն չկա:	W	0
4.4	Արդյոք պաշտոնական կայքում առկա է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների, հանրակացարանների, ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների կապիտալ և ընթացիկ վերանորոգման ցանկը[248]:	1 միավոր՝ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների, հանրակացարանների, ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների կապիտալ և ընթացիկ վերանորոգման ցանկը՝ դրանց վերաբերելի ներբեռնվող որոշումներով առկա է[249];	W + I + T +S	0

[245] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝ համայնքի ղեկավարը կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-րդ մասի 5-րդ կետով վարչական շրջանի ղեկավարը կազմակերպում է քաղաքապետին չվերապահված վարչական շրջանի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է իր տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը:

[246] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ապահովում է իր տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների շահագործումը:

[247] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝ կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների, հանրակացարանների շահագործումը:

[248] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝ համայնքի ղեկավարը կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների նորոգումը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով վարչական շրջանի ղեկավարը կազմակերպում է իր տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների նորոգումը:

[249] Հանրային մարմինները պետք է ակտիվորեն հրապարակեն հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը՝ ապահովելով վերջինիս հեշտ, արագ, արդյունավետ և գործնական հասանելիությունը, հոդված 10, *Council of Europe Convention on Access to official documents*

		0.5 միավոր՝ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների, հանրակացարանների, ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների կապիտալ և ընթացիկ վերանորոգման ցանկը առկա է; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:		
4.5	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևան համայնքի հիմնադրած համատիրությունների ցանկը և այդ համատիրությունների կողմից կատարված աշխատանքների մասին տեղեկատվությունը[250]:	1 միավոր՝ առկա են համայնքային հիմնադրած համատիրությունների ցանկը և կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները; 0.5 միավոր՝ առկա է միայն համատիրությունների ցանկը; 0 միավոր՝ բացակայում է տեղեկությունը:	W	0.5
4.6	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի այն բազմաբնակարան շենքերի ցանկը, որոնք համայնքի կողմից ստացել են սուբսիդիաներ կամ դոտացիաներ[251]:	1 միավոր՝ շենքերի ցանկը հրապարակված է; 0 միավոր՝ բացակայում է տեղեկությունը:	W+I	1
4.7	Արդյոք պաշտոնական կայքում առանձին բաժնում հրապարակված է աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ	1 միավոր՝ հրապարակված է աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը;	W	0

[250] «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համատիրության հիմնադիր կարող են հանդիսանալ բնակիչները, իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և ***համայնքները***: Նույն օրենքի 5-րդ հոդվածով համատիրությունները իրականացնում են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարում, ներկայացնում և պաշտպանում են շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր շահերը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական և այլ իրավասու մարմիններում, և իրականացնում են այլ խնդիրներ:

[251] «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն շենքի բյուջեն գոյանում է նաև պետության կամ համայնքի կողմից տրված սուբսիդիաներից և դոտացիաներից:

	կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը[252]:	0.5 միավոր՝ հրապարակված է միայն կարգը; 0 միավոր՝ տեղեկություն չկա:		
4.8	Արդյոք պաշտոնական կայքում առանձին բաժնում հրապարակված է քաղաքի սանիտարական մաքրման սխեման[253]:	1 միավոր՝ կարգը հրապարակված է առանձին բաժնում; 0.5 միավոր՝ կարգը հրապարակված է; 0 միավոր՝ կարգը հրապարակված չէ:	W	0
Բյուջետավորում				
5.1	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է համայնքի տարեկան աշխատանքային պլանը[254]:	1 միավոր՝ բոլոր փաստաթղթերը, դրանց հիմքում ընկած վերլուծությունները, տվյալները հրապարակված են պաշտոնական կայքի առանձին էջում[255]; 0.5 միավոր՝ բոլոր փաստաթղթերը հրապարակված են պաշտոնական կայքի առանձին էջում, բայց դրանց հիմքում ընկած վերլուծությունները այդ էջից բացակայում են; 0 միավոր՝ տեղեկատվությունը չի հրապարակվել կայքի առանձին էջում.	W	0.5

[252] «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը:

[253] «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն սանիտարական մաքրման սխեման պարունակում է համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը: Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին

[254] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82.1-ին հոդվածի 6-րդ մասի պահանջի համաձայն համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

[255] Որոշումների կայացման գործընթացում ներգրավված հանրային ծառայողներին հասանելի՝ որոշումը հիմնավորող և այլ նյութերը պետք է հասանելի լինեն: Հիմնական տվյալներն ու վերլուծությունները պետք է հանրությանը ներկայացվեն մատչելի ձևով և հասանելի լինեն, Հստակ լեզվի սկզբունք III(4h) և հանրային մասնակցության տեսակներից V(20) տեղեկատվության տրամադրման պահանջը, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*.

5.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա են բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական[256] ուսումնասիրության արդյունքներն ու եզրակացությունը:	1 միավոր՝ ուսումնասիրությունն ու եզրակացությունը հասանելի են; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W	0
5.3	Արդյոք պաշտոնական կայքէջում հրապարակված են համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ), համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՀՄԾԾ), բյուջեի հետ առնչվող հիմնական ցուցանիշների և վիճակագրական տվյալների բազա կամ տեղեկատու/գրքույկ[257]:	1 միավոր՝ հրապարակվել է տվյալների ամբողջական բազան բաց և մեքենայական ընթեռնելի ձևաչափով[258]; 0.5 միավոր՝ հրապարակվել է տվյալների ամբողջական բազան, սակայն բաց ձևաչափով չէ կամ հրապարակվել են ցուցանիշների և վիճակագրական տվյալների տեղեկատուները/գրքույկները; 0 միավոր՝ հրապարակված տվյալներ չկան:	W	0
5.4	Արդյոք պաշտոնական կայքում առկա է հրապարակված տեղեկություն քաղաքապետարանի բյուջեի[259] վերաբերյալ:	1 միավոր՝ պաշտոնական կայքում կա առանձին բաժին, որտեղ առկա են հաստատված բյուջեներն ըստ տարիների,	W	0.5

[256] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն քաղաքապետի ներկայացրած բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերստուգիչ մարմինն ավագանուն ներկայացնում է իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները:

[257] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքին վերաբերող հիմնական փաստաթղթերի առնչությամբ պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

[258] Էլեկտրոնային եղանակով պահվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի էլեկտրոնային և բաց ձևաչափով: Ակտիվ հրապարակված տեղեկատվությունը միշտ պետք է հասանելի լինի բաց ձևաչափով: Տվյալները պետք է լինեն ամբողջական, առաջնային, ժամանակին, մատչելի, մեքենայական մշակման ենթակա, ոչ խտրական, սեփականության իրավունք չունեցող և առանց լիցենզիաների, և համապատասխանությունը պետք է հնարավոր լինի ստուգել, ծանոթագրությունը Հանրային մասնակցության տեսակները V(20) կետի բաց տվյալների սկզբունքից է, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*

[259] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի համաձայն կայքում հրապարակվում է բյուջեն, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածն էլ սահմանում է հրապարակայնությունը, որը ենթադրում է մամուլում հրապարակումը, եռամսյակային հաշվետվությունների հրապարակայնությունը, տարեկան բյուջեի հրապարակումը azdarar.am կայքում և հանրամատչելի տարբերակի հրապարակումը ցանկացող բնակիչների համար, քանի որ ըստ այդ օրենքի 27-րդ հոդվածի բյուջեների ձևավորման սկզբունքներից է/ կետում նկարագրված հրապարակայնության սկզբունքը ենթադրում է համայնքի բնակիչների իրազեկումը բյուջեի ձևավորման և կատարման

		ընթացիկ՝ եռամսյակային[260] հաշվետվությունները, տարեկան հաշվետվություններն[261] ու աուդիտորական մարմնի կամ անկախ աուդիտի զեկույցը[262]; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում կա առանձին բաժին, որտեղ առկա են հաստատված բյուջեներն ըստ տարիների, տարեկան հաշվետվությունը; 0 միավոր՝ առանձնացված բաժին համակարգված ամբողջական տեղեկությամբ չկա:		
5.5	Արդյո՞ք պաշտոնական կայքում բյուջեի նախագիծը հրապարակվել է ավագանու նիստից առնվազն 20 օր առաջ[263], որպեսզի հանրությունը կարողանա ներկայացնել առաջարկություններ:	1 միավոր՝ 2022թ. -ի բյուջեի հրապարակված նախագծի ժամկետները պահպանված են; 0.5 միավոր՝ ժամկետները ոչ միշտ են պահպանված; 0 միավոր՝ ժամկետները չեն պահպանվում:	W	1

վերաբերյալ: Բացի այդ, 8-րդ հոդվածի 8 «բ» կետով օրենսդրական պահանջը ենթադրում է համայնքային բյուջեի նախագծի, քննարկման և որոշումների ընդունման պարտադիր թափանցիկություն հանրության և ԶԼՄ-ների համար:

[260] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի «բ» կետի պահանջով բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին:

[261] www.azdarar.am-ում: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի «գ» կետով համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի համաձայն բյուջեի հաշվետվությունները հրապարակվում են կայքում:

[262] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն ավագանին վերահսկում է բյուջեի կատարումն ու երկրորդ կետով կամ իր անդամներից, կամ էլ դրսից տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում աուդիտորական ստուգում: 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ավագանու անդամը (անդամները) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունը համայնքի ավագանուն է ներկայացնում իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ղեկավարի ներկայացրած բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերստուգիչ մարմինը համայնքի ավագանուն ներկայացնում է իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները:

[263] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն համայնքի բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ, սակայն ըստ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն 20 օր առաջ: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի «դ» կետով համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որպեսզի համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

5.6	Արդյոք պաշտոնական կայքում առկա են բյուջեի վերաբերյալ հանրային լսումների արձանագրություններ, որտեղ արձանագրված է նաև քաղհասարակության այլ ներկայացուցիչների մասնակցության մասին տեղեկություն[264]:	1 միավոր՝ 2022թ. լսումներն ըստ պատշաճի՝ նշված շահատերների ներառմամբ արձանագրված են[265]; 0.5 միավոր՝ առկա է 2022թ. հանրային լսումների մասին արձանագրությունը; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W + D+S	0
5.7	Արդյոք պաշտոնական կայքում առկա են համայնքային կառույցների բյուջեները[266]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում 2022թ. բյուջեները հրապարակված են: 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W	1
5.8	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքացու բյուջեն[267]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է 2022թ. քաղաքացու բյուջեն ըստ օրենքի պահանջի; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված 2022թ. քաղաքացու բյուջեն մասամբ է համապատասխանում օրենքի պահանջին; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W+D	0

[264] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի «դ» կետով համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որպեսզի համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

[265] Կան որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություններ, որոնք մեծապես խրախուսվում են, ներառյալ համացանցի, էլեկտրոնային փոստային ցանկերի (mailing lists), հանրային հայտարարությունների և լրատվամիջոցների միջոցով՝ խրախուսելով բոլորին և, հատկապես, հիմնական շահագրգիռ կողմերին ներգրավվել գործընթացում, Բաց կառավարումը որպես սկզբունք և հանրային մասնակցության հիմք IV(7) կետ, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). Guidelines for civil participation in political decision making.

[266] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի համաձայն կայքում հրապարակվում է համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը՝ այդ թվում բյուջեն կամ հղումը համապատասխան կայքին (առկայության դեպքում):

[267] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի բյուջեն համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

Ֆինանսական հարցեր ու դրամական հատկացումներ				
6.1	Պաշտոնական կայքում առկա՞ է որևէ տեղեկություն տուրքերի և վճարների մասին[268] որոշումների նախագծերի, ինչպես նաև որոշումներին նախորդած հանրային քննարկումների[269] ամփոփաթերթերի մասին:	1 միավոր՝ հանրային քննարկումների ամփոփաթերթերը և 2022 թվականի տուրքերի և վճարների մասին նորմատիվ իրավական ակտի նախագծերը հրապարակված են; 0.5 միավոր՝ կայքում հրապարակված են տուրքերի և վճարների մասին որոշումները; 0 միավոր՝ փաստաթղթեր չկան:	W	0.5
6.2	Արդյո՞ք պաշտոնական կայքում հրապարակված են ծառայությունների համար գանձվող գումարների գնագոյացման հաշվարկները[270]:	1 միավոր՝ կայքում հրապարակված են ծառայությունների գանձվող գումարների գնագոյացման հաշվարկները; 0.5 միավոր՝ կայքում հրապարակված են ոչ բոլոր ծառայությունների գանձվող գումարների գնագոյացման հաշվարկները; 0 միավոր՝ ծառայությունների գանձվող գումարների գնագոյացման հաշվարկները հրապարակված չեն:	W	0.5

[268] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով քաղաքի բյուջեն գոյանում է տեղական հարկերից, տուրքերից և վճարներից:

[269] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2, 3, 4-րդ հոդվածները սահմանում են հանրային քննարկումներն ու դրանց անցկացման կարգը: Հարկերի, տուրքերի և վճարների հարցում հանրային կարծիքը, ըստ հոդված 2-ի 1.10 կետի բացահայտելու համար, ավագանու կողմից այդ որոշումը, ըստ 4-րդ հոդվածի 2-րդ մասի ընդունելուց առնվազն 15 օր առաջ կազմակերպվում են հանրային քննարկումներ ըստ 3-րդ հոդվածի 2-րդ մասի և արդյունքները հրապարակվում են ըստ 4-րդ հոդվածի 4-րդ մասի:

[270] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինողը հրապարակում է աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները): Բացի այդ, որոշումների կայացման գործընթացում ներգրավված հանրային ծառայողներին հասանելի՝ որոշումը հիմնավորող և այլ նյութերը պետք է հասանելի լինեն: Հիմնական տվյալներն ու վերլուծությունները պետք է հանրությանը ներկայացվեն մատչելի ձևով և հասանելի լինեն, Հստակ լեզվի սկզբունք III(4h) և հանրային մասնակցության տեսակներից V(20) տեղեկատվության տրամադրման պահանջը, Adopted by the Committee of Ministers on 27 September 2017 at the 1295th meeting of the Ministers' Deputies. (n.d.). *Guidelines for civil participation in political decision making*.

6.3	Արդյոք պաշտոնական կայքում բյուջեի կատարման հաշվետվության հետ հրապարակված է տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը[271]:	1 միավոր՝ 2022թ. -ի բյուջեի կատարողականի և համայնքի տարեկան աշխատանքային պլանի /ՏԱՊ/[272] հաշվետվությունները հրապարակված են; 0.5 միավոր՝ հրապարակված է բյուջեի կամ ՏԱՊ-ի հաշվետվությունը; 0 միավոր՝ փաստաթղթեր չկան:	W+D	0.5
6.4	Արդյոք առկա է համայնքի բյուջեի աջակցության ֆոնդի միջոցների տրամադրման կարգավորող փաստաթուղթ, որը կներառի դիմումների գնահատման կարգը, աջակցություն ստացած անձանց, ծրագրերի մասին տեղեկության հրապարակման պահանջ[273]:	1 միավոր՝ կարգավորող փաստաթուղթը ընդունված է և գործում է; 0 միավոր՝ կարգավորող փաստաթուղթը ընդունված չէ:	I + T	0

[271] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություն հաշվետու տարում համայնքի բյուջեի մուտքերի և ելքերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև: Բացի այդ, որպեսզի ավագանին որպես բնակիչների ներկայացուցիչ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով իր լիազորությունները պատշաճ կատարի, ապա ըստ այդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պետք է հասու լինի բյուջետային միջոցների նպատակային օգտագործման մանրամասներին: Սա էլ իր հերթին ենթադրում է, որ տարեկան ծրագրում ամրագրված հստակ ու չափելի վերջնարդյունքների ու դրանք մոտարկող ցուցանիշների հիման վրա պետք է ունենա մոնիտորինգի արդյունքներ, որոնք հստակ գնահատում են բյուջեի կատարողականն՝ ըստ իրականացվող ծրագրերի և միջոցառումների, այդ թվում՝ մրցույթով հաղթած ոչ համայնքային կազմակերպությունների միջոցով:

[272] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82.1-րդ հոդվածի համաձայն կարգավորվում է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, որն՝ ըստ 6-րդ կետի պարտավորեցնում է համայնքի ղեկավարին բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ավագանուն ներկայացնել հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, որը պետք է հրապարակվի:

[273] Երևանի տարեկան բյուջեով նախատեսվում է համայնքի բյուջետային միջոցներից աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին: Մասնավորապես Երևանի քաղաքապետի 2023 թվականի բյուջետային ուղերձի մաս 3-ի 40-րդ կետով նախատեսվում է շուրջ նախատեսվել է 454,305.0 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով: Տես՝ https://www.yerevan.am/uploads/media/default/0002/16/c1f394158a302b603f2168ba4aecb7b8dd260ab9.pdf

Սոցիալական ծառայություններ				
7.1	Արդյոք պաշտոնական կայքում առկա է որևէ տեղեկություն՝ այդ թվում սոցիալական ոլորտի գործընկեր կառույցների մասին, որոնք համայնքի բնակիչներին մատուցում են սոցիալական ծառայություններ[274]:	1 միավոր՝ առկա է ամբողջական հրապարակված ցանկ՝ ըստ կառույցների, տրամադրվող ծառայությունների և օգտվելու իրավունք ունեցող խմբերի; 0.5 միավոր՝ առկա է հրապարակված ցանկ՝ ծառայություններ մատուցողների մասին; 0 միավոր՝ առցանց տեղեկատվություն չկա:	W + T +S	0.5
7.2	Արդյոք համայնքային բյուջեից ֆինանսավորում ստացող գործընկեր կառույցների մատուցած ծառայությունների[275] դեպքում առկա է տեղեկություն այդ ծառայություններից օգտվելու իրավունք ունեցողների մասին:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է գործընկեր կառույցների ծառայությունների և դրանից օգտվելու իրավունք ունեցող խմբերի ցանկը; 0 միավոր՝ տեղեկատվությունն առկա չէ:	W+D	0
7.3	Արդյոք պաշտոնական կայքում առկա է տարեկան կտրվածքով ամփոփ տեղեկություն սոցիալական աջակցության նպատակով համայնքի ղեկավարի, վարչական շրջանների ղեկավարների և նրանց աշխատակազմերի կատարած տնային այցելությունների և	1 միավոր՝ հրապարակված է ամփոփ տեղեկատվություն՝ անձնական տվյալների պաշտպանության պահանջի հաշվառմամբ սոցիալական աջակցության նպատակով համայնքի ղեկավարի, վարչական շրջանների ղեկավարների և նրանց աշխատակազմերի կատարած տնային	W	0

[274] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 19-րդ կետի համաձայն կայքում պետք է հրապարակվեն սոցիալական ոլորտի գործընկեր կառույցների մասին տեղեկություններ:

[275] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի «զ» կետում առանձնացված «համայնքից կամ համայնքային ոչ առևտրային կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձինք» եզրույթը ենթադրում է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացնեն թափանցիկ: Այդ թվում, պետք է հստակ լինի, թե որ խմբերն ու ինչ պայմաններով կարող են օգտվել համայնքային բյուջեի ֆինանսավորմամբ իրենց մատուցած ծառայություններից: Թափանցիկության պահանջը դրված է գնումների գործընթացի ողջ շրջափուլի նկատմամբ, տես բանաձև 421-ը՝ Congress of Local and Regional Authorities. (2017, October 19). *Resolution 421 (2017) Making public procurement transparent at local and regional levels*. Rm.coe.int. Retrieved January 11, 2023, from https://rm.coe.int/168075fbe1

	ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրները լուծելու մասին[276]:	այցելությունների և ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրները լուծելու մասին; 0.5 միավոր՝ տեղեկատվությունն ամբողջական չէ; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:		
7.4	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակվում է ամփոփ վիճակագրություն՝ առանց ծնողական խնամքի և որդեգրման ենթակա երեխաների մասին[277]:	1 միավոր՝ կայքում առկա է ամփոփ վիճակագրություն՝ անձնական տվյալների պաշտպանության պահանջի հաշվառմամբ՝ առանց ծնողական խնամքի և որդեգրման ենթակա երեխաների մասին; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W	1
7.5	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերը, նիստերի արձանագրությունները[278]:	1 միավոր՝ հրապարակված են հանձնաժողովների կազմերը և նիստերի արձանագրությունները անձնական տվյալների պաշտպանության դրույթների պահպանմամբ; 0.5 միավոր՝ տեղեկատվությունը հրապարակված է մասնակի; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W + I + T + S	0.5

[276] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին:

[277] ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի 962-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի համաձայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը (սկզբնական, տարածքային և կենտրոնացված) իրականացվում է համապատասխանաբար խնամակալության և հոգաբարձության մարմինների (սկզբնական հաշվառում), Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) (տարածքային հաշվառում) և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից (կենտրոնացված հաշվառում): Իսկ կառավարության 2010թ-ի 269-Ն որոշման Հավելված 1-ի երրորդ կետով որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմերը (այսուհետ՝ աշխատակազմ)՝ իրենց ենթակայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով:

[278] Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատում է համայնքի ղեկավարը:

7.6	Արդյոք իրականացվում է անօթևան անձանց հաշվառում և հրապարակվում է դրա վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն[279]:	1 միավոր՝ համայնքը իրականացնում է անօթևան անձանց հաշվառում և հրապարակում է դրա վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: 0.5 միավոր՝ համայնքը իրականացնում է անօթևան անձանց հաշվառում, սակայն չի հրապարակում ամփոփ տեղեկատվություն; 0 միավոր՝ համայնքը չի իրականացնում անօթևան անձանց հաշվառում:	W + I + T + S	1
7.7	Արդյոք սոցիալական ծառայություններից և հաստատություններից օգտվելու վերաբերյալ անձանց, ընտանիքների և սոցիալական այլ խմբերի չնույնականացվող տվյալները հրապարակված են պաշտոնական կայքում[280]:	1 միավոր՝ բոլոր տվյալները հրապարակված են պաշտոնական կայքում; 0.5 միավոր՝ տվյալները հրապարակված են մասամբ; 0 միավոր՝ տվյալներ չկան:	W	0.5
Անձնակազմի կառավարում				
8.1	Արդյոք պաշտոնական կայքում տեղադրված են թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի ընթացակարգերը, այդ թվում՝ պաշտոնների նկարագրությունները և թափուր պաշտոնների մասին հայտարարությունները[281]:	1 միավոր՝ բոլոր տվյալները հասանելի են;	W	1

[279] Կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի 1069-Ն որոշման հավելված 4-ի 21 կետի համաձայն կազմակերպությունն անօթևան անձի մասին տեղեկություն կարող է ստանալ տվյալ անձից, ՄՍԾ տարածքային կենտրոններից, ոստիկանությունից, խնամակալության ու հոգաբարձության մարմիններից, պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններից, իրավաբանական ու ֆիզիկական այլ անձանցից, զանգվածային լրատվության միջոցներից և այլ աղբյուրներից:

[280] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ են տրամադրում (այդ թվում՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց միջոցով) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով:

[281] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի ղեկավարը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինող մարմինը հրապարակում է աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը:

		0.5 միավոր՝ տվյալները հասանելի են, այնուամենայնիվ, կեսից ավելի դեպքերում հրապարակման ամսաթիվ չկա կամ կան խտրական սահմանափակումներ; 0 միավոր՝ տվյալներ չկան:		
8.2	Արդյո՞ք պաշտոնական կայքում առկա են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը[282]: Արդյո՞ք առկա է տեղեկություն՝ մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում գենդերային համամասնության մասին (30/70)[283]:	1 միավոր՝ առկա են բոլոր տվյալները; 0.5 միավոր՝ տվյալները հասանելի են, այնուամենայնիվ, հանձնաժողովի բազայում այս կամ այն սեռը նվազագույն ներկայացվածություն չունի (այն է՝ երեսուն տոկոսից պակաս ներկայացված է); 0 միավոր՝ տվյալներ չկան:	W + I + T + S	0
8.3	Արդյո՞ք պաշտոնական կայքում առկա է առանձնացված բաժին կամ էջ, որտեղ հրապարակվում է համայնքային ծառայության թափուր պաշտոնների և համայնքային ենթակայության կազմակերպություններում թափուր աշխատատեղերի մրցույթի	1 միավոր՝ 2022թ. -ի տվյալներն առկա են ; 0.5 միավոր՝ մասամբ առկա են; 0 միավոր՝ տվյալներ չկան:	W	1

[282] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

[283] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն Երևանի քաղաքապետարանի մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերն ընտրվում են այդ նպատակով համակարգչում զետեղված և պատահական ընտրված թեկնածուներից՝ յուրաքանչյուր մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ: Ինչպես նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրենց իրավասության սահմաններում խորհրդակցական, աշխատանքային մարմիններ, պատվիրակություններ, ընտրական հանձնաժողովներ, օրենքով սահմանված դեպքերում քվոտաներով և կոլեգիալության սկզբունքով այլ մարմիններ կազմավորելիս կամ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններում նշանակում կատարելիս կամ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններում նշանակվելու համար թեկնածություններ առաջարկելիս բացառում են գենդերային խտրականության դրսևորումները: Ավելին, ՀՀ կառավարության 19.01.2019թ. 1334-Լ որոշման հավելված 2-ի գերակայություն 1-ի 2-րդ կետով ստանձնել է տեղական ինքնակառավարման մարմիններում տղամարդկանց և կանանց համամասնորեն ներկայացվածություն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցում, որի արդյունքում 2023թ.-ին պետք է երաշխավորվի համայնքապետարանների աշխատակազմի շրջանում միևնույն սեռի ոչ ավելի քան 70%-ի ներկայացուցչության ապահովում:

	անցկացման օրը՝ հրապարակայնությունը[284] ապահովելու համար:			
8.4	Արդյոք պաշտոնական կայքում առկա է առանձնացված բաժին կամ էջ, որտեղ հրապարակվում են անցկացված համայնքային ծառայության թափուր պաշտոնների և համայնքային ենթակայության կազմակերպություններում թափուր աշխատատեղերի մրցույթի մասին հանձնաժողովի եզրակացությունները[285]:	1 միավոր՝ 2022թ. -ի տվյալներն առկա են ; 0.5 միավոր՝ տվյալները թերի են; 0 միավոր՝ տվյալներ չկան:	W	0
8.5	Արդյոք պաշտոնական կայքում առկա է աշխատանքի թափուր տեղերի հայտարարության համար նախատեսված առանձին բաժին[286]: Արդյոք հայտարարությունները զերծ են տարիքային, սեռային կամ հաշմանդամության փաստով պայմանավորված խտրականությունից[287]: Արդյոք աշխատանքի հայտարարություններում	1 միավոր՝ կայքում առկա է աշխատանքի թափուր տեղերի հայտարարության համար նախատեսված բաժին, որտեղ հրապարակված հայտարարությունները զերծ են խտրական դրսևորումներից; 0.5 միավոր՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տվյալները առկա են, սակայն խտրական խնդիրներ են	W +D+T + S	0.5

[284] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի 12-րդ կետում ամրագրված մրցույթ անցկացնելու կարգի (հմ. 13-Ն 29.08.06թ.) համաձայն 80-րդ կետի պահանջը ենթադրում է անցկացվելիք մրցույթների հրապարակում, որպեսզի ցանկության դեպքում հասարակական կազմակերպությունների (միայն դիտորդի կարգավիճակով), մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև հրավիրված դիտորդները ներկա գտնվեն:

[285] Կարգի (հմ. 13-Ն 29.08.06թ.) համաձայն 67-րդ կետի պահանջը ենթադրում է, որ մրցույթն անցկացնելուց հետո, նույն օրը կազմվում է եզրակացություն՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին, ինչպես նաև ընդունում է որոշում՝ մրցույթի արդյունքներն ամփոփելու մասին:

[286] «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համապատասխան համայնքի ղեկավարը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով: «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն տարին առնվազն մեկ անգամ (ինչը չի սահմանափակում ավելի հաճախ հրապարակումը) տեղեկությունը տնօրինողը հրապարակում է տեղեկություններ թափուր աշխատատեղերի մասին:

[287] «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն սահմանվում է հավասար հնարավորությունների սկզբունքը՝ որպես իրական գենդերային իրավահավասարության հասնելու համար անհրաժեշտ միջոցների և պայմանների համակարգ, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով երաշխավորում է արդյունքի հավասարությունը: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 4-րդ հոդվածի 2-րդ մասով, 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով հավասար հնարավորության երաշխավորումը ամրագրված է:

	նշվում է, որ համայնքային կազմակերպությունները հավասար պայմաններում խրախուսում են թերներկայացված խմբերի անձանց ընտրությունը՝ ելնելով հավասար հնարավորությունների սկզբունքի երաշխավորումից[288]:	պարունակում կամ հավասար հնարավորության հանձնառության մասին դրույթ չեն պարունակում; 0 միավոր՝ տեղեկություններ չկան:		
8.6	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքապետարանի տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատուի մասին տեղեկատվությունը[289]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է տեղեկատվության ազատության պատասխանատուի մասին; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W+ T	0
8.7	Արդյոք պաշտոնական կայքում առկա է տեղեկատվություն՝ գնումների համակարգողի վերաբերյալ[290]:	1 միավոր՝ կայքում հրապարակված է գնումների համակարգողի մասին տեղեկատվությունը, կոնտակտային տվյալները; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W	1
8.8	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է այն ստորաբաժանման հեռախոսը, էլ. փոստը[291], ղեկավարի անունը, որը զբաղվում է հաշվապահական հաշվառման,	1 միավոր՝ տեղեկատվությունը հրապարակված է; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W	1

[288] Բացի այդ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են աշխատողների վերապատրաստումը, ուսուցումը, վերաորակավորումը, գիտելիքների տրամադրումը հավասար հնարավորությունների, մատչելի պայմանների ու այլ գործընթացների վերաբերյալ:

[289] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը՝ այս հետազոտության շրջանակում Երևանի ՏԻՄ-երը պարտավոր են նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

[290] «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պատվիրատուի ղեկավարը՝ տվյալ իմաստով քաղաքապետը սահմանում է գնումների համակարգող: Նույն օրենքի հաջորդ մասով նշվում է, որ գնումների համակարգող կարող են սահմանվել պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումը; պաշտոնատար անձը կամ անձինք; հրավիրած անձը՝ խորհրդատուն կամ խորհրդատուները:

[291] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինող մարմինը հրապարակում է պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

	վարձակալության, առուվաճառքի և քաղաքապետարանի գույքի հետ կապված հարցերով:			
Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն				
9.1[292]	Արդյոք քաղաքապետի, նրա տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանող Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնները հրապարակված են քաղաքապետարանի կայքում[293]:	1 միավոր՝ կանոնները հրապարակված են քաղաքապետարանի կայքում; 0 միավոր՝ կայքում կանոնները բացակայում են:	W	2023-ին չի գնահատվել
9.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա է քաղաքապետարանի համայնքային ծառայողների վարքագծի տիպային կանոնների հիման վրա սահմանված կանոնագիրքը[294]:	1 միավոր՝ կանոնագիրքը առկա է պաշտոնական կայքում; 0 միավոր՝ կանոնագիրքը առկա չէ:	W	0
9.3[295]	Արդյոք պաշտոնական կայքում առկա է քաղաքապետարանի Կոռուպցիայի	1 միավոր՝ ուղեցույցը առկա է պաշտոնական կայքում;	W	2023-ին չի

[292] 2023 թվականի գնահատման զեկույցում այս ցուցիչը չի ներառվել, քանի որ կանոնագրքի նախագիծը դեռևս շրջանառության մեջ է, տես՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/04/19/2023-04-19:

[293] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

[294] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 7-րդ մասը համաձայն հանրային ծառայողի վարքագծի կանոնները սահմանվում են վարքագծի տիպային կանոնների հիման վրա՝ կանոնագրքերով: Այն դեպքում, երբ այդ կանոնները դեռևս սահմանված չեն, ապա միևնույն հոդվածի 6-րդ մասի համաձայն գործում են 5-րդ մասով սահմանված քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները:

[295] 2023 թվականի գնահատման զեկույցում այս ցուցիչը չի ներառվել, քանի որ ԿԿՀ-ի կայքում նշված է հետևյալը՝ «Տեղեկացնում ենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 2023 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ փոփոխությունների կիրառումը հնարավոր չէ ապահովել: «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ենթաօրենսդրական ակտերի նախագծման աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել մի շարք օրենսդրական բացեր, որոնք հնարավորություն չեն տալիս ավարտին հասցնել ենթաօրենսդրական ակտերի մշակումը, հետևաբար նաև՝ օրենքի պատշաճ կիրարկումը», տես՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/05/07/2023-05-07:

	կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակված հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների հաշվառման և հանձնման կարգ(եր)ը[296]:	0 միավոր՝ ուղեցույցը առկա չէ:		գնահատվել
9.4	Արդյոք քաղաքապետարանում նշանակված է բարեվարքության հարցերով կազմակերպիչ[297]: Արդյոք կազմակերպչի տվյալներն ու կոնտակտները հրապարակված են պաշտոնական կայքում[298]:	1 միավոր՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչը նշանակված է և կայքում տվյալներն ու կոնտակտները առկա են; 0.5 միավոր՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչը նշանակված է, սակայն կայքում տվյալներն ու կոնտակտներն առկա չեն; 0 միավոր՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչը նշանակված չէ:	W + I	0.5
9.5	Արդյոք քաղաքապետարանի կայքում առկա է տեղեկություն առ այն, թե ինչպես կարելի է առցանց բողոքարկել քաղաքապետի, տեղակալների, վարչական շրջանների ղեկավարների, տեղակալների[299], վարչական, հայեցողական պաշտոնյաների, համայնքային	1 միավոր՝ տեղեկությունն առկա է; 0 միավոր՝ տվյալներ չկան:	W	0

[296] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

[297] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բարեվարքության հարցերով կազմակերպչի հանրային ծառայության պաշտոնը:

[298] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինողը հրապարակում է պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

[299] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ԿԿՀ-ն քննում և լուծում է համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ:

	ծառայողների[300] վարքագծի կանոնների խախտումները:			
9.6	Արդյոք քաղաքապետի ներկայացմամբ ավագանու կողմից հաստատված և հրապարակված է տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը[301] և նշված են այն համակարգող պատասխանատուի կոնտակտները[302]:	1 միավոր՝ տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը հաստատված և հրապարակված է, պատասխանատուի տվյալները առկա են; 0.5 միավոր՝ ծրագիրը հաստատված, բայց հրապարակված չէ; 0 միավոր՝ ծրագիրը հաստատված չէ:	W + I	0
9.7	Արդյոք սահմանված և պաշտոնական կայքում հրապարակված է ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը[303]:	1 միավոր՝ սահմանված և հրապարակված է ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման,ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը; 0.5 միավոր՝ կարգը սահմանված, սակայն հրապարակված չէ; 0 միավոր՝ կարգը սահմանված չէ:	W + I	0
9.8	Արդյոք քաղաքապետարանում և վարչական շրջաններում նշանակվել են ներքին ու	1 միավոր՝ նշանակված են ներքին ու արտաքին ազդարարման հարցերով պատասխանատուները, կայքում	W + I	0

[300] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն համայնքային ծառայության համար ստեղծվում են էթիկայի առանձին հանձնաժողովներ, որոնք հետևում են բարեվարքության պահանջների պահպանմանը:

[301] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.5 կետով ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը:

[302] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն տեղեկատվությունը տնօրինողը հրապարակում է պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

[303] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով իրավասու մարմինն ինքնուրույն է սահմանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը, իսկ այն ընդունելուց հետո պարտավոր է այն տեղադրել իր կայքէջում:

	արտաքին ազդարարման հարցերով պատասխանատուներ և հրապարակվել է պատասխանատուների ցանկը, կոնտակտային տվյալները[304]:	հրապարակված են նրանց անունները և առկա են կոնտակտային տվյալները; 0.5 միավոր՝ ներքին ու արտաքին ազդարարման հարցերով պատասխանատուները նշանակված են, սակայն նրանց վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ կայքում կամ մասնակի է ներկայացված; 0 միավոր՝ ներքին ու արտաքին ազդարարման հարցերով պատասխանատուները նշանակված չեն:		
Քաղաքային պլանավորում (քաղաքաշինություն), հողօգտագործում ու համայնքային գույք				
10.1	Արդյոք պաշտոնական կայքում գլխավոր հատակագիծը հրապարակված է[305]:	1 միավոր՝ հրապարակված է նախագծման առաջադրանքը, գլխավոր հատակագիծը, հարակից վերաբերելի զեկույցների և վիճակագրության հետ միասին; 0.5 միավոր՝ հրապարակված է նախագծման առաջադրանքը, գլխավոր հատակագիծը; 0 միավոր՝ հրապարակված չէ:	W	0

[304] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2018 272-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն իրավասու մարմինը հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց տվյալները տեղադրում է իր կայքէջում:

[305] Գլխավոր հատակագիծը, որպես կենսամիջավայրի փոփոխությունների երկարաժամկետ ծրագրավորման փաստաթուղթ ունի իր ներգործությունը շրջակա միջավայրի վրա: Հետևաբար, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի համաձայն (շրջակա միջավայրի վրա ներգործությունը) ի թիվս այլ պահանջների տեղեկատվությունը տնօրինողի կողմից ենթակա է հրապարակման: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են կենսագործունեության միջավայրի փոփոխությունների իրականացմանը հասարակության մասնակցության նպատակները, որոնք ի թիվս այլ ամրագրումների ենթադրում են նաև առցանց եղանակով հրապարակայնության, մասնակցայնության և ներառականության ապահովումը:

10.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա են գոտիավորման նախագծերը[306]:	1 միավոր՝ առկա են գոտիավորման ընթեռնելի նախագծերը; 0.5 միավոր՝ առկա են մասամբ կամ ոչ ընթեռնելի են; 0 միավոր՝ նախագծերը հասանելի չեն կամ չկա հանրային մուտք նախագծի այս կամ այն հատվածին (տեքստային կամ գրաֆիկական մաս):	W	0.5
10.3	Արդյոք պաշտոնական կայքում առկա են առանձնատների և փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեության որոշ տեսակների համար կիրառելի ժամանակավոր շինությունների (կրպակ և այլն) ճարտարապետահատակագծային նախագծերի (նախագծման թույլտվության) [307] տիպային ձևեր:	1 միավոր՝ տիպային ձևերն առկա են; 0 միավոր՝ տիպային ձևեր տրամադրված չեն:	W + T	1
10.4	Արդյոք պաշտոնական կայքում առկա են տեղեկություններ, ըստ գոտիավորման՝ ավագանու կողմից սահմանված հարկերի,	1 միավոր՝ տեղեկատվությունը հրապարակված է; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W	1

[306] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն ավագանին որոշում է ընդունում Երևան քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան մշակված՝ Երևան քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծերի վերաբերյալ, որոնք 53-րդ հոդվածի համաձայն ներկայացվում են քաղաքապետի կողմից: Ինչպես նաև՝ ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համայնքապետի լիազորությունների շրջանակում սահմանվում է կարևորագույն նախաձեռնությունների առնչությամբ հանրային լսումների կամ քննարկումների կազմակերպումը, իսկ 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով գոտիավորման նախագծի կազմումը: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14(3) հոդվածի 17-րդ կետով սահմանվում է համայնքի գոտիավորման նախագիծը, որը հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների (նախագծման թույլտվությունների) տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետը պահանջում է, որպեսզի համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը կայքում հրապարակվեն:

[307] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22.1-ին հոդվածը սահմանում է ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվությունը) և նախագծման պարտադիր պահանջները, որոնք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 11-րդ, 36-րդ հոդվածների հիման վրա կարող են առկա թվային միջոցների պայմաններում իրականացվել պարզեցված և արագացված կարգով:

	տուրքերի և վճարների[308], ինչպես նաև սահմանված արտոնությունների վերաբերյալ:			
10.5	Արդյոք համայնքային սեփականություն հանդիսացող հողերի[309] օգտագործման տրամադրելու և օտարման ծրագրերը հրապարակված են պաշտոնական կայքում[310]: Արդյոք չօգտագործվող հողերի և ներդրողների համար օտարման և/կամ առաջարկների ցանկը հրապարակված է պաշտոնական կայքում[311]:	1 միավոր՝ ծրագրերն ու ցանկը հրապարակված են; 0.5 միավոր՝ հրապարակված են մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W	1
10.6	Արդյոք պաշտոնական կայքում առկա են հրապարակված համայնքային հողամասի վարձակալության, հողի սեփականաշնորհման կամ որևէ այլ գործողություն գրանցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և լրացման համար պարտադիր ձևաթղթերը[312]:	1 միավոր՝ ցանկը և լրացման համար պարտադիր ձևաթղթերը հրապարակված են[313]; 0.5 միավոր՝ ցանկը կամ լրացման համար պարտադիր ձևաթղթերը հրապարակված չեն; 0 միավոր՝ հրապարակված չեն:	W	1

[308] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով ավագանին հարկերը, տուրքերն ու վճարները սահմանելիս կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով, ընդ որում՝ տարբեր հարկերի, տուրքերի, վճարների համար կարող են սահմանվել տարբեր գոտիավորումներ:

[309] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն համայնքն ունի հողի նկատմամբ սեփականության իրավունք: 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով ավագանու իրավասությունների շարքում ներառված է համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին որոշում ընդունելը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն, որոշում է ընդունում օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:

[310] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն ավագանին որոշում է ընդունում քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ:

[311] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքապետը հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով, սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասը սահմանում է ավագանու լիազորությունները հոսամասների օտարման մասով:

[312] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետը պահանջում է, որպեսզի համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տրվող թույլտվությունների դիմումների ձևաթղթերը և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը հրապարակվեն կայքում:

[313] Հանրային մարմինները պետք է ակտիվորեն հրապարակեն հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը՝ ապահովելով վերջինիս հեշտ, արագ, արդյունավետ և գործնական հասանելիությունը, հոդված 10, *Council of Europe Convention on Access to official documents*.

10.7	Արդյոք հրապարակված է համայնքային հողերի օտարման հրապարակային սակարկությունների մասին տեղեկություն[314] (աճուրդներ):	1 միավոր՝ 2018 թվականից ի վեր անցկացված աճուրդների մասին տեղեկությունն առկա է; 0 միավոր՝ աճուրդներ/մրցույթներ անց են կացվել, բայց դրանց մասին տեղեկությունը բացակայում է:	W+I	1
10.8	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակվում է օտարված և օգտագործման հանձնված հողերի ցանկը[315]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է օտարված և օգտագործման հանձնված հողերի ցանկը ակտիվ հղումներով ներբեռնելի փաստաթղթերով; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է միայն ցանկը; 0 միավոր՝ տեղեկությունը չի հրապարակվում:	W	0
10.9	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը[316]:	1 միավոր՝ հրապարակված է քարտեզը; 0 միավոր՝ հրապարակված չէ:	W	0
10.10	Արդյոք առկա է հրապարակված տեղեկություն ապօրինի հողօգտագործման կանխարգելման, կասեցման և վերացման աշխատանքների,	1 միավոր՝ տեղեկատվությունը հրապարակված է ամբողջական;	W + I + S + T	0.5

[314] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, դրանց վարձավճարների և օտարման գների չափերի ու պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների վերաբերյալ: (Քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն հողամասները համարվում են անշարժ գույք)

[315] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն համայնքի կայքում պետք է հրապարակվի օտարման կամ օգտագործման տրամադրվող հողամասերի ցանկը:

[316] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի սեփականություն համարվող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14(3)-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի իրագործումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Համայնքի ղեկավարը կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը (այսուհետ՝ ընթացիկ քարտեզ), որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Ընթացիկ քարտեզի հանրայնության պահանջը սահմանվում է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, քանի որ քարտեզը արտացոլում է ընթացիկ փոփոխությունների գույքագրումը, իսկ դա փոխկապակցված է քաղաքաշինական գործունեության միջոցով կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկելու օրենսդրական պահանջի հետ:

	ինչպես նաև՝ կիրառված վարչական տույժերի վերաբերյալ[317]:	0.5 միավոր՝ տեղեկատվությունը ներկայացված է մասնակի; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:		
10.11	Արդյոք պաշտոնական կայքում առկա է ամփոփ տեղեկատվություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների և շինությունների օրինականացման և տնօրինման դեպքերում համապատասխան հողամասերի տրամադրման վերաբերյալ[318]:	1 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է ամբողջական; 0.5 միավոր՝ տեղեկությունը ներկայացված է մասնակի; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W	0
10.12	Արդյոք առկա է ամփոփ վիճակագրություն հողամաս տրամադրելու վերաբերյալ դիմումների և դրանց մերժելու (ներառյալ՝ պատճառները) վերաբերյալ[319]:	1 միավոր՝ առկա է ամփոփ վիճակագրություն՝ հողամաս տրամադրելու վերաբերյալ դիմումների և դրանց մերժելու վերաբերյալ; 0.5 միավոր՝ վիճակագրությունը ներկայացված է մասնակի; 0 միավոր՝ վիճակագրությունը բացակայում է:	W + I + T	0
10.13	Արդյոք համայնքային հողերի աճուրդով օտարելու մասին աճուրդին վերաբերվող	1 միավոր՝ համայնքային հողերի աճուրդով օտարելու մասին աճուրդին վերաբերվող տեղեկությունները հրապարակվում են կայքում՝ մեկ ամիս առաջ;	W	1

[317] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հողօգտագործման բնագավառում քաղաքապետը կազմակերպում է ապօրինի հողօգտագործման կասեցման և վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները: ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում:

[318] ՀՀ Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներ համարվող ավտոտնակների, կրպակների, տաղավարների և այլ համանման ինքնակամ շինությունների օրինականացման և տնօրինման դեպքերում դրանցով զբաղեցված և սպասարկման ու պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հողամասը տրամադրվում է սեփականության իրավունքով կամ վարձակալության:

[319] ՀՀ Հողային օրենսգրքի 57-րդ և 58-րդ հոդվածների համաձայն կարգավորվում է հողամաս տրամադրելու, դրանց մերժելու հիմքերն ու բողոքարկումը:

	տեղեկությունները հրապարակվում են պաշտոնական կայքում մեկ ամիս առաջ[320]:	0.5 միավոր՝ տեղեկությունները հրապարակվում են ժամկետի խախտմամբ; 0 միավոր՝ տեղեկությունները չեն հրապարակվում:		
10.14	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է համայնքի սեփականություն համարվող հողամասերի օտարման կամ օգտագործման ամենամյա և քառամյա ծրագրերը[321]:	1 միավոր՝ տեղեկատվությունը հրապարակված է ամբողջական; 0.5 միավոր՝ տեղեկատվությունը հրապարակված է մասնակի; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W	0.5
10.15	Արդյոք հրապարակվում է տարեկան ամփոփ վիճակագրություն՝ ինքնակամ կառույցների և ապօրինի շինությունների կասեցման և քանդման վերաբերյալ[322]:	1 միավոր՝ առկա է տարեկան ամփոփ վիճակագրություն ինքնակամ կառույցների և ապօրինի շինությունների կասեցման և քանդման վերաբերյալ; 0.5 միավոր՝ վիճակագրությունն առկա է մասնակի; 0 միավոր՝ վիճակագրությունը բացակայում է:	W + I + T	0

[320] ՀՀ Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով, զանգվածային լրատվության այլ միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև առկայության դեպքում համայնքի պաշտոնական կայքէջում հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, չափերը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:

[321] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 10-րդ մասով համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի ավագանու հաստատած ամենամյա և քառամյա ծրագրերին համապատասխան:

[322] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 5.1 և 6 կետերով քաղաքապետը՝ ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը; և կազմակերպում է ինքնակամ կառուցման կասեցման և ինքնակամ կառույցների վերացման ուղղությամբ վարչական շրջանի ղեկավարների կողմից կատարվող աշխատանքները:

10.16	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակվում են շենքերի, շինությունների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների[323] ճարտարապետահատակագծային առաջադրանքները (նախագծման թույլտվությունները) [324] և շինարարության թույլտվությունները[325], [326]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա են բոլոր տեղեկությունները; 0.5 միավոր՝ տեղեկությունները հրապարակված են մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունները հրապարակված չեն:	W+D	0.5
10.17	Արդյոք կարելի է կայքից մուտք գործել քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգ[327]:	1 միավոր՝ կայքից հնարավոր է մուտք գործել էլեկտրոնային համակարգ; 0 միավոր՝ նման հնարավորություն տրված չէ:	W	0.5
10.18	Արդյոք գույքի օգտագործման կամ օտարման դեպքում կայքում նշված է տրամադրման եղանակը, ժամկետները, նպատակը, վճարի չափը, կայքում նշված է օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է օտարված կամ օգտագործման հանձնված գույքի պահանջվող ամբողջական տվյալների ներառմամբ ցանկը; 0.5 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W	0.5

[323] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «զ» կետի համաձայն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները ներառված են քաղաքաշինական գործունեության օբյեկտների շարքում:

[324] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքում (նախագծման թույլտվության մեջ) նշվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված և օբյեկտի նախագծմանն առնչվող քաղաքաշինական, պատմության և մշակույթի հուշարձանների ու շրջակա միջավայրի պահպանության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, քաղաքացիական պաշտպանության, հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջները: Բացի այդ, նույն օրենքի 17-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար կառուցապատողին տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պայմաններ, պահանջներ և սահմանափակումներ:

[325] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն) տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Կառավարության սահմանած կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո:

[326] Այս փաստաթղթերի հրապարակումը նաև փոխկապակցված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի սահմանած հանրային իրազեկման պահանջի հետ:

[327] «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածներում նշված է թույլտվությունների առցանց համակարգի մասին: Ինչպես նաև տե՛ս ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 3-ը քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգի մասին:

	գինը, գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները[328]:			
10.19	Արդյոք պաշտոնական կայքում առկա է համայնքային գույքի[329] ցանկը:	1 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է; 0 միավոր՝ տեղեկությունը հրապարակված չէ:	W	0
10.20	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է հուշարձանների պահպանության և օգտագործման Երևան քաղաքի պետական ծրագիրը[330]:	1 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	0
10.21	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է Երևանի պատմամշակութային հուշարձանների ցանկը և հիմնավորման նախագիծը[331]:	1 միավոր՝ նախագիծը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ նախագիծը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	0

[328] Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ մասով ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, տես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասը:

[329] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն կայքում պետք է հրապարակվի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:

[330] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի «բ» կետի համաձայն կառավարությունը հաստատում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի հանրապետական և մարզային պետական ծրագրերը:

[331] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի «ա» կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները սահմանված կարգով կազմում են բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը:

10.22	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է Երևանում հուշարձանների պահպանության և օգտագործման տարեկան հաշվետվությունը[332]:	1 միավոր՝ հաշվետվությունը ամբողջական տեղեկատվությամբ պաշտոնական կայքում հրապարակված է; 0.5 միավոր՝ տեղեկատվությունը ներկայացված է մասնակի; 0 միավոր՝ հաշվետվությունը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W+D	0
10.23	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է Երևանում գտնվող պետական և տեղական նշանակության հուշարձանների ցանկը[333]:	1 միավոր՝ ցանկը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ ցանկը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	1
10.24	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են օգտագործման կամ վարձակալության հանձնված համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների ցանկը և համապատասխան պայմանագրերը[334]:	1 միավոր՝ ցանկն ու պայմանագրերը առկա են կայքում; 0.5 միավոր՝ առկա է ցանկը; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է:	W+D	0

[332] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում ունեն 9 իրավասություն, որոնցից «բ», «գ», «դ», «ը» կետերը *(չօգտագործվող հուշարձանների պահպանություն, ամրակայման, տեղական հուշարձանների նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, հանրապետական նշանակության հուշարձանների պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացում, հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարում)* պայմանական սահմանվել են որպես պահպանման, «զ», «թ» *(վարձակալության հանձնված համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքեր և շինություններ, հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի և օգտագործողների հետ կնքված պահպանության պայմանագրեր)* օգտագործման, իսկ «ե», «է» կասեցման իրավասություն:

[333] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի «գ», «դ» կետերի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները սահմանված կարգով կազմակերպում են տեղական նշանակության հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները և հանրապետական նշանակության հուշարձանների նկատմամբ իրականացնում են պետության կողմից պատվիրակված լիազորությունները:

[334] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին. ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի «զ» կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները լիազորված մարմնի համաձայնությամբ օգտագործման կամ վարձակալության կարող են հանձնել համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերը և շինությունները:

10.25	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանման գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահպանմանն ուղղված աշխատանքների մասին տեղեկություն[335]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկությունը հրապարակված է; 0 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկությունը հրապարակված չէ:	W	0
10.26	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է հասարակական տրանսպորտը հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագիրը[336]:	1 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	0
10.27	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքում մատչելիության առկա լուծումները[337]:	1 միավոր՝ լուծումները պաշտոնական կայքում հրապարակված են; 0 միավոր՝ լուծումները պաշտոնական կայքում հրապարակված չեն:	W+D	0
10.28	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված է քաղաքում գործող հասարակական տրանսպորտի[338] մասին տեղեկատվությունը[339]:	1 միավոր՝ բաց և մեքենայական ընթեռնելի ձևաչափով պաշտոնական կայքում հրապարակված է հանրային ծառայություններ մատուցող շարժական գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, դրանց ծագման,	W+D	0

[335] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները ապահովում են համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

[336] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն քաղաքապետը իրականացնում է հասարակական տրանսպորտը հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագիր:

[337] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 21 կետի համաձայն ներբեռնման հնարավորությամբ կայքում պետք է հրապարակվեն համայնքի ենթակառուցվածքների (տրանսպորտ, հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության առկա լուծումներ) մասին ամբողջական տեղեկությունները;

[338] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն քաղաքապետը կազմակերպում է Երևանում հասարակական տրանսպորտի աշխատանքը (բացառությամբ Երևանի մետրոպոլիտենի):

[339] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն քաղաքապետը իրականացնում է բազմաբնույթ կադաստրի (այդ թվում տրանսպորտի) վարումը: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը իր հերթին սահմանում է շարժական գույքի կադաստրի վարումը որպես շարժական գույքի՝ ըստ տեսակների հաշվառում և հաշվառման մատյանների վարում, ինչպես նաև գրանցման ենթակա շարժական գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման պետական գրանցում:

		փոփոխման, փոխանցման և դադարեցման մասին տեղեկատվությունը; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է հանրային ծառայություններ մատուցող շարժական գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման մասին տեղեկատվությունը; 0 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկատվությունը բացակայում է:		
10.29	Արդյոք պաշտոնական կայքում առկա է տեղեկություն համայնքի հասարակական տրանսպորտի[340] նոր ուղևորային ցանցի նախագծի ուսումնասիրության մասին:	1 միավոր՝ տեղեկությունը պաշտոնական կայքում հրապարակված է; 0.5 միավոր՝ ցանցի առկա իրավիճակի ուսումնասիրությունն առկա է; 0 միավոր՝ տեղեկությունը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	0.5
10.30	Արդյոք պաշտոնական կայքում առկա է հասարակական տրանսպորտից օգտվելու համար Երևանի քաղաքապետարանի սահմանած սակագների հաշվարկը և հիմնավորումը[341]:	1 միավոր՝ տեղեկությունը հրապարակված է պաշտոնական կայքում; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:	W+D	1

[340] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը լիազորում է համայնքի ղեկավարին կազմակերպել և կառավարել համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը:

[341] «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են սակագներ, անվճար, զեղչ գներով ուղևորափոխադրումներ:

10.31	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի քաղաքապետարանի սահմանած զեղչ գներով և անվճար հասարակական տրանսպորտից օգտվելու իրավունք ունեցող խմբերի ցանկը[342] և պայմանները:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված են պայմաններն ու ցանկը; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է ցանկը; 0 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկությունը բացակայում է:	W+D	0
Համայնքային՝ այդ թվում կոմունալ կազմակերպություններ				
11.1	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են Երևանի ենթակայության տակ գործող կազմակերպությունների[343] /բյուջետային հիմնարկ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություն/ մասին տեղեկություններ (այդ թվում նաև ամբողջական և մասնակի սեփականությամբ՝ հասցեն, հեռախոսը, էլ. փոստ և տեղեկություն նրանց կողմից մատուցվող ծառայությունների մասին):	1 միավոր՝ կայքը հրապարակել է համայնքի ենթակայության բոլոր կազմակերպությունների ցուցակը բաց ձևաչափով և համապատասխան կայքերին հղումներով; 0.5 միավոր՝ կայքում հրապարակված է կազմակերպությունների ցանկը; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W	0.5
11.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա են համայնքային ենթակայության կազմակերպությունների՝ մասնավորապես համայնքի ամբողջական և մասնակի սեփականությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսական	1 միավոր՝ 2018թ-ից ի վեր բոլոր հաշվետվություններն առկա են; 0.5 միավոր՝ 2018թ-ից ի վեր ոչ բոլոր հաշվետվություններն են առկա;	W	0

[342] «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են սակագներ, անվճար, զեղչ գներով ուղևորափոխադրումներ:

[343] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի համաձայն համայնքը համայնքի ավագանու որոշմամբ կարող է ստեղծել հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ: 11-րդ հոդվածի պահանջով էլ կայքում հրապարակում է համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում):

	հաշվետվությունները[344] (հաշվեկշիռ, շահույթ, վնաս և օգուտ) (եկամուտների հաշվետվություն), դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, միջոցների օգտագործման մասին հաշվետվությունները:	0 միավոր՝ հաշվետվություններն առկա չեն:		
11.3	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են Երևանի ՏԻՄ-երի համայնքի ենթակայության, ամբողջական և մասնակի սեփականությամբ առևտրային կազմակերպությունների ղեկավարների ինքնակենսագրականները[345]:	1 միավոր՝ կայքերում հրապարակված են համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների ղեկավարների ինքնակենսագրականները, ներառյալ՝ նախկին և/կամ ներկա կուսակցական պատկանելությունը, անդամությունը այլ կառույցներին և/կամ խորհրդի կազմերում, թե այդպիսիք կան); 0.5 միավոր՝ տեղեկատվությունը ներկայացված է մասամբ; 0 միավոր՝ տեղեկատվությունը բացակայում է	W	0
11.4	Արդյոք համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի մասին որոշումները և ավագանու կողմից առաջադրված[346] ներկայացուցիչների	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի ցանկը, ավագանու առաջադրած թեկնածուների դեպքում ներբեռնելի կենսագրականներով, և հրապարակված որոշումների ակտիվ հղումներով;	W+D+I	0

[344] «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության մասին 27-րդ հոդվածի համաձայն հաշվետու տարվա մասին տեղեկատվությունը պարտադիր է հրապարակման համար մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը:

[345] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին:

[346] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն ավագանին օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն դրանց կազմի թվի կեսից պակաս.

	տվյալները /անուն, ազգանուն, կենսագրություն/ հրապարակված են կայքում:	0.5 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է ոչ ամբողջական տեղեկություն; 0 միավոր՝ տեղեկությունը բացակայում է:		
11.5	Արդյոք պաշտոնական կայքում առկա է համայնքի մասնակցությամբ /ամբողջական և մասնակի սեփականությամբ/ խոշոր և միջին[347] առևտրային կազմակերպությունների արտաքին անկախ աուդիտների մասին տեղեկությունը[348]:	1 միավոր՝ 2021 կամ 2022 թվականներին առնվազն մեկ համայնքային մասնակցությամբ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը հրապարակված է կայքում; 0 միավոր՝ խոշոր և/կամ միջին կազմակերպություններն առկա են, բայց դրանց մասին հրապարակված տեղեկություն չկա:	W+I	0
Կրթություն				
12.1	Պաշտոնական կայքում կամ որևէ տեղեկություն համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունելության կանոնների վերաբերյալ[349]:	1 միավոր՝ տեղեկությունը հրապարակվում է; 0 միավոր՝ տեղեկությունը չի հրապարակվում:	W	1
12.2	Արդյոք երեխաների՝ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաշվառվելու համար[350]	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է հղում կամ տեղեկություն առցանց հերթագրման համար; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:	W + T	1

[347] «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն հաշվեկշիռը 10 մլրդ դրամից կամ հասույթը 20 մլրդ դրամից կամ աշխատողների միջին տարեկան թիվը 250-ից գերազանցում է:

[348] «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն աուդիտի ենթակա կազմակերպությունները և խմբերը (խմբի մայր կազմակերպությունը) պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո, և եզրակացության հետ: Առանց աուդիտորական եզրակացության, ինչպես նաև ոչ ամբողջական կազմով հրապարակված ֆինանսական հաշվետվությունները համարվում են չհրապարակված:

[349] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը ապահովում և հսկողություն է իրականացնում նախադպրոցական տարիքի երեխաների գործընթացի, ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկման նկատմամբ:

[350] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը վարում է նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը:

	գործում է առցանց հերթագրման հնարավորություն:			
12.3[351]	Արդյոք պաշտոնական կայքում առկա է համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարկանշավորված ցանկն[352] ու արտաքին գնահատման ենթարկված համայնքի ենթակայության նախադպրոցական հաստատությունների տարեկան համառոտ հաշվետվությունը[353]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասով 2022թ. վարկանիշային ցանկը և 2022թ.-ին արտաքին գնահատում անցած հաստատությունների մասին տարեկան համառոտ հաշվետվությունը; 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում հրապարակված է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասով 2022թ. վարկանիշային ցանկը կամ 2022թ.-ին արտաքին գնահատում անցած հաստատությունների մասին տարեկան համառոտ հաշվետվությունը; 0 միավոր՝ տեղեկությունը առկա չէ:	W+I	2023-ին չի գնահատվել
12.4	Արդյոք հնարավոր է առցանց հաշվառվել համայնքի ենթակայության ուսումնական հաստատություններում [354]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա են ուսումնական հաստատությունում հաշվառվելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը և դիմումի ձևը;	W+ T	1

[351] Այս պահին առկախված է, քանի որ նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի որոշմամբ, որի 2-րդ կետի համաձայն արտաքին գնահատումը կիրականցվի 2023-2024 ուսումնական տարվանից:

[352] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն կրթության պետական կառավարման լիազոր մարմինը արտաքին գնահատման արդյունքում հրապարակում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարկանիշային ցանկը: Սակայն, իր կայքէջում ամբողջական ցանկն է, իսկ համայնքային ծառայությունների հասանելիության տեսանկյունից նաև կարևոր է առանձնացված վերահրապարակել համայնքի ենթակայության հաստատությունների վարկանիշը:

[353] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ի թիվս այլոց արտաքին գնահատմանը մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը:

[354] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինը ապահովում է դպրոցական տարիքի երեխայի ընդգրկումը ուսումնական հաստատություն: 32-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն:

		0 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկություն չկա:		
Քաղաքացիական պաշտպանություն				
13.1	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների[355] ծրագիրը[356]:	1 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W+D	1
13.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանում սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև՝ բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված[357] քաղաքապետարանի կողմից ձեռնարկված միջոցների մասին տարեկան հաշվետվությունը:	1 միավոր՝ 2022 թ. հաշվետվությունը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ 2022 թ. հաշվետվությունը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W+D+I	0
13.3	Արդյոք պաշտոնական կայքում հրապարակված են տեղեկություններ բնակչության պատսպարման և անհատական	1 միավոր՝ հրապարակված է համառոտ հաշվետվություն, որտեղ ներառված են բնակչության պատսպարման և	W	0.5

[355] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով համայնքի պարտադիր խնդիրների շարքում ներառել է աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

[356] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով պետության կողմից պատվիրակում է համայնքի ղեկավարին կազմակերպել համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը:

[357] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետը սահմանում է, որ համայնքի ղեկավարը օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և այդ ուղղությամբ ձեռնարկում համապատասխան միջոցներ:

	պաշտպանության միջոցներով ապահովման իրականացված միջոցառումների մասին[358]:	անհատական միջոցներով ապահովման մասին վիճակագրական տվյալներ; 0.5 միավոր՝ հրապարակված է տեղեկություն, որից հնարավոր չէ եզրակացնել, պատսպարման և ապահովման ծածկույթը թվային արտահայտմամբ; 0 միավոր՝ տեղեկությունն առկա չէ:		
13.4	Արդյոք Երևանի քաղաքապետարանը ապահովել է բնակիչների պատսպարվելու մասին իրազեկվածությունը[359]:	1 միավոր՝ յուրաքանչյուր վարչական շրջանում քաղաքապետարանը, ըստ հասցեների ծանուցել է բնակիչներին անհատապես իրենց հասցեի դեպքում առկա ամրագրված ապաստարանի կամ մոտակա հարմարեցված տարածքի մասին; 0.5 միավոր՝ քաղաքապետարանը ծանուցել է բնակիչներին տարբեր միջոցներով, սակայն դրանք չեն երաշխավորում անհատապես ծանուցված լինելու փաստը; 0 միավոր՝ քաղաքապետարանը չի ծանուցել բնակիչներին:	I	1.5
Շրջակա միջավայրի պաշտպանություն				
14.1	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի քաղաքապետարանի իր համայնքում ընդերքօգտագործման նախատեսվող գործունեության նախնական գնահատման	0.2 միավոր՝ յուրաքանչյուր տարվա ցանկի պաշտոնական կայքում հրապարակված լինելու դեպքում:	W+I	0

[358] «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի «դ» կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը:

[359] «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի «դ» կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը:

	հայտի փորձաքննությանը նախնական համաձայնություն[360] տալու մասին վերջին հինգ տարիներին տրված գրությունների/որոշումների ցանկը:	0 միավոր՝ ցանկը պաշտոնական կայքում հրապարակված չէ:		
14.2	Արդյոք պաշտոնական կայքում առկա են վերջին հինգ տարվա հայտերի հետ փոխկապակցված ընդերքօգտագործման նախատեսվող գործունեության և դրա ազդեցության գնահատման հաշվետվությունները[361], դրանց հանրային քննարկումների արձանագրություններն ու տեսաձայնագրությունները[362]:	1 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է ցանկ՝ ակտիվ հղումներով ներբեռնվող հաշվետվությանը, արձանագրությանը և տեսաձայնագրությանը: 0,75 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է ցանկ՝ ակտիվ հղումներով ներբեռնվող հաշվետվությանը և տեսաձայնագրությանը: 0.5 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է ցանկ՝ ակտիվ հղումներով ներբեռնվող հաշվետվությանը և արձանագրությանը: 0.25 միավոր՝ պաշտոնական կայքում առկա է ցանկ՝ ակտիվ հղումներով ներբեռնվող արձանագրությանը: 0 միավոր՝ պաշտոնական կայքում տեղեկությունը բացակայում է:	W	0

[360] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը փորձաքննության ներկայացվող հայտի դեպում պահանջում է տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության առկայությունը:

[361] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ հանրային քննարկումները իրականացնում են ՏԻՄ-երը, նախատեսվող գործունեության և դրա ազդեցության գնահատման հաշվետվության մասին:

[362] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասը պահանջում է, որպեսզի հանրային քննարկումը տեսաձայնագրվի և կազմվի արձանագրություն:

14.3	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևան քաղաքի բնապահպանական ծրագիրը[363] և տարեկան միջոցառումների ցանկը[364]:	1 միավոր՝ ծրագիրը և տարեկան միջոցառումների ցանկը[365] պաշտոնական կայքում հրապարակված են; 0,75 միավոր՝ տարեկան միջոցառումների ցանկը պաշտոնական կայքում հրապարակված է; 0.5 միավոր՝ ծրագիրը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ ծրագիրը և տարեկան միջոցառումների ցանկը պաշտոնական կայքում հրապարակված չեն:	W	1
14.4	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի քաղաքապետի համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ սահմանված հսկողության[366] մասին տարեկան հաշվետվությունը:	1 միավոր՝ 2022 թվականի հաշվետվությունը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ 2022 թվականի հաշվետվությունը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	0

[363] «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինը հսկողություն է իրականացնում բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հետ համաձայնեցված և իր հաստատած բնապահպանական համայնքային ծրագրերին համապատասխան միջոցառումների կատարման նկատմամբ և ընթացքի մասին պարբերաբար պատշաճ ձևով տեղեկացնում բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:

[364] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է, որ քաղաքապետը բնապահպանության ոլորտի պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցնելուց հետո Երևանի ավագանուն է ներկայացնում յուրաքանչյուր տարվա համար Երևանի բնապահպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ցանկը և դրանց իրականացման ժամանակացույցը:

[365] Տարեկան միջոցառումների ցանկը կարող է ներառված լինել համայնքի տարեկան աշխատանքային պլանում (ՏԱՊ), տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82.1-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի տարեկան աշխատանքային պլանը մշակվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա՝ տվյալ տարվա ընթացքում համայնքի տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական և այլ ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներն առավել նպատակային և արդյունքահեն կազմակերպելու համար:

[366] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը լիազորում է քաղաքապետին օրենքով սահմանված կարգով հսկողություն իրականացնել համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ:

14.5	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի համայնքային ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման հետ կապված քաղաքապետին փոխանցված ոլորտի տեսչական մարմնի որոշումների[367] ներբեռնելի ցանկը:	1 միավոր՝ որոշումների ներբեռնելի ցանկը պաշտոնական կայքում հրապարակված է; 0.5 միավոր՝ որոշումների ցանկը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ ցանկը կայքում հրապարակված չէ:	W	0
14.6	Արդյոք պաշտոնական կայքում առկա է Երևանի բնապահպանական միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկությունը[368]:	1 միավոր՝ տեղեկությունը պաշտոնական կայքում հրապարակված է; 0 միավոր՝ տեղեկությունը պաշտոնական կայքում հրապարակված չէ:	W	1

[367] «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանումները սույն օրենքով սահմանված կարգով ստուգում են տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից բնապահպանական օրենսդրության նորմերի կատարումը և կայացված որոշումների մասին սույն օրենքի 27-րդ, 28-րդ և 29-րդ հոդվածներով սահմանված կարգով տեղյակ պահում համայնքի ղեկավարին:

[368] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 11-ին կետը սահմանում է, որ կայքում հրապարակվի բնապահպանական միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկատվությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԽՆԴՐԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

Նախապատմություն

- Մի փոքր պատմեք Ձեր մասին (տարիք, մասնագիտություն, ընտանեկան կարգավիճակ և այլն): Կպատմե՞ք ձեր ընտանիքի մասին: Երբվանից եք բնակվում այս թաղամասում: Ինչ է նշանակում այս թաղամասը Ձեզ համար:
- Ըստ Ձեզ, ինչով է արժեքավոր այս թաղամասը: Որոնք են թաղամասի արժեքավոր «տեղերը»: Ինչու:

33-րդ թաղամասի դեպքում. Ինչ է նշանակում 17 տարի ապրել գերակա շահից «կախվածության» մեջ:

- Ինչպես և ե՞րբ տեղեկացաք/իմացաք, որ Ձեր գույքը, հողը օտարվել է պետությանը կամ Ձեր թաղամասում նախատեսվում է կառուցել բազմահարկ շինություն:
- Ինչպիսին է եղել Ձեր առաջին արձագանքը նորությունը լսելիս: Ինչն եք պատկերացրել որպես շինարարության/տարածքային փոփոխությունների նպատակ առաջին հայացքից: Որոնք են եղել Ձեր ակնկալիքները: Ինչու:
- Ձեր պատկերացումներից որոնք են փոխվել այս տարիների ընթացքում, իսկ որոնք՝ ոչ: Ինչպես և ինչու:
- Ինչ է ըստ Ձեզ «գերակա շահը»: Ո՞ր դեպքում է այն արդարացված:
- Մինչև 2018 թվականը և հետո քաղաքապետարանի, կառավարության գործունեությունը փոխվե՞լ է: Որ դեպքում ինչպես էր: Ինչու՞:
- Դուք կամ Ձեր տնային տնտեսության որևէ անդամ ստացե՞լ եք/են նամակ, կամ պաշտոնական ծանուցում, հրավեր մասնակցելու հանրային քննարկմանը:
    - Եթե այո, ապա ե՞րբ, ինչպե՞ս, ու՞մ կողմից, ի՞նչ փաստաթղթեր են տրամադրվել:
    - Եթե ոչ՝ ինչպե՞ս և ու՞մից են իմացել/տեղեկացել: Եթե ոչ, ապա գիտե՞ք որևէ մեկի ձեր հարևաններից, ընկերներ/ծանոթներից, որոնք ստացել են ծանուցում կամ մասնակցել են հանրային քննարկմանը: Ինչ են պատմում նրանք այդ գործընթացի մասին:
- Դուք կամ Ձեր տնային տնտեսության որևէ անդամը ստորագրե՞լ եք որևէ փաստաթուղթ, ինչու՞, ինչպե՞ս, ու՞մ հետ եք խորհրդակցել: Ինչն էր առավել մտահոգիչ, երբ ստացաք ծանուցում կամ երբ տեղեկացաք: Ինչ քննարկում ունեցաք տանը, ու՞մ հետ: Նկարագրեք խնդրեմ իրավիճակը, ու՞մ եք հիշում, ո՞վ ինչ էր ասում, ինչպե՞ս էիք քննարկում:
- Որոնք են եղել Ձեր մտավախությունները կախված տարածքային փոփոխությունների հետ: Ինչու:

Գիտավանի դեպքում. Ինչ է նշանակում լինել «հուշարձան-թաղամասի» բնակիչ:

- Գիտավանում կա՞ն վերջին տասնամյակում կառուցապատված այլ շինություններ, որոնք ևս խնդրահարույց են: Ինչպիսին է եղել բնակիչների արձագանքն այն ժամանակ: Ինչու՞: Ո՞րն է այս դեպքի յուրահատկությունը: Ինչու՞ հենց այս դեպքն այսքան հանրայնացվեց, աղմուկ բարձրացրեց:
- Որքանո՞վ է ոտնահարված/սահմանափակված Ձեր տարածքի հասանելիության իրավունքը: Երբվանից: Ու՞մ կողմից:

- Ինչն է Ձեզ ամենաշատը անհանգստացնում նախագծի ու տարածական փոփոխությունների տեսանկյունից: Որոնք են ամենամտահոգիչ 2-3 խնդիրները, ինչու:
- Կարող եք նշել դրական փոփոխություններ, որոնք տեսնում եք նախագծի հաստատումից հետո, կամ կարծում եք, որ կտեսնեք:
- Ու՞մ եք դիմել, արդյոք դիմե՞լ եք իրավաբանական խորհրդատվության կամ դատարան: Նկարագրեք խնդրեմ ընթացքը: Ովքեր/ինչը աջակցեցին/նպաստեցին, ովքեր/ինչը խոչընդոտեց/ին: Ինչու՞ և ինչպես:
- Ձեր համայնքում կազմակերպվել են հանրային լսումներ / խորհրդատվություններ: Երբ են անցկացվել այդ լսումները / խորհրդատվությունները: Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը մասնակցել է կազմակերպված հանրային լսումներին / խորհրդատվություններին:
- Ինչ է քննարկվել այդ լսումների / խորհրդատվությունների ժամանակ (ծրագրի նպատակների, նշանակության և կարևորության, օտարման և տարաբնակեցման ծրագրի սկզբունքների և իրավունքների, փոխհատուցման հաշվարկի սկզբունքների, ծրագրին առնչվող փաստաթղթերի ստորագրման, բողոքների քննարկման և լուծման ընթացակարգերի ներկայացում):
- Արդյոք այս ընթացքում ստացել եք Ձեր տնային տնտեսությանը հուզող հարցերի շուրջ սպառիչ պատասխաններ և տեղեկատվություն: Հանրային լսումների / խորհրդատվությունների գործընթացը, ընդհանուր առմամբ, համարում եք օգտակար:
- Եթե հանրային լսումներ, քննարկումներ չեն եղել/կամ չեք մասնակցել դրանց, ապա ինչպես եք ծանոթացել նախագծի մանրամասներին: Ո՞ւմ կողմից, ինչ միջոցներով:
- Ունեցել եք հնարավորություն բարձրաձայնելու ձեր մտավախությունները նախագծի համար պատասխանատու մարմիններին:
- Ձեր խնդիրները ներկայացնելու և առաջարկություններ անելու ինչպիսի հնարավորություններից/այլընտրանքներից եք օգտվել:
- Եղել են դեպքեր, երբ կեղծ կամ սխալ տեղեկատվություն տրամադրված լինեն կամ մի բան ծանուցած լինեն, այլ բան հետագայում առաջարկած: Ո՞ր հարցով, ով/քեր: Ինչպես եք վարվել:

Քաղաքացիական պայքարի սկիզբը և հանգուցալուծումը

- Հիշում եք, թե ինչպես սկսվեց բողոքի ակցիան, երբ, որտեղ, որ դեպքերից հետո: Ովքեր էին նախաձեռնողները: Ինչպես էին նրանք, խոսում իրենց նպատակների և գործողությունների մասին: Արդյոք դուք կամ ձեր ծանոթները եղել եք բողոքի ակցիայի նախաձեռնողներից մեկը:
- Դուք երբ միացաք բողոքին: Ինչու՞: Ինչպես: Ո՞վ/ինչը նպաստեց/խանգարեց: Մանրամասն նկարագրեք խնդրեմ իրավիճակն ու գործողությունների հաջորդականությունը: Որքան ժամանակ է արդեն, որ մասնակցում եք բողոքին: Ինչն է խթանում/խթանել ձեր մասնակցությունը մինչ այդ ժամանակը:
- Ինչ որոշումներ կայացրեցիք: Ինչ ռազմավարություններ եք ունեցել: Ինչպես և ու՞մ/ինչի ազդեցությամբ եք փոխել: Մի փոքր մանրամասնեք խնդրեմ փուլերը և Ձեր ներգրավվածությունն ու պատկերացումները, սպասումները այդ փուլերում:

- Որո՞նք են եղել Ձեր ակնկալիքները ղեկավար մարմիններից, մասնավորապես քաղաքապետարանից, բողոքի ակցիայի ընթացքում: Որո՞նք են արդարացել, որոնք՝ ոչ: Ինչո՞ւ:
- Որքանո՞վ են համախմբված բնակիչները: Ովքե՞ր են հիմնական ակտիվ և մտահոգված / պասիվ և անտարբեր խմբերը (սեռ, տարիք, զբաղվածություն և այլն): Ինչու՞: Ի՞նչ խմբերի կդասավորեք բնակիչներին (ակտիվ-պասիվ, անտարբեր-մտահոգ և այլն): Ինչպե՞ս եք հաղորդակցվում: Որքանո՞վ է արդյունավետ:
- Բողոքի ակցիայի արդյունքներից, որոնք եք համարում ամենահաջողները: Ինչո՞ւ, ինչպե՞ս են այդ գործողությունները հասել հաջող արդյունքների: Իսկ որոնք են ձախողված փորձերը: Ինչո՞ւ:
- Շարունակո՞ւմ եք մասնակցել բողոքի ակցիաներին նաև հիմա: Եթե այո, ինչո՞ւ: Եթե ոչ, ինչո՞ւ:
- Ու՞մ կարելի է վստահել, ու՞մ ոչ: Ինչու՞: Ո՞վ պետք է լինի միջնորդ, որպեսզի գործընթացն առավել թափանցիկ լինի:
- Ի՞նչն է առավել բարկացնում այս գործընթացում (սուտը, անարդարությունը և այլն): Ինչու՞:
- Երբվանի՞ց մարդիկ/որոշ խմբեր համակերպվեցին օտարման/կառուցապատման գաղափարին

Այլ թաղամաս տեղափոխվածների դեպքում.

- Ե՞րբ և ինչո՞ւ համաձայնվեցիք/որոշեցիք տեղափոխվել թաղամասից:
- Որո՞նք էին հիմնական պատճառները, ովքե՞ր էին առաջարկող կողմերը, որոշում կայացնող կողմերը:
- Ինչպե՞ս եք Ձեզ զգում այժմ այս թաղամասում: Որքանո՞վ է արդարացվել Ձեր որոշումը: Ինչո՞ւ:

Գիտավանի նոր շենքում բնակարան ստացածներին (եթե այդպիսիք կան)

- Ե՞րբ, ո՞ր դեպքից հետո է Ձեզ առաջարկվել բնակարան նորակառույց շենքում:
- Ո՞րոնք են եղել առաջարկի պայմանները և Ձեր համաձայնության դրդապատճառները:
- Ըստ Ձեզ, ինչո՞ւ է հենց ձեզ արվել այս առաջարկը:
- Ինչպե՞ս է փոխվել Ձեր առօրյան շինարարական աշխատանքների և նախագծի մեկնարկից հետո:

    - հարաբերություններ հարևանների հետ,
    - հիմնական թեմաները, որոնք քննարկվում են առօրյայում,
    - զբաղվածությունը:
- Ինչպե՞ս եք տեսնում հարցի կարգավորումը, եթե դիտարկենք, որ շինարարության դադարեցումը հնարավոր չէ: Ո՞րը կլինեն հնարավոր կոմպրոմիսը երկու կողմերի համար:
- Ինչպե՞ս է արդեն իսկ փոխվել տարածքը, նախագծի ընդունումից և/կամ շինարարական աշխատանքների մեկնարկից հետո:

- Ովքե՞ր են շահող և տուժող կողմերը: Ինչպե՞ս և ո՞ր բնակիչներն են շահում այս նախագծից: Ինչո՞ւ:

- Արդյոք ստացել եք որևէ առաջարկություն բողոքը դադարեցնելու համար: Ինչ առաջարկություններ են դրանք եղել, ում կողմից: Ինչպիսին է եղել Ձեր արձագանքը:

Քաղաքացիական իրավունքների իրացում և տեղեկացվածություն

- Ինչ եք կարծում՝ առհասարակ Երևանի բնակիչներն ունեն իրավունքներ սեփական բնակավայրի, թաղամասի, բակի նկատմամբ: Որքանով է արդար այդ առումով մեր հասարակությունը: Ինչն է հատկապես խոչընդոտում այդ իրավունքի իրացմանը: Ու՞մ/որ խմբերի ընտրության իրավունքներն են առավել սահմանափակված: Ո՞վ/ինչպե՞ս պետք է/կարող է լուծել այդ խնդիրը: Ինչ կարող են անել հասարակ քաղաքացիները: Իսկ պետությու՞նը:
- Նկարագրեք խնդրեմ Ձեր բնակավայրի օրինակով անարդարության, կոռուպցիայի, պետական մարմինների ոչ ազնիվ, արդար, թափանցիկ գործունեության ամենատիպիկ դեպքերը: Ովքե՞ր, ինչո՞ւ, ինչպե՞ս:
- Ինչպե՞ս եք տեղեկանում Ձեզ վերաբերող որոշումներին՝ քաղաքի վերաբերյալ (Երևանի քաղաքապետարանի կայք, ավագանու հայտարարություններ և այլն):

Ամփոփում

- Ինչ խորհուրդ կտայիք այլ թաղամասերի բնակիչներին, որոնք կհայտնվեն այս իրավիճակում:
- Ինչ խորհուրդ կտայիք կառավարությանը, ավագանուն, քաղաքապետարանին ու ԱԺ-ին:
- Կա՞ն այլ հարցեր, որոնց մասին մենք չխոսեցինք, սակայն կցանկանայիք կիսել: Եթե ոչ, ապա շնորհակալություն եմ հայտնում մասնակցության համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎՈՂ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը

Երևան քաղաքի Ֆիզիկայի գիտավանի և 33-րդ թաղամասի (որպես կառուցապատման միջոցով փոփոխվող կենսամիջավայրերի) բնակիչների կենսափորձի և պրակտիկ գիտելիքի ուսումնասիրությամբ դուրս բերել Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկությանը և հաշվետվողականությանը առնչվող խնդիրները՝ փորձելով կառուցել ամբողջական պատկեր, թե ինչպես կարող էին օգտագործվել այդ տարածքներում կենսամիջավայրի փոփոխությունները ու դրա համար ինչպես պետք է գործեր՝ մասնավորապես թափանցիկության տեսանկյունից քաղաքապետարանը:

Ընտրված երկու թաղամասերն առանձնանում են իրենց յուրահատուկ պատմական անցյալով, ներառում են ինչպես հանրային այնպես էլ սեփականություն հանդիսացող կառույցներ և տեղեր՝ զարգացման ուրույն հեռանկարով:

Հետազոտական հարցերը

1. Ինչպե՞ս և ի՞նչ ձևաչափով/մանրամասնությամբ են բնակիչներն իրազեկվել ծրագրված փոփոխությունների մասին:
2. Ինչպե՞ս և որքանո՞վ է
   - արտահայտված թափանցիկության և հաշվետվողականության բաղադրիչը բնակիչների և քաղաքապետարանի փոխհարաբերություններում:
   - իրացվում բնակիչների հասանելիության և մասնակցության իրավունքը՝ կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում:
3. Ինչպե՞ս է ընկալվում և ներկայացվում քաղաքապետարանի գործունեությունը բնակիչների կողմից:
4. Որո՞նք են/էին բնակիչների ակնկալիքները և պահանջները քաղաքապետարանից (նաև պետական իշխանության ներկայացուցիչներից) կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում:

Մեթոդաբանությունը

Բնակիչների կենսափորձը ամբողջացնող պատումների վերհանման նպատակով կիրառվել է որակական հետազոտության մեջ օգտագործվող խնդրակենտրոն հարցազրույցի մեթոդը (ԽԿՀ)՝ հավաքագրելով ինչպես փաստական տեղեկատվություն, այնպես էլ՝ բնակիչների սուբյեկտիվ ընկալումները քաղաքապետարանի գործունեության և կառուցապատման միջոցով փոփոխվող կենսամիջավայրերի վերաբերյալ:

Իրականացվել է 14 ԽԿՀ. 7-ը հարցազրույց Ֆիզիկայի գիտավանի, և 7-ը՝ 33-րդ թաղամասի բնակիչների շրջանում: Ռեսպոնդենտների ընտրության համար կիրառվել են ձնակույտի և շղթայական նմուշառման տեխնիկաները: Հարցման մասնակիցների կարգավիճակն ու սոցիալ-ժողովրդագրական տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1[369].

Հ/Հ	Հարցվողի սեռը	Հարցվողի տարիքը	Հարցվողի կարգավիճակը
Ֆիզիկայի գիտավան			
1	իգական	33	ակտիվ բնակիչ
2	արական	44	նախաձեռնող խմբի անդամ
3	արական	36	մտահոգ բնակիչ
4	արական	80-85	ակտիվ բնակիչ
5	իգական	75-80	մտահոգ բնակիչ
6	արական	50	նախաձեռնող խմբի անդամ
7	իգական	40-45	ակտիվ բնակիչ
33-րդ թաղամաս			
1	արական	45-50	նախաձեռնող խմբի անդամ
2	իգական	55	ակտիվ բնակիչ
3	իգական	86	մտահոգ բնակիչ
4	արական	32	նախաձեռնող խմբի անդամ
5	իգական	55-60	ակտիվ բնակիչ
6	արական	50-55	ակտիվ բնակիչ
7	իգական	65	մտահոգ բնակիչ

Էթիկական նկատառումները

Տեղեկացված համաձայնություն. Նախքան հարցազրույցը սկսելը մասնակիցներին ներկայացվել են հետազոտության նպատակն ու ընթացակարգերը, հնարավոր ռիսկերն ու մասնակիցների շահը: Հարցազրույցին մասնակցելը լիովին կամավոր էր, մասնակիցներն իրավունք ունեին ցանկացած պահի հրաժարվել կամ դադարեցնել հարցազրույցը: Մասնակիցները ստորագրել են տեղեկացված համաձայնության թերթիկ:

Գաղտնիություն. Մասնակիցների ինքնությունը և անձնական տվյալները գաղտնիացված են: Հաշվետվության մեջ տվյալները ներկայացնելիս օգտագործվում են ծածկագրեր (տեքստում ծածկագրերը նշված են աղյուսակ 1-ի հաջորդականությամբ՝ 33/1-7 և գիտ/1-7):

Զգայունություն. Քննարկումները հաճախ եղել են զգայուն և զգացմունքային թեմաների շուրջ՝ հարցազրույցների ընթացքում փորձ է արվել ստեղծել անվտանգ և աջակցող միջավայր՝ թույլ տալով մասնակիցներին անկաշկանդ կերպով կիսվել իրենց փորձով:

[369] Տեքստում հարցվողները ներկայացված են այս համարակալմամբ:

Հիմնական բացահայտումները

Հրապարակայնություն և բնակիչների ներգրավում

1. Ինչպե՞ս և ի՞նչ ձևաչափով/մանրամասնությամբ են բնակիչներն իրազեկվել ծրագրված փոփոխությունների մասին:

Երևանի 33-րդ թաղամասի և Ֆիզիկայի գիտավանի կենսամիջավայրերի փոփոխությունների իրականացման գործընթացներում լավագույնս արտահայտված են բաց կառավարման և իրավական պետության հիմնարար սկզբունքների խախտումները, երբ տեղական իշխանությունները բնակիչների հետ իրենց հարաբերություններում չեն ցուցաբերում նորարարական մոտեցումներ, իսկ բնակիչների հետ իրավահարաբերությունները կարգավորող օրենքները հստակ, կանխատեսելի և մատչելի չեն:

Այս խնդիրները հատկապես դիտարկելի են կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման վերաբերյալ բնակիչներին իրազեկման, հանրային լսումների կազմակերպման, բնակիչների ձայնի հասանելիության, փոխհատուցման պայմանագրերի բովանդակության և հաղորդակցման համատեքստում:

Հարցազրույցները ցույց են տալիս, որ կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման վերաբերյալ ծանուցումները հիմնականում ձևական բնույթ են կրում. դրանք մեծ մասամբ ֆորմալ ընթացակարգեր են, որոնք ապահովագրում են քաղաքապետարանին և/կամ կառուցապատողին՝ գործունեության հետագա փուլերում:

Բնակիչները հատկապես «զավեշտալի» են համարում ծանուցման մեթոդը (թերթերում հրապարակումներ ...), որը հաճախ կիրառում է քաղաքապետարանը: Ընդ որում, ըստ բնակիչների, պատճառը ոչ թե քաղաքապետարանի հնարավորությունների և/կամ կարողությունների պակասն է, այլ, ըստ բնակիչների, տեղեկատվությունը թաքցնելու, բնակիչներին ժամանակին չիրազեկելու միտումն է.

> «Իրազեկումն իրականացվել է նախնադարյան ձևերով: Ես ինչի՞ պետք է «Առավոտ» շաբաթաթերթ առնեմ, որ տեսնեմ, կամ ամեն օր մտնու՞մ եմ Ձեր կայքէջ, հա՞, կամ ասենք ինչ-որ էդ համայնքների կայք էջ, որ տեսնեմ էնտեղ ինչ ա հայտարարված»: գիտ/1

Ֆիզիկայի գիտավանի դեպքը

Ֆիզիկայի գիտավանում նոր շինության կառուցապատման վերաբերյալ ըստ կարգի ծանուցման պահանջը նյութականացնող փաստաթուղթը եղել է *«աննկատ տախտակը»*: Բոլոր բնակիչների պատումներում կա հետևյալ նկարագրությունը:

> «Անմիջապես հարևանությամբ, ամենամոտիկ երկու շենք կա, էդ շենքերից մեկը: Էդտեղ մի հատ բան կար, էդ տարածքին էր կից, մի հատ սենց վաղուց սարքված փոքրիկ կրպակային տարածք կար, որտեղ երբեմն միրգ էին ծախում բան-ման, բայց դե մեծ մասամբ փակ էր: Բայց երբ մենք էդ մասով անցնում, զբոսնում էինք և այլն, մի անգամ տեսանք, բայց հիշում եմ, որ ցուրտ եղանակ էր էլի, մի անգամ տեսանք, որ ինչ-որ սենց մի հատ բան ա փակցված Ա3 ֆորմատի ինչ-որ ծանուցող բան և վրան գրված ա, որ այստեղ

> պետք ա կառուցվի տասներկու հարկանի շենք և բնակիչներով, պարզ ա սկսեցինք քննարկել և այլն և քաղաքապետարանին նամակ ուղարկեցինք, որ էս ինչ ա կատարվում, որ մենք շատ պատահաբար քայլելուց տեսել ենք, խնդրում ենք մեզ տեղեկացնել էս տարածքի հետ կապված որևէ զարգացման մասին»: 33/2
>
> «Երբ որ եկան մեր թաղամաս, որտեղ բաց տարածք էր, կային ծառեր ու կար մի փոքրիկ բանջարեղենի վաճառքի համար նախատեսված սեղանիկ էր, էս աթոռից մի փոքր բարձր, ու ուներ ծածկ: Էդ ծածկի վրա փակցրեցին կարծեմ Ա4 թուղթ, որ այստեղ կառուցվելու է նորակառույց շենք: Էդտեղից իմացանք: Մի փոքր խառնվեցինք իրար, բայց դա երևի 1 տարի մնաց»: 33/7

33-րդ թաղամասի դեպքը

Ի տարբերություն ֆիզիկայի գիտավանի դեպքի, 33-րդ թաղամասի դեպքն առավել երկարատև և բարդ է, քանի որ գործընթացը կարգավորվում է ոչ միայն կառուցապատման ընթացակարգերով, այլ նաև օրենքներով, ակտերով և/կամ որոշումներով:

Այս թաղամասի բնակիչները, որոնք ունեն քաղաքապետարանի և/կամ կառուցապատողների հետ փոխհարաբերման առնվազն 17 տարվա փորձառություն, թերահավատորեն են վերաբերվում ծանուցումներին: Ծանուցումների վերաբերյալ առաջին հիշատակումները վերաբերում են 2006 թվականին, չնայած բնակիչներից մի քանիսն ունեն ապացույցներ, որ իրենց սեփականության և/կամ տարածքի հասանելիության իրավունքը սահմանափակված է եղել առավել վաղ՝ 2000-ականների սկզբին: Բնակիչներից մեկը ներկայացրել է հետևյալ պատմությունը՝

> «...նախ 17 տարի չի [խոսքը գերակա շահ ճանաչելու գործընթացի մասին է], ես Ձեզ ասեմ, կոնկրետ իմ դեպքի վրա: ... 2001 թվականին, երբ մայրս մահացավ, ես 2002-ին պետք ա գնայի ժառանգությունը բացեի, որովհետև հայրս էլ էր արդեն մահացել, տունը չէր կարա մնար տենց: Ես գնացի նոտար: Նոտարը խնդիր չուներ, արեց, հետո պետք ա տանես կադաստր ... տարա կադաստր, կադաստրը ինձ մերժեց: Ես մի հատ հետաքրքիր ֆարմուլիրովկա, ես էն ժամանակ ջահել էի, շատ տենց բաներ չէի հասկանում, էդ 2002 թիվն էր, ասեց, որ ... գրել էր. «Ձեր տան տակի հողի կարգավիճակը հայտնի չի»: Դրա համար ինձ չեն տալիս ժառանգության նոր վկայականը ... սեփականության նոր վկայականը ... ինչ ա դա նշանակում՝ չեմ հասկանում: Տարա իրանց պետի տեղակալի մոտ: Սենց նայեց, հիմա որ հիշում եմ, ծիծաղս գալիս ա, ասեց, - «Դուք անօրինական կառույց ունեք ընդտեղ, ... դրա համար էլ չեն ...», ... ասում եմ,- «անօրինական ոչ մի բան չունենք, ինչ ծնվել եմ, տեսել եմ, էդ ա, ավել բան չկա»: Գնացի փաստաբանի մոտ: Ասեց,- «տան տակի հողի կարգավիճակը խնդիր ա»: Տան տակի հողի կարգավիճակը որն ա ... եթե տունը սեփական ա, իմ տրամաբանությամբ, ուրեմն տակի հողն էլ պետք է իմը լինի, չէ՞: Հո օդում չի էդ տունը: ... Չէ, պարզվում ա տենց չի: Պարզվում ա պարոն Ռ. Քոչարյանը ինչ-որ սահմանափակումներ ա դրել կոնկրետ մեր տարածքի վրա: Ու հենց իշխանության ա էկել, տեսել ա լավ չալաղաջ կտոր ա, ստեղ կարելի ա շենքեր սարքել, փող աշխատել, վերխեր վերցնել: Մի խոսքով, ես ընգա մի հատ սենց վալակիտայի մեջ: Մի կերպ, մի կերպ էդ վկայականը ստացա, չասեմ ոնց ստացա, ինչ պատմություններ էկավ գլխիս»: 33/5

Այս պատումը կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացի տիպիկ նկարագիր է: Եթե թափանցիկության խնդիրը գոնե ձևականորեն լուծվում է բուն գործընթացում՝ ծանուցման թերթիկների տարածմամբ և/կամ թերթ/երում հայտարարությունների հրապարակմամբ, ապա ազդեցության անմիջական կրող խմբերի իրազեկվածության իրավունքը սահմանափակված է, նրանք տեղեկանում են խնդրին արդեն իսկ փոփոխության անմիջական փուլում: Այս պարագայում լիովին բացակայում է մասնակցայնության սկզբունքը, երբ բնակիչներն ու ազդեցության ենթակա կողմերը դուրս են մնում առավել վաղ ընթացող որոշումների կայացման գործընթացից:

17 տարվա ընթացքում 33-րդ թաղամասի բնակիչներն այնքան ծանուցումներ են ստացել, որտեղ հիշատակվում են տարբեր որոշումներ, օրենքներ և սկզբունքներ, որ հերթական ծանուցումը դիտարկվում է ոչ այնքան՝ որպես բովանդակային տեղեկատվություն, որքան՝ ազդակ «զգուշանալու», «անհանգստանալու» և/կամ «հակաքայլի նախապատրաստվելու» համար:

17-ամյա գործընթացի և դրա շրջանակներում ծանուցումների շարքը, որը խառնաշփոթ է առաջացնում բնակիչների մոտ՝ ողջ գործընթացը դիտարկելով որպես իրադարձությունների ֆրագմենտար շարք, ուր դրսևորելի են ոչ թափանցիկ պրակտիկաներ, լավագույնս արտահայտված է 33-րդ թաղամասի բնակիչների պատումներում: Օրինակ՝

> «... 2007-08 թվականներին, որ սեփականաշնորհեցին արդեն էս տները, առանձին սեփականատերեր դառան, առանձին տանը տրվեց առանձին դռոբ, հասցեները և չգիտես ինչու բակի տարածքը ... դարձնում են համայնքային այսպես ասած, մենք դրանից տեղյակ չենք լինում: 2013 թվականին, քմ-ը 39,000 դրամով վաճառում են «Սիթի սենթր դիվելոփմենթին»: Դրա մասին իմացանք 2021 թվականին:
>
> ... Ինչքանով ա ընդգրկված քաղաքապետարանը, քաղաքապետարանի ԾԻԳԸ, չգիտեմ էտ որ բաժինն ա, քաղաքաշինության: ԾԻԳ-ը գալիս ա 2008 թվականին, իբր ԾԻԳ-ը, բայց իրականում գալիս են էտ նույն «Սիթի սենթրի» աշխատակիցները, իբր էս սեփականաշնորհման ժամանակ էլ պետք է տվյալներ տան դիմումի հետ, նկարներ պետք ա տան: Նկարում են մի քանի նկար: Հետո բերում են արձանագրություն, որ էն ինչ նկարել են, նու էն ինչ տեսել են: Էտ արձանագրությունը 2008-ին մենք ստորագրում ենք, որովհետև Ի՞նչ կա, էտ ա, բայց չգիտեինք, թե ինչի համար ա էտ արձանագրությունը: Դուրս եկավ, որ դա գնահատման համար, բայց մեզ լրիվ ուրիշ բան էին ներկայացրել:
>
> ... 2009-ին, երբ որ նորից գերակա շահը երկարացնելու համար թազա որոշում դուրս եկավ, բերեցին էս մյուսը: 2009-ին բերում են նույն արձանագրությունը, լրիվ նույնն ա, նույն նկարներն ա, որովհետև 2008-ից հետո ոչ մեկը էստեղ չի եկել:
>
> ... իրանք շտապում էին ու ամեն ինչ անում էին՝ մենք կբերենք, մենք կհասցնենք, պետք չի Դուք գնաք, հասնեք քաղաքապետարան: Այ էս ձևի: Հիմա ցույց տամ մյուսը, որ գնահատվել ա՝ էս վերջինը: Նույն արձանագրությունը 2018 թվականին: Իմիջիայլոց, 2018-ին դուրս ա եկել նոր որոշում, որովհետև էտ 2007-ինը օրենքով իրանք պետք ա 7 տարվա մեջ բոլոր գործարքները արած լինեին: 2015 թվին նորից են որոշում հանում: 2015 թվականի որոշմամբ ուզում են երկարացնեն, բայց երկարացնեն էն որոշումը, որը վերջացել ա ու ուժը կորցրած ա: Օրենքով բան չի լինում ու դրա համար 2015-ինը չի ստացվում իրանց մոտ

գերակա շահի որոշումը: 2018-ին թազա են հանում, արդեն թազա որոշում, թազա պայմանները: Նայեք, նամակը ուղարկել են, նշած ա 2007 թվականի հունիսի 25 թիվ 108 որոշման համաձայն, այսինքն՝ սա մեկ ա, նույն որոշումն ա 2007-ի, ուղղակի իրանք շարունակել են էլի չգիտեմ ոնց, ինչ ճանապարհներով ստացել են գերակա շահ թազա որոշում:

... հեղափոխությունից հետո: Նույն արձանագրությունն ա լրիվ ամեն ինչը, էլի ստորագրություն չկա, էլի ակտը կցած ա, որ մենք հրաժարվել ենք ստորագրենք, բայց մենք էլի իրանց երեսը չենք տեսել:

... Բացի դա, սա համ էլ օրենքի խախտում ա, որովհետև ըստ օրենքի, պետք ա էս կազմակերպությունը, էստեղ արդեն «Զեյթուն քոնսթրաքշնն» ա, պետք ա իրանց վճարած լինի, որ իրանք անցկացնեն էս տեղազննումները, կազմեն էս արձանագրությունը, այսինքն Զեյթուն քոնսթրաքշնից փողը վերցրել են, բայց չեն եկել, կերել են այսպես ասած: Ու կազմել են, վերցրել են հին բոլոր տվյալները 2007, 2008 թվականների, կազմել են ակտը, որ մենք հրաժարվել ենք: Կարաք նայեք, նկարներով, մենակ ասենք էս պատը նայեք, սա գրադարան ա ...

... 2023 թվականին էս նույն արձանագրությունը, որ կազմվել ա նույն ճանապարհով 2008-ին, տալիս են գնահատողին արդեն «Վի Էմ Ար Փի» ֆիրման, պրիչոմ դա պետք ա աներ, քանի որ արձանագրությունը պետք ա կազմեր ԾԻԳ-ը, բայց ԾԻԳ-ը չի արել: Մի քանի անգամ գումար ա վերցրել, բայց մի անգամ էտ Սիթի սենթրի աշխատողների նկարները, որ արել են 2008-ին, էտ նույնը 2009-ին և այլն, մի քանի անգամ էտ այսպես ասած գումար են ստացել, որ գան էստեղ տեղազննում անեն, արձանագրություն կազմեն: Էտ ոչ մեկի բանը չեն արել: Էտ ես ցույց տվեցի փաստաթղթերով: Հիմա 2023 թվականն էլ էտ նույն արձանագրությունը, որ պետք ա, եթե գնահատող գար, ԾԻԳ-ը գար, բայց պատվիրատուն ասենք կոնկրետ մեր տան դեպքում «Զեյթուն քոնսթրաքշնն» ա: Զեյթուն քոնսթրաքշնն ա տանում, էս նույն արձանագրությունը տալիս գնահատողին, չգիտեմ ինչ ձևով, ինչ պայմաններով, ինչ ձև գնահատեն, ոնց գնահատեն, բայց ըստ մեր տվյալների, մեր ժողովրդի էն սեփականատերերի տները միջինը կազմում ա 1,700$»: 33/6

Սա տիպիկ պատմություն է, որն ունեն 33-րդ թաղամասում ապրել շարունակող բնակիչները: Այստեղ էականը փաստերն ու իրավական հիմքերը չեն, այլ բնակիչների փորձառությունը, որը ձևավորում է պատկերացում, թե ընթացիկ գործընթացները *ոչ հաշվետու և ոչ թափանցիկ են*՝ ուղղված բնակչին խաբելուն:

Գործընթացի ոչ թափանցիկության կարևոր ցուցիչներից են նաև՝

- ... ծանուցման փուլում ոչ ամբողջական պայմանագրերի ներկայացումը:

«Չէ, պայմանագրի մեջ գինը նշված չէր դեռ, պետք ա ավելացնեին, բայց պայմանագրի արժեքը, այսինքն՝ եթե իրանք չկատարեին, տուգանվելու էին ընդամենը 3 մլնով: Ես էլ ասեցի ինչի՞ եք 3 մլն դրամ գրել, գրեիք 3 մլն դոլար: Ասեցին՝ բա էս ձևական ա, էսի էս ա, սենց բնույթ ա կրում, ասեցի՝ չէ, հաջողություն ձեզ: Մենակ ասեցի, կնքել եք պայմանագիր,

տարածքում կսարքեք շենքը, բանալիները ձեռքներդ կգաք, նոր ես պայմանագիր կկնքեմ ձեր հետ»: 33/6

- … ծանուցման փուլում կառուցապատող և բնակիչ առերեսումը:

Համաձայն բնակիչների պատմությունների երկար ժամանակ քաղաքապետարանը «չեզոք» դիրք է գրավել՝ փոխհարաբերությունների անմիջական կողմը եղել է կառուցապատման թույլտվություն ստացած «Սիթի սենթր դեվելոփմենթ» ընկերությունը:

> «… Ինչքանով ա ընդգրկված քաղաքապետարանը, քաղաքապետարանի ԾԻԳԸ, չգիտեմ էտ որ բաժինն ա, քաղաքաշինության: ԾԻԳ-ը գալիս ա 2008 թվականին, իբր ԾԻԳ-ը, բայց իրականում գալիս են էտ նույն «Սիթի սենթրի» աշխատակիցները …»: 33/6

> «Չի եղել քաղաքապետարանը: Քաղաքապետարանը նոր ա սկսել որպես կողմ շփվել, ես Ձեզ ասեցի, երբ որ էդ Սիթի Սենթրը, քաղաքապետարանը միշտ էլ կողմ ա եղել, բայց չի շփվել, ինքը նեյտրալ իրա չեզոք դերն ա տարել, բայց երբ պետք ա եղել՝ մենք տեղյակ ենք, մենք ամեն ինչից բան ենք անում: Հիմա ուղղակի էդ Սիթի Սենթր, Գլենդել Հիլս դրանց վրա շատ ա բան եղել, երևի չեն կարում պահեն, դրա համար»: 33/4

Բնակիչ-կառուցապատում առերեսման արդյունքում ձևավորվել են ոչ ֆորմալ և ոչ վերահսկելի պրակտիկաներ, երբ ընկերության ներկայացուցիչները հաճախ ծավալել են գործունեություն, որն, ըստ բնակիչների, բխում է քաղաքապետարանի և/կամ լիցենզավորված ընկերությունների գործառույթներից:

Հաճախակի են նկարագրությունները, երբ կառուցապատողների ներկայացուցիչների տնայցեր են ունեցել՝ փորձելով բնակիչներին «ըստ կարիքների» կամ «ըստ խոցելիության աստիճանի» առաջարկել տարբերակներ գույքը վաճառելու համար: Բոլոր պատմությունները «երկակի ստանդարտների» մասին են, երբ իրավիճակային առաջարկներով գնվել է բնակիչների գույքը: Ըստ բնակիչների, հիմնականում կիրառվել է «Ու՞մ, ինչքանո՞վ կհամոզեն» սկզբունքը:

> «Մերը չի գնահատել ծախսային մեթոդով, մերը համեմատականով ա արվել, դրա համար չի հանվել: Տարբեր մեթոդներով ա սաղինը արվել, բայց երեք մեթոդով էլ բոլորինը պետք ա արվեր: Մեկինը սենց ա արել, մյուսինը նենց ա արել: Էս կողքի տանը տենց են արել, 72% հանել են: Որ գար, էտ հարցերը կտայինք իրան, պռոստը չեկավ»: 33/6

Բնակիչները նշում են, որ ըստ կարգի, հստակ ծանուցումներ ուղարկվել են միայն վերջին տարիներին (2018 թվականից հետ):

> «Էս վերջերս նոր սկսել են ծանուցումները ուղարկել, մինչև էդ էն ժամանակ 2008, 2014, 2016, 2018 չի եղել տենց բաներ, էս վերջերս ա, որ ԾԻԳ-ը ուղարկում ա քեզ նամակ, մեջը նշած արդեն գնահատած ինչքան ա քո տունը ու տալիս ա քեզ տասօրյա ժամկետ ասում ա պատասխանի սրան, չէ՞, երեք ամիս հետո մտցնում ա դատարան»: 33/4

Ծանուցումներին զուգահեռ կարգով նախատեսված մյուս ընթացակարգը բնակիչների և շահատեր/ազդակիր խմբերի համար հանրային լսումների կազմակերպումն է: Բնակիչների

պատմությունները հանրային լսումների վերաբերյալ շատ սահմանափակ են. պատճառը մի կողմից բնակիչներին չիրազեկելն է, մյուս կողմից՝ դրանց լեգիտիմությունը:

Համաձայն բնակիչների ներկայացումների, հանրային լսումների հանդեպ կա թերահավատություն, և հաճախ խնդիրը ոչ թե հանրային լսումների կազմակերպման հաճախականությունն է, այլ՝ դրա նպատակային և հանրօգուտ չլինելու մասին պատկերացումը:

> «Եթե արել էլ են, ես տեղյակ չեմ: Եթե ես... ես... ինձ ա վերաբերվում, թող ինձ տեղյակ պահեին, ես գնայի մասնակցեի: Ես գիտեմ, որ մի անգամ հանրային լսումներ էղել ա, բայց էնքան ծիծաղելու էր էդ»: 33/4

33-րդ թաղամասի բնակիչների դեպքում, երբ խոսվում է հանրային լսումների մասին, նրանք մատնանշում են ոչ թե գերակա շահ ճանաչված տարածքի և/կամ կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացի մասին քաղաքային իշխանությունների կողմից նախաձեռնված քննարկումները, այլ՝ իրենց նախաձեռնությամբ ընթացող «կադաստրային լսումները»[370]:

Ֆիզիկայի գիտավանի դեպքում հիշատակվում է միայն մեկ իրադարձություն, երբ «աննկատ տախտակի» տրամաբանությամբ փորձ է արվել ապահովել կառուցապատման լեգալ ընթացակարգերը՝ նախաձեռնելով «փսևդո-լսումներ»:

> «... գալիս ա իմ հարևանին, կամ շաբաթ ա լինում կամ կիրակի, որ երկուշաբթի բան կա, քննարկում կա և էդ քննարկումը պետք ա լինի օրվա առաջին կեսին ու լավ կլինի, որ բնակիչներից մի քանի հոգի լինեն: Ու ասենք էս մարդը ինձ ասեց, ասեցի՝ բայց հաստատ էս տարածքի մասով ա, բայց քաղաքապետարանը պետք ա ասեր, սենց չէր լինի և այլն: Ու ոնց որ վեր ենք կենում մի հինգ հոգով, հինգ կամ վեց, մաքսիմում յոթ հոգով գնում ենք քաղաքապետարան, ասում ենք՝ ինչ-որ քննարկում կա, եկել ենք: Ասում են ՝ բարձրացեք էն իրանց վերևի լսումների սենյակը, բարձրանում ենք: Արդեն սենց մի հատ մեծ սեղան ա դրած, երկար ու դրա շուրջը բոլորը նստած են: ... Նստած են լիքը մարդիկ, և էն վերջում էլի մի հատ սեղան կա: Բայց էս հիմնական սեղանի շուրջ նաև միկրոֆոններ կան, ջուր ա դրած, էնտեղ ոչ մի բան չկա: Ու երբ որ ես ասում են՝ դուք ո՞վ եք, ասում ենք բնակիչներն ենք, ասում են՝ հա, գնացեք էն վերջում նստեք: Ուրեմն գնացինք նստեցինք, մեկ էլ տեսնեմ, դու մի ասա, էս շուրջը նստած են մարդիկ՝ մի երկու ընտանիք, ովքեր որ ազդակիր համայնքից չեն, մի քիչ հեռու շենքերից են, բայց ուղիղ կապված են կառուցապատողի հետ բարեկամական կապով, ու ինքը բերել ա իրենց, և մարդիկ, որ տարբեր ուրիշ համայնքերից են: Նստած են, էս կառուցապատողն ա, բան, քաղաքապետարանի համապատասխան վարչություններից են և այլն: Սկսեցին քննարկել և այլն, ու ես վեր կացա ասեցի՝ չհասկացա, բնակիչներին կանչել եք ու իրանք պետք ա խոսք ասեն ու տարել եք իրանց էն վերջը նստացրել եք և այլն»: գիտ/2

[370] 33-րդ թաղամասի բնակիչների դիմումի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեն 2023 թվականի հունիս-հուլիս ամիսներին նախաձեռնել է Երեւանի 33-րդ թաղամասի Համայնքի ներկայացուցիչների համատեղ նիստ/եր Կադաստրի կոմիտեի Որակավորման մշտական հանձնաժողովի հետ: Քննարկվել են 33-րդ թաղամասի անշարժ գույքերը գնահատող կազմակերպության գործողությունների արդյունքում 33-րդ թաղամասի սեփականատերերի սեփականությունների հանդեպ կատարված խախտումները և սխալ գնահատումները: Նիստերից մեկի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=mdpIhqmMVfw&ab_channel=OragirNews

«... Օրինակ՝ լսումները, եթե ճիշտ կարգավորված լիներ, որ բոլոր հարակից բնակավայրի բնակիչները իրավունք ունենային, իրազեկված լինեին քննարկմանը մասնակցելու, միգուցե մեծամասնությունը որոշում էր, որ ոչինչ թող լինի: Էդ դեպքում այսինքն էդ լսումների օրենքի փոփոխություն պետք ա լինի, թե ինչ ճանապարհով լսումներն անցկացվեն, ոչ թե ոչ լեգիտիմ համատիրության ղեկավարին ասես, գնա էդ հարակից շենքերի, որ դուք գիտեք բողոքում ա, էդ բնակչին ասի, ինքը մենակով գնա լսումների: Որ ոչ թե բերեք լսումներին բերեք Կոնդից, Մասիվից մարդիկ, այսինքն՝ որ իրանք ոչ ազդակիր համայնքի բնակիչներ են, ասում են՝ հա, մենք ուզում ենք, որովհետև ընդեղ տուն ենք ուզում, էդ մի հոգին էլ ասում ա՝ ես էլ չեմ ուզում, խեղճ ու կրակ: Փաստացի դառնում ա փոքրամասնություն, ու լսումները եղավ, մեծամասնությունը հաղթեց»: գիտ/6

Սա մասնավոր օրինակ է, երբ երևում է, որ նույնիսկ շահագրգիռ քաղաքացին չունի հստակություն և հասանելիություն տեղեկատվությանը. հաճախ գործում է «պատահական ծանուցման/իրազեկման» մեթոդը:

Հաշվետվողականություն և **մասնակցայնություն**

2. Ինչպե՞ս և որքանո՞վ է

- *արտահայտված թափանցիկության և հաշվետվողականության բաղադրիչը բնակիչների և քաղաքապետարանի փոխհարաբերություններում,*
- *իրացվում բնակիչների հասանելիության և մասնակցության իրավունքը կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում:*

33-րդ թաղամասի և ֆիզիկայի գիտավանի բնակիչների պատումներում կենտրոնական են քաղաքապետարանի և կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում ներգրավված այլ սուբյեկտների հանդեպ անվստահության և թերահավատության տարրերը:

Գույքի գնահատման գործընթացում առկա վերը նշված «երկակի ստանդարտները», գնահատված արժեքի հետ անհամաձայնությունը, գնահատման մեխանիզմների անորոշությունն ու չափագրող/գնահատող կազմակերպության հանդեպ անվստահությունը պայմանավորված են, ըստ իրենց, պետականորեն սահմանված «գնահատման մենաշնորհով». համաձայն բնակիչների պնդումների 33-րդ թաղամասի բնակիչների գույքը գնահատող կազմակերպությունը նպատակային պատվեր է իրականացնում և իշխանությունների կողմից ոչ ֆորմալ արգելք է դրված այլ կազմակերպությունների վրա այս տարածքում գնահատում անելու համար: Ստորև ներկայացնում ենք տիպիկ պատումներից մեկը.

« ... էն մի հարևանինն էլ 320$ ա գնահատած, հողը մի քիչ ավել ա: Սենց բերել են, միջին գինն են ստացել: Էտ էլ արել ա գնահատող կազմակերպությունը, որը պատկանում ա կադաստրի կոմիտեի նախագահի տեղակալին, մի քիչ անունները լավ չեմ հիշում, մի խոսքով, էտ կազմակերպությունը Վի Էմ Ար Փի տնօրենը աներձագն ա, իմ իմացած տեղեկություններով, քաղաքում ինչքան լուրջ բաներ կա, բոլոր բանկերն ա էտ ֆիրման ա գնահատում: Համ էլ էստեղ ա, էտ նախագահի տեղակալի ֆիրման ա, ոնց կարա ուրիշը լինի: Մյուս գնահատողները, եթե էտ ֆիրմայի գնահատածը բողոքարկում են, 20% տարբերություն ա լինում, գնում ա հանձնաժողովի նիստի, որը էլի կադաստրի կոմիտեն

ա: ... մեզ էտ էր պետք, որ մյուս... հիմա լիստով բացենք, ցանկացած գնահատող գտնենք, կազմակերպություն, զանգեմ: Դուք էլ կարաք զանգեք, էս ինչ տեղի հասցեն ասում ենք, հրաժարվում են գան: Ինչի՞ համար: Պարզ ա, որ վերջում էտ ֆիրմայի հետ չընկնեն խնդիրների մեջ: Որ իրականը գնահատեն՝ էստեղ ահագին թանկ ա. 2,5-3 անգամ թանկ պետք է գնահատվի: Իսկ իրանք, որ գան, գնահատեն, վերջում ընկնելու են խնդիրների մեջ, իրանք զրկվեն իրանց լիցենզիայից, ոչ թե էտ ֆիրմեն[371]: Դրա համար մեզ պետք էր, որ էտ ֆիրման էս ասպարեզից դուրս գա, թազա ով էլ գա, արդեն գիտի, որ մենք ամեն ինչից տեղյակ ենք, օրենքներն էլ, ձևն էլ, ոնց պետք է գնահատվի, գներն էլ մոտավոր: Կգան, արդեն նորմալ կգնահատեն»: 33/6

«Հիմա ԾԻԳ-ը վերցրել ա իրա վրա էդ ֆունկցիան, գնահատող ֆիրման, ամբողջ թաղամասը «Վի Էմ Էր Փի» գնահատման ֆիրման ա անում, ուրիշ գնահատող չի մտնում ստեղ, դուք էլ կարաք փորձեք, զանգում ես լիստ էյեմից, ասում ես՝ բարև Ձեզ, կգա՞ք իմ տունը գնահատեք, ասում ա՝ տուն ա, թե՞ բնակարան, ասում ես ՝ տուն, ասում ա ՝ տունը մի քիչ թանկ ա արժենալու հարյուր հազար դրամ: Ասում ենք՝ համաձայն ենք, արի, ասում ա որտե՞ղ ա հասցեն, ասում եմ՝ Կինոերևան, ասում ա 33-րդ թաղամաս ա՞, չեմ գա ախպերս: Ասում եմ՝ խի՞ չես գա, որովհետև ասում ա՝ ես որ գամ, ինձ կադաստրն ա լիցենզիա տալիս, ինձ լիցենզիայից կզրկեն: Ստեղ ընդամենը մի ֆիրմա ա կարում գնահատում անի»: 33/4

Հաշվետվողականության տեսանկյունից կենտրոնական՝ փաստահեն գործունեության սկզբունքների խախտման դեպքեր արձանագրում են նաև ֆիզիկայի գիտավանի բնակիչները: Ըստ նրանց, ողջ գործընթացում կենտրոնական է «հորինված նկուղի» դեպքը.

«... 2003 թվականից սկսել ա գործընթացը, Զախարյանի քաղաքապետության ժամանակ էլի, ու ինքը տենց երեքից հինգ թվերի միջև արագ-արագ ծախվել ա երեք կազմակերպության, որ բարեխիղճ գնորդի պիտակ ունենան, որ երրորդ գնորդը արդեն բարեխիղճն ա էլի համարվում, ու մենք ամբողջ էդ փաթեթը գտանք, նաև բնակիչները հինգ հարյուրից ավելի ստորագրություն հավաքեցին, տվեցինք քաղաքապետարանին, ասեցինք, որ մենք համաձայն չենք էս տեսակ գործընթացների ու ուզում ենք հանդիպենք քաղաքապետի հետ ... ժամանակին քաղաքապետարանի հետ փոխկապակցված մարդ, ում հայրն աշխատել ա քաղաքապետարանում, սիրուն գործարքի ա գնացել, քանի որ ինքը պետք ա ցույց տար որ էդտեղ կա կիսակառույց կամ ինչ-որ կառույց, ասել են, իրենց հանճարեղ մտքով ասել են՝ արի գրենք նկուղ 50 քառակուսի մետր, որ էդտեղ նկուղ չի եղել, բնակիչները նաև վկայություն են տվել, հին բնակիչները, որ էդտեղ երբեք նկուղ չի եղել: Էդ նկուղի հիմքով ամբողջ տարածքը սեփականացրել են, պետությունից խլել են, վաճառել են ասենք հարյուր հազար, հարյուր հիսուն հազար էն ժամանակվա գումարով, իրար ձեռք ձեռքի են փոխանցել, հայտնվել ա էս երրորդ իբր թե բարեխիղճ գնողը, էսօր բազմամիլիոն օգուտ ա ստանում, պետությունց խլել են, համայնքից խլել են, պետությունը աչք ա փակում, համայնքը աչք ա փակում»: գիտ/2

[371] Հարցվողները նշում են, որ երկու տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացված գնահատումներում տարբերություններ հայտնաբերելիս կազմակերպություններից մեկը զրկվում է լիցենզիայից՝ համարվելով սխալ գնահատումներ իրականացնող: Նրանք նշում են, որ որոշումների կայացման օղակում ծանոթներ ունենալու շնորհիվ կեղծ գնահատում իրականացնող կազմակերպությունը միշտ հաղթում է դատը, իսկ մյուս կազմակերպությունները զրկվում են լիցենզիայից, այդ իսկ պատճառով բոլոր կազմակերպությունները խուսափում են տվյալ տարածքի գույքի վերագնահատումից:

Բնակիչները, անդրադառնալով քաղաքապետարանի հրապարակային և հաշվետու գործունեության տեսանկյունից խնդրահարույց հարցերին, հատկապես մատնանշում են՝

- ձգձգվող և անորոշ դատական գործընթացները և բնակիչների դիմումների, հարցումների պատասխանների ուշացումը:

  «Դատախազը արգելանք դրեց ... բերեցին լենտերով փակեցին էդ նկուղի մասը, մենք ասում էինք բերեք փորձագետներ, մասնագետներ թող ուսումնասիրեն, հասկանանք նկուղ եղել է թե նկուղ չի եղել, դատախազը արգելանք դրեց էդ հատվածի աշխատանքների վրա, հետո ինքը էդ դատախազի արգելանքը բողոքարկեց դատարանում ու դատարանը ասեց դու ինչ գործ ունես արգելանք ես դնում առանց որևէ հիմնավորման, կարծում եմ ոչ հիմնավոր ա եղել, օրինակ հիմա որ անցնի էդ հիմքով կհասկանան, որ ոչ օրինական գործողություն ա արել, նույն դատավորը որոշումը օրինական չի եղել, ի նպաստ պետությանը չի եղել»: գիտ/6

  «... էս ամբողջը մենք լրիվ, բացի սրանից մենք շատ անգամ մենք նամակներ ենք գրել, և գրեթե միշտ ես պահել եմ, նկարած ծրարներով կա, և գրեթե միշտ մեր պատասխանները ուշացրել են և միշտ ուղարկել են ինչ-որ սենց լղոզված պատասխաններ, որտեղ որևէ հստակ բաներ հարցապնդումներին չկա: Այսինքն՝ դու ստանում ես, կարդում ես քո նամակի պատասխանի ոչ մի բան չկա, սպասել ես քսան օր, մի ամիս և այլն, և ասենք չգիտես ինչ անես, Գնաս, տաս իրանց ու ասես բացատրի սա ինչ ես գրել, կամ ասենք նորից նամակ գրես, նորիս պատասխան պտի ստանաս, այսինքն՝ ոչ մի պատասխանատվություն չկա բնակիչների ժամանակի, իրենց իրավունքների հանդեպ, իրենք տենց պարապած կարող են նենց տեքստ գրել, որ կարան նենց գրեն, որ դու կարդաս բան չհասկանաս, բայց ինքը կարա ասի ուղարկել եմ էլի»: գիտ/2

  «Մենք ՞ով, ենք, հիմա դատարանը որ գնում ենք, ասում ա ինձ սու՛ս, սո՛ւս, ես էլ ելույթ ունեցա, ինձ հանեցին դուրս»: 33/2

  «...մենք գերակա շահը դատի ենք տվել դեռ 2008 թվականին, 2014 թվականին, 2018 թվականին, ամեն անգամ դատի ենք տվել, ոչ մի անգամ դատավարություն չի էթում, մինչև հիմա դրած ա դատավարություն չեն անում, որ արագ մեջ-մեջ անեն, դու չկարանաս ապացուցես, որ էդի գերակա շահ ա, բայց կից դատերը, որ մարդկանց դատի ա տալիս ԾԻԳ-ը, դրանք արագ- արագ անում են շաբաթը մեկ, անհատ-անհատ անում են, իսկ մենք սաղ փողոցով տասնը-քանի տարի ա սպասում ենք էդ դատին, թե սրա ինչն ա գերակա, եթե ինովացիոն ծրագիր ա փողոցները սիրունացնելու դա ուրիշ խնդիր ա, դուք ստեղ աերոպորտ եք կառուցում, ինչ եք անում, որ պետությանը պետք ա հարստացնի...»: 33/1

- ի նպաստ կառուցապատողի որոշումների և կարգերի մշակումը: Այստեղ հատկապես կարևորվում է՝
  - 2018 թվականին Կարեն Կարապետյանի ղեկավարած կառավարության կողմից ընդունված որոշումը, համաձայն որի տեղի բնակիչների փոխհատուցումը պետք է լինի գումարային, այլ ոչ, համաձայն նախնական պայմանավորվածության, տեղում կառուցվող բնակարան տրամադրելու հաշվին:

«Սերժ Սարգսյանը դեռ վարչապետ եղած ժամանակ ասեց՝ ստեղ երկու հատ շենք եք սարքում, ստեղ ով որ գումարայինը չի ուզում, փոխհատուցում եք ստեղ, մարդիկ բավարարվեցին ասեցին լավ՝ արեք էդ պրոյեկտը: 2018 թվականին Կարեն Կարապետյանը որոշում մտցրեց տեղում ոչ մեկին չապահովել, սաղին նախնական գումարային ապահովում արեք, թող գնան»: 33/4

- 2020 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի փոփոխությունը, համաձայն որի նույնիսկ դատական հայցերի դեպքում շինարարությունը չի կասեցվում:

«... մինչև այդ օրենքի կարգավորումն էնպիսինն էր, որ եթե ինչ-որ տենց շինարարություն ա, և կա իրավական գործընթաց դրա շուրջ, մեկը վիճարկում ա՝ դատարանով կասեցվում ա աշխատանքը, և դա շատ տրամաբանական ա: Եվ որոշումը ընդունվեց, օրենքը ընդունվեց կամ փոխվեց էնպես, որ այլևս չի ազդում դա շինարարության ընթացքի վրա, քանի դեռ չկա հստակ որոշում դատարանի կողմից, որ հիմքեր կան կասեցնելու: Հետևաբար, մենք ունենք էսքան քրեական գործեր, էսքան աղմուկ, բայց որևէ որոշում քանի դեռ չկա և ակնհայտ ա, որ ցանկություն չկա էտ որոշումը կայացնելու, շինարարությունը չի կասեցվի ու կգնա»: գիտ/1

Ընդ որում, 2018 թվականին կառավարության կողմից ընդունված որոշման մասով առկա խնդիրներն ամենավիճահարույցներից են: Բնակիչներն ունեն իրավական պահանջ վերականգնելու իրենց իրավունքը, իրենց փոխհատուցելու համաձայն նախապես ստորագրված պայմանագրերի: Ըստ բնակիչների մի քանի ընտանիքներ պայմանագրեր են կնքել կառուցապատողի հետ, համաձայն որի իրենց փոխհատուցումն իրականացվելու է նույն թաղամասում կառուցվող գույքի հատկացմամբ: Հետագա զարգացումները հանգեցրել եմ մի իրավիճակի, երբ պայմանագրերը կարծես թե ուժը կորցրած են, իսկ կառավարության նոր որոշմամբ իրենք չեն կարող նույն թաղամասում գույք ստանալ: Այստեղ տեղին է բնակիչներից մեկի տիպական պատումը.

«Ես ունեմ երկու պայմանագիր 44 քառակուսիանոց երեք տուն երկու պայմանագրով ... Սիթի Սենթրի հետ կնքած: Գլենդել Հիլսի հետ ա կնքված եղել 2012 թվին կամ թե չեմ սխալվում 2013 թվին, ասեց Գլենդել Հիլսի հետ խնդիրներ կան, եկեք վերափոխեք Սիթի Սենթրի հետ, մենք վերափոխել ենք, սպասել ենք, որ պետք է տան բնակարանները ու տենց: ... Ինքը՝ պայմանագիրը ժամկետ ուներ, ժամկետը լրացել էր արդեն, վերակնքեցինք պայմանագիրը, ու հիմա էդ շենքում պետք է մեզ բնակարան տային: Բայց հիմա, քանի որ իրանք ասում են՝ մենք շենքը ծախել ենք ուրիշի, ամբողջ շենքը ծախել են ուրիշ մարդու, ես իրանց հարց եմ տալիս, ասում եմ՝ նայեք սենց եթե բաժնեմասային բան ունենք, ես գոնե մի տոկոս ունեմ, առաջինն ինձ պետք ա ասես, կարող ա ես ամբողջ շենքդ առնում եմ: Կամ եթե չէ՝ պայմանագրի մեջ նշված ա, երրորդ կողմի ի հայտ գալու դեպքում գրավոր՝ թե մեր կողմից ի հայտ գալու, այսինքն ես որ իմ պայմանագիրը վաճառեմ ուրիշի, թե կառուցապատողի կողմից, եթե երրորդ անձ ա գալիս, պետք ա գրավոր ծանուցեն, գրավոր էլ համաձայնություն ստանանք:

... ասեցին, ախպեր դե մի բան կանենք, ինքը տարբեր ենք սաղին տալիս ենք, դե 1200 դոլար, դե էսքան տարի քեզ նեղություն ենք տվել, մի 100 դոլար - 200 դոլար ավել կտանք:

Ասում եմ՝ 100 դոլար - 200 դոլարդ պահի քեզ, մենք՝ պայմանագրով, որովհետև նայեք, սենց խուճուճ են սարքել ամեն ինչ: Եթե ժողովրդին գերակա շահով ստեղի սեփականատերերը բողոքարկում են, ասում են դե ի՞նչ կա՝ էս ենք սարքում, հետո նորմալ փոխհատուցում ենք, իրանց բերանի խոսքն ա: Ես ըտեղ պատասխանում եմ, ասում եմ՝ նայեք, դուք եկաք առաջարկեցիք էս, ասեցի՞ք գերակա շահ ա, ասեցի՝ համաձայն եմ Ձեր հետ, ասեցի՞ք ստորագրի՝ ստորագրեցի, ասեցի՞ք սեփականության վկայականը տուր, տվեցի, տարա՞ք դրեցիք գրավ, ասեցիք տունդ քանդի՝ քանդեցի: Ես էլ Ձեր ասածները ինչ ասել եք պահել եմ, այսինքն դուք հիմա քցել եք ինձ, խաբել եք, պետությանն էլ ում թվարկեցի էդ պաշտոնատար անձանց ասում եմ՝ նայեք, յոթ ընտանիք հիմա քցված են, դուք ինչի՞ եք թողնում էդ ֆիրման շարունակի և հարյուր քսան ընտանիք քցվի»: 33/4

Թվարկված խնդիրները, դառնալով բնակիչների առօրեականության բաղադրիչը, պայմանավորում են մի շարք սոցիալ-հոգեբանական խնդիրներ: Ընդհանուր առմամբ, կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում բնակիչների պատումներում գերակա է «բնակիչը մենակ է» դրույթը, ինչը ենթադրում է՝ «բնակիչը անզոր է» է և/կամ «բնակիչը անօգնական է»:

Առաջին դեպքում (անզորության), բնակիչը համոզված է կամ հավանական է համարում, որ ինքը չի կարող որոշել և հասնել ցանկալի արդյունքի:

«... որ իմանաս իրոք օրենք է... չէ, ինքը չի իմանում քեզ ոնց վրա տա, օրենք ա հորինում, որի տակ դու չես կարողանում թփրտաս»: 33/2

«... քանի որ ես հանրային շրջանակներում շատ եմ բարձրաձայնել խնդրի մասին, ունեմ մի քանի դատական գործ էս պահին՝ զրպարտության, քրեական ինչ-որ հոդված, որոնք որ անընդհատ գնում են, ես շահում եմ դատը, մեկ ա իրանք նորից: Հասկանալի ա, որ իրանք էդպես ճնշումների, թիրախավորման ճանապարհով են գնում: Ինձ համար շատ խնդրահարույց ա, իմ համար ամենամեծ խնդիրը էն ա, որ քաղաքային իշխանությունները իրենց թույլ են տալիս քաղաքացուն մենակ թողնել ինչ-որ մասնավոր կառույցի հետ պայքարի մեջ և, բնականաբար, բիզնես-շահը կարողանում է շատ-շատ տարբեր լծակներ կիրառել քաղաքացու դեմ: Եվ էս պարագայում, եթե մենք ունենք համայնքային իշխանություններ, որոնք որ չեն կանգնում հանրային շահի ու քաղաքացու շահի կողմից, էս ամբողջ բալանսը խախտվում ա»: գիտ/1

«... մեր փորձը ցույց ա տալիս, որ իրավական ճանապարհով պայքարելը համապատասխան, համարժեք արդյունքը չի տվել: Պետք ա գործել իրանց պես, փաստորեն ստացվում ա, ոնց իրանք՝ տենց դուք, ցավոք սրտի մեր Գիտավանում չկան էդպիսի մարդիկ, որ էդ կարգի լծակներ ունենան ...» գիտ/7

«... Չէ, բայց մեզ ո՞վ ա հարցնում, ինչի համար ա կառուցվում: Ուղղակի բռնում կառուցում են: Բողոքես, չբողոքես իրանց մեկ ա, փողը՝ գումար, դրվել ա արդեն, ինչ ուզեն՝ կանեն»: գիտ/4

Երկրորդ դեպքում (անօգնականության), բնակիչն ունի վախ/անհանգստություն շրջապատող միջավայրի և տիրապետող կարգի հանդեպ, երբ անվտանգության/պաշտպանության հիմնական երաշխավորը՝ պետությունը, իր դեմ է:

> «Պետությունը ոչ թե փորձում է հասկանալ բնակչին, այլ՝ դիրքավորելով որպես հակառակորդ՝ մշակում է իրավական մեխանիզմներ, որոնք արդյունավետ կլինեն շրջանցելու բնակիչների բողոքն ու պահանջը»: 33/5

> «Մեր ամենամեծ դժգոհությունը եղել ա քաղաքապետարանից, որ իրենց անգործության պատճառով ա, որ ոստիկանություն ա գալիս մեր վրա: Երկրորդը եղել ա ոստիկանությունից, որ անհամաչափ ուժ են կիրառել և կողմնապահ վերաբերմունք են ունեցել կառուցապատող ու բնակիչ հարաբերություններում: Երրորդը՝ պետական այլ վերահսկող մարմիններից, որոնց բազմաթիվ անգամներ դիմել ենք քաղաքապետարանի ապօրինի գործունեության մասին, ոստիկանության գործունեության մասին, նույն դատախազությանը, նույն պետական վերահսկողության ծառայությանը, նույն քննչական կոմիտեին, նույն ում ասես բան ենք արել, ով ասես ստեղ եղել ա, բայց ասենք փոխկապակցված ապօրինություններ արեցին էլի»: գիտ/2

> «... էդ աշխատողները, կարմիր բերետավորները, այ էդ ժամանակ իմացանք, որ արդեն էդ լուրջ ա, ու սկսեցինք պայքարել, բայց օգուտ չտվեց ոչ մի պայքար: Նույնիսկ մեր առաջադեմ երիտասարդին, մեր ադվակատին քաշելով գետնին տանում էին, մենք ամեն ձևի պայքարել ենք բայց ոչ մի օգուտ, ոչ մի ձևի ...»: գիտ/5

Որպես հետևանք առանձնացվում են՝

- Հիասթափությունը

> «Դե ասենք՝ հենց էն, որ աչքիդ առաջ էդ շենքն ա բան լինում, հոգեբանական լուրջ բան ա էլի, դու պայքարեցիր, դու ժամանակ դրեցիր, դու ծեծվեցիր, դու բախվեցիր հակապետական, հակահամայնքային կառույցների հետ, իրականում՝ իրականության հետ, որովհետև 2018 թվականից հետո ոչ մի նորմալ փոփոխություն չի եղել, այլապես՝ եթե լիներ ոստիկանությունը, տենց չէր վարվի իրա բնակիչների հետ, քաղաքային իշխանությունը այլ ձև գործընթացները կտաներ առաջ, քաղաքային իշխանություններին վերահսկող կառույցները այլ մոտեցում կունենային: Մի խոսքով էս ամեն ինչը այլ ձևով կգնար, այսինքն ես, որ եղել եմ շատ ուրախացած մարդ էս ամեն ինչից, ինձ երբ որ հարցնում են, ծիծաղում եմ էլի, որ ասում են մեծ փոփոխություններ կա՝ կոռուպցիա չկա, բան չկա և այլն էլի»: գիտ/2

- Ապագայի անորոշությունը:

> «Չի կարող պատահել, որ նույն մարդիկ ապրեն, որովհետև տեսեք, տասներկու հարկ ա, ամեն հարկում մի չորս բնակարան կլինի, էլ ինչ սորտի մարդ, մաստի մարդ կապրի՝ չգիտես ... Տերետորիայի շունչը չկա, ստեղ գալու են մարդիկ, որ չգիտես ովքեր են, ստեղ էլ արդեն էն չի մնացել, էս ստեղ բնակարաններ են ստացել աշխատողները, մենք բոլորս իրար գիտեինք, հիմա ճիշտ ա փոխվել ա բան, հիմա էս ինչ

ա լինելու, չգիտենք, ովքե՞ր են գալու, տերետորիան ի՞նչ ա դառնալու, ի՞նչ շուն ու գել ա գալու, հասկանու՞մ եք: Վերջապես եթե ամեն մաստի մարդ կլինի»: գիտ/4

Չնայած իրական պրակտիկաներում բնակիչների ներգրավվածության և մասնակցության սահմանափակումներին, երկու թաղամասերի բնակիչներն էլ ակտիվորեն բարձրաձայնել են իրենց բողոքը և/կամ պահանջը՝ գրանցելով նաև որոշակի դրվագային հաջողություններ: Մասնավորապես,

- *Ֆիզիկայի գիտավանի դեպքում* Նշանակալի է բնակիչների ակտիվ պահանջը՝ թաղամասը որպես հուշարձան ճանաչելու ուղղությամբ: Այս թաղամասի բնակիչների հիմնական ռազմավարությունը իրավական և մեդիա հաղորդակցական է:

  «Մեր բնակիչների առաջարկով, ԿԳՄՍ նախարարությունը ընդունեց առաջարկը և ընդունեց որոշում, որ մեր թաղամասը կճանաչվի նորահայտ հուշարձան՝ իր ունեցած էս որպես գիտական, հատուկ նշանակության համար ստացավ էս կարգավիճակը»: գիտ/1

- *33-րդ թաղամասի դեպքում* հիմնական ռազմավարությունն է «չհանձնվելն» ու ակտիվ-ներկայացուցչական բողոքն է՝ կիրառելով մեդիա գործիքներ, մասնավորապես ասուլիսների ձևաչափով: Որպես հաջողություն դիտարկվում է «կադաստրի լսումների» նախաձեռնությունը:

  «Հիմա մենք էտ արեցինք լրագրողներով, լուսաբանելով, ուղիղ եթերով, շատ կան կետեր, խախտումներ, էտ գործակիցներն էլ չհիմնավորված բաները, բան, հլը չենք էլ ներկայացրել, 15 կետ, որոնց մեջ հղումներով ունենք, որ օրենքի էս ինչ կետն ա խախտվել, գնահատման ստանդարտ կա, անշարժ գույքի ստանդարտ կա, էտ գնահատման ստանդարտն ա խախտվել, որ իրանք կարդան էտ հաշվետվությունը ու կարդան օրենքը: Այ էտ ձևի 15 կետ ներկայացրել ենք: Երեքն էլ էր բավական, որ իրանց զրկեին լիցենզիայից: Մի հատը արդեն հերիք ա, որ հաշվետվությունը սխալ ա, բայց իրանց լիցենզիայից զրկելու երեքն ա հերիք, մենք 15-ն ենք պատրաստել: Նիստը նենց սարքեցին, որ չլինի, որովհետև էտ սաղ կհելներ ջրի երես, հետո իրանք չէին կարանալու տակից դուրս գային, հետո հանձնաժողովը պլյուս հասնելու էր բանի պետին, էտ տեղակալի»: 33/6

Ամփոփելով, կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում կարելի է առանձնացնել բնակիչների կողմից մատնանշված իրենց իրավունքի իրացման հետևյալ խնդիրները՝

Գիտավանի դեպքում

- թաղամասը ճանապարհին կապող հիմնական ճանապարհի նեղացում, օրվա որոշ ժամերին նաև արգելափակում.

  «... շինարարություն, աղմուկ, փոշի, մեքենաները, մեր հիմնական ճանապարհի փակումը, որ անընդհատ ինչ-որ գնում ես տուն, բաներ են կանգնած, չգիտես ոնց անցնես կամ անցնես թե չանցնես: Ոտքի ճանապարհ ընդհանրապես փակած ա, որ մեկ ռիսկ չի անի մեքենայի տակով, էնտեղ կրունկ ա բարձրանում ծանր բաներ ա տանում, ոչ մեկ ռիսկ չի

անի, անցնի: Մեքենաներն էլ կամ կանցնեն, կամ... շրջանցելու տեղ առանձնապես չունենք ...»: գիտ/7

- թույլատրելի ստանդարտներից բարձր աղմուկ, որը հատկապես վնասում է տարեցներին և մանկահասակ երեխաներին.

  «... նամանավանդ թոշակառու մարդիկ, արդեն ոնց որ հոգեկան խանգարում ստանան, ասում ա՝ ... ջան, դուռն էլ փակել եմ չի ստացվել էդ դմփդմփոցից: Ու ինքը դեցիբելներով բավականին բարձր էր թույլատրելի սահմաններից, ու իրանք տենց շարունակեցին, ոչ տեսչությունը քաղաքապետարանի եկավ դադարեցրեց... այսինքն պարզ երևում ա որ էս ինչ-որ մարդիկ, ինչ-որ հովանավորչություն կա. հիմար պետք է լինես, որ չհասկանա, որ եթե ինքը օրենքը խախտել ա, հետո նորից բերեցինք չափեցինք, բայց էն փաստաթուղթը կար անցած, պարզվեց՝ դեցիբելները որ չէ՝ նորմալ ա, արդեն անձամբ ստանդարտացման ինստիտուտի տնօրենն էլ երևի հրաման ա գրել, որ էնպիսի գրություն գրվի որ չի խախտվել ոչ մի բան, այսինքն թղթերով ամեն ինչ նորմալ ա ...»: գիտ/6

- Շինարարական աշխատանքների արդյունքում բնակարանների վիճակի վատթարացումը և առաջացող վտանգները.

  « ... մենք հանգիստ չունենք, էդ շըխկ-թըխկը, փոշին չեմ ասում, մենք խեղդվում ենք փոշուց, եթե տեսեք, երեկ առավոտյան եմ մաքրել, արդեն փոշի ա տակը, ինչքան ուզում ես մաքրի՝ օգուտ չունի, նույնն ա: Աղմուկն՝ իրա հերթին, հոգեպես լրիվ տանջված: Երբ որ քանդում էին, մենք որ բողոքում էինք, քաղաքապետարանից եկան ստուգելու, իմ պատուհաններին ես ռեմոնտ էի արել, կողքերը լրիվ ճաքճքել էր, իրան ցույց տվեցի, իրանք ասեցին՝ էդ վտանգավոր չի: Ասի՝ դուք ճիշտ եք ասում, վտանգավոր կլինի էն ժամանակ, երբ որ կփլվի մի բան, կքանդվի, էն ժամանակ վտանգավորը կերևա ինչքան: Տես, այ սենց էլ ապրում ենք»: գիտ/5

Որպես առավել հատկանշական և հիշարժան դեպք առանձնացրեց բնակիչներից մեկը.

  «... կյանքի որակը փոխվել ա էնքանով, որ չենք կարողանում քնել ու ասեմ ավելին՝ քանի դեռ էն սկզբի ժամանակահատվածում աշխատում էին մինչև ժամը վեցը - վեց անց տաս, եթե նույնիսկ լսվում էր իրանց տեխնիկայի ձայնը մենք բնակիչները, մանավանդ տարեց մարդիկ, որ հենց անմիջապես կողքն են ապրում, դուրս էին գալիս, ասում էին՝ հիշացնում ենք Ձեզ պարոնայք, հարգելի բանվորներ, որոնք ոչ մի բանում մեղավոր չեն, աշխատանքային օրն ավարտվել ա, խնդրում եմ անջատեք ձեր տեխնիկան, տուն գնացեք, որովհետև մեր աշխատանքից վերադարձող ջահելները փորձում են հանգստանալ կամ ծերերը. իրանք փոխեցին ժամը: Չգիտես ինչու՝ մեր Հայաստանում ու երևի թե ամբողջ աշխարհում գոյություն ունի աշխատանքային ժամ իննից վեցը, Ռադկո ՍՊԸ-ի մոտ աշխատանքային ժամն ավարտվում ա ժամը գիշերվա 23:00-ին ... Սկզբի ժամանակահատվածում, որ տենց բան էր լինում ու մեզ չէին լսում, եղել են դեպքեր, որ ոստիկանություն ենք կանչել, ոստիկանությունը տեսել ա, ֆիքսել ա ժամը վեց անց կես, ստիպել ա, որ անջատեն տեխնիկան, հեռանան: Հետո փոխեցին, չեմ կարող ասել թե կոնկրետ որ ամսաթվից: Բայց եղավ հաջորդ քայլը, որ կանչեցին ոստիկանություն, Ռադկո ՍՊԸ-ն ներսից բերեց, անվտանգության աշխատակիցները բերեցին ոստիկանությունից,

> կառուցապատողից թե քաղաքապետարանից թուղթ, որտեղ կար թույլտվություն. էդ թույլտվության ժամը սարքել էին մինչև 23:00: ... էդ թուղթն իրանք ունեն, ... մենք վիդեո ունենք, որ գիշերվա 22:30 Վ-ն կանչում ա ոստիկանություն, ու ոստիկանությունը երեկոյան տասին գալիս ա, ու իրանք տալիս են էդ թուղթը, որ իրանք մինչև ժամը, որ 23:00 չգիտեմ անց էր, թե հենց տասնմեկը՝ իրանք ունեն աշխատելու իրավունք»: գիտ/7

33-րդ թաղամասի դեպքում

Ի տարբերություն ֆիզիկայի գիտավանի, 33-րդ թաղամասի բնակիչների կենսափորձն առավել երկար է՝ ժամանակային առումով և ավելի բազմազան՝ բովանդակային առումով: Այդ տեսանկյունից, երկարաժամկետության առումով, կամ ինչպես երբեմն բնակիչներն են որակում՝ շուրջ երկու տասնամյակի «գերության» տեսանկյունից դիտարկելի են բնակիչների կենսական ռազմավարությունների խափանում, կյանքի որակի վատթարացում.

> «Կորել ա իմ կյանքը, էն լավագույն տարիները... ես 15 տարուց ավել ա... ես հիմա 59 տարեկան եմ, քառասուն-քանի տարեկանից ես... ամբողջ օրը օրենք, պայքար, անհանգստություն, ամբողջ օրը Կառավարության կայքի մեջ մտած, տեսնաս ընդունեցին նոր որոշում, թե չէ, անընդհատ էդ ա էղել: Ես էն, ինչ որ ինձ հետաքրքիր ա, ասենք ես շատ սիրում եմ տիեզերքի մասին կարդալ, տենց հա... ժամանակ չի լինում, ես իմ կյանքը կորցրել եմ, մաշել եմ սենց բաների վրա»: 33/5
>
> «Աշխատանքիս ա խանգարում ես ազգային պատկերասրահում կես դրույք եմ աշխատում, չէ՞: Չեմ կարողանում կենտրոնանալ գործի վրա: Վնասում են իմ աշխատանքին, իմ առօրյային, իմ կենցաղ, էս ամեն օր ԾԻԳ գնալ, դրանց դեմքերին նայել, մարդկանց, ովքեր ուզում են ինչ-որ բաներում նենգ գործողություններ անեն համայնքի հանդեպ: Ես համայնքի համար եմ ավելի սրտացավ, իմ անձնական հարցը ես կլուծեմ, անգամ եթե իմ սաղ գույքը իմ ձեռից վերցնեն նկարիչ տղա եմ, կունենամ էդ սաղ իմ աշխատանքով»: 33/1
>
> «Վահանաձև գեղձս արդեն, էնքան գոռացել ճվացել ենք... եղել ա եկել ծեծել են, կարմիր բերետավորները տարել են ծեծել են տղաներին, մենք ընգել ենք մեջտեղները, ամեն ինչ եղել ա... ու օգուտ չկա ...»: 33/2

Իսկ կոնկրետ շինարարության առումով, այս դեպքում ևս մատնանշում են թույլատրելի ստանդարտներից բարձր աղմուկը, աշխատանքային հագեցած գրաֆիկը՝ ներառյալ շաբաթ-կիրակի օրերը և շինարարության արդյունքում առաջացող վնասները բնակարաններում:

> «...Իմ պատուհանի տակ 2 մետր քանդած ա: Էսա որ գնանք, ցույց եմ տալու: Ասում եմ՝ 2 մետր ա իմ պատուհանիցս մինչև ընդեղ հեռավորությունը: Ասեցի՝ ես ուզում եմ ռեմոնտ անեմ, տղաս եկել ա մի քիչ ռեմոնտ անի, որովհետև մենակ եմ. մի տեղ փլվի, մի տեղ քանդվի, ես ի՞նչ եմ անելու: Ասեց՝ էն փոսը, որ սարքում են, քանդել են, ես նրանց հետ կխոսեմ, որ արագացնեն: Թե չէ, դուք իրանց կխանգարեք: 3 տարի ա անցել, ես չեմ էլ խանգարում, էնա քանդել են, 20 մետր առաջ են եկել. էսա ցույց կտամ: Էս փոսից եկել են առաջ, էս փոսն էլ մնացել ա կեսը: Հիմա որ մեկը քանդում ա, չէ՞, էս ռակովինան դռդռում

ա ստեղ: Որովհետև ֆունդամենտ չկա, ցեմենտ չի եղել էն տարիներին, էս պատի լայնությունը տեսնում ես, էս պատի լայնությունն ա պահում սաղ: Թե չէ հող ա»: 33/3

Ընկալումներ և **ներկայացումներ**

3. Ինչպե՞ս է ընկալվում և ներկայացվում քաղաքապետարանի գործունեությունը բնակիչների կողմից:

Կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում բնակիչների կենսափորձի ու այդ համատեքստում ձևավորված պրակտիկ գիտելիքիների ընդհանրացմամբ կարելի է կառուցել հետևյալ հավաքական պատումը՝

> ... քաղաքապետարանն իրեն հեռու է պահում, կառուցապատողը կարծես ունի լիազորություններ, պետությունը գրեթե միշտ աջակցում կամ գոնե հիմնականում չի խոչընդոտում ... ուրեմն քաղաքապետարանը, պետական պաշտոնյաները «մեծ» գործարքի մասն են՝ հովանավորը (հակառակ դեպքում պետությունը քաղաքացուն չպաշտպանելու հիմք չունի) ... հետևաբար՝ ամեն փորձ ձախողված է:

Հարկ է նկատել, որ իրականության նման մեկնաբանությունը պայմանավորում է պատկերացումներ և/կամ ընկալումներ, համաձայն որի՝

- բնակիչը սոցիալական մեծ հեռավորության վրա է քաղաքապետարանից, նա օտարված է իրեն իսկ առնչվող գործընթացից, կառուցապատողը քաղաքապետարանի ներկայացուցիչն է, երբ հաճախ անհասկանալի է՝ ով, ինչ գործառույթներ է իրականացնում:

Այստեղ հատկանշական է 33-րդ թաղամասի բնակիչների դիտարկումն առ այն, որ քաղաքապետարանի ԾԻԳ-ը, որն ի պաշտոնե կարգավորող և/կամ վերահսկող գործառույթ է իրականացնում բնակիչ-կառուցապատող փոխհարաբերություններում, շեղվել է սահմանված ձևից՝ դառնալով կառուցապատող կազմակերպության «լիազորված» ներկայացուցիչ: Եթե հաճախ գերակա էր քաղաքապետարանի «անտարբերության» նարատիվը՝

> «Քաղաքապետարանն ընդհանրապես ոչ մի դրական փոփոխություն չկա, քաղաքապետարանը բանի պես հեռվից նստած մեզ ա նայում»: 33/1

ապա վերջին երկու տարվա ընթացքում այն դառնում է անմիջական կողմ՝ «բնակչի հակառակորդ»:

> «... Շողիկ Երանյանը [«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենը] դարձել ա իրանց [կառուցապատող կազմակերպության] լիազոր ներկայացուցիչը էս գործում: ... էդ հանձնարարության պայմանագիրը կարդում եմ, ընդեղ գրած ա ... հանձնարարող և հանձնակատար: Հանձնարարողը փաստորեն ձեռքբերողն ա, հանձնակատարը՝ տիկին Շողիկ Երանյանն ա, ու հանձնարարողը ինչ որ ասի, էն պետք է անի, դրա համար նա վճարում ա սրան, տենց կետեր ա սիրուն գրած ... ուրեմն հանձնարարության պայմանագիրը կարա կնքվի հանձնակատարի վարձատրությունը, ստեղ ասում ա, որ ինքը վարձատրվում ա, հանձնարարողի ցուցումներին

համապատասխան հանձնարարությունը կատարելը, հանձնակատարը պարտավոր է, այսինքն Շողիկը պարտավոր է իրեն տրված հանձնարարությունը կատարել հանձնարարողի ցուցումներին համապատասխան, այսինքն չպտի թփրտա ...» 33/5

ԾԻԳ-ի նման գործելակերպը բնակիչների մոտ ձևավորում է պատկերացում՝ իբր ԾԻԳ-ը ստեղծելը նպատակ է ունեցել բնակչին հեռացնել անմիջական որոշում կայացնողներից՝ նվազագույնի հասցնելով բնակիչ-քաղաքապետարան հաղորդակցման հնարավորությունները: Ընդ որում, այս ֆոնին քաղաքացիների պատումներում քաղաքապետարանի դերը երկակի է դիտարկվում

- որոշները հավատում են, որ քաղաքապետարանը շատ բաներից տեղյակ չէ և այս պահին ընդհանրապես դեր չի իրականացնում, քանի որ հաղորդակցության խողովակները չեն թույլ տալիս ինֆորմացիան մասնավոր/անհատական մակարդակից և ԾԻԳ-ից հասնել քաղաքապետարանին,
- որոշներն էլ (որոնք մեծամասնություն են) կարծում են իբր քաղաքապետարանը մասն է անարդար գործընթացի:

Այստեղ հետաքրքրական է հիշատակել քաղաքապետարանի/պետական աշխատողի վերաբերյալ բնակիչներից մեկի նշած տիպաբանությունը:

> «... աշխատակիցները կամ ոչ կոմպետենտ են կամ «սուպեր-սրիկա» կոմպետենտ, այսինքն ինքը էնքան վարժված ա ... որ ինքը կարա սիրուն ծածկաթմբոց անի քեզ, սիրուն ճիշտ ժամանակին...» գիտ/2

Հաղորդակցական մեխանիզմների սակավության կամ բացակայության, գործառույթների խառնաշփոթի և ոչ մասնակցային պրակտիկաների պայմաններում բարձր է բնակիչների անվստահությունը քաղաքապետարանի և նրա ենթակայությամբ գործող կառույցների հանդեպ: Օրինակ՝ 33-րդ թաղամասի դեպքերում հարցվողները փաստում են, որ սեփականաշնորհումից հետո իրենց բնակարանների վկայականները իրենց տրամադրվել են մասնավոր հատվածի ներկայացուցիչների կողմից: Բնակիչների մոտ հարց է առաջանում, թե «ինչպես կարող է երրորդ անձը առանց անձը հաստատող փաստաթղթի հասանելիություն ունենալ որևէ մեկի գույքի սեփականությանը և վերցնել այն կադաստրից, եթե ընթացքում գոյություն չունեն կոռուպցիոն գործընթացներ, որոնք հնարավորություն են տալիս մասնավոր հատվածին ազատ հասանելիություն ունենալ քաղաքացիներին վերաբերող փաստաթղթերին»:

Ֆիզիկայի գիտավանի դեպքում ևս քաղաքապետարանը չի համարվում որևէ խնդիր լուծող օղակ և ավելի շուտ ընկալվում է որպես կոռումպացված գործընթացի հաջողման օղակներից մեկը: Որպես փաստարկ բնակիչները նշում են՝ գիտավանի որպես հուշարձան թաղամաս հաստատվելուց հետո մասնավոր կառույցի տարածքը հուշարձանային համալիրի տարածքից դուրս հանելու որոշումը:

> «... ինձ զանգեց գնահատող ՊՈԱԿ-ի աշխատակիցը, ով պատասխանատու էր գնահատման համար, ասեց՝ մեր վրա ճնշում կա ... գրասենյակից, ... այսինքն ներդրումների աջակցման կենտրոնից, ինձ ասում են, որ էս հատվածը հանի: Զանգեցի կես ժամ հետո, ասեցի՝ Ավինյանը ասելա՝ օրենքը ոնց պահանջում ա, տենց շարժվեք: Ինքն էլ ասեց եղավ: Հետո զանգեց ասեց՝ դե ես օրենքով իրավունք չունեմ հանելու, չէի կարող

հանել, դա իմ աշխատանքն ա և այլ, տենց ներկայացրեց ու ասում ա՝ ես գրավոր մերժում ներկայացրեցի: Իրա մերժումից հետո փոխնախարարը փորձում ա ուրիշ մասնագետների միջոցով կազմ ստեղծել, ինչքան որ ես եմ տեղյակ, ու էդ կազմի միջոցով դնում են քվեարկության, որ սա անբարեկարգ վիճակ ա, հուշարձանային համալիրից հանում են: Բայց հանում են ինչի համար, հանուն պետության շահերի չեն հանում, որ ինչ-որ ճանապարհ պետք ա անցնի կամ ինչ-որ ենթակառուցվածք: Հանում են, որ տան ինչ-որ մեկը բիզնես շահ ստանա, այսինքն՝ ստորադասվում ա պետական շահը անձնական շահի հետ: Էդտեղ կարող եք մտածել, որ ինչ-որ մարդկանց հետաքրքրությունն ա եղել:» գիտ/6

Համընդհանուր անվստահության ֆոնին բնակիչները, փնտրելով ռացիոնալ բացատրություններ, ստեղծում և շրջանառում են մի շարք միֆեր ու պատումներ, որոնք թեկուզ չունեն հստակ ապացույցներ, բայց մասն են կազմում նրանց առօրյա խոսույթի՝ կաշկանդելով քաղաքապետարանի և հաճախ պետության հետ անմիջական հաղորդակցությունը: Թվարկենք մի քանի պատումներ՝

- 33-րդ թաղամասի մի շարք հանրային տարածքներ (բացի հայրական տունը) պատկանում են Տիգրան Ավինյանին, իսկ ֆիզիկայի գիտավանում կառուցվող շենքի մեկ ամբողջական հարկը՝ Հայկ Մարությանին:
- 33-րդ թաղամասը բաժանելով 13 լոտերի և անվանելով հին հայկական բնակավայրերի անուններով՝ այն վաճառվել է թուրքերի և ադրբեջանցիների: Նույն այդ պատճառով էլ տարբեր քննարկումների արդյունքում առաջանում են թուրք մեծահարուստների կերպարներ, հայ մեծահարուստների կերպարներ, որոնք համագործակցում են թուրքերի հետ:

Սրանք իրադարձություններ ու ընկալումներ են, որոնք միախառնվելով հանգեցնում են տարբեր եզրահանգումների բնակիչների մոտ, որոնք առաջացնում են անվստահություն, վախ, տագնապ և բարկություն:

> «... Քեզ թվում ա մեզ գալու են ատչոտ տան, որ Սրմի Քեշը, պադպոլնի միլյոնատեր, Ավինյանի հետ թուրքական գործարք ա անում... կգան կպատմե՞ն ... ու օգուտ չկա, մարդը առաջ ա տանում.... Թուրքիայում ծնված Սրմի Քեշ, իբրև թե ասում էին Սրմի Քեշյան ա, բայց կարճ Սրմի Քեշ, ասում են հայ ա, բայց ես կասկածում եմ, ասում են հայ ա, բայց Թուրքիայի ծնունդ, ընդեղ գրածա»: 33/2

> «... Էս սաղ փողոցները, որ տենում ես, Ավինյանն ա կեսը սեփականաշնորհել, կեսը Մարությանը... որ ուզեն կգան փողոցները կփակեն, չենք կարողանա դուրս գանք, որովհետև էդ փողոցը իրանց սեփականությունն ա ...»: 33/1

> «... Էս նկուղը Ավինյանն ա թաքուն սեփականաշնորհել... Ասում են, էս լոտի տերն էլ ինքն ա, որովհետև բոլոր լոտերի տերերի անուններ գիտենք, բացի էս լոտից, գաղտնի են պահում ...»: 33/6

Նման պատումների պատճառը գործընթացների թափանցիկության և բնակիչների հետ քննարկումների պակասն է, երբ բնակիչը հայտնվում է ինֆորմացիոն վակուումի մեջ: Այս ամենին միանում են օրենքի փաստացի խախտման դեպքերը՝ կապված գույքի գնահատման և դատական

գործերի հետ, որոնց մասին խոսվել է նախորդ գլուխներում և առաջանում է խաբվածության զգացողությունը և կոռուպցիայի զոհ լինելու զգացողությունը: Առաջանում է մի գաղափար, որտեղ *«... եթե մեզ ինչ-որ բան չեն ասում, ապա այդտեղ ինչ որ բան այն չէ»:*

Ակնկալիքներ և **պահանջներ**

4. Որո՞նք են/էին բնակիչների ակնկալիքները և պահանջները քաղաքապետարանից (նաև պետական իշխանության ներկայացուցիչներից) կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացում:

Եթե անդրադառնանք այս երկու թաղամասերի բնակիչների ապագայի մասին պատկերացումներին և/կամ կենսամիջավայրի փոփոխությունների հետ կապված ակնկալիքներին, ապա նախ կընդգծենք վատատեսական սպասումները, որտեղ գերակա է «անդառնալիության» պատումը:

> «... ինչ ծնվել եմ, ասում են՝ պետք է քանդեն ...»: 33/4
>
> «... քանդում են, քանդում են, քանդում են, պարզվում ա 100 տարի ա քանդում են: Հիմա քանդում են իսկական քանդում են մեր տները, իսկականից քանդում են, հոգեբանորեն մեզ սպանում են ...»: 33/4
>
> «... շենքը նույնիսկ որոշեն, որ անօրինական ա, չի քանդվի, բայց ես էդ կարծիքին չեմ, կարծում եմ, որ կքանդվի մի օր ...»: գիտ/3

33-րդ թաղամասի դեպքում կա երկու կարծիք՝ կախված սեփականության չափից, գույքի վիճակից և սեփականատերերի ընտանեկան պատմություններից:

Բնակիչների առաջին տիպն, ով ունի բավականին մեծ հողատարածք, այգիներ և կահավորված առանձնատներ, ինչպես նաև տեղի հետ ունի ոչ միայն ֆիզիկական, այլև արժեքային կապվածություն, առավել կարևորում է և ակնկալում իր որպես սեփականատիրոջ ներգրավվածությունն ու մասնակցությունը գործընթացում՝ որոշումների կայացումից մինչև իրագործում: Նրանք պատկերացնում են հենց իրենց՝ որպես տարածքի արդիականացման, և մշակութային արժեքի հաղորդման գլխավոր օղակներ: Պատումները ցույց են տալիս, որ նման նախաձեռնությունները ոչ միայն սեփական գույքը պահելու, այլ նաև քաղաքի կենտրոնի մշակութային արժեքները չկորցնելուն ուղղված պայքար են:

> «... դե հերս երկար տարիներ ա ուզում ա իրա թանգարանը բացի, ես էլ ուզում եմ [ազգանուն] թանգարան բացեմ, հլը մի հատ էլ ուզում եմ տուն սարքեմ արվեստի»: 33/1
>
> «... Շատ հաճախ հոգնած տուրիստներ են գալիս իմ տուն: Մտնում են, ասում են՝ որ ռեստորանից լավ ա իմ մոտ, ու առաջարկում են, որ հաց սարքեմ... բացի այդ արդեն քանդում են կողքերը, իսկ նման նախաձեռնության համար հավելյալ ծախս ա պետք ու սարքավորումներ... Գերակա շահ են դրել, ես ի՞նչ կարող եմ անել, ոչինչ... եթե ուրիշը պետք է գա իմ հողն առնի վրան բիզնես անի, հենա ես իմ հողի վրա «հայկական թաղամաս» կսարքեմ, պատմությունը կպահեմ... բայց չեն թողնում: Գերակա շահ են դրել, ոչ մի բան անելու իրավունք չունեմ... Իսկ հիմա պետք է գան՝ այ սենց բարձրահարկեր կառուցեն

էստեղ, որ տուրիստը գա Երևանի կենտրոնում ինչ տեսնի, որ իմանա, թե ՀԱՅԸ ով ա...»: 33/2

Բնակիչների երկրորդ տիպը նրանք են, ում պատումներում մշակութային և արժեքային կապվածությունը տեղի հետ ավելի թույլ է արտահայտվում, բացի այդ նկատվում է բնակարանային պայմանների վատթար վիճակ, որի արդյունքում վերջիններս իրենք տարածքի վերաբերյալ փոփոխություններում իրենց մասնակցությունը չեն դիտարկում, ինչպես նաև չեն քննարկում հնարավոր այլ լուծումներ տարածքի կերպարանափոխության վերաբերյալ, սակայն ունեն փոխհատուցումների իրականացման իրենց համար արդարացի պատկերացումները, որոնք ենթադրում են՝ գերակա շահին առնչվող համեմատական, ծախսային և եկամտային մեթոդներից երեքի կիրառմանը նույն սկզբունքով թաղամասում առկա ամբողջ գույքի համար, գույքի արդար գնահատում, ճիշտ չափագրումներ և արդար փոխհատուցում, որը հաշվի կառնի ոչ միայն գույքի վիճակը, հողը, հողի վրա առկա բուսականությունը, այլ նաև սեփականատիրոջ կրած բարոյական և առողջական վնասը 17 տարիների ընթացքում (ընդ որում, բարոյական վնասի, կենսակերպի խախտման փոխհատուցման մեխանիզմներն ընդհանրապես օրակարգից դուրս են):

«... Էս շենքի [նկատի ունի նոր կառուցվող բազմահարկի] մի քառակուսին 8,000 ա նստում.... Էս մի քառակուսու վրա 4 հարևան են ապրում: Իսկ ինձ մի քառակուսին, որ էտքան շենքեր են սարքել իմ տան տեղը, 2,000 են տալիս... ամենաշատը: 2,000 էլ չեն տալիս է, 1,500-1,600: Ինչու»: 33/3

«... Միջազգային օրենք ա դա: Ոչ թե որոշման մեջ ա գրված, այլ օրենք ա բոլոր երկրներում: Բացի դա, օրենքը գերակա շահի, էտ միջազգային բանով եմ ասում, գնահատած գինը շուկայական արժեքի, կա, ավելանում ա 15%: Էդ տոկոսը ոչ թե խրախուսանք ա, դա էն հնարավոր շեղումն ա շուկայական գնից, դա պետք ա տան: Պլյուս պետք ա տան տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը: Հիմա ես որ ստեղից գնացի, բան, էս մեբելս չեմ քանդելու՝ տանեմ ուրիշ տեղ հավաքեմ, չի լինի, չափերը չի բռնի, նույնը կուխնյայինը, նույնը մնացածն ա, այսինքն դրանք էտ սաղ պետք ա գնահատեն, ոչ թե հանեն գնից, այլ գումարեն գնին: Իսկ իրանք էս ամեն ինչը հաշվել են ու հանել են գնից որպես ծախս: Պետք է գումարեն գնին, էտ էլ փոխհատուցեն, հասկանու՞մ եք: Պլյուս էտ ամեն ինչի էլ, եթե կա ինչ-որ բան, որ տեղում չեմ, անհարմարություն ա պատճառում, պետք ա նաև էտ մառալնի բանը, որ էլի պետք ա: Չեմ ասում, որ գումար ա, տոկոս ա, չեմ կարա դա ասեմ, բայց դա էլ ա մտնում մեջը: Պատկերացրեք, երեք անգամ քիչ գնահատել են, էտ ծախսերը չկա, այսինքն էտ ամեն ինչը էտ 15%-ի մեջ են մտցնում, էտ մառալնին էլ, ծախսերն էլ, ամեն ինչն էլ, որը մեր տեղափոխման մեջ են մտնում, բայց հակառակը, պետք ա շուկայական գին որոշվի, գումարի 15%, գումարվի ծախսեր, գումարվի մառալնին»: 33/6

«... Վերջը էս գնահատողները գնահատում են միջինը տենց գին: Մեր տունը գնահատել են, միայն տունը՝ 1690$, հողը չեն գնահատել ընդհանրապես: Կողքիս հարևանինը գնահատել են հողը և տունը. հողը 400 քանի հազար ա, իմիջիայլոց, որ ասեցի 2015 թվին 700,000 եղել, հիմա պետք է լիներ 1.5մլն ու ավել, գնահատել են 400,000: Եվ 200 քանի հազար էլ տունն են գնահատել. իրանցը, ստացվում ա, որ 500$ ա իրանցը գնահատած, մերը 1,700$: Որովհետև իրանց հողը հաշվել են, մերը՝ չէ: Իրանց պետք ա մի թիվ ստանալ: Մոտավոր նույն թիվը:... էն մի հարևանինն էլ 320$ ա գնահատած, հողը մի քիչ ավել ա:

Սենց բերել են, միջին գինն են ստացել: Էտ էլ արել ա գնահատող կազմակերպությունը, որը պատկանում ա կադաստրի կոմիտեի նախագահի տեղակալին, մի քիչ անունները լավ չեմ հիշում, մի խոսքով, էտ կազմակերպությունը Վի Էմ Ար Փի տնօրենը աներձագն ա, իմ իմացած տեղեկություններով, քաղաքում ինչքան լուրջ բաներ կա, բոլոր բանկերն ա էտ ֆիրման ա գնահատում: Համ էլ էստեղ ա, էտ նախագահի տեղակալի ֆիրման ա, ոնց կարա ուրիշը լինի: Մյուս գնահատողները, եթե էտ ֆիրմայի գնահատածը բողոքարկում են, 20% տարբերություն ա լինում, գնում ա հանձնաժողովի նիստի, որը էլի կադաստրի կոմիտեն ա: Էտ նիստը ասենք որոշում ա, թե որ մեկն ա ճիշտ գնահատել, ոչ մեկ չի կարում էտ ֆիրմայի հետ քյալա տա, որովհետև էտ իրանցն ա: Ճիշտ են համարում նրանց: Էս մարդիկ ընկնում են պրոբլեմի մեջ: Մեկ, երկու, եթե երեք հատ տարվա ընթացքում տենց բան եղավ, իրանք են զրկվելու լիցենզիայից, ոչ թե էն ֆիրման, որը սխալ ա անում»: 33/6

Անդառնալիության, այն է թաղամասը իր ինքնատիպության պահպանման անհնարինության պայմաններում 33-րդ թաղամասի բնակիչների առաջնային պահանջը արդար փոխհատուցումն է: Որպես օրինակելի մոդել նշում են Հայաստանում Ասիական զարգացման բանկի վերահսկողությամբ իրականացվող օտարումների և վերաբնակեցումների գործընթացը, որտեղ հաշվի են առնվում գերակա շահի համատեքստում բոլոր երեք գնահատման մեթոդները: Մյուս կողմից, 33–րդ թաղամասի ակտիվ նախաձեռնող խումբն ունի նաև բարոյական սպասում և/կամ պահանջ, այն է կոռումպացված կողմերի պատիժը օրենքի սահմանված կարգով, ինչի արդյունքում պետք է լիցենզիայից զրկվեն գնահատող կազմակերպությունները, և վերսկսվեն այն դատերը որոնք առնչվում են գերակա շահին, սակայն ընթացք չեն տրվել դատարանների կողմից:

«Հա, էնտեղ մոստեր կառուցեցին, ֆռացող ճանապարհներ, ահագին տներ, մարդկանց սեփականություններ գնեցին գերակա շահի օրենքով, էնտեղ ֆինանսավորում էր Ասիական բանկը: Իրանց պայմանագրերը բոլորը տղերքի մոտ ա, թե չէ ես Ձեզ ցույց կտայի: Իմ ասած էտ սաղ կետերը կար մեջը: Մարդիկ այ էտ ձևի փոխհատուցում են ստացել, խի՞ պետք ա բողոքեն, նորմալ վերաբերմունք: Պլյուս, սարքել են ճանապարհ, որը իրոք գերակա էր, բացառիկ էր, ոչ թե տան բիզնեսների, որոնք մի քանի տասնյակ անգամ ուզենան հարստանան, ժողովրդին էլ հնարավորինս խաբեն»: 33/6

Ֆիզիկայի գիտավանի դեպքում պայքարը մասնավոր շահի դեմ է: Այստեղ բնակիչների կողմից իդեալական լուծումները ենթադրում են տարածքի հանրային և կանաչապատ նշանակության պահպանումը. Ըստ նրանց, այս թաղամասում ներդրումները պետք է լինեն ոչ թե նոր շենքերի կառուցման եղանակով, այլ տարածքում կանաչապատ գոտիների բարեկարգման նպատակով, քանի որ տարածքի բուսականությունը անմխիթար վիճակում է գտնվում, իսկ քաղաքապետարանը քայլեր չի ձեռնարկում դրանց բարեկարգման և պահպանման համար, անգամ տարածքի «հուշարձանային» ճանաչվելուց հետո:

Այնուամենայնիվ, այս դեպքում ևս բնակիչները բախվում են «անդառնալիության» պատին՝ հաշվի առնելով այն փաստը, որ շինության յոթը հարկն արդեն կառուցված է: Միակ ակնկալիքն ու պահանջ այս փուլում շենքի հարկայնության չավելացումն է: Արդարության տեսանկյունից ակտիվ բնակիչները ակնկալում են նաև հանրությունից հանրային տարածքի «գողացման» փաստի ճանաչում՝ դատարանի կողմից և տարածքի ներառում՝ հուշարձանային համալիրի կազմում:

«... հիմա ասենք հասել են վեցերորդ հարկին, ասում եմ ինչ-որ ձևով ստոպ լինի, ասենք օրինակ՝ 7-րդ հարկը, իրենք էստեղ, որ ապօրինություն ա և գան բանակցությունների բնակիչների հետ և այլն, յոթը հարկով սահմանափակվի կամ ասենք էլի կանգ առնի և էդ շենքը տրվի էլի համայնքին, պետությանը կամ այլ ձևով, չգիտեմ, ասենք ինչ ձևով, դե ինքը արդեն բնակարանային ձևով ա սարքվել, բայց չգիտեմ ներքևի հարկը կամ էդ տարածքի համայնքային նշանակությունը, ասենք խնամքի կենտրոն, լողավազան և այլն, որ մարդիկ օգտվեն, ոչ թե 2-3 հարկ պարկինգ ա էլի ...»: գիտ/2

«... հնարավորությունը մի կողմ, մի փոքր ռեալ չեմ համարում, որ էդ յոթը հարկը ամբողջությամբ կքանդեն, բայց որ քանդեն ու թողնեն մենակ նկուղային հատվածը դա մեզ համար կլիներ իդեալական տարբերակ, որ նկուղը նաև մենք օգտագործեինք որպես կայանատեղի ...»: գիտ/7

Բնակիչների կողմից քննարկվող լավատեսական սցենարները, որոնք ունեն հատկապես ֆինանսական սահմանափակում (բնակիչները չունեն նման ֆինանսական կապիտալ), հետևյալն են՝

- 33-րդ թաղամասի դեպքում օտարման/փոխհատուցման գործընթացի միջազգային աուդիտի իրականացումն է:

  «... մենք պլանավորում ենք, ... մենք բոլոր էս կառույցներին դիմելուց հետո մենք գնալու ենք միջազգային աուդիտ, մենք պահանջելու ենք որ միջազգային աուդիտ գա, դեսպանատներ ենք գնալու, ցույց տանք, որ ստեղ ինչ ա կատարվում: Մի երկրի ներսի եթե բոլոր ատյանները սպառված են կարելի ա ասել, մնացել ա վարչապետը, որ ուզում ենք իրա հետ հանդիպման, բայց չգիտեմ, ինքը չի ուզում ... մեզ հիմա պետք է ֆինանսավորում ապահովել, որ միջազգային աուդիտը գա մտնի, թող սաղ քանդի, մենք կողմ ենք, մենք շահում ենք, կարող ա սուտ ենք խոսում, չափազանցնում ենք: Դրա համար թող գա միջազգային աուդիտ, ստեղ սաղ ծերից ծեր տակնուվրա անի, նայի, ինչ կա, ոնց կա, ինչ են արել: Չես կարա դու փողոցին, որ պետությունից 39,000 դրամով դու [խոսքը կառուցապատողի մասին է] առել ես, տանես բանկ գրավադրես 710,000 դոլլար 2008-2010 թվին, բայց ժողովրդին տաս 580 դոլար ...»: 33/4

- Գիտավանի դեպքում՝ բարձր որակավորում ունեցող, առաջատար փաստաբանի ծառայությունների պատվիրակումն է: Բնակիչներից մեկի խորհուրդը նման իրավիճակներում հայտնված քաղաքացիներին հետևյալն է՝

  «... փաստաբաններ վարձեք և պատրաստ եղեք համբերատար մտնել մի երկու-երեք տարվա պայքարի մեջ, ունեք ռեսուրսներ դրա համար՝ ժամանակային ու ֆինանսական, մտեք: Եթե չունեք՝ իմ խորհուրդն ա չմտնեք, որովհետև դեմ եք առնելու բյուրոկրատական, ոչ պրոֆեսիոնալ ապարատի, դեմ եք առնելու կառուցապատողի սպառնալիքներին: Նամակ ա Ձեզ ուղարկելու, իր բիզնես համբավն ես բան արել, մի միլիոն միլիոնուկես սրա համար տուր, նրա համար, բան-ման, ինքը ֆինանսապես քեզ ճնշելու ա էլի, իրա փաստաբանով, նամակներով, դատարանով և այլն կաշկանդելու ա: Եթե ունեք լավ փաստաբան, կամ, ասենք, որոշ իրավապաշտպաններ կարող են, ասենք թե, թող փաստաբաններ դնեն ու կոնկրետ քեյս առ քեյս աջակցեն բնակիչներին, մինչև

> վերջ գործընթաց տանեն, ոնց որ ասած՝ լավ տեղը տեղին հարվածեն բոլոր էս հակահիրավական բաներին, ապա՝ մտեք ...»: գիտ/2

Քաղաքապետարանից բնակիչների պահանջը մեծ առումով ներառական պրակտիկաների ներդրումն է՝ 33-րդ թաղամասի դեպքի նման երկարաժամկետ գործընթացներում հաշվի առնելով կյանքի որակի խաթարման և դրանց փոխհատուցման խնդիրները: Ինչպես բնակիչներն են նշում՝ «վերաբնակեցվողը պետք է գիտակցի «շահը», դա է իրական գերակա շահը»: Շահի լեգիտիմացման պրակտիկաների պահանջ կա:

Բնակիչներն ակնկալում են, որ պետությունը, այս դեպքում՝ քաղաքային իշխանությունները, արդյունավետորեն օգտագործեն տեղի մարդկային և պատմամշակութային ռեսուրսը՝ տեղի բնակչին ընդգրկելով և դարձնելով շահատեր: Բնակիչներից մեկն, իր փորձը բերելով, նշեց. «... որ տուրիստները գալիս են, Երևանը տեսնեն, ու ըստ դրա չեն կարող հասկանալ, թե հայ ազգն ով է: Հյուսիսային պողոտան կարող ենք ցույց տալ: Բայց դա՞ է արդյոք մեր մշակույթը»: Նա ասաց, որ առաջարկ է արել, որպեսզի իր տարածքը իրեն թողնեն, նշելով, որ թոնրատուն ունի, հյուրեր կընդուներ, պատմություններ կպատմեր հին, քանի որ դա հին վանեցու տուն է, ուր իր պապը 1914 թվին է եկել: Նա ասում է, որ գիդ կպահեր, կթխեր, հյուրատան պես կստեղծեր իր տարածքում: 33/2

Ընդ որում, ընթացիկ մարտավարական լուծումների կողքին մի քանի բնակիչ խոսել են հեռանկարային հիմնարար լուծումներից՝ մատնանշելով քաղաքաշինության մեջ սկզբունքային քաղաքականության, քաղաքային գրագետ պլանավորման խնդիրները:

> «... ընդեղի դրույթները անմարդկային էին: Ուրեմն հա, չմոռանամ մի բան էլ ասել, որ քանի որ էն ժամանակ ի սկզբանե առաջի անգամ էս տարածքը գոտիավորել են... երբ որ անկախացել ենք, Երևան քաղաքը գոտիավորել են ավագանու որոշմամբ, ավագանի չէր, էն ժամանակ Երևան քաղաքի ինչ-որ խորհուրդ էր կոչվում... Գոտիավորել էին 94 թվականին, Տեր-Պետրոսյանի ժամանակ: Քանի որ Տեր-Պետրոսյանի ախորժակը էնքան մեծ չէր, ոնց որ Ռոբերտ Քոչարյանինը, ինքը էս գոտիավորման ժամանակ բան ա արել: Սենց ա, գոտիավորումը Երևան քաղաքում սենց ա գնում. Կենտրոն համարվում ա Հանրապետության հրապարակը, սա կոչվում ա միջուկ, Երևան քաղաքի միջուկ, դրա շուրջ առաջի գոտին ա, հետո երկրորդ և այդպես շարունակ: Ուրեմն մենք քանի որ հրապարակից 300 մետր, ուղիղ գծով 300 մետր էլ չկա, էդքան հեռավորության վրա ենք գտնվում, մենք բնականաբար առաջին գոտում ենք եղել: Հեսա էդ որոշման համարը կնայեմ, Ձեզ կասեմ, կարծեմ 4912, 94 թվին ա էղել: Ու էդ գոտիներով ապրել ենք մինչև Ռ. Քոչարյանի ի հայտ գալը Հայաստան երկրում: Դրանից հետո ինքը շատ գեղեցիկ ուրեմն նորից գոտիավորման հրահանգ ա տալի Կառավարության որոշմամբ, պետք է Երևան քաղաքը նորից գոտավորվի: Գոտիավորում են Երևան քաղաքը, մեկ էլ պարզվում ա, որ էդ հրապարակն ա, էս իրա շրջապատն ա, էս Ֆիրդուսը էդ 33-րդ... այ սենց շատ սիրուն փորում են, էսքանը քցում են երկրորդ գոտու մեջ: Ինչի՞, որ փոխհատուցումը քիչ տան, որովհետև էդ 1151 որոշման մեջ գրած ա, որ փոխհատուցումը պետք ա տալ՝ հաշվի առնելով գոտիականությունը. հակասահմանադրական դրույթ: Դու կարող ա քցես ինձ իններորդ գոտի, ուրեմն դու ինձ իններորդ գոտու տեղա՞ պետք ա տաս: Չէ՞ որ ես 300 մետրի վրա եմ: Իրականությունը պետք ա նայես»: 33/5

«Նախ, էս քաղաքը ու քաղաքի համար պատասխանատու մարդիկ անտեսում են լիքը մասնագետների էն պահանջը, որ քաղաքը պետք ա ունենա զոնայավորում, գոտիավորում, որպեսզի հստակ լինի էլի, որ ասենք դու մարդ ես ուզում ես ներդրում անես, գնում ես ինչ-որ մի տեղ հող ես առնում ու սարքում ես մի հատ երկհարկանի տուն, ու դու վստահ լինես, որ քո շրջապատում մաքսիմում բարձր տունը, որ կսաքրեն երկու կամ երեք հարկն ա, և էս տարածքում չի լինի արտադրական ինչ-որ մի բան, կանաչապատումը կլինի էսքան տոկոս և այլն, և այլն: Բայց մեկ էլ, ասենք դու երեք տարի հետո սիրուն տուն ես սարքել քո համար, սիրուն տեսարանով, բերում են քո դիմաց տասնչորս հարկանի շենք են սարքում, քո ամբողջ ներդրումը, կյանքի որակը, քո տան գինը զրոյացնում ա, չէ՞: Ինչքան ա չէ՞ ազդում դրա վրա: Քաղաքային իշխանությունները ոչ մի նախաձեռնողականություն չեն դնում, դա մեր կետերից մեկն, որ գոտիավորում անեն, և մենք առաջարկել ենք, որ սկսեն հենց մեր թաղամասից, որ ճիշտ նախագծած բան ա գոտիավորում արեք, որ բան լինի, այսինքն էս էն կետն ա, որ բնակիչները, ժողովուրդը պետք ա պահանջեն, որովհետև էդ նույն կեղտը շարունակվում ա»: գիտ/2

Ամփոփում

Ընդհանրացնելով Երևանի 33-րդ թաղամասի և ֆիզիկայի գիտավանի բնակիչների պատումները՝ կարելի է արձանագրել հետևյալը.

- Բնակիչների կողմից կարևորված և արժևորված է իրազեկ քաղաքացին ու պայքարող սեփականատերը:
- Որպես առավել հաճախ հանդիպող բացասական կերպարներ առանձնացվում են՝ «Գլենդել Հիլս», «Սիթի սենթր դեվելոփմենթ», «Ռադկո», «Վի Էմ Ար Փի» մասնավոր կազմակերպությունները, քաղաքապետարանի ԾԻԳ-ը, Էդիկ Մելիքյան, Արթուր Մնացականյան գործարարները, կառավարության և քաղաքային իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ՝ Տիգրան Ավինյան, Նարեկ Սարգսյան, Կարեն Կարապետյան, Հայկ Մարության, Շողիկ Երանյան, հիշատակվում են նաև դատավորները, ոստիկանությունն ու «կարմիր բերետավորները»:
- Որպես առավել չեզոք, սակայն որոշակի օգտակարության կառույցներ դիտարկվում են սահմանադրական դատարանը, ԿԳՄՍ և բնապահպանության նախարարությունը:
- Որպես օժանդակող և ցանկության դեպքում բնակչին աջակցելու ներուժ ունեցող սուբյեկտներն են՝ լրատվամիջոցները, հանրային խորհուրդը, սահմանադրական դատարանը, փաստաբանները:
- Գլխավոր խոչընդոտը իրավական ակտերի, որոշումների, ծանուցումների, հրապարակումների տարընթերցումներն ու անորոշություններն են:
- Երկու թաղամասերի բնակիչները քաղաքապետարանից և կառուցապատողներից սոցիալական հեռավորության զգացողություն ունեն:
- Բնակիչները քաղաքապետարանն ընկալում են որպես օտարված՝ հեռու կանգնած կառույց, իսկ կառուցապատողներին՝ հզոր հակառակորդ: Պատումներում կառուցապատողները ներկայանում են որպես զգալի իշխանություն և ազդեցություն ունեցողներ՝ հաճախ ստվերելով քաղաքապետարանի դերը: Պետությունն ընկալվում է որպես կառուցապատողների շահերը պաշտպանող կամ չխոչընդոտող, ինչը հանգեցնում է անարդար գործընթացների կասկածների: Քաղաքապետարանի դերը պատումներում հանձն է առնվել ԾԻԳ-ին, որն իր դերում ոչ միանշանակ է դիտարկվում: ԾԻԳ-ի

պրակտիկան հանգեցնում է բնակիչ-քաղաքապետարան հաղորդակցության նվազման և որոշումների կայացումից բնակիչների հեռացման:

- Անվստահությունը, հաղորդակցության բացակայությունը և կոռուպցիոն մեղադրանքները նպաստում են բացասական ընկալումների ձևավորմանը բոլոր պետական կառույցների, մասնավորապես քաղաքապետարանի նկատմամբ: Արդյունքում ստեղծվում են նորանոր վարկածներ քաղաքաշինության գործընթացների անարդարացիության վերաբերյալ, ինչը հանգեցնում է հետագա անվստահության:
- Քաղաքապետարանի դերի ընկալումը վերջին երկու տարիների ընթացքում հեռավոր ու անտարբերից փոխակերպվում է որպես ակտիվորեն ներգրավված հակառակորդ, հատկապես այն դեպքերում, երբ հարցվողները սկսում են ներկայացնել ԾԻԳ-ը՝ որպես կառուցապատողի շահերը պաշտպանող կառույց:
- Բնակիչների ակնկալիքները գործընթացից վատատեսական են, որը տրամաբանական է՝ հաշվի առնելով պատումներում արտահայտված մտահոգությունները գործողությունների անշրջելիության, գույքի քանդման և կառուցապատման վերաբերյալ:
- Լավատեսական սցենարները ներառում են օտարման աուդիտներ և քաղաքային քաղաքականության վերաձևավորում՝ հանուն արդարության և ներառականության:
- Բնակիչները պահանջում են արդար փոխհատուցում, ներգրավում որոշումների կայացման գործընթացում ու քաղաքականության փոփոխություններ՝ իրենց մտահոգությունները լուծելու համար:
- Տարածքին կապվածության տարբեր մակարդակները և գույքային պայմանները ազդում են բնակիչների ակնկալիքների վրա: Նրանք, ովքեր ունեն ուժեղ մշակութային և արժեքային կապվածություն տեղի հետ, ակտիվորեն ձգտում են ներգրավվել որոշումների կայացման և արդար փոխհատուցման գործընթացի վերականգնման գործընթացում: Իրենց սեփականության նկատմամբ մշակութային և էմոցիոնալ ուժեղ կապվածություն ունեցող բնակիչները մտահոգված են ոչ միայն գույքի կորստի, այլև պատմամշակութային նշանակության կորստի համար: Նրանք ձգտում են պահպանել իրենց տները՝ որպես մշակութային խորհրդանիշներ:
- Սեփականատերերի համար փոխհատուցման արդարացի մեխանիզմները պետք է հաշվի առնեն գույքային պայմանները, բարոյական վնասը և ներառեն այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են համեմատականը, ծախսայինն ու եկամտայինը: Որոշ բնակիչներ առաջարկում են միջազգային աուդիտ և իրավական ներկայացուցչություն՝ նման մոտեցման իրականացման համար:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս ըմբռնել Երևանի՝ որպես «ներառական քաղաքի» տեսլականի իրագործման հաղորդակցական և ընթացակարգային, բարոյական և իրավական, անձնային և համակարգային խոչընդոտներն ու հնարավորությունները: Ուսումնասիրությունը ընդգծում է թափանցիկ հաղորդակցության, արդար փոխհատուցման և քաղաքային զարգացման ներառական քաղաքականության անհրաժեշտությունը:

- Մատնանշված առաջին հիմնարար խնդիրը արդյունավետ հաղորդակցության բացակայություն է: Քաղաքային իշխանությունները բնակիչների հետ հաղորդակցման ընթացքում պետք է մոտենան յուրայինի դիրքերից՝ հարաբերությունները կառուցելով «բնակչի հետ- և համար», այլ ոչ՝ «բնակչի դեմ» մոդելով: Քաղաքապետարանը պետք է զբաղեցնի շահի տեսանկյունից չեզոք, սակայն բնակիչներին ներգրավող դիրք:

- Բնակիչները, որպես կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացի կարևոր կողմ, պետք է իրազեկվեն ավելի վաղ փուլում՝ մինչև որոշումների կայացումն ու բուն փոփոխությունների իրագործումը:
- Բնակչին պետք է հստակ իրազեկում, իրավական հնարավորությունների ծանուցում, գործընթացի որպես կողմ ընդգրկում և որպես կարևորված սուբյեկտի գիտակցության ձևավորում՝ խուսափելով անզորության ու անօգնականության համախտանիշի կազմավորումից:
- Պետական աջակցության/միջամտության ընթացքում պետք է հաշվի առնել, որ կենսամիջավայրի փոփոխությունների իրականացման գործընթացը զուտ քաղաքաշինական գործընթաց չէ, առաջնային սկզբունքների շարքում պետք է լինեն՝ բնակչի կյանքի որակի կամ առօրեականության չխաթարման, և լոկալ ինքնությունները չվնասելու սկզբունքները:

Առաջարկներ

- Ստեղծել քաղաքապետարանի, կառուցապատողների և բնակիչների միջև կապի հստակ և թափանցիկ ուղիներ:
- Պարբերաբար թարմացնել քաղաքաշինական ծրագրերի, փոփոխությունների և որոշումների մասին տեղեկատվությունը՝ նվազեցնելու ապատեղեկատվությունը և առասպելները:
- Քաղաքաշինական ծրագրերի հետ կապված որոշումների կայացման գործընթացում բնակիչներին ներառել որպես ակտիվ շահագրգիռ կողմերի:
- Կազմակերպել հանրային խորհրդակցություններ, սեմինարներ և ֆորումներ՝ նախքան ծրագրերը վերջնականացնելը:
- Ապահովել գույքի գնահատման, փոխհատուցման հաշվարկների և կառուցապատողների և պաշտոնյաների միջև փոխգործակցության թափանցիկությունը:
- Քաղաքաշինության վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի առնել յուրաքանչյուր թաղամասի պատմական, մշակութային և արժեքային համատեքստը:
- Սկսել մշակութային և կրթական նախաձեռնություններ՝ խթանելու պատմական իրազեկումը և պահպանելու թաղամասերի մշակութային նշանակությունը: Խրախուսել բնակիչներին ակտիվորեն մասնակցել իրենց համայնքի ժառանգության պահպանմանը: